





134







**SCHILLER'S**  
**JUNGFRAU VON ORLEANS**



UEBERSETZT IN'S ARMENISCHE  
VON  
CH. G. HASAROSSIAN

2. JAHRES

UNTERBILDUNG VON JUNGEN

— 1888 —

VERGLEICHENDE PÄDAGOGIK

VON

DR. THEODOR ZIEGLER

ՅՈՎ ՀԱՆՆԱ ՏՄՐԳ

ԿԱՄ

# ՕՐԼԵԱՆԻ ՕՐԻՈՐԴԸ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՇԻԼԼԷՐԻ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻՆ

ԿԱՐԱՊԵՏ Կ. ՂԱԶՍՐՈՍԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐԳՃԵԱՆ

— 1868 —

ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԿԱՅԻՆ

ՀԱՅԿԱՅԻՆ

ՀԱՅԿԱՅԻՆ

ՀԱՅԿԱՅԻՆ

ՀԱՅԿԱՅԻՆ  
42

ՀԱՅԿԱՅԻՆ  
ՀԱՅԿԱՅԻՆ  
ՀԱՅԿԱՅԻՆ

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Հոս՝ թատրոնին յառաջ բերած օգուտները մի առ մի թուել եւ ժողովրդեան մը դաստիարակութեան միջոցներէն մէկն ըլլալուն վրայ ճանել չ'է մեր միտքը : Մենէ առաջ ուրիշներ քանի քանի անգամ ասոր վրայ խօսած են : Մեր ազգը վերջին տարիներս զգաց թատեր օգուտն եւ առ այն մասնաւոր ճաշակ ունենալն յայտնեց :

Օրէանի Օրիորդ անուն ողբերգութիւնը թարգմանելով՝ մեր նպատակն է գերմանական երեւելի հանճարի մը , Շիլլէրի՝ բանաստեղծական գործերէն մեր ազգայնոց նոր կտոր մ'ալ տալ : Այս թարգմանութեան մէջ ըստ կարի ջանացինք հեղինակին գաղափարներն ու զգացումները ճշգրիտ ընծայեցնել հայ լեզուաւ . ընթերցողն ինքնին կրնայ գիտել :

Շիլլէր ծնաւ 1759 ին վերջերը Վիւրթըմպերկի թագաւորութեան Մարպախ քաղաքն եւ մեռաւ 1805 ին իբր 45 տարեկան : Երիտասարդութեան ատենը նախ սկսաւ բժշկականութեան պարապիլ , թէպէտ հանճարն 'ի լնէ բանաստեղծութեան էր , որուն ապացոյցը չուտով սկսաւ տալ 1781 ին հրատարակած « Աւաղակներն » ողբերգութեամբ : Իբրեւ բա-

նաստեղծ ունի չատ մը թատերական գրուածք , որոնց մէջ անուանի են . Մարի Սթուարթ , Վալլընսթայն , Տօն Քարլօս , Օրլէանի Օրիօրդը , Մեսլինայի հարսը (հայ . թարգ . 1864 ի Հիւսիսատիայլ լրագրի մէջ 'ի Մոսկուա) եւ Կիլեոմ Թէլլ որ հեղինակին անունն եւս սուելի հոչակեց : Շիլլէր փիլիսոփայական գրուածներ ալ ունի եւ բաւական ժամանակ Գերմանիոյ Նէնա քաղքին մէջ պատմութեան եւ փիլիսոփայութեան դասատուութիւն ըրաւ :

Անոր հանճարը պատմագրութեան մէջ ալ կը փայլի եւ ասոր ապացոյց է «Նրեսնամեայ Պատերազմին Պատմութիւնը» , զոր մեծ խնամօք չարագրեց : Շիլլէր իբրեւ հեղինակ՝ գերմանական գրագիտութիւնը ծաղկեցնողներուն մէկն է . իսկ բանաստեղծութեան մասին առ հասարակ՝ իբր առաջին կարգի քերթող ճանչցուած է :

ԿՐ. Կ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Կ. Պօլիս. 15 Յունուար 1868



## ԱՆՁԻՆՔ

ԿԱՐՈՂՈՍ ԵՕԹՆԵՐՈՐԴ. *Թաղաւոր Գաղղլիայ.*  
 ՄԱՅՐՆ. *Իղապօ Թաղուհին.*  
 ՍԻՐՈՒՀԻՆ. *Աղնէս Սօրէլ.*  
 ՓԻԼԻՊՊՈՍ ԲԱՐԻ. *Պուրկուհտի դուքս.*  
 ԿՈՄՍ ՏԻԻՆՈՒԱ. *Օրլէանի Պաթար ( Բնական  
 որդի ) կոչուած .*

ԼԱՀԻՐ. }  
 ՏԻԻՇԱԹԵԼ. } *արքունի պաշտօնակալք .*

ՌԵՄՁԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.

ՇԱԹԻԼԵՕՆ. *Պուրկուհտի ասպետ.*

ՌԱՌԻԼ. *Լօթրինկի ասպետ.*

ԹԱԼՊՕ. *անդղիացի սպարապետ .*

ԼԻՅՆԵԼ. }  
 ՅԱՍԹՕԼՅ. } *անդղիացի զօրապետք .*

ՄՕՆԿՕՄԵՐԻ. *վալլէսցի աղնուական .*

ՕՐԼԵԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ.

ԱՆԳՂԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱԲԵՐ.

ԹԻՊՕ Տ'ԱՐԳ. *հարուստ դեղացի .*

ՄԱՐԿԱՐԻԴ. }  
 ԼՈՒԻՁԱ. } *նորա աղջկուհք .*  
 ՅՈՎՀԱՆՆԱ. }

ՍՏԵՓԱՆ. }  
 ԳԼՕՏ ՄԱՐԻ. } *նոյա խօսնարք .*  
 ՐԵՄՕՆ.

ՊԵՐԹՐԱՆ. ուրիշ գեղացի մը .  
 ՍԵՒԱԶԳԵՍՏ ԱՍՊԵՏ ՄԸ. (Երեւոյթ)  
 ԱԾԻԱՎԱՃԱՌ ԵՒ ԿԻՆԸ.

Զինուորք եւ ժողովուրդ , արքունի սպա-  
 սաւորք , եպիսկոպոսունք , աբեղայք , մարա-  
 ջախտք , դատաւորք , պալատականք , եւ թա-  
 դադրութեան հանդիսին ներկայ դա՛նուող ու-  
 րիշ չըխօսող անձինք :

---

Ներկայացման իրաւունքը թարգմանչին  
 կը վերաբերի :

---

# ՕՐԼԷԱՆԻ ՕՐԻՈՐԴԸ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ ՄԸ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԳԵՂՋԿԱՅԻՆ ՏԵՂ ՄԸ

(Դէպ' առաջ աջ կողմը մասրան մը մէջ սլափեր մը,  
ձախ կողմը ըտրձր կաղնի մը):

---

## ՏԵՍՍՐԱՆ Ա.

ԹԻՊՈ Տ'ԱՐԳ

Իւր երէտ աղջկոնքն ու նոյա խոնարհ' երէտ հոգիւս:

ԹԻՊՈ. — Ո՛վ սիրելի գրացիքս, տակաւին  
Գաղղիացի ենք եւ մեր նախահարց մշակած այն  
հին հողոյն վրայ իբր ազատ քաղաքացիք ու  
տեսարք կ'ապրինք: Բայց ո՞վ գիտէ, զմեզ վաղն  
ո՞վ սլափ կտաւաղարէ: Արդէն ամեն տեղ մեր  
թշնամի Անդղիացւոյն զրօշը կը ծածանի եւ  
նորա ձիերը Գաղղիոյ ծաղկաւէտ մարգերը կը  
կոխկռտեն. Բարիդ զայն արգէն իբր յաղթող  
ընդունեց եւ Տակոսլէռի թաղն այլասեռ իշխանի  
մը զարմին կ'ընծայէ: Անշուշտ մեր թաղաւորը

սլիտի թափառի, քանի որ իւր հայրենական  
 ժառանգութենէն զրկուած է ու փախստական  
 կը պտըտի, մինչդեռ իւր բարեկամներն ու մեր-  
 ձակայ պաշտօնեաներն իւր խորթ մօր առաջ-  
 նորդութեամբ թշնամոյն բանակին մէջ իրեն  
 գէմ կը կոռլին: Քաղաքներ եւ գիւղեր հետ-  
 ղհետէ հրոյ եւ սրոյ կը մատնուին եւ աւերա-  
 կաց ծուխը մինչեւ այս դեռ խաղաղ դաշտե-  
 րուն վրայ կը տարածի: Ուստի, սիրելի դրա-  
 ցիքս, Աստուծով որոշեցի քանի որ դեռ կարող  
 եմ, աղջկանցս վիճակն ապահովցնել, քանզի  
 կանայք պատերազմի ատեն մահաւանդ պաշտ-  
 պանի կարօտ են, եւ ըստ առածին՝ «հաւատա-  
 րիմ սէրն ամեն բեռ կը վերցընէ» (Աւագ. Է-  
 5-6) Ստեփան եկուր, Մարկսրիդս կու-  
 ղեն: Լաւ, քանի որ մեր երկուքիս ալ ագա-  
 րակները սահմանակից են, սրտերն ալ միաբան,  
 կրնանք հաստատուն խնամութեամբ մը կապ-  
 ուիլ: (Եբ. 13-14) Գլօտ Մարի, ընդհր լուռ կը  
 կենաս, Լուիզաս ալ աչուրները կը խոնարհե-  
 ցընէ: Կրնամ երկու սիրտ իրարմէ բաժնել վասն  
 զի հարստութիւն չ'ունիս: Հիմակուան ատենս  
 որո՞ւ քով հարստութիւն մնաց. տուն եւ շտե-  
 մարան կրնան մերձակայ թշնամոյն մատնուիլ  
 կամ հրոյ ճարակ ըլլալ: Քաջ մարդու մ' հաւա-  
 տարիմ սիրտը միայն այսպիսի ժամանակ մըր-  
 բիկներու գէմ ամուր ապաւէն է:

ԼՈՒԻԶԱ. — Հայր:

ԳԼՕՏ ՄԱՐԻ. — Լուիզա:

ԼՈՒԻԶԱ. — (Յովնանն էրկելով) Սիրելի քոյր:

ԹԻՊՈ. — Ձեր ամեն մէկուն երեսուն արւատար հող, սուն մը, գաւիթ մ' ու հօտ մը կուտամ. Աստուած զիս օրհնեց, զձեզ ալ օրհնէ:

ՄԱՐԿԱՐԻԴ. — (Յովնանային) Ուրախացուր մեր հայրը. հետեւէ մեր օրինակին, թող այսօր երեք ամուսնութիւնք զուարթութեամբ կատարուին:

ԹԻՊՈ. — Գացէք, պատրաստուեցէք: Վաղն հարսնիքը կատարուի. կ'ուզեմ որ բոլոր գիւղն ուրախութեան մասնակից ըլլայ:

(Երէս շտէ Բէ- Բէ-է կ'երթան):

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԹԻՊՈ, ԲԵՄՈՆ, ՅՈՎՀԱՆՆԱ

ԹԻՊՈ. — Յովհաննա, տես ինչպէս երջանիկ են քոյրերդ. հարսնիք կ'ընեն ու ծերութեանս մէջ զիս կ'ուրախացնեն: Դու կրտսեր աղջիկս, դուն ինձի ցաւ ու տխրութիւն կը պատճառես:

ԲԵՄՈՆ. — Ի՞նչ կ'ըսես, ինչո՞ւ աղջիկը կը նախատես:

ԹԻՊՈ. — Ահա եռանդոտ երիտասարդ մը. բոլոր գիւղին մէջ նմանը չը կայ: Պարկեշտ պատանի մը, կ'ըսեմ, որ զինքը բոլորովին քու սիրոյդ ստեղծ է եւ արդէն երեք տարի է որ փափաքով ու ջերմ սիրով զքեզ կը խնդրէ: Դու

տակաւին զայն ցրտաբար կը մերժես եւ ա-  
նոր երեւալ անգամ չ'ես ուղեր, բայց ուրիշ  
հովիւներու աւելի զուարթ ընտանութիւն մը  
ցուցըցած չ'ես: Զքեզ երիտասարդութեան կա-  
տարեալ առողջութեանը մէջ կը տեսնեմ. հիմայ  
դարունդ է, յուսոյ ժամանակ է, ծաղիկ հա-  
սակիդ մէջն ես: Բայց 'ի դուր կ'սպասեմ որ  
դուար սիրոյ ծաղիկը կոկոնէն ելլէ եւ հասուն  
ոսկեգոյն պտուղ տայ: Ո՛հ, ասոր չ'եմ հաւնիր  
քանզի կարգէ դուրս կը տեսնեմ: Զ'եմ սիրեր  
այն սիրտն, որ զգացմանց տարիներուն մէջ  
ցուրտ է եւ սիրոյ մուտ չ'իտար:

ԲԵՄՕՆ. — Թող, Թիսօ, թող որ ուղածն  
ընէ: Աքանչելի Յովհաննայիս սէրն երկնային  
ազնիւ եւ քաղցր պտուղ մ'է. ընտիր բանը  
մեղմով կը հաստունայ: Նա տակաւին կը սիրէ  
լեռները բնակիլ եւ կը վախնայ ազատ արօտ-  
ներէն իջնել մարդոց գծուծ բնակութիւններն,  
ուր հոգ եւ անձկութիւն կը ընտկի: Յաճախ  
խոր ձորէն վեր նայելով դարմացմամբ կը տես-  
նեմ որ նա իւր հօտին մէջտեղը վայելուչ հա-  
սակով կանգնած լուրջ նայուածք մ'երկրի  
վրայ կ'արձակէ: Ո՛րչափ դերազանց կ'երեւայ  
նա ինձի յայնժամ, իբր թէ ուրիշ աշխարհի  
մ'արարած է:

ԹԻՊՕ. — Ինձի անհատնոյ բանն աս է: Իւր  
քերց ընկերութենէն կը չ'ախչի, ամայի լեռ-  
ները կը փնտռէ, հաւը չըխօսած իւր գիշերա-  
յին խշտեակը կը թողու եւ ահաւոր խաւարին

մէջ, մինչ մարդ իւր նմաններուն քով ըլլալ  
կ'ուզէ, նա՝ միայնակեաց թռչնոց նման՝ դիշե-  
րային դիւաց խաւարչտին եւ ահուելի տեղերը  
կը դիմէ եւ քառուղւոյն վրայ կայնելով լե-  
րան օդոյն հետ առանձին կը խօսի, ինչո՞ւ միշտ  
այն տեղը կ'ընտրէ եւ իւր հօտը ճիշդ հոն կ'ա-  
ռաջնորդէ։ Սաէսլ կը տեսնեմ զինքը ժա-  
մերով մտախոհ նստած այն արուխտեան ծա-  
ռին տակ, որմէ ամեն երջանիկ արարած կը  
փախչի, քանզի հոն ապահով չ'է։ Չար էակ մ'  
հեթանոսութեան հին ժամանակէն 'ի վեր բնա-  
կութիւնն հոն հաստատած է։ Գիւղին մէջ  
ծերունիք այս ծառին վրայով սոսկալի վէպեր  
կը պատմեն։ Անոր մթին ճիւղերուն մէջէն  
տարօրինակ ձայներու զարմանալի հնչում մը  
կը լսուի։ Իրիկուն մը վերջնալուսին՝ երբ այն  
ծառին առջեւէն անցնիլ հարկ էր, ես իսկ ճիւ-  
ւաղանման կլին մ'հոն նստած տեսայ, որ ինձի  
երկայն հանդերձին բաղմածալ խորչերուն մէ-  
ջէն ծանր կերպով չոր ձեռք մ'երկնցուց նշա-  
նացի զիտ ակնարկելով։ Ըսոյց ես իսկոյն աճա-  
պարանօք փախայ հողիս Աստուծոյ յանձնելով։

ԲԵՄՕՆ. — (Մարտն պարկերը ցոյցէլով) Բո-  
լորտիքն երկնածիր խաղաղութիւնն ծաւալող  
այն շնորհաց պատկերին օրհնեալ ներկայու-  
թիւնն է որ քու դուստրդ հոն կը բերէ, ոչ  
թէ դիւային աղդեցութիւն մը։

ԹԻՊՕ. — Ոչ, ոչ։ Այն երազներն եւ անձ-  
կութիւնն պատճառող տեսիլքները վայրապար

չ'են : Երեք անգամ տեսայ յանուրջս որ Յովհաննա , Ռէմիլի մէջ , մեր թագաւորաց աթոռին վրայ կը նստէր՝ եօթնաստեղեան շողշողուն պսակ մը գլուխը եւ ձեռքն արքունի դաւազան , որմէ երեք սպիտակ շուշան կը բուսնէր : Ես հայրն , երկու քոյրերը , բոլոր իշխանք , կոմսք , եպիսկոպոսունք , թագաւորն իսկ անոր առջեւ կը խոնարհէինք : Այսպիսի չքեղութիւն մը մեր գեղջկական վիճակին հետ լինչ յարմարութիւն ունի . ո՛հ , ասիկայ խորին անկման մը նշան է : Այս զգուշացուցիչ տեսիլն աղջկանս փառասէր խորհրդներն այլաբանաբար կը ցուցնէ : Իւր աղքատ վիճակին համար կ'ամչնայ , քանզի Աստուած անոր չքնաղ դեղեցկութիւն մը շնորհած եւ այս հովտիս բոլոր հովուհեաց մէջ զանի բարձր ձիրքերով դարդարած է : Այս պատճառաւ սրտին մէջ մեղսակից հպարտութիւն մը կը սնուցանէ , եւ հրպարտութիւնն է որով հրեշտակներն ինկան , եւ դժոխային ոգին մարդիկ անով կ'որսայ :

ՐԷՄՕՆ. — Ո՞վ այնչափ համեստ եւ տաքինի է որչափ քու դուստրդ : Այն չ'է որ իւր երէց քոյրերուն զուարթութեամբ կը ծառայէ . ինք ամենէն տաղանդաւորն է , բայց եւ այնպէս կը տեսնես որ իբրեւ նուաստ աղախին իւր քերց պարտաւորութիւնները միշտ հնազանդութեամբ կատարելու պատրաստ է : Անոր ձեռացը տակ ձեր հօտերն ու հունձքերը զարմանալի կերպով կ'աճին եւ անոր բոլոր

դործերուն վրայ կը հոսէ մեր ականալութենէն  
վեր յորդառատ յաջողութիւն մը :

ԹԻՊՕ. — Այո , ականալութենէ վեր յաջո-  
ղութիւն մը , ըսյց այս օրհնութիւնն ինձի սոս-  
կում կը պատճառէ : Ալ հերիք է , կը լռեմ , կ'ու-  
ղեմ լռել . իմ հարազատ եւ սիրական զաւակս  
կրնամ ամբաստանել : Ուրիշ բան չ'եմ կրնար  
ընել , ըսյց խրատել եւ աղօթել : իմ խրատս  
այս է : Փախիր այս ծառէն , մինակ մի կենար  
եւ կէս գիշերուն արմատներ մի փորեր , ըմ-  
պելիք մի պատրաստեր եւ աւաղին վրայ նը-  
շաններ մի գրեր . դիւաց խումբը գրգռել դիւ-  
րին է , անոնք հուրը յարկերու տակ կ'սպասեն  
եւ ամենէն մեղմ ձայնին շուտով դուրս կը դի-  
մեն . մինակ մի կենար , քանզի երկնից թա-  
ղաւորին անդամ չար դեւն անապատին մէջ  
մօտեցաւ :



## ՏԵՍՈՐԱՆ Դ .

ՊԵՐԹՐԱՆ յԵՒԴԷ ԿԱՆԱԿԱՆ ԶԵՐԱ ԿԸ ԴԻՆԷ , ԹԻՊՕ ,  
ԲԵՄՕՆ , Լ ՅՈՎՃԱՆՆԱ .

ԲԵՄՕՆ. — Լռեցէք , Պէրթրան քաղքէն կը  
դառնայ . տեսէք , ինչ ունի ձեռքը :

ՊԵՐԹՐԱՆ. — Ինչո՞ւ դարմացմամբ ինձի կը  
հայիք : Կարծեմ ձեռքիս անգիւտ սաղաւարտին  
համար դարմացած էք :

ԹԻՊՕ. — Այո, այնպէս է. պատմէ, այս սաղաւարտն ինչպէս ձեռքդ անցաւ: Մեր խաղաղ դաւառին մէջ այդ ինչ չարապուշակներ չան է:

(Յովնանն որ նախնիաց երէն պատարանաց մէջ լուսն կը կենար՝ ուշադրութեամբ կը մերջնայ):

ՊԵՐԹՐԱՆ. — Ես ալ չ'եմ գիտեր թէ ինչպէս ստիկայ ձեռքս ինկաւ: Աօքուլէօրէն մշակութեան գործիքներ դնած էի. յանկարծ հրապարակի մը մէջ մեծ ամբոխ տեսայ, քանզի Որդեանէն փախստականներ կուգային պատերազմին վրայ ձախող լուրեր քերելով: Բոլոր քաղաքը միահամուռ խռնեցաւ եւ մինչ ես ամբոխը ձեղքելով կ'անցնէի, Բոհեմիացի թուխ կին մ' այս սաղաւարտով ինձի մօտեցաւ եւ ակնկառոյց լինելով յիս կ'ըսէ. «Բարեկամ, սաղաւարտ մը կը փնտռես, գիտեմ. ահա փնտրուածդ, շատ աժան ալ կուտամ» . — Զինուորներուն տար, ըսի, ես գեղացի եմ, սաղաւարտի պէտք չ'ունիմ, բայց նա զիս չը թողլով կըրկնեց. «Ոչ ոք կրնայ ըսել թէ սաղաւարտի կարօտ չ'է, հիմայ պողպատէ գլխանոց մը քարաչէն տունէ մ' աւելի յարգի է»: Այսպէս փողոցէ փողոց ետեւէս գալով ստիպեց որ զայն գնեմ: Տեսայ որ փայլուն, գեղեցիկ եւ ասպետի մը գլխուն արժանի էր. եւ մինչ զայն ձեռքս բռնած տարակուսած կը կենայի այս նորանըջան գէպքին վրայ խորհելով կինն խկոյն տնիքեւոյթ եղաւ: Բազմութեան յորձանքը զայն

քչեց տարաւ եւ սաղաւարտը ձեռքս մնաց :

(Յովհաննէս Ժոնով և անյիշեալ սաղաւարտին ճարեւարով) :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Տո՛ւր ինձի :

ՊԵՐԹՐԱՆ. — Ի՞նչ պիտ' ընես : Աղջկան մը գլխուն զարդ չի կրնար ըլլալ :

(Յովհաննէս սաղաւարտը յեւեմէն Ժաշէլով) :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Իմն է եւ ինձի կը վերաբերի :

ԹԻՊՕ. — Ի՞նչ կ'ըսէ այս աղջիկը :

ԲՆՄՕՆ. — Կամբքին թող, այս զինուորական զարդն իրաւ անոր կը վայլէ, քանզի քաջ եւ այրասիրտ է : Խորհէ թէ ինչպէս հուածեց վաղորդն, այն սաստիկ վայրագ զաղանն որ մեր հօտերը կ'ապականէր եւ բոլոր հովուաց սարսափն էր : Մինակ առիւծաբար կռուեցաւ եւ բերնէն դառնուին առաւ, զոր զաղանն արիւնքուչտ ժանկօք խածած կը աանէր : Սաղաւարտ մ'ասկէ աւելի քաջ եւ արժանաւոր զլուսն մը պիտի զարդարէ :

ԹԻՊՕ. — (Պէրթրանին) Խօսէ, պատերազմին վրայով ինչ դժբաղդ լուր իմացար : Այն փաւ խըստականներն ինչ պատմեցին :

ՊԵՐԹՐԱՆ. — Աստուած օգնէ թաղաւորին եւ սղորմի մեր երկրին : Երկու մեծ ճակատի մէջ զարնուեցանք. թշնամին Գաղղիոյ մէջտեղն է, արդէն մինչեւ Լուսու գետին սահմանակից դաւառներուն տիրած է, հիմայ ալ իւր բոլոր զօրութիւնը ժողվելով Օրլէանը կը պաշարէ :

ԹԻՊՕ. — Աստուծոյ օգնութիւնն հասնի :

**ՊԵՐԹՐԱՆ.** — Ամեն կողմէն պատերազմական անթիւ անօթ կը կրուի, եւ ինչպէս ամառուան մէջ մեղուաց ազօտ խուֆերը մեղուանոցին բոլորափքը կը բոլղան, ինչպէս մարտիսերու ամալը մթնյամ օգէն մրկօրէն իջնելով լայնարձակ դաշտերը կը ծածկէ, այնպէս Յրէանի երկրին վրայ այլեւայլ աղղերէ բաղկացեալ զօրաց հրոսակ մ'ամպենման կը սուրայ, եւ իրարու անծանօթ լեզուաց խառնածայն խղուրրտիւնէն շփոթած բանակը խլացուցիչ ազմուկով կը լեցունէ: Պուրկունտի հզօր դուքսն իւր բոլոր հպատակ աղղերը ժողոված, Լիէփցիք, Լուքսէմպուրկցիք, չէնօցիք, Նամուրի բնակիչներն եւ երջանիկ Պրապանցիք, յովսոցեալ Կանտցիք, որք իրենց թաւշովն ու մետաքսովը կը պարծին, Սէլանտցիք, որոնց քաղաքները պերճութեամբ ծովեղերքը բռնած են, կաթնաւէտ Հօլանտան, Իւթրէխթ, հիւսիսային բեւեռն անգամ տեսնող արեւմտեան Ֆրիսլանցիք միահամուռ՝ բոնակալ Պուրկունտի բանակին կը հետեւին եւ կ'ուզեն Օրլէանը նուաճել:

**ԹԻՊՕ.** — Ո՛հ, զժբաղդ եւ ցաւալի պառակտում որ Գաղղիոյ զէնքերը Գաղղիոյ դէմ կը դարձնէ:

**ՊԵՐԹՐԱՆ.** — Նաեւ ծեր թագուհին հպարտ իշապօ՝ բանակին մէջ զրահապատ ժուռ դալով թունալից գրգռիչ խօսքերով ժողովուրդը կատաղութեան կը շարժէ իւր սրգւոյն դէմ, զոր զրկին վրայ կրած է:

ԹԻՊՈ. — Անիծեալ ըլլայ, Աստուած անշուշտ զայն օր մ' հպարտ Յեղարեւելին պէս պիտի կործանէ :

ՊԵՐԹԵԱՆ. — Սալիսպուրի՝ սարսաղակործան տոսկալի կոմսը պաշարման հրամանատարն է աջակցութեամբ առիւծաբարոյ Լիօնէլի եւ Թալպօի, որ մահացու սրով մարդիկ պատերազմաց մէջ ջարդուբուրդ կ'ընէ : Ասոնք ժրպիրհ հոգեով երգուած են ըստ իրոյ ազդկունք խայտառակութեան մասնել եւ ամեն սուր առնող սրոյ զոհել : Չորս բարձրաբերձ ամրատակ կանգնած են քաղաքը լրտեսելու համար : Վերէն Սալիսպուրի կոմսն արիւնասանձ հայեցուածով կը դիտէ, փողոցներուն մէջ խուճապեալ բազմութիւնը կը համրէ : Հաղարաւոր յաղթ դնտակներ արդէն յաղթին մէջ նետուած եւ յիշեցնելու քանդուած են : Նօթր-Տամի արքունի աշտարակն իւր երկնաբերձ գլուխը խոնարհեցուցած է : Ականներ ալ փորուած են եւ քաղաքը զարհուրած արդէն անդնդախոր վիճի մը վրայ ամեն վայրկեան որոտալից շառաչմամբ տալիս լինու կ'սպասէ :

(Յովհաննա աստիճանի աշտարակէն անշուշտ զոհել ետք աստուծոյ իշխանի մէջ) :

ԹԻՊՈ. — Այն քաջ սուսերները՝ Սէնթրալ, Լահիր, եւ Գաղղիոյ լանջապանակն՝ արիասիրտն Պաթար չը կային որ թշնամին այնպէս ուժգին հրոսակաքար յառաջ խաղալու համարձակեցաւ : Թաղաւորն ուր է : Հայրենեաց վը-

տանգն եւ քաղաքաց կործանումը միթէ անհոգութեամբ կը դիտէ :

ՊԵՐԹՐԱՆ. — Թաղաւորն իւր արքունիքը Շինեօն փոխադրած է . Զօրքը ցրուած ըլլալով չի կրնար ճակատ մղել : Զօրապետաց արուվիւնը , քաջասիրտ մարդոց բազուկն ինչ օգուտ ունի , երբ զօրքն ահիւ պաղած եւ ընդարմացած է . գոգցես աստուածառաք սարսափ մը քաջասրտաց անդամ սիրտը պաշարած է : Իշխանք 'ի զուր խրախոյս կը հարդան : Յրանգ ազգը՝ գայլերուն ոռնալէն դողալով խուճապող ոչխարներու նման , իւր նախնի համբաւը մոռցած՝ ասպհովութեան համար հեռաւոր գիւղեր կը դիմէ : Ինչպէս կը լսեմ , միայն ասպետ մը վեշտասան դօշխլւք թագաւորին օգնութեան կ'երթայ :

ՅՈՎՀԱՆՆԱՍ. — (Արագ) Ո՞ր է այդ ասպետը :

ՊԵՐԹՐԱՆ. — Պօտրիքուր . բայց դժուարաւ պիտի աղաափ թշնամուոյն խուղարկութենէն , որ անոր ետեւէն երկու բանակ հանած է :

ՅՈՎՀԱՆՆԱՍ. — Ասպետին ուր ըլլալն ըսէ ինձի , եթէ գիտես :

ՊԵՐԹՐԱՆ. — Վօքուլէօրէն հաղիւ օրուան մը ճամբայ հեռու է :

ԹԻՊՕ. — (Յաջապէս) Քեզ ինչ փոյթ, աղջիկ , քեզի չը վերաբերող բաներ կը հարցնես :

ՊԵՐԹՐԱՆ. — Թշնամին այսչափ զօրաւոր , թագաւորէն ալ պաշտպանութեան յոյսը կը տրուած ըլլալով , վօքուլէօրի մէջ խորհուրդ ե-

դաւ եւ Պուրկուճտի անձնատուր ըլլալ որոշուեցաւ։ Այսպէս օտար լծոյ տակ մտած չ'ենք ըլլար։ Պուրկուճտի տունն ալ մեր նախնի թագաւորաց ցեղէն է։ Թերեւս թագաւորութիւնը նորէն հին ցեղին դառնայ, եթէ երբէք Պուրկուճտ եւ Գաղղիա իրարու հետ հաշտուին։

ՅՈՎ.ՃԱՆՆԱ. — (Իբր թէ Գերբնական աղբամբ)։ Ինչո՞ւ անձնատուր ըլլանք։ Փրկիչը մօտ է եւ պատրաստ պատերազմի։ Թշնամոյն բախտն Օրլէանի առջեւ պիտի խորտակի։ արդէն անոնց չափը լեցուած եւ հնձուելու ժամանակը մօտեցած է։ Կոյսն իւր մանգաղովը կուգայ անոնց հպարտութեան հասկերը կտրելու։ Երկինքէն զրկուած է անոնց վառքը կործանելու, զոր մինչեւ աստղերը բարձրացուցած կը կարծէին։ Մի վհատիք, մի վախճիք։ հաճարը չը հասած, լուսնոյ սկաւառակը չը լեցուած՝ պերճահոս Լուսուին ալիքներէն խմող անդղիականն նժոյգ մը պիտի չը մնայ։

ՊԵՐԹՐԱՆ. — Ո՛հ, հրաշից ժամանակն անցած է։

ՅՈՎ.ՃԱՆՆԱ. — Հրաշք հիմայ ալ կ'ըլլայ։ Պալիտակ տատրակ մ'արծուենման խոյանալով հայրենիքը պատառող անդեղց վրայ պիտի յարձակի, այն աշխարհանենդ հպարտ Պուրկուճտը դետին պիտի կործանէ եւ դառանց երամակի մը պէս իւր առջեւէն պիտի քշէ հարիւրձեռնեայ աստուածամարտ Թալսօն, տաճարակասլուս Սալիսպուրին եւ բոլոր այն խորխոր

կղզեցիները : Աստուած անոր հետ է , զօրաց  
Տէրն , ան որ իւր արարածներուն ամենէն տը-  
կարը կ'ընարէ՝ փափուկ աղջկան մը միջոցով  
սլիափ փառաւորուի , քանզի Ամենակալ է :

ԹԻՊՕ. — Կը մոլեգնի՞ այս աղջիկը :

ԲԵՄՕՆ. — Անոր այս ուստերազմական աշ-  
խոյժը տուողը սաղաւարտն է : Տես , աչուրները  
կը փայլատակին , այսերէն կայծակունք կ'ար-  
ձակին :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ի՞նչ . Գաղղիա սլիափ կործա-  
նի : Այս հռչակաւոր երկիրն , արեգական լու-  
սաւորած երկիրներուն գեղեցկագոյնն , աշխար-  
հիս դրախտն , Աստուծոյ իւր բերրուն պէս սի-  
րածն՝ օտար աղբի մը շղթայակապ գերլն սլի-  
ափ ըլլայ : Հոս խորտակեցաւ հեթանոսաց դո-  
րութիւնն , առաջին խաչը՝ շնորհաց նշանն՝ հոս  
կանդնեցաւ . հոս կը հանգչի սրբոյն Լուսավի-  
կոսի ածիւնը : Այս երկրէն դալին զԵրուսա-  
ղէմ նուաճողները :

ՊԵՐԹԲԱՆ. — (Ապշած) Կը լսես Թիպօ , ուս-  
տի կ'սունու այս բարձր յայանութիւնը : Ասու-  
ուած քեզի շնորհալի զաւակ մը շնորհած է :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Պիաի չ'ուռննանք մեր յա-  
տուկ թագաւորները , մեր բնիկ իշխանները :  
Աշխարհէս անհետ սլիափ ըլլայ թողաւոր մ'որ  
անմահութեան արժանի է , որ մշակութեան  
եւ հովուութեան պաշտպան է , գերիներու ա-  
ղատիչ , քաղաքները զուարթութեամբ իւր գա-  
հուն հետ միացնող , տկարին պաշտպան , չա-

ընդունաւ սարսափ, աննախանձ իւր մեծութեան  
նը մէջ, վերջապէս թշնամութեամբ լի երկրիս  
վրայ՝ մարդ, բայց ողորմութեամբ հրեշտակ՝ մը ։  
Քանզի թագաւորաց ռոկեմայլ ավտուն ողոր-  
մելեաց ասպաստանն է ։ Հոն է զօրութիւնն ու  
ողորմութիւնը . յանցաւորն անկէ կը դողայ ,  
արդարը վստահութեամբ անոր կը մօտենայ ,  
եւ դահուն ըլլորտիքն ասիւծներու հետ կը  
խաղայ . Օտար թագաւոր մ' որ դուրսէն կու  
գայ , որուն նախնեացն ռոկոտինն այս երկրին  
մէջ չի հանգչիր՝ կրնայ այս երկիրը սիրել ։ Այն  
որ 'ի սղայութենէ մեղի հետ չը մնաւ , որուն  
օրտին մեր խօսքերը չ'են հնչեր , կրնայ մեր  
դաւեղներուն հայր ըլլալ ։

ԹԻՊՕ. — Թող Աստուած պաշտպանէ Գաղ-  
ղիանն ու թագաւորը ։ Մենք որ խաղաղասէր  
գեղացիներ ենք , ոչ սուր գործածել գիտենք ,  
ոչ ալ դու երկաթներ աշտանակել՝ լռութեամբ  
հնազանդինք անոր , դոր յաղթութիւնը մեղի  
թագաւոր պիտ' ընէ ։ Պատերազմի յաջողու-  
թիւնն տուողն Աստուած է , եւ այն է մեր տէրն՝  
որ սուրբ իւղով օծուելով Ռէմիլի մէջ թագա-  
ւորական դահը կը նստի . Օ'ն , աշխատինք եւ  
իւրաքանչիւր ոք թող իւր գործն հոգայ . մե-  
ծամեծները թողունք ։ Աշխարհի իշխաններ  
թող աշխարհիս համար մրցին . մենք հանդար-  
տութեամբ կործանումը գիտենք , քանզի մեր  
մշակած գետինն ամեն մրկի կը գիմանայ ։  
Թող հուրը մեր գիւղերը մաշէ . մարտիկ երկ-

ւարներ թող մեր արտերը կոխտտեն . նոր դա-  
րունը նոր ցան կը բերէ : Մեր անպաճոյճ հիւ-  
ղերը կրնան շուտով նորոգուիլ :

(Յովհաննայէն զար աֆէնէն ալ իւ Ռէնէն) :



## ՏԵՍԱՐՄՆ Դ.

### ՅՈՎՀԱՆՆԱ ՌԷՆԷ

Մնասցիք բարեալ, լեառնըդ բարձրը, հովասուն  
եւ դուք վայրեր ,  
Դուք տըխուր եւ հանդարտ խորածորեր, մնաք  
բարեալ .

Ոչ եւս այլ Յովհաննայս այսուհետեւ քայլէ ձեր  
վրայ ,  
Տայ նա զիւրն աւասիկ ձեզ կաթողին մնաք  
բարեալ :

Աղէ դուք, ով մարգեր, զորս ոռոգէի եւ դուք  
ծառեր ,  
Զոր տնկեցի, փթթեցէք զուարթութեամբ ,  
տուէք ծաղիկ :

Զեզ ալ կ'ըսեմ, մնաք բարեալ, այրեր , եւ դուք  
զով աղբիւրներ .  
Եւ դու իսկ, ո՞ արձագանդ , այս ձորակիս դու  
ձայն հեղիկ ,

Որ իմոց երգոց ձայնիս՝ պատասխանի ստէպ  
տայիր ,  
Յովհաննա այլ ոչ դառնայ , երթայ 'ի սպառ յօ-  
տար երկիր :

Դուք զուարթ վայրեր՝ հանդարտ ըղբօսանաց  
 իմոց տեղիք,  
 Թողում ես արդ աւասիկ հոս ետեւէս ձեզ մի-  
 այնակ .  
 Աղէ՛ , արդ ցրունցէք դուք , ոգառնուկք իմ ,  
 լերանց վերայ ,  
 Անտերունջ հօտ մի էք այսուհետեւ առանց  
 հովուի .  
 Ուրիշ հօտ մի կայ մընայ ինձ արածել այսու-  
 հետեւ ,  
 Նշաւակ արիւնազանդ դաշտին վրայ բիւր վը-  
 տանգաց .  
 Ոչ թէ զիս մղէ առ այս սնապարծիկ երկրաւոր  
 տենջ ,  
 Հրաւէրս այս պատգամ է յԱստուածակոյս կող-  
 մանէ ինձ :  
 Զի այն որ Մովսէսին բոցաճաճանչ երեւե-  
 ցաւ ,  
 Բորբոքեալ մորենւոյն մէջ Գորբը լերանը դա-  
 դաթէն՝  
 Անսլատճառ ներկայանալ Փարաւոնի պատուի-  
 բելով ,  
 Այն որ Յեսսէի բարեպաշտօն հովիւ որդին  
 կըմղէր մենամարտիլ ահագին դոռ հսկային դէմ ,  
 Այն որ միշտ է կանգնած հովուաց խմբին նը-  
 պաստաւոր ,  
 Ինձ այս ծառին խիտ առ խիտ ոստոց մէջէն  
 կու տայ պատգամ .

«Գնա դու, կ'ըսէ, յանուն իմ վկայել համայն  
աշխարհ» :

«Պահէ դու անդամներդ պինդ երկաթով դը-  
րահապատ» :

Թող պողպատն ըլլայ հանդերձ քու փափուկ  
կուրծքդ ծածկելու :

Մի երբէք առն մարդոյ սէր մերձենայ քու  
կոյս սրտիդ :

Երկրաւոր գարչ հեշտութեանց վանէ 'ի բաց  
մեղսալից բոցն :

Երբէք պսակն հարսնութեան զարդարէ մի  
գանգուր գիսակդ :

Մի եւ բնաւ գրկացըդ մէջ խայտայ մանուկ  
մատաղ սիրուն :

Այլ քեզ, օրիորդ, ես ղինուորական համբաւոյ  
շուք

Տամ որ փայլիս գեր 'ի վերոյ երկրիս կանանց  
մէջ դու պայծառ » :

«Զի երբ արիւնախանձքն անդամ կռուի մէջ  
վըհատին,

Երբ Գազդիոյ վերջին ժամն օրհասական թուի  
առ դուրս,

Յայնժամ դու պիտի կրես իմ նշանիս փողփու-  
ղեալ դրօշ :

Եւ, որպէս հնձոց ամսուն՝ կին ժիր մշակ ատոք  
հասկերն,

Այնպէս պիտի կործանես դու գոռ մարտիկնե-  
րը գիթաւալ :

Գաղղիոյ բախտին անիւը թաւալել սկսի քեւ ,  
Դիւցազանց նորա զարմին , այո , քեզմով է փըր-  
կութիւն .  
Դու պիտի աղատես Ռէմզ , թագաւորիդ դու  
կապես թագ » :

Նշան մ' առհաւատչեայ ինձ կը տըրուի ահա  
Սաղաւարտս այս Աստուծմէ , այո , անկէ կու-  
ճաղիւ թէ դպաւ ճակտիս , աստուածային ըզ-  
Գրով բէական իմն աշխոյժ պաշարեց զիս բո-  
Որ դողցես պատերազմաց ձիւն խրոան մէջ  
Եւ քչել տանիւ բռնի զիս դերդ ամալոսս մըրը-  
Եւ ահա թուի ինձ մարտամբոխից լսել աղ-  
Երկարացոտից դուիւն , եւ փողերու դըրդող  
(ԿԸ ԴԷԷ)

# ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԱՐԳՈՒՆԻ ԲԱՆԱԿ ԿԱՐՈՂՈՍ ԹԱԳԱՌՈՐԻՆ

Ի ՇԻՆԵՑՆ



## ՏԵՍՍՐՍՆ Ա .

### ՏԻՒՆՈՒԱ Լ ՏԻՒՇԱԹԵԼ

ՏԻՒՆՈՒԱ. — Ոչ . ալ չ'եմ կրնար համբերել . բաժնուէիմ այս թաղաւորէն , որ վատութեամբ վհատեալ կը կենայ : Սրտէս արիւն կ'երթայ , ջերմ արցունքներ թափելու կ'ըլլամ , երբ կը խորհիմ թէ յելուղակներ Գաղղիան սրով բաժին բաժին կ'ընեն , այսպիսի թաղաւորու թեան մ'հետ հինցած աղնիւ քաղաքներն իրենց ժանդոտ բանալիները թշնամուոյն կը յանձնեն , մինչ մենք հոս անդործ եւ հանդարտ կը վատենք մեր պատուական ժամանակն , որ մեզի փրկութեան առիթ կրնար ըլլալ : Օրլէանի առնուելու մօտ ըլլալը լսելով՝ հեռաւոր Նորմանտիոյ ծայրէն թռչնոյ արագութեամբ եկայ , յուսալով թէ թաղաւորն իւր բանակին դուխը սպառաղէն վառուած սլիտի տեսնեմ . այլ բարձ , ինչ կը տեսնեմ . նա ձեռնածուներէ եւ թրուսլատուրներէ պաշարուած նուրբ հանելուկներ լուծելու եւ իւր Սօրէլ սիրուհւոյն տոհական հանդէսներ տալու զբաղած է , որպէս թէ երկիրը խորին խաղաղութեան մէջ

ըլլար։ Ահա Գօննէթապլն այս խայտառակութեան չը կրնալով ժուժկալել՝ կը թողու կ'երթայ. ես ալ ղինքն իւր դժբախտ ճակատագրին մատնելով կ'երթամ։

ՏԻՒՆԱԹԵԼ. — Ահա թագաւորը կուգայ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

### ԿԱՐՈԼՈՍ Լ ՄԱՐԿԻՆԵՐԸ

ԿԱՐՈԼՈՍ. — Գօննէթապլը սուրը պատեանը դնելով կռնակն ինձի կը դարձնէ։ Փնռք, որ այս տժգոհ մարդէն ալ աղատեցանք. անտանելի կերպով մեր վրայ իշխել կ'ուզէր։

ՏԻՒՆՈՒԱ. — Այսպիսի փափուկ ժամանակ մարդ մը դանձ կ'արժէ։ Ըստ իս՝ այնպիսի անձ մը կորսնցնելը խոհեմութիւն չ'է։

ԿԱՐՈԼՈՍ. — Քանի որ հոս էր, հետը բարեկամ չ'էիր. հիմայ ինձի հակառակելու համար այդպէս կ'ըսես։

ՏԻՒՆՈՒԱ. — Գոռոզ, տաղտկալի եւ խնլացնոր մէկն էր. խելօք բան մը չ'էր զիտեր ընել, բայց այս անգամ դիտցաւ։ Գիտցաւ խոյս տալ այնպիսի ժամանակ մ'որ ալ սլառուոյ ակնկալութիւն չը մնաց։

ԿԱՐՈԼՈՍ. — Հասկըցայ, այսօր զուարթ օրդ է. քեզ արդելու չ'եմ ուզեր։ Տիւշաթէլ, ծե-

բունի թագաւորը Ռընէ պատգամաւորներ շնորհած է. ճարտար եւ անուանի երգիչներ են. անոնց աղէկ պատիւ բրէք. ամեն մէկուն մէյմէկ ոսկի շղթայ տրուի: (Պալարէն) Ինչո՞ւ համար կը ծիծաղէս:

ՏԻՒՆՈՒՆ. — Ոսկի շղթայներուն համար:

ՏԻՒՇԱԹԵԼ. — Տէր, գանձին մէջ ստակ չը կայ:

ԿԱՐՈԼՈՍ. — Գտիր. պէտք չ'է որ ճարտար երգիչներ ձեռնունայն երթան: Անոնք ցամաք գաւաղանները կը ծաղկեցնեն. անմահ դալար ոստերով անպտուղ թաղերը կը բոլորեն. իշխաններու հաւասար կ'իշխեն. լուկիդձերով իրենց դահեր կը շինեն: Անոնց խաղաղ թագաւորութիւնը տեղ եւ սահման չ'ունի, ուստի պէտք է որ երգէչը թագաւորին հետ քալէ. երկուքն ալ մարդոց մէջ ամենէն բարձր դիրքն ունին:

ՏԻՒՇԱԹԵԼ. — Տէր իմ արքայ, քանի որ դեռ յոյս եւ միջոց կար, քեզ անձկութիւն պատճառել չ'ուզեցի. հիմայ հարկը լեղուս կ'արձկէ: Պարգեւեւում բան չ'ունիս. վաղուան ապրուստիդ համար անդամ բան չը մնաց: Հարստութեան մականթացութիւնը տեղի տուաւ. գանձիդ մէջ խորին տեղատուութիւն մը կը տիրէ. զօրքին թշուալը վճարուած չ'է, տրաքնջելով քաշուիլ կ'սպառնան. արքունի տունդ ոչ թէ իշխանաբար, անգրաստութեամբ անդամ մատակարարելու միջոց մը չ'ես տեսներ:

**ԿԱՐՈՒՈՍ.** — Արքունի մաքսը դրաւի դէր՝  
 ու Լօմարտայիններէն փոխ ոտակ մտ :

**ՏԻՒՇԱԹԷԼ.** — Տէր . քու անձնական եկա-  
 մուտներդ . ըստ տէրութեան մաքսն՝ արդէն  
 երեք տարուան համար կանխիկ դրաւի դր-  
 ուած են :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ոչ միայն դրաւի դրուած ե-  
 կամուտն , այլ եւ կաշուածները կորսուելու  
 վրայ են :

**ԿԱՐՈՒՈՍ.** — Ուրիշ շատ հարուստ եւ գե-  
 ղեցիկ կաշուածներ ունինք :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Եթէ Աստուած եւ Թալպօխ  
 սուրը զանոնք մեզի չնորհեն . քայց եթէ թըշ-  
 նամին . Օրդէանն առնէ , դուն այնուհետեւ քու  
 բարեկամիդ Ուրնէ թաղաւորին հետ ոչխար ա-  
 բաժնու դնա :

**ԿԱՐՈՒՈՍ.** — Այս թաղաւորին վրայ միշտ  
 թշնամանօք կը խօսիս . քայց եւ այնպէս այս  
 անինչ , անարժաթ թաղաւորն է որ զիս այսօր  
 մեծապարզ եւ մեծարեց :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Իայց զրկածը Նարօլիի թաղը  
 չ'է , որ ալ իրեն չի վերադերի . քանզի ինչպէս  
 կը լսենք՝ հովուութիւնն սկսած օրէն 'ի վեր  
 այն թաղը ծախու հանուեցաւ :

**ԿԱՐՈՒՈՍ.** — Ասոնք կ'ընէ զբաղելու , զուար-  
 ճանալու եւ ուրախ ըլլալու համար , Կոչտ  
 բարբարոս երկրիս վրայ անհող եւ անմեղ աշ-  
 խարհը մ'շինենկ կը խորհի . այս խորհուրդը մեծ  
 եւ փառաւոր է : Կ'ուզէ հին ժամանակները նո-

րէն բերել, այն ժամանակներն՝ երբ դողտր զգացումներ կը տիրէին, ասպետական սէրը դիւցազնական սրտերու աշխոյժ կու տար, ազնուական տիկնայք ատեան նստելով նրբամտութեամբ փափուկ խնդիրներ կը լուծէին։ Զուարթ ծերունին մտօք դեռ այն ժամանակները կ'ապրի, եւ հին երգերու մէջ միայն ապրող այն տիկնայքը կ'ուղէ երկրիս վրայ իջեցնելով ոսկի ամպերու վրայ կեցող երկնային քաղաք մը կազմել։ Այո, սիրոյ արքունիք մը կանգնած է, ուր ազնուական ասպետներ կը շրջին, զգաստ տիկնայք փառօք կը բազմին, ուր մաքուր սէրը նորէն սլիտի դառնայ եւ դիւս անսնց մէջ սիրոյ իշխան սլիտի կարգէ։

**ՏԻՒՆՈՒԱ.** — Իմ բնածին բերումս այնպէս չ'է որ սիրոյ իշխանութիւնն անարգեմ։ սիրոյ անուամբ կը կոչուիմ եւ եմ սիրոյ որդի։ Իմ բոլոր դոյքս անոր ատեութեանը մէջ է։ Հայրս Յրէանի իշխան էր, ամեն կանացի սիրտ անոր կը խոնարհէր, բայց նաեւ ամեն բերդ անոր անառիկ չ'էր։ Կ'օւզեմ սիրոյ իշխան ըլլալու զքեզ արժանի ընել, քաջերուն քաջն եղիր։ Ինչպէս հին երգերէն գիտեմ, սիրոյ հետ քաջութիւնը զուգընթաց է։ Սեղանը դիւցազունք կը նստէին ոչ թէ խաշնարածներ։ ով որ գեղեցկութիւնը քաջութեամբ պաշտպանել կարող չ'է, արժանի չ'է անոր ոսկեղէն մրցանակին։ Ահա ասպարէզն, հայրենի թաղիդ

համար կռուէ, պաշտպանէ ասպետական սրով՝  
ժառանգութիւնդ եւ աղնիւ տիկնայց պատիւը․  
երբ թշնամւոյն արեան հոսանաց մէջէն ժա-  
ռանգական թաղդ նորէն քեզի կորդես, այն  
ատեն 'ի դէպ եւ իշխանաբար վայել է որ սի-  
րոյ մրտեննօք պսակուիս :

ԿԱՐՈԼՈՍ. — (Մանկա-խնէրէն ձեռն ու ձեռ-  
ն ծոյնէ) : Խոնչ է :

ՄԱՆԿԱԽԻԿԸ. — Օրէնքի խորհրդական-  
ներն զձեզ տեսնելու եկած են :

ԿԱՐՈԼՈՍ. — Թող ներս գան : (Մանկա-խնէ-  
րէն) : Օգնութիւն պիտի խնդրեն, ինչ կըր-  
նամ ընել . ես իսկ օգնութեան կարօտ եմ :

## ՏԵՍՏԱՐԱՆ Գ.

Երէտ խորհրդական և առջնորդ :

ԿԱՐՈԼՈՍ. — Բարի եկաք, հաւատարիմ օր-  
էնացի հպատակներս : Սիրելի քաղքէս ինչ լուռ  
կայ, թշնամւոյն պաշարմանն իւր բնիկ քա-  
ղութեամբը դէմ կը դնէ տակաւին :

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ. — Ոհ տէր, յետին կարօ-  
տութիւնը կը նեղէ եւ ասպակահութիւնը ժա-  
մէ ժամ քաղքին բոլորտիքը սաստկանալու վը-  
րայ է : Արտաքին ամբողջութիւնները քանդուած  
են, եւ թշնամին ամեն անդամ յարձակելուն  
նոր տեղ կը դրուէ . պարիսպները պաշտպա-  
նող զօրք չը մնայ, քանզի կռուելու համար

ատէս դուրս կը յարձկին, բայց քիչերը նորէն հայրենի քաղքին դուռը կը տեսնեն: Սովին աղէտքն ալ քաղքին կ'սպառնայ, ուստի բերդասահայ հրամանատար աղնիւ Ռօշրիէր կոմսն այս յետին կարօտութեան մէջ թշնամւոյն հետ ըստ հին սովորութեան դաշնադիր եղաւ տասն երկու օրէն անձնատուր ըլլալու, եթէ այն միջոցին մէջ քաղաքը փրկելու համար բաւական զօրք օգնութեան չը գայ: (Տէնտոս սասորէի բարիւնէն Նշանէր կը ցոյցէ):

**ԿԱՐՈՂՈՍ.** — Պայմանաժամը կարճ է:

**ԽՈՐՀՐԴԱԿԱՆ.** — Բայց մենք թշնամւոյն թոյլտուութեամբն հոս եկած ենք քենէ խընդրելու որ քաղքին ողորմելով ստյամնաժամէն առաջ օգնութիւն ղրկես: ապա թէ ոչ ժամադրութեան ատեն անձնատուր ըլլալու կ'ստիպուինք:

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ի՞նչպէս հաճութիւն տուաւ Սէնթրայլ այսպիսի ամօթալից ստյամնի մը:

**ԽՈՐՀՐԴԱԿԱՆ.** — Տէր իմ, այն քաջին կենդանութեան ատենը խաղաղութեան կամ անձնատուր ըլլալու խօսք ընելով կը համարձակէր:

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ուրեմն մեռաւ Սէնթրայլ:

**ԽՈՐՀՐԴԱԿԱՆ.** — Այո, մեր պարսպաց առջեւ ինկաւ դիւցաղն իւր թաղաւորին համար:

**ԿԱՐՈՂՈՍ.** — Սէնթրայլ մեռաւ, աւանդ: միայն այս մարդն ամբողջ դունդ մը կ'աժէր: (Ասպէս ինչ Ներս Գոնելով Պախարէն ահաճէն բռն ինչ կ'ըսէ, այն ալ այսպէս կը խոսէ):

ՏԻՒՆՈՒԱ. — Նոր վիշտ մ'ալ :

ԿԱՐՈԼՈՍ. — Ի՞նչ կայ :

ՏԻՒՆՈՒԱ. — Տուկլաս կոմսը պատգամա-  
ւոր զրկած է . Սկովաիացի զօրքն ապստամբու-  
լով ետ քաշուիլ կ'սպառնայ, եթէ իրենց թո-  
շակին մնացորդն այսօր չը վճարուի :

ԿԱՐՈԼՈՍ. — Տիւշաթէլ :

ՏԻՒՇԱԹԵԼ. — (Ուշիւ լինելով) Ի՞նչ կըր-  
նամ ընել, աէր :

ԿԱՐՈԼՈՍ. — Փովդ ինչ որ կայ գրաւի գիր .  
թագաւորութեանս կէսն ալ :

ՏԻՒՇԱԹԵԼ. — Անօգուտ է, այսպիսի ու-  
նայն խոստումներ չատ անգամ ըրինք :

ԿԱՐՈԼՈՍ. — Բանակիւս ամենէն ընտիր  
գունդն է, պէտք չ'է որ զիս հիմայ թողուն :

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ. — (Որոշ ինքնով) Տէր ար-  
քայ, օգնէ մեզի, յիշէ մեր կարօտութիւնը :

ԿԱՐՈԼՈՍ. — (Յոսահադուլով) Կրնամ  
դեմնէն զօրք հանել, ամիս մէջ արտ կը բուս-  
նի . զիս կտոր կտոր ըրէք, սիրտս հանկեք  
դրամ ըրէք ոսկւոյ տեղ . արծաթ եւ զօրք չ'ու-  
նիմ, արիւնս տամ ձեզի . (Ստիկիւն ներս հանելով  
դեմնէն) Բազմաթիւ անոր կը հարկնայ) :



## ՏԵՍՍՐԱՆ Դ.

ԱԳՆԵՍ ՍՕՐԵԼ արեւել Տ' և արեւմեցիք.

ԿԱՐՈՂՈՍ. — Սիրելիդ իմ Աղնէս, ով իմ կեանքս, զիս յուսահատութենէն ազատելու կուգաս. զքեզ ունիմ, գիրկդ կ'ապաւինիմ. քանի որ դուն իմս ես բան մը կորսուած չ'է:

ՍՕՐԵԼ. — Սիրելիդ իմ արքայ (Անճկաւեմի հարցում ընելու կերպով մը Բուրբուլի Նայելով) Տիւնուա ճշմարիտ է, Տիւնաթէլ:

ՏԻԻՇԱԹԵԼ. — Բարէ:

ՍՕՐԵԼ. — Այսչափ մեծ է կարօտութիւնը. թողակաները արուած չ'են. զօրքը մեկնիլ կ'ուզէ:

ՏԻԻՇԱԹԵԼ. — Դժբախտաբար այսպէս է:

ՍՕՐԵԼ. — (Արեւել Ներկայացնելով) Ահա ոսկի ահա ազամանդ. արծաթեայ անօթներս հալեցրնել տուէք: Գրաւի դրէք, ծախեցէք բերդերս, Բրօլանսի մէջ ունեցած երկիրներս վարձու տուէք. ամենայն ինչ դրամ ըրէք եւ զօրքը դռնացուցէք: Օն, մի յապաղէք:

ԿԱՐՈՂՈՍ. — Արդ Տիւնուա եւ Տիւնաթէլ, դեռ զիս աղքատ կը համարիք, քանի որ բոլոր կանանց դանձերն իմս են. Սօրէլս ալ ինձի պէս աղիւստացած է: Միթէ վաւրուայի արիւնը մաքուր է քան զնորայն. ոչ ապաքէն աշխարհիս առաջին աթոռոյն զարդը կրնար ըլլալ. սակայն նա զայն կ'արհամարհէ, միայն իմ սէրըս ըլլալ եւ կոչուիլ կ'ուզէ: Երբէք ինչ թան-

կազմին ընծայ ընդունած չ'է, անոր առջեւ ձըմնրային կանխահաս ծաղիկ մը կամ չքնաղ պլտուղ մ'աւելի պատուական է: Փոխանակ ինէնուէր ընդունելու ինք ինձի կը բերէ. առատաձեւնութեամբ բոլոր ունեցածը կուտայ՝ ինկած լախտս կանգնելու:

ՏԻՒՆՈՒԱ. —Այո քեզի չափ հանձարեղ է, բոլոր ունեցածը բռնկած տան մը մէջ կը նետէ: Տանայիսաց ծակ կարասը լեցընել կ'ուզէ. դրեղ պիտի չը կրնայ աղատել, այլ քեզի հետ ինք ալ պիտի կորսուի:

ՍՕՐԷԼ. —Այդ խօսքերուն մի հաւատար. քեզի համար տասն անգամ կեանքը վտանգի մէջ դրաւ, հիմայ չ'ուզեր որ ես իմ հարստութիւնս քեզի յանձնեմ: Ի՞նչ, ո՞չ ապաքէն քեզի համար այնպիսի բաներ զոհած եմ, որոնք ոսկիէ եւ ադամանդէ աւելի պատուական են: Կրնամ այժմ իմ երջանկութիւնս միայն խորհիլ: Ազէ մէկդի թողունք ամենաւելորդ զարդ եւ ասոր առաջին օրինակը դուն եղիր. արքունիքդ բանակի փոխէ, ոսկիդ երկաթի եւ ամեն բան զոհէ թագաւորութիւնդ նորէն ստանալու համար. ամենքս միեւնոյն կարօտութեան, միեւնոյն վտանգի ենթակայ ըլլանք, հեծնենք պատերազմական ձիերուն վրայ, թող մեր մարմիններն արեւակէզ ցրտահար ըլլան. ամպերը միայն ըլլան մեր ծածկոյթն եւ քարերը մեր բարձր: Ո՞չ ապաքէն ղինուոր մ'համբերութեամբ կը տանի ամեն նեղութիւն երբ

կը տեսնէ որ իւր թագաւորն ալ միեւնոյն նեղութեանց յանձնառու է :


**ԿԱՐՈՒՈՍ.** — (Մէջադէպ) Կը տեսնեմ որ ատենօք Գլէրմօնի մէջ հաւատաւորի մ' ինձի ըսած գուշակութիւնը կը կատարուի, այսինքն թէ կ'նոջ մ' օգնութեամբ թշնամեացս պիտի յաղթեմ եւ նախնեացս թագը քաջութեամբ սլաշտսլանեմ: Ես այս կ'ինն հեռուն՝ թշնամեաց բանակին մէջ ւրնտուցի, մօրս սիրտը ջանացի հաշտեցնել, բայց ահա այն դիւղազն կ'ինն՝ որ ինձի դէպ 'ի Ռէմզ կ'առաջնորդէ: Իմ Ագնէսիս սիրովն անշուշտ պիտի յաղթեմ:

**ՍՕՐԵՆ.** — Քու քաջ բարեկամացդ սուրունքը պիտի յաղթես:

**ԿԱՐՈՒՈՍ.** — Թշնամոյն երկպառակութեանէն ալ շատ բան կը յուսամ, քանզի սասույգ տեղեկութիւն ունիմ որ Անդղլոյ հպարտ Լորտերուն եւ հօրեղբօրորդւոյս Պուրկուհտի մէջտեղ առջի բարեկամութիւնը չը կայ. ուստի եւ Լահիրը պատգամաւորութեամբ յղեցի Դքսին որ եթէ յաջողի՝ բարկացեալ իշխանը վերստին ինձի հետ հաշտուելու յորդորէ: Անձկանօք անոր դարձին կ'սպասեմ:

**ՏԻԻՇԱԹԵՆ.** — (Պարտահանէն աւել) Ահա ասպիտը կուգայ:

**ԿԱՐՈՒՈՍ.** — Յաջող է պատգամը: Պիտի յաղթուինք թէ պիտի յաղթենք՝ հիմայ կ'իմացուի:



## ՏԵՍԱՐՍՆ Ե.

ԼԱՀԻՐ Լ առջինները .

ԿԱՐՈԼՈՍ. — (Լահիրը դիտարկելով) Լահիր, ըարենշանն է դալուսադ, համառօտիւ զրուցէ . ինչ պատգամ ունիս :

ԼԱՀԻՐ. — Ուրիշ յոյս չը կայ, քու սուրբ կրնայ միայն զքեզ աղատել :

ԿԱՐՈԼՈՍ. — Զ'ուղեր արդեօք հպարտ դուքսն հաշտուիլ . ո՞հ խօսէ, պատգամս ինչպէս ընդունեց :

ԼԱՀԻՐ. — Քու առաջարկութիւնդ մտիկ չ'ըրած՝ պահանջեց նախ որ իրեն յանձնուի Տիւշաթէլ, զոր իւր հայրն սպաննող կ'անուանէ :

ԿԱՐՈԼՈՍ. — Եթէ այս ամօթալից պայմանը մերժենք,

ԼԱՀԻՐ. — Յայնժամ դաշնադրութիւնը կը լուծուի, թէպէտ դեռ սկսած չ'է :

ԿԱՐՈԼՈՍ. — Առաջարկութեանս մերժուիլը տեսնելով ըսիր արդեօք որ հօրը մեռած Մօնթրօ կամուրջին վրայ մենամարտելու դայ, ինչպէս որ քեզի պատուիրած էի :

ԼԱՀԻՐ. — Այո, դայն մենամարտութեան հրաւիրեցի . ըսի որ դու բարձրութենէդ խօնարհելով իբր ասպետ թագաւորութիւնդ պաշտպանելու համար մենամարտիլ կ'ուզես . Այն ալ պատասխան տուաւ թէ՛ ինձի հարկ չ'է

կռուիլ այնպիսի բանի մ' համար զոր արդէն ունիմ. բայց եւ այնպէս, ըսաւ, եթէ հետո կռուիլ կ'ուզէ, կրնայ զիս գտնել Օրլէանի առջեւ, ուր վազն երթալու միտք ունիմ: Այս ըսաւ ու ծաղրելով կռնակն ինձի դարձուց:

ԿԱՐՈՂՈՍ. — Զը կան արդեօք խորհրդանոցիս մէջ արդարասէր անձինք, որք իմ կողմս պաշտպանեն:

ԼԱՋԻՐ. — Հակառակ կուսակցութեան կատաղութիւնը ճշմարտութեան ձայնը խղզած է: Խորհրդարանդ զքեզ եւ քու ցեղդ դահաղուրկ հրատարակեց:

ՏԻՒՆՈՒԱ. — Ո'հ, ինչ խրոխտ եւ ամբարտաւան են այսպէս իշխանութիւնը բռնաբարող քաղաքացիք:

ԿԱՐՈՂՈՍ. — Մայրս ալ չը կրցար համոզել:

ԼԱՋԻՐ. — Մայրդ:

ԿԱՐՈՂՈՍ. — Այո, անոր կարծիքն ինչ է:

ԼԱՋԻՐ. — (Ի՛նչ ինչ խորհելէ ետք) Թադաղութեան հանդէսը կը կատարուէր այն օրն որ Սէն-Տընի մտայ: Բարիւզցիք զարդարուած էին, որպէս թէ յաղթանակի օր էր: Անդղիացի թադաղորին անցնելու ամեն փողոցներուն մէջ յաղթական կամարների կառուցուած էին. ճամբաները ծաղիկներով ծածկուած էին եւ ժողովուրդը կառքին բոլորտիքը կը խայտարուրախութեան աղաղակների բառնալով իբր թէ Գաղղիոյ ամենագեղեցիկ յաղթութեան սօճն էր:

ՍՕՐԷԼ. — Կը խայտար, կը խայտար, որպէս

զի քաղցր եւ խանդակաթ թաղաւորի մը սիր-  
աը վիրաւորէ :

ԼԱՀԻՐ. — Հէնրի Լանդասդը պատանին՝  
սրբոյն Լուդովիկոսի դահին վրայ նստած տե-  
սայ : Հսկարտ հօրեղբարքը Պէտֆօրտ եւ Կլօ-  
սէսթր քովը կը կենային եւ Փիլիպպոս դուք-  
սը դահուն առջեւ ծնրադրութեամբ հաւա-  
տարմութեան երդումը կ'ընէր :

ԿԱՐՈԼՈՍ. — Ո՛հ նենդաւոր լիւան . անար-  
ժան հօրեղբորորդի :

ԼԱՀԻՐ. — Երկչոտ պատանին դահին աս-  
տիճաններէն վեր ելլելու ատենը կը դողդղար :  
« Զարագուշակ դիպում » դռնեց ժողովուրդը  
բարձրաձայն ծիծաղելով : Այն ատեն մայրդ  
մօտենալով . . . լեզուս առաջ չ'երթար ըսելու :

ԿԱՐՈԼՈՍ. — Ի՞նչ :

ԼԱՀԻՐ. — Գրկեց պատանին եւ հօրդ դա-  
հին վրայ բազմեցուց :

ԿԱՐՈԼՈՍ. — Ով մայր , մայր :

ԼԱՀԻՐ. — Կատաղի Պուրկունտցիք անդամ  
նոյն վայրկենին ամօթէն կարմրած կ'երեւային :  
Վերջապէս ժողովրդեան դառնալով մայրդ  
բարձրաձայն ըսաւ . « Շնորհակալ եղիք ինձ,  
Գաղղիացիք, որ փտած բոյնն առողջ ճիւղով  
կը պատուաստեմ եւ դձեզ խելացնոր հօր մ'  
անսլիտան դաւկէն կ'աղատեմ : (Թագուհի Էրեւ  
իւ Ժաֆէ : Աքէն Ժոքեն-լու-լըյն իւ Բրէ. հանդիս-  
նաց ասին ալ Էրէնց սոսկումն ու հիացումը իւ յայտեն) :

ՏԻԻՆՈՒԱ. — Վաղր , դադանաբարոյ կին :

ԿԱՐՈՂՈՍ. — (Գիշեր լուսն ցնցոնեմով ետքը խորհրդակցանքներուն) Ահա լսեցիր եղբւրս թիւնը. մի յապաղէ՛ք, դացէ՛ք Օրլէանն եւ հաւատարիմ հըստականներուն ըսէ՛ք որ զանոնք իրենց լինձ ըրած երգմանէն արձակած եմ. թող իրենց փըրկուծիւնն հոգան, Գուքսը «Յարի» կը կոչուի. թերեւս անոնց հետ մարդասիրութեամբ վարուի :

ՏԻՒՆՈՒԱ. — Ի՞նչ, տէր. Օրլէանը թող ուզէ կ'ուզես :

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ. — (Ծոռնը Գիշեր) Տէր արքայ, աջդ մեր վրայէն մի վերցընէր. հաւատարիմ քաղաքդ Անգղիացւոց բռնութեանը մի մատնէր : Օրլէան քու թաղիդ մէկ գոհարն է. չը կայ քաղաք մ' որ քու թաղաւորացն նախնեացդ անկէ աւելի հաւատարիմ եղած ըլլայ :

ՏԻՒՆՈՒԱ. — Միթէ յաղթուեցանք, արժան է թշնամւոյն մատնել քաղաք մը զայն սլաշտսլանելու համար վերջին ճիղը չ'ըրած : Առանց արիւն թափելու կ'ուզես կարճ խօսքով մը Գաղղիա ամենէն ընտիր քաղքէն զրկել :

ԿԱՐՈՂՈՍ. — Բաւական արիւն թափուեցաւ եւ ի դուր. Նախախնամութեան ձեռքը վրաս ծանրացած է : Զօրքս ամեն կռուի մէջ կը յաղթուի, խորհրդանոցս զիս մերժեց, մայրաքաղաքս եւ ժողովուրդս ցնձութեամբ թըշնամիս կ'ընդունի, աղբականներս զիս կը թողուն եւ կը մատնեն. մայրս անդամ գրկացը մէջ կը սնուցանէ թշնամւոյ մ'օտար ծնունդը :

Լուսառէն անդին անցնելով տեղի տանք երկնից հզօր բաղկին որ Անդղիացւոց հետ է :

ՍՕՐԷԼ. — Քաւ լիցի, որ յուսահատելով տէրութիւնը թողունք : Այդ խորհուրդը քու քաջ սրտէդ չի բղխեր : Վաս մօր մը դժնեայ դործը քաջասիրտ թաղաւորդ վնասեցուց : Բայց դուն քեզի եկուր, զօրացիր եւ քեզի դէմ կռուող ձախող բախտին հետ աղնուական քաջութեամբ մարտնչէ :

ԿԱՐՈԼՈՍ. — (Տիրութեան ձեռ խնայել) Ո՛հ, ո՛հ, Վալուայի ցեղին ախուր եւ սոսկալի դէպքերը ի՞նչպե՞ս անուր : Աստուած մերժեց այս ցեղը : մօրս մոլութիւններն ընտանիքս դիւանդ մատնեց : հայրս քսան տարի խելացնոր ապրեցաւ : երեք եղբարքս ինէ առաջ տարածամ մահուամբ կորեան : Աստուածային վճիռ է, Կարոլոս վեցերորդին տունը բնաջինջ պիտ' ըլլայ :

ՍՕՐԷԼ. — Ո՛հ, քեզմով նորէն երիտասարդանալով պիտի զարգանայ : Քաջալերուէ, առանց սխառճառի չ'էր որ ճակատագիրը քեզի խնայելով զքեզ որ եղբարցդ մէջ կրօսերապոյն էիր՝ անակնկալ կերպով այս դահուն վերայ նստոյց : Աստուած քու բարեմոյն հոգիդ պահեց, որպէս զի հակառակ կուսակցութեան բռնութեան մեր երկրին տուած վէրքերը բուժեա : Քաղաքական պատերազմին բոցերը դու պիտի մարես : իմ ներքին համոզումս է որ խաղաղութիւնն հաստատուելով զաղղիական պետութեան նոր հիմնադիրը պիտի ըլլաս :

ԿԱՐՈՒՈՍ. — Ոչ ես. այս խիստ եւ ալէկոծ  
ժամանակը զօրաւոր նաւապետի մը կարօտ է :  
Նս կրնայի խաղաղասէր ժողովուրդ մ' երջան-  
կացնել, ապստամբ եւ կատաղին սանձահարե-  
լու ձեռնհաս չ'եմ, ատելութեամբ ինէ օտա-  
րացած սրտերն ալ սրով նուաճել չ'եմ ուզեր :

ՍՕՐԷԼ. — Ժողովուրդը կուրացած եւ սը-  
նոտի յուսով խարուած է, բայց այս պատ-  
րանքը պիտի անցնի. Գաղղիացւոց իրենց հա-  
րազատ թագաւորին վրայ ունեցած սէրն՝ որ  
անոնց սրտին մէջ խորագոյն դրոշմուած է,  
քիչ օրէն պիտի արթննայ. պիտի արթննայ  
այն հին ատելութիւնն՝ այն նախանձն որ եր-  
կու ժողովուրդ թշնամութեամբ մշտնջենապէս  
կը բաժնէ : Ժպիրհ յաղթողն իւր դործոց ձա-  
խորդութենէն պիտի կործանի, ուստի պէտք  
չ'է որ այսպէս շուտ վհատիս : Աի մը դետնի  
համար անդամ կռուելու ես. պաշտպանէ քու  
անձիդ պէս Որլէանը : Նրանի թէ բոլոր նա-  
ւերն ընկղմել եւ կամուրջները կործանել տա-  
յիր, որպէսզի անդին չ'անցնիս քու տէրու-  
թեանդ սահմանն եղող Լուառէն, որ քեզի հա-  
մար « Ստիքս » մ'է :

ԿԱՐՈՒՈՍ. — Նս կրցածս ըրի. դահիս պաշտ-  
պանութեանն համար մենամարտութիւն առա-  
ջարկեցի, առաջարկութիւնս մերժուեցաւ : Ի  
դուր ժողովուրդեանս կեանքը կը վատնեմ, 'ի  
դուր քաղաքացս հիմնայատակ ըլլալուն պատ-  
ճառ կ'ըլլամ : Պէտք է որ ես ալ այն անհարա-

զատ մօր պէս զաւակս սրտով բաժնեմ . ոչ , թող  
ապրի , թէեւ ինձի համար կորուստ է :

**ՏԻՒՆՈՒԱ .** — Ի՞նչ տէր , թագաւորի մը կը  
վայլէ այսպէս խօսիլ . թագէ մ'հրաժարելուն  
կերպն այս է . հպատակացդ վատթարագոյնն  
իսկ պատրաստ է իւր կեանքն ու ստացուածքը  
զոհել՝ իւր համոզմանն , ատելութեանն ու սի-  
րոյն համար , հակառակ կամ 'ի նպաստ քեզ .  
եւ իւր միտքն հաճեցնելու համար ամեն մարդ  
կուսակցութեան մը կը յարի , երբ քաղաքա-  
կան պատերազմին արիւնոտ դրօշը պարզուի .  
Երկրագործը կը թողու իւր արօրը , կիկն իւր  
աղեկատն , եւ գիւղացին անձամբ իւր հունձը :  
Իւր պատուոյն կամ Աստուծոյն կամ կուռքե-  
րուն համար կռուողը բանի մը չի խնայեր , ոչ  
ալ կ'սպասէ որ իրեն խնայուի : Թող ուրեմն  
այդ կանացի վշտակցութիւնն որ թագաւորի  
մը սրտին զարդ չ'է : Յառաջ տար պատերազմը ,  
քանի որ բռնկած է . այս պատերազմին բոր-  
բոքելուն պատճառը քու անխոհմութիւնդ  
չ'է . ապա պէտք է որ ժողովուրդն իւր թա-  
գաւորին համար ինքզինք զոհէ : Այս է աշ-  
խարհիս բախտն ու օրէնքը . Գաղղիացին ար-  
դէն զայս գիտէ : Աղդ մ'որ յօժար կամօք չի  
զոհեր բոլոր ունեցածն իւր պատուոյն համար՝  
նախատանաց արժանի է :

**ԿԱՐՈԼՈՍ .** — (Խորհրդահաներուն) Ինչ ուրիշ պա-  
տասխան մի սպասէք : Աստուծոյ օգնութիւնն  
հասնի ձեզի . ես աւելի բան մը չ'եմ կրնար ընել :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ուրեմն յաղթութեան աստու-  
ուածն ալ կռնակը քեղի պիտի դարձնէ՝ ինչ-  
պէս որ դուն հայրենի իշխանութեանդ կը դար-  
ձնես: Քանի որ դուն ղքեղ կը թողուս, ես  
ալ կը թողում: Զքեղ պահէն սասալալողը Պուր-  
կունտի եւ Անդղիոյ միացեալ զօրութիւնը չ'է,  
քու սկարութիւնդ է: Գաղղիոյ թագաւորները  
մէյմէկ դիւցազն էին. դուն այն պատերազ-  
մական հոգին չ'ունիս: (Խորհրդաւաններուն) Թա-  
գաւորն ղձեղ կը թողու: Բայց ես դիմադրաւ  
կ'երթամ իմ հայրենի քաղաքս Օրլէան՝ անոր  
աւերակացը ստիկ թաղուելու: (Մէկէլ կ'ազէ,  
Սէրէլ չ'իւղէ):

**ՍՕՐԷԼ.** — (Թագաւորէն) Ո'հ, մի թողուր որ  
քենէ բարկութեամբ զատուի: Խօսքերը խիստ  
են, բայց սիրտն ոսկւոյ պէս մաքուր եւ ան-  
կեղծ է: Ղքեղ սաստիկ սիրողն ալ այն է եւ  
ստէպ ղքելի համար արիւն թափած է: Ե'կ,  
Տիւնուս, խոստովանէ որ ազնիւ բարկութեան  
մը սաստիկութիւնն ղքեղ շատ հեռուն մղեց:  
Դուն ալ, թագաւոր, հաւատարիմ բարեկամի  
մը խստութեանը ներէ. եկէք, եկէք, սաստիկ  
բարկութիւնը դեռ անշիջանելի կերպիւ չը  
բորբոքած՝ շուտով ձեր սրտերը միացընում:  
(Տիւնուս աշտնէրը Խորհրդէն վայ տեւեւելէ:  
Էբբ Բէ պարտեանի կ'աղասէ):

**ԿԱՐՈՂՈՍ.** — (Տիւնուս) Պէտք է որ Լու-  
աուն անցնինք. նաւ մտնելու պատրաստու-  
թիւններն ըրէ:

**ՏԻՒՆՈՒԱ.** —(Սերէլէն) Մննա բարտւի, (Բար-  
կո-խեմսբէն իւր Բեհի, Խորհրդակա՛նք Երեմէն կ'երթան) :

**ՍՕՐԵԼ.** —(Յաւաւհարո-խեմսբէն Յեռո-լեհերը իւր  
կցէ) . Ո՛հ, Եթէ երթայ, բոլորովին պիտի վնա-  
տինք : Լահիր, Խաւեմն գնա՛ն . ջանա՛ն որ զայն  
մեղմացընես : (Լահիր իւր Բեհի) :

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

### ԿԱՐՈԼՈՍ, ՍՕՐԵԼ, ՏԻՒՇԱԹԵԼ

**ԿԱՐՈԼՈՍ.** —Այսչափ չքնաղ երջանկու-  
թիւնն մ'է թաղն, անկէ բաժնուիլն այդչափ  
դժուար կ'երեւի : Ո՛հ . ինձի համար ուրիշ բան  
մը կայ որ աւելի անտանելի է : Այս յանդուգն  
պաշտօնեաներուն խօնարհիլ եւ հպարտ ու ան-  
հուճ հպատակներէ կախումն ունենալ՝ աւելի  
դառն եւ աւելի խիստ է աղինիւ սրտի մ'համար  
քան բախտէն ընկճուիլ : (Տէ-շախէլէն որ պախ-  
տէն իւր վարէ) Պատուէրս չուտով կատարէ :

**ՏԻՒՇԱԹԵԼ.** —(Թաւառքէն հոգի իյնալով) Տէ՛ր  
արքայ :

**ԿԱՐՈԼՈՍ.** —Վճռուած է, ալ խօսք չ'ուղեր :

**ՏԻՒՇԱԹԵԼ.** —Պուրկունափի դքսին հետ  
հաշտուելէ զատ քեզի համար աղատութեան  
ուրիշ միջոց չ'եմ տեսներ :

**ԿԱՐՈԼՈՍ.** —Ինձի խաղաղութիւնն կ'առա-  
ջարկես . կուղնա որ քու արեամբդ կնքեմ այս  
դաշինքը :

**ՏԻՒՇԱԹԵԼ.** — Ահա գլուխս, զոր քեզի համար սաէս պատերազմի մէջ վտանգի գրի. հիմայ հաճութեամբ պիտատուրթեան բեմին վրայ կը դնեմ: Գոհացուր դուքսը, մատնէ՛ զիս անոր սաստիկ վրէժխնդրութեանը, թող իմ արիւննովս հին թշնամութեանը վերջ տրուի:

**ԿԱՐՈԼՈՍ.** — (Վայելեա՛ն Տ' Եղեալ և Լուսնոյ Զայելլ) Իրա՛ն է, այնչափ անյոյս է վիճակս որ սիրտս ճանչցող բարեկամներս անդամ ինձի ազատութեան ամենէն նախատելի կերպը կ'առաջարկեն: Ո՛հ, այժմ կ'իմանամ որչափ մեծ է կործանումս, քանզի բարեկամներս պատուոյս չ'են խնայեր:

**ՏԻՒՇԱԹԵԼ.** — Խորհէ՛ . . . :

**ԿԱՐՈԼՈՍ.** — Ալ մի՛ խօսիր, զիս կը զայրացընես. տասը թագաւորութիւն ալ չանելս զիտնամ՝ դարձեալ բարեկամի մ'արեան մէկ կաթիլն անգամ չ'եմ ուղեր թափել: Պատուիրածս կատարէ, դնա՛, կարասիներս նաւերը թող դրուին:

**ՏԻՒՇԱԹԵԼ.** — Իսկոյն պատրաստ կը գըսուես: (Եւ Դաշտ-Ելլ կ'երեւայ. Աքնէս սաստիկ կուայ):



## ՏԵՍԱՐԱՆ Ի.

### ԿԱՐՈԼՈՍ Լ ՍՕՐԵԼ

**ԿԱՐՈԼՈՍ.** — (Սօրէլէն յետէ Բաշէլէ) Մի տրամիր, ազնիւդ իմ Ագնէս. Լուսաւի անդին ալ Գաղղիա մը կայ: Աւելի երջանիկ երկիր մը կ'ելթանք. հոն ջինջ եւ պայծառ երկիրք մը կը ծածաղի, աւելի անոյշ օդ մը կը փչէ եւ աւելի ազնուաբարոյ մարդիկ կը բնակին. հոն քաղցր երգեր կը լսուին, կեանքն ու սէրը միատեղ զուարթութեամբ կը ծաղկին:

**ՍՕՐԵԼ.** — Ո՛հ, այս աղէտալի օրն ալ պիտի տեսնէի. թաղաւորն արսոր երթայ, զաւակ մ' հայրենի տունէն բաժնուի եւ իւր որորոցէն հեռուն փախչի: Ո՛հ, գեղեցիկդ երկիր, զոր կը թողունք. զքեզ մեր քայլերուն տակ դառնելու այլեւս բախտը պիտի չ'ունենանք:

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

### ԼԱՀԻՐ ԷՆ ԴԱՆԱՅ Լ ՄԵԼԻՆԵՐԸ.

**ՍՕՐԵԼ.** — Մինակ կու դաս. ո՛ւր է, չը բերիր: (Մտախառն) Ի՞նչ կայ, Լահիր, դէմքդ բարեգուշակ չ'է: Արդեօք նոր ձախորդութիւն մը պատահեցաւ:

**ԼԱՀԻՐ.** — Ձախորդութեան ժամանակն անցաւ, մեղի նոր արեւ կը ծաղի:

ՍՕՐԵԼ. — Ըսէ՛ ինչ է, կ'աղաչեմ:

ԼԱՀԻՐ. — (Թագաւորին) Օրլէանի խորհրդա-  
կանները կանչէ:

ԿԱՐՈԼՈՍ. — Ինչո՞ւ համար, ինչ կայ:

ԼԱՀԻՐ. — Կանչէ՛, բախտդ փոխուեցաւ.  
կռիւ մ' ունեցանք եւ յաղթեցինք:

ՍՕՐԵԼ. — Յաղթեցինք, քաղցրալո՛ւր ա-  
ւետիս:

ԿԱՐՈԼՈՍ. — Լահիր, սուտ համբաւ մը չ'ըլ-  
լայ. յաղթեցինք, չ'եմ' հաւատար:

ԼԱՀԻՐ. — Ո՛հ. իսկոյն պիտի հաւատաս ա-  
ւելի մեծ սքանչելեաց: Ահա արքեպիսկոպոսը  
կու գայ, Օրլէանի Պաթարն հետը կը բերէ:

ՍՕՐԵԼ. — Ո՛վ յաղթութեան գեղեցիկ ծա-  
ղիկ, որ կը բերես իբր երկնային պտուղ՝ խա-  
ղաղութիւնն ու հաշտութիւնը:



## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՌԵՄՁԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ՏԻՒՆՈՒԱ, ՏԻՒՇԱ-  
ԹԵԼ, ԿԵՆՏԱՐԱՐ ԿԱՊԻՏԱՆԻ, ՌԱՌԻԼԻ ՀԵՐ, ԼԱՄ-  
ՓԵՆԵՐԸ.

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — (Պաշարը խառնարանէն կը  
շերտացնէ, անոնք յետո՛յ յետո՛յ կուգան) Իշխանք,  
ղիւրար գրկեցէք, մէկդի թողէք բարկութիւնն  
ու ռիւր, քանզի երկինք մեզի հետ հաշտ է:  
(Տե՛նա՛ս խառնարանէն իջնէ):

ԿԱՐՈԼՈՍ. — Աղատէ՛ զիս տարակուսէ եւ

դարմանքէ : Այս ինչ նոր տեսարան է, ուստի  
է այս յանկարծական փոփոխութիւնը :

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — (Զբաւառաւ ապէտը ու  
աւջ դառնալով խառնարանն աւջէ կէցընէ) Խօսէ :

ՌԱՌԻԼ. — Լօրէնէն տառնեալից դուռդ դօրք  
բանակը բերած էինք . մեր հրամանատարը  
վօքուէթօրցի Պօտրիքուր ասպետն էր : Երբ  
վէրմանթօնի բարձրաւանդակներն հասած՝ Եօն  
դետին վազած ձորը կ'իջնէինք, հետուն լայ-  
նարձակ դաշտին մէջ թշնամին կը կենար . ե-  
տեւ դառնալով տեսանք որ ուրիշ ղէնքեր կը  
փայլէին : Այսպէս երկուստեք թշնամիէ պա-  
շարուած ըլլալով մեղի ոչ յաղթելու ոչ ալ  
փախչելու յոյս կար . քաջերն անդամ վնասե-  
լով եւ ամենքս յուսահատած՝ ղէնքերը թողե-  
լու վրայ էինք : Երբ դօրապետներն առանց  
բան մ'որոշելու կը խորհրդակցէին, ինչ կը  
տեսնենք, չքնաղ սքանչելիք մ'երևցաւ մեր  
աչքերուն : Յանկարծ անտառէն օրիորդ մ'ելաւ  
պատերազմի չաստուածուհւոյ մը պէս գլուխը  
սաղաւարտով, գեղեցիկ միանգամայն ահաւոր,  
սեւ ու գանգուր գիտակն ուսերուն վրայ կը  
ծածանէր, գողցես երկնային լոյս մը ցոլացը-  
նելով սկսաւ բարձրաձայն գոչել . « Ինչո՞ւ  
սարսափած կը կենաք, քով Գաղղիացիք, յար-  
ձակեցէք թշնամւոյն վրայ՝ թէեւ ծովու ա-  
ւաղէն աւելի բազմաթիւ ըլլան . ղձեղ զրկօղն  
Աստուած եւ սուրբ Կոյսն է » : Այսքսաւ եւ  
զրօշակրին ձեռքէն դրօշն յափշտակելով հա-

մարձակ՝ բանակին գլուխն անցաւ։ Մենք ապ-  
շած՝ դրօշին եւ զայն բռնող օրիորդին ետեւէն  
իբր թէ ակամայ կ'երթայինք թշնամոյն վրայ  
յարձակելու։ Թշնամին ալ զարմացած եւ ան-  
շարժ՝ այս նորանշան տեսիլքը կը դիտէր, իս-  
կոյն գերբնական սարսափ մը զանոնք սլաշա-  
րեց․ սկսան փախչիլ իրենց ղէնքերն ու նի-  
ղակները ձգելով․ մէկէն ամբողջ բանակը  
դաշտին վրայ ցիրուցան եղաւ, զօրապետաց  
խրախոյսն ու աղաղակը չը կրցաւ անոնց այս  
ակամայ սարսափը փարատել։ առանց իրենց  
ետին նայելու մարդիկ եւ ձիեր գետին յորձա-  
նացը մէջ կը դիմէին դահաւիժ։ Այսպէս ա-  
ռանց գիմադարձութեան մէկ մասն հեղձամահ  
կորեաւ, մեծ մասն ալ մեր սուրէն խողխողե-  
ցաւ։ Կոտորած էր մահաւանդ՝ քան թէ սլա-  
տերազմ․ դաշտին երեսն երկու հազար թըշ-  
նամոյ դիակներով ծածկուեցաւ՝ գետին մէջ  
կորսուածներն առանց հաշուելու։ Իսկ մեր  
կողմէն ոչ ոք մնասուեցաւ։

**ԿԱՐՈՒՈՍ.** —Ո՛վ Աստուած․ ինչ մեծ ըս-  
քանչեւիք։

**ՍՕՐԷԼ.** —Օրիորդ մ'է այս սքանչելիքը  
դործողը․ ուստի եկաւ եւ ո՛վ է։

**ՌԱՌԻԼ.** —Իւր ուլ ըլլալը թաղաւորին մի-  
այն կ'ուղէ յայտնել, ինքզինքն աստուածա-  
ռաք մարդարէ կը կոչէ, եւ կը խոստանայ դեռ  
նոր լուսինը չը ծագած Օրլէանն աղատել,  
ժողովուրդն անոր հաւատալով սլատերազմիչ

կ'ուղէ : Ինք ալ բանակին հետ ճամբայ ելաւ ,  
քիչ ատենէն հոս կը հասնի : (Զահարէ յայն կը  
լսուի և զնէրու շարաչին) Դորդիւնը կը լսէք  
եւ դանդակաց ձայնն . այն է , ժողովուրդն  
աստուածառաք պատգամաւորը կը բարեւէ :

ԿԱՐՈՂՈՍ . — (Տէ-շախէին) Թող ներս գայ :  
(Արեւելահայոցն) Ի՞նչ ըսենք այս գէպերին հա-  
մար . աղջիկ մը դիւ յաղթող կ'ընէ եւ այնպիսի  
ժամանակ մ'որ Աստուծոյ աջը միայն կրնար  
դիւ փրկել : Ասիկայ բնական կարգէ դուքս է  
ըսենք արդեօք , Սրբազան , թէ հրաշք է :

ՋԱՅՆԵՐ . — (Տէսարանին և Կէ-էն) Կեցցէ օրի-  
որդը , կեցցէ ազատարարն մեր :

ԿԱՐՈՂՈՍ . — (Տէ-շահին) Տեղս նստէ , Տիւ-  
նուա , փորձենք սա սքանչելագործ աղջիկը .  
եթէ ներշնչեալ եւ Աստուծոյ զրկուած է՝  
պիտի գիտնայ թէ մեր մէջէն ո՞րն է թաղա-  
ւորը : (Տէ-շահ և շահ, լաւաւորն անոր աջ կողմը  
կը նշուի , Արեւ Սերէլ անոր խով : արեւելահայոցն և  
որեւ շահին և Կէսարանին մեկալ կողմն են . Կէսարանին  
մէջ Կէ-էն պարսպ է) :

## ՏԵՍԱՐՍՆ Ժ.

Աւլիններն . ՅՈՎՀԱՆՆԱ՝ Հեղը խորհրդական-  
ներն ու ասպետաց Բաղն-Միւն մ'որոնք Կէսարանին  
մէջ կը բնակեն : Յովհաննա աշխատանք կը արաւ  
հաւով իւր աւլին շարաւած անջնէք կը զննէ :

ՏԻԿՆՈՒԱ . — (Բարձր և հարաւոր յայնով) Դմեն  
ես այն հրաշագործ օրիորդը :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Զոյն ընդդէմէն լուս և հանդարտ կը նայէ) Պաթար տ'Օրլէան, կ'ուզես զԱստուած փորձել. թող այդ տեղն որ քուկդ չ'է: Կենէ մեծին զրկուած եմ: (Համարյալ թալով դէպ 'ի Ռաֆաէլէն կ'երթայ, առջին ծոռնը կը դնէ և շուտ մը կ'ելլէ երբ թալուէն: Բոլոր հանդիսականք զարմացմամբ ահար կը նայեն. Տիւնուս ախարէն կ'ելլէ և Ռաֆաէլէն իւր դէպը կը նայէ):

ԿԱՐՈՂՈՍ. — Առաջին անգամ է որ զիս կը տեսնես, ինչպէս ճանչցար որ թաղաւորն եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Այնպիսի ժամանակ մ'զքեզ տեսայ, երբ Աստուած միայն քեզի կը նայէր: (Ռաֆաէլէն մօտենալով կ'ապացայնէ կ'ըսէ) Կը յիշես որ անցեալ գիշեր, երբ բոլորաբար ամենքը խոր քնոյ մէջ էին, անկողնէդ ելլելով Աստուծոյ ջերմաջերմ աղօթք մ'ըրիր: Հրամայէ որ հանդիսականք դուրս ելլեն եւ ես այն աղօթքը կրկնեմ:

ԿԱՐՈՂՈՍ. — Հարկ չ'է որ Աստուծոյ ըսածս մարդոցմէ ծածկեմ. աղօթքիս խօսքերը կրկնէ որ ես ալ քու Աստուծոյն ներշնչեալ ըլլալուդ հաւատամ:

ՅՈՎՀԱՆՆԱ. Երեք աղօթք ըրիր, տէր արքայ. լաւ ուշադիր եղիր թէ ճիշդ կը կրկնեմ, Նախ աղաչեցիր որ, եթէ քու իշխանութեանէդ պատճառով ոճիր մը կամ եթէ հօրդ թաղաւորութեան ատեն դործուած եւ դեռ չը ջառուած մեղք մ'այս ցաւալի պատերազմին պատճառ եղաւ, ժողովրդեանդ տեղ զքեզ զոհ

ընտրէ եւ միայն քու վրադ թափէ իւր բար-  
կութեան բաժակը :

**ԿԱՐՈՂՈՍ.** — (Հեռոյմբ էր եւ հ'երեւոյ) Ո՞վ  
եւ դու, դերբնական արարած. ուստի կու գաս  
(Ամենք ալ իրենց զարմանք իջոյտնեն) :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Երկրորդ աղօթքդ այս էր .  
եթէ աստուածային բարձրագոյն հրամանաւն  
ու կամօքն արքայական դաւադանը քու ցիղէդ  
առնուի, եթէ դու՝ քու նախահարցդ այս երկ-  
րին մէջ ըստ ունեցածէն զրկուիս, կը խընդ-  
րէիր որ երեք բան միայն քեզի պահուի . խա-  
ղաղ խիղճ մը, բարեկամացդ սիրտն եւ Ազնէ-  
սիդ սէրը : (Թափառն երեսը իջ փոցէ աստիկ ար-  
դաստեղով, ներկայ Գոնոռոնէրոնն ամենքն ալ աղ-  
շափեան մէջ կ'ընկնին. վայրէշան ճը լռութեանը Գո-  
րէլէ ետքն Յովհաննա իջ շարունակէ) Կրկնմա՛ եր-  
րորդ աղօթքդ ալ :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Բաւական է, հաւատացի .  
ասիկայ մարդկային կարողութենէ վեր է :  
Ամենակարողն Աստուած է դքեզ զրկողը :

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.** — Ո՞վ եւ դու, սքանչելի  
եւ սուրբ աղջիկ. որ Երջանիկ հողին վրայ ծը-  
նար . խօսէ, որ օրհնեալ ծնողք դքեզ 'ի լոյս  
բերին :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Հայր սուրբ, Յովհաննա կը  
կոչուիմ : Թուի՛ վիճակին մէջ Տօմ-Նըմի կոչ-  
ուած թաղաւորական դիւղին հովուի մը խո-  
նարն աղջիկն եմ . տղայութենէ հօրս ոչխար-  
ները կ'արածէի . շատ անդամ պատմութիւն-

ներ կը լսէի՝ զմեզ գերի ընելու եւ զմեզ ատող  
այլազգի իշխանի մ'հալատակեցընելու եկող օ-  
տար կղզեցւոյ վրայ. կը լսէի նաեւ թէ Բարիզ  
քաղաքը նուաճելով մեր երկրին տիրելու  
վրայ են։ Սկսայ աղաչել Աստուածամօր՝ որ  
զմեզ թշնամւոյն ամօթալի լուծէն ազատելով  
զմեզ մեր բնիկ թագաւորէն չը զրկէ։ Իմ հայ-  
րենի գիւղիս մօտ Աստուածածնայ սլատկեր մը  
կայ, որ իբր հրաշագործ համբաւեալ է. ոչ-  
խարհերս արածելու ատեն այս ծառին հովան-  
ւոյն տակ ախորժանօք կը նստէի, կարծես թէ  
ծառը զիս իրեն կը ձգէր։ Եթէ ոչխարներէս  
դառնուէի մ'ամայի լերան մէջ մօլորէք, կաղն-  
ւոյն տակ քնացած ատենս երազ մ'ինձի կը  
յայտնէր կորսուած դառնուկիս ուր ըլլալը։  
Անգամ մ'ամբողջ երկայն գիշեր մը նոյն ծա-  
ռին ներքեւ ջերմեռանդ մտածութիւններով  
կը հսկէի. յանկարծ կոյսն ինձի երեւնալով  
ձեռքը սուր եւ գրօշ, բայց ինձի պէս հովուա-  
կան զգեստ հագած սա կերպով սկսաւ խօսիլ.  
«Ես եմ, եւ կանգնէ, Յովնանս, թող ոչխար-  
ներդ, Տէրն գրեզ ուրիշ գործի կը կանչէ. ան  
այս գրօշը, կապէ մէջքդ այս սուրն, ասով  
ջնջէ ժողովրդեանս թշնամին. արքայազուն  
իշխանն 'իՌէմզ տար եւ պսակէ՛ արքունի թա-  
գով»։ — Ես պատասխան տուի թէ պատե-  
րազմական ահաւոր արուեստին անտեղեակ  
տկար աղջիկ մ'ինչպէս կրնամ համարձակիլ  
այսպիսի գործի մը ձեռնարկել։ — Երկրաւոր

կիրքերէ ազատ կոյս աղջիկ մ'ըսաւ, կրնայ  
փառաւոր դործեր կատարել. ինձի նայէ, ես  
ալ քեզի նման պարզ եւ անմեղ աղջիկ մ'էի,  
Աստուածորդին ծնայ եւ աստուածամերձ եմ:  
Այս ըսելով աչուքներուս դպաւ, վերնայեցայ  
որ երկինքն հրեշտակներով լի էր, որոնք իրենց  
ձեռքն սոլիտակ շուշաններ բռնած՝ օդին մէջ  
քաղցրաձայն կ'երգէին: Այսպէս երեք գիշեր  
շարունակ սուրբ Կոյսն ինձ երեւնալով կ'ըսէր.  
«Ե՛լ, Յովնանա, Տէրն դքեզ ուրիշ գործի կը  
կանչէ»: Երբ երրորդ գիշերն երեւցաւ, բար-  
կութեամբ եւ սաստիկ կերպով մ'ըսաւ. «Նրկ-  
րիս վրայ կտնանց պարտաւորութիւնն է հնա-  
դանդիլ, անոնց ծանր ճակատագիրն է տա-  
ռապանայ համբերել. պէտք է որ անոնք խիստ  
ծառաշութիւններով փորձուին եւ զտուին.  
հոս խոնարհողն անդին կը բարձրանայ»: Այս-  
պէս խօսելով իւր հովուական հանդերձն հա-  
նեց, եւ արդարեւ իրրեւ երկնից թաղուհի, ոս-  
կեղէն ամպերէն վեր բարձրացաւ լուսատիւու  
եւ երանութեան աշխարհքը մտնելով աներեւ-  
ւոյթ եղաւ: (ԱՖնէն աւելը շարժէն, Աշէլ դառն ար-  
դասութիւն դէմքը խաբարէն կուրծիէն զբայ ին ծածկէ):

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — (Երկայն լռութենէ մ'ետք)

Մարդկային մտաց ամեն տարակոյս աստուած-  
ային այսպիսի վկայութեան մ'առջեւ լռելու  
են. դէպքը կը հաստատէ որ այս սրիորդը ճշ-  
մարիտ կը խօսի. Աստուած միայն կրնայ այս-  
պիսի սքանչելիք յառաջ բերել:

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ոչ այնչափ անոր սլաւոմած սքանչելեացն, որչափ աչուրներուն եւ դէմքին ամբծութեանը կը հաւատամ:

**ԿԱՐՈԼՈՍ.** — Ես մեղաւորս, ինչ արժանի եմ այսպիսի շնորհաց: Դուն, ամենատես ծածկագէտ Աստուած, կը տեսնես սիրտս եւ խոնարհութիւնս քեզի յայտնի է:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Մեծամեծաց խոնարհութիւնն երկնից մէջ պայծառ կը փայլի. որովհետեւ խոնարհեցար, ահա կը բարձրացընէ ըզքեզ Բարձրեալը:

**ԿԱՐՈԼՈՍ.** — Ուրեմն կարող պիտի ըլլամ թշնամեոյս յաղթել:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Բոլոր Գաղղիան հուածելով պատուանդանիդ առջեւ պիտի բերեմ:

**ԿԱՐՈԼՈՍ.** — Իսկ Օրլէան թշնամեոյն պիտի մասնուի:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Եթէ Լուստի հոսանքը կրնայ ետ դառնալ դէպ' իւր ակունքը:

**ԿԱՐՈԼՈՍ.** — Կարող պիտ' ըլլամ Ռէմզ մըտնել, իբրեւ յաղթական:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Հազարաւոր թշնամեաց մէջէն դքեզ հոն պիտի տանիմ: (Բոլոր հանդեսաբեւ խորհրդ իրենց նիշխներն աւանդները կը շարժեն պաթերազմեան եռանդ մը ցոյցնելով):

**ՏԻՒՆՈՒԱ.** — Թող օրիորդը բանակին դըլուխն անցնի, կուրաբար կը հետեւինք ուր որ զմեզ տանիլ ուզէ. թող աստուածարեալ տեսութեամբն առաջնորդէ մեզի, մենք ալ մեր

սուրերովը պատրաստ ենք զայն պաշտպանել :

ԼԱՀԻՐ. — Եթէ բոլոր աշխարհք մեր դէմն  
ելլէ. չ'ենք վախնար, երբ նա մեր խումբերուն  
առջեւէն քալէ : Յաղթութեան Աստուածն ա-  
նոր հետ է, ծն 'ի դէն, հզօր է մեզի առաջնոր-  
դողը : (Ասպետ իրենց շէնքերը խաչաձեւով ին Բեմին) :

ԿԱՐՈԼՈՍ. — Այո, սուրբ ազջիկ, բանա-  
կիս հրամայէ. զօրապետք քու հրամանացդ  
պիտի հնազանդին. Զինուորական բարձր պատ-  
ուոյ այս նշանն՝ այս սուրը զոր Քօննէթապը  
դժկամակութեամբ թողուց՝ աւելի պատուա-  
ւոր ձեռքի մ'հանդիպեցաւ. առ զայդ, սիրելիդ  
Աստուծոյ եւ այսուհետեւ . . .

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ոչ, չ'եմ կրնար, ազնիւ տէր.  
աշխարհային մեծութեան այս նշանովը չ'է որ  
թագաւորս յաղթող պիտ' ընեմ. կոռուելու հա-  
մար ուրիշ սուր մը գիտեմ. հողւոյն սրբոյ լնձի  
յայտնածին պէս իմացունեմ. հրամայէ որ բերուի :

ԿԱՐՈԼՈՍ. — Ո՞ւր է այդ սուրը :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ֆիէրպուա ըսուած հին  
քաղքին սուրբ, Կատարինէ եկեղեցւոյն մէկ  
մառանին մէջ պատերազմական հին զէնքերու  
կոյտ մը կայ, ուղած սուրս անոնց մէջն է :  
Սրոյն երկաթին վրայ շուշանակերս կրեք ոս-  
կեղարդ ծաղիկ նկարուած է . բերել տուր այն  
սուրը, քանզի անով պիտի յաղթես :

ԿԱՐՈԼՈՍ. — (Պաշտօնակաշէրոս) Շուտով  
կատարեցէք հրամանը :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ծիրանեղարդ չրջանակով

սպիտակ դրօշ մ'ալ թող բերուի. պէտք է որ  
այս դրօշին վրայ՝ երկրագունտի վրայ կայնած  
երկնից թագունին նկարուած ըլլայ, պիտիջ Յի-  
սուս մանուկը. վասն զի Աստուածամօր ինձի  
ցուցըցած դրօշն այսպէս էր :

ԿԱՐՈՂՈՍ. — Ըսածիդ պէս կատարուի :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Արհիւրհարան) Սրբազան  
հայր, քահանայական ձեռքդ վրաս տարածէ եւ  
աղջիկդ օրհնէ : (Ծննդն իւր իւր) :

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — Իսկ մեզի օրհնութիւնն  
բերելու եկար, ոչ թէ ընդունելու. Աստուծոյ  
զօրութիւնն հետդ ըլլայ : Բայց մենք անար-  
ժան եւ մեղաւոր ենք : (Յովնան ապա կ'ելլէ) :

ՄԱՆԿԱԻՒԿ ՄԸ. — Անդդիացի զօրասկ-  
տաց կողմէն թղթաբեր մ'հասաւ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Թող ներս գայ, զայն զըր-  
կողն Աստուած է : (Թագաւորը նշանադէ կ'աշխարհէ  
հանդէպէն՝ որ դուրս կ'ելլէ) :



## ՏԵՍՍՐԱՆ ԺԱ.

ՊԱՏԳԱՄԱՔԵՐՆ Է ՆԱԳԻՆԵՐԸ.

ԿԱՐՈՂՈՍ. — Պատգամաբեր, ինչ լուր բե-  
րիր. իմացուր պատգամդ :

ՊԱՏԳԱՄԱՔԵՐԸ. — Վալուայի կարողոսին՝  
Բօնթիյէօի կոմսին տեղապահն ուղի է :

ՏԻՒՆՈՒԱ. — Անպիտան դու եւ վատթար.  
կը համարձակիս իւր սեպհական հողին վրայ

Գաղղիոյ թաղաւորն ուրանալ : Զքեղ սլաշտ-  
սլանողը զրահաւոր զգեստդ է , ապա թէ ոչ . . . :

ՊԱՏԳԱՄԱԲԵՐԸ . — Գաղղիան թաղաւոր մը  
միայն կը ճանչէ՝ որ անգղիական լանակին  
մէջն է :

ԿԱՐՈԼՈՍ . — Հանդարտ եղիր , Տիւնուա .  
խօսէ պատգամաւեր :

ՊԱՏԳԱՄԱԲԵՐԸ . — Ազնիւ զօրապետս ցա-  
ւելոյ՛ մինչեւ ցարդ հոսած եւ դեռ հոսելու  
արեան վրայ , իւր սուրը դեռ պատեմնին մէջ  
կը սլահէ եւ Օրլէանի վրայ չը յարձակած՝ մար-  
դասիրարար հաշտութեան քանի մը պայման-  
ներ կ'առաջարկէ :

ԿԱՐՈԼՈՍ . — Ըսէ տեսնեմ :

ՅՈՎՀԱՆՆԱ . — (Առջ Էրադ) Տէր . արքայ ,  
թող ես քու տեղդ պատգամաւերին հետ  
խօսիմ :

ԿԱՐՈԼՈՍ . — Խօսէ օրիորդ , որոչէ նաեւ  
խաղաղութիւն կամ պատերազմ :

ՅՈՎՀԱՆՆԱ . — (Պարտաճաճէրէն) Զքեղ զըր-  
կողն միլ է , որմէն բերնէն կը խօսիս :

ՊԱՏԳԱՄԱԲԵՐԸ . — Անգղիացւոյ սպարա-  
պետ Սալիսպուրի կոմսին կողմէն :

ՅՈՎՀԱՆՆԱ . — Սուտ կ'ըսես . Լորտին բեր-  
նէն չ'ես խօսիր . կենդանիք միայն կրնան խօ-  
սիլ ոչ թէ մեռեալք :

ՊԱՏԳԱՄԱԲԵՐԸ . — Զօրապետս քաջառողջ  
վիճակի մէջ է , զձեզ բնաջինջ ընելու համար  
կ'ապրի :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Այո, դու չը մեկնած կ'ապ-  
րէր. այս առաւօտ երբ Լաթուրնէլ աշտարա-  
կէն կը նայէր, Օրլէանէն նետուած գնտակ մը  
դայն գետինը գլորեց, Կը խնդամ, քանդի մենէ-  
հեռուն կատարուած դէպքեր կ'իմացունեմ.  
Եթէ խօսքիս չ'ես հաւատար, աչքիդ պիտի հա-  
ւատաս. 'ի դարձիդ անոր յուղարկաւորութեան  
հանդիսին պիտի հանդիպիս, այժմ խօսէ, պատ-  
դամդ իմացուր:

ՊԱՅԳԱՄԱԲԵՐԸ. — Որովհետեւ ծածուկն ե-  
րեւան հանել գիտես, գիտցիր ուրեմն իմ պատ-  
գամս ալ՝ դեռ ես չը յայտնած:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Պատգամդ գիտնալ մեզի  
պէտք չ'է, դուն հիմայ իմս մտիկ ըրէ եւ պատմէ  
դքեզ զրկող իշխանաց. «Թագաւոր Անդղիոյ եւ  
դուք նորա փոխանորդք կոմսք Պէտլօ օրտ  
եւ Կլօսէսթըր, տուէք թափուած արեանց հա-  
շիւն երկնից թագաւորին. աստուածային ի-  
րաւանց դէմ ձեր տիրած քաղաքաց բանալի-  
ներն ետ տուէք. երկնից թագաւորին կողմէն  
Օրիորդը կուգայ ձեզի խաղաղութիւն կամ  
պատերազմ առաջարկել. որոշեցէք, այս ըսի  
որպէս զի գիտնաք: Աստուածորդին Յիսուս  
գեղեցիկ Գաղղիան երբէք ձեզի չի թողուր,  
այլ իմ արքայազուն իշխանս Կարոլոս՝ որու  
դայն Աստուած տուած է, իւր պետութեան  
մեծամեծներէն շրջապատած Բարիլ պիտի մըտ-  
նէ»: — Այժմ գնա փութով, պատգամաբեր, վասն  
զի դու դեռ բանակն հասնելով պատգամա-

ւորութեանդ վրայ տեղեկութիւն չը տուած՝  
Սրիորդն արդէն Օրլէանի առջին է, եւ հոն  
յաղթութեան դրօշը պիտի կանգնէ : (Յիշ-  
հանա ին Ռէնի, Վիեննա ալ ին յոշնէն, Վարպորը  
ին Բոյոնի) :

## ԱՐԱՐՈՒՍԾ ԵՐԿՐՈՐԴ

ԱՊԱՌԱԺՆԵՐԷ ՇՐՋԱՊԱՏԵԱԼ ՏԵՂ ՄԸ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԹԱԼՊՕ Լ ԼԻՕՆԵԼ՝ անդիպել զբարեգոր, ՓԵԼԻՊ-  
ՊՈՍ՝ Պոլիտիկոսի դուստ, ՖԱՍԹՕԼՖ Լ ՇԱԹԻԼԵՕՆ՝  
ասպետ, զինուորի Դրօշակ :

ԹԱԼՊՕ. — Հոս, այս ապառաժներուն տակ  
կանգ առնենք եւ զօրաւոր բանակ մը կազ-  
մենք, թերեւս դարձեալ ժողովներ փախստական  
խումբերն՝ որոնք առաջին սարսափէն ցիր ու  
ցան եղան : Թող բլրին վրայ լաւ պահակ մ'  
հակէ . արդարեւ զիշերն ալ զմեզ յարձակումէ  
կը պահէ . եւ եթէ թշնամին թեւ չ'ունի, անոր  
յանկարծական ասպատակութենէն չ'եմ վախ-  
նար . բայց եւ այնպէս զգուշանալու ենք,  
վասն զի յանդուգն թշնամեայ մ'հետ ենք եւ

արդէն զարնուեցանք : (Յաւելի ապեպը շինաւ-  
րաց հէպ կը հելնէ) :

ԼԻՕՆԵԼ. — Զարնուեցանք . զօրապետ , մի  
արտասանելու այս բառը . Անգղիացուց այսօր  
թիկունք դարձնելուն վրայ խորհելու կը  
գժուարիմ : Ո՛հ, Օրլէան, Օրլէան, մեր փառաց  
գերեզմանը . անգղիական պատիւը դաշտացդ  
վրայ ինկած կը կենայ : Ամօթալի եւ անարդ  
կոտորած, ապագային մէջ ինչպէս պիտի հա-  
ւատան թէ Գրէքի, Բուաթիլէ եւ Աղէնդուր  
քաղաքներն յաղթողները կնոջէ մ'հալածուեցան :

ԴՈՒՔՍԸ. — Ասով մխիթարուելու ենք,  
մարդոցմէ չը յաղթուեցանք , այլ դիւէն :

ԹԱԼՊՕ. — Այո , մեր յիմարութեան դիւէն .  
Բնչ, դուքս , ռամկական ցնորքն իշխաններն ալ  
կը դրաւէ , սնապաշտութիւնը վատութեանդ  
ծածկոյթ մ'եղաւ : Նախ եւ առաջ քու դուն-  
դերդ փախան :

ԴՈՒՔՍԸ. — Միայն խմբներս . փախուսան  
ընդհանուր էր :

ԹԱԼՊՕ. — Ոչ տէր , փախուսած քու թե-  
ւէդ սկսաւ . զինուորներդ մեր բանակը գիմե-  
ցին պոռալով . Գժոխըը մեղի դէմ է , սատա-  
նան Գաղղիացուց համար կը կռուի : Այսպէս  
մերիններն ալ շիտթեցին :

ԼԻՕՆԵԼ. — Կարող չ'ես ուրանալ . քու  
խուճըդ նախ տեղի տուաւ :

ԴՈՒՔՍԸ. — Քանզի թշնամին նախ անոր  
վրայ յարձակեցաւ :

ԹԱԼՊՕ. — Օրիորդը կը ճանչէր մեր բանակին սկար մասը, դիտէր երկչոտներուն ուր ըլլալը :

ԴՈՒՔՍԸ. — Ի՞նչ, այս ձախորդութեան պատճառը Պուրկուհայիք են :

ԼԻՕՆԷԼ. — Եթէ մենք Անդղիացիքս մինակ ըլլայինք, Օրլէան չ'էր կորուսեր :

ԴՈՒՔՍԸ. — Ընդհակառակն, Օրլէանն երբէք պիտի չը տեսնէիք. այս տէրութեան մէջ ձեզի ճամբայ բացողն ո՞վ է, ձեզի հաւատարիմ ձեռք երկնցնողն ո՞վ է, Երբ ոտք կոխեցիք ձեզի թշնամի կողմ այս օտար երկիրը : Բարիդի մէջ ձեր Հենրիկոսը թաղով պսակողն եւ Պաղղիացւոց սիրան անոր հպատակեցընողն ո՞վ է : Ո՛հ, եթէ այս հղօր բազուկն զձեզ հոս չը բերէր, դաղդիական ծխնելոյզէ մը ծուխ ելլելը պիտի չը տեսնէիք :

ԼԻՕՆԷԼ. — Դուքս, եթէ մեծամեծ խօսքերը գործողութիւնը կ'ապացուցանեն, դու մինակ Պաղղիան կը նուաճէիր :

ԴՈՒՔՍԸ. — Կը զայրանաք, քանզի Օրլէանը կորուսիք եւ ձեր զայրացումն ինձի դէմ՝ ձեր դաշնաւոր բարեկամին դէմ կը դարձնէք. եթէ Օրլէանը կորուսիք, այս ալ ձեր ժլատութեանն չ'է արդեօք. քաղաքը պատրաստ էր ինձ անձնատուր ըլլալու, բայց դուք եւ ձեր նախանձն արգիլեց :

ԹԱԼՊՕ. — Քեզի համար չը պաշարեցինք :

ԴՈՒՔՍԸ. — Եթէ դունդս ետ քաշէի, ի՞նչ պիտ' ընէիք :

ԼԻՕՆԵՆԼ. — Ինչպէս որ ըրինք, երբ Ազէն-  
դուրի մէջ քեզի եւ բոլոր Գաղղիոյ դէմ կը  
կռուէինք:

ԳՈՒՔՍԸ. — Սակայն իմ նիզակակցութիւնս  
ձեզի շատ պէտք էր, եւ ձեր տէրութեան  
խնամակալը զայն թանկագնի գնեց:

ԹԱԼՊՕ. — Այո, թանկագնի. այսօր Օրլէ-  
անի առջեւ մեր պատուովն աւելի թանկա-  
գնի եղաւ:

ԳՈՒՔՍԸ. — Լորտ, բաւ է, լուէ. դուք զըզ-  
ջաս: Իմ օրինաւոր թաղաւորիս ծառայութե-  
նէն ելայ, համբաւս մատնիչ անուամբ արա-  
տեցի որ այսպիսի օտարականներէն նեղուիմ.  
հոս ինչ կ'ընեմ այժմ եւ ինչո՞ւ Գաղղիոյ դէմ  
կը կռուիմ. քանի որ ապերախտից պիտի ծա-  
ռայեմ, նախամեծար կը համարիմ իմ հարազատ  
թաղաւորիս հնազանդիլ:

ԹԱԼՊՕ. — Գաղղիոյ թաղաժառանգին հետ  
հաղորդակցութեան մէջ ըլլալդ գիտենք, բայց  
զմեզ մատնութենէ ազատելու համար միջոց  
պնտուելու վրայ ենք:

ԳՈՒՔՍԸ. — Մահ ու դժոխք. ինձի հետ  
այսպէս կը խօսին: Շաթիլեօն, թող դուհեկըս  
պատրաստուին, մեր երկիրը արախ երթանք:  
(Շաթիլեօն կը մեկնէ):

ԼԻՕՆԵՆԼ. — Բարի գարձ կը մաղթեմ. Բրի-  
տանացւոց փառքն երբէք այնպէս փայլուն ե-  
ղած չ'է, ինչպէս երբ իրենց սրոյն միայն ա-  
պաւինելով առանց օտար օգնականի պատե-

քաղմած են . թող իւրաքանչիւր ոք իւր իրաւանց համար կռուի . քանզի միշտ ճշմարիտ է որ դաղղիական եւ անդղղիական արիւնն երբեք մտերմաբար չ'են կրնար միանալ :

## ՏԵՍԱՐԱՆ Բ .

ԻԶԱՊՈ Բաբունէն Տանկէն Տ'Էւր Լաւրիւրէր :

ԻԶԱՊՈ . — Ասպետք, ինչ կը լսեմ . կեցէք . ինչ ձախող աստղ ձեր առողջ միտքը կը շփոթէ . մինչդեռ այժմ միութեամբ միայն կրնաք աղատիլ , կ'ուզէք բարկութեամբ բաժնուիլ եւ անմիաբանութեամբ ձեր կործանումը պատրաստել : Կ'աղաչեմ քեզ, ազնիւ դուքս , տուած հրամանդ յետս կոչէ , եւ դու , քաջանունդ Թալպօ , ողորձ զայրացեալ բարեկամը . եկու Լիօնէլ , օդնէ ինձ այս դռող սրտերն հանդարտեցընելով հաշտեցընելու :

ԼԻՕՆԷԼ . — Ո՛չ , տիկին , ինձի համար մի եւ նոյն է . իմ կարծիքս այս է որ երբ մէկը միութեամբ չի կրնար ապրիլ , ամենադիւրին միջոցը դիմացինէն բաժնուիլն է :

ԻԶԱՊՈ . — Ինչ , դժոխային խորսումանկութիւնն զմեզ պատերազմին մէջ յաղթելէն ետքն հոս ալ եկաւ մեր մտքերը խանգարելու . եւ զմեզ խելացնոր ընելու . ո՞վ սկսեց վիճաբանութիւնն , ըսէք : (Թալպօն) ազնիւ լորտ , դժէն

ևս արդեօք որ պատուական դաշնակցի մը ծառայութիւններն ուրանալով զայն վիրաւորեցիր. առանց անոր օգնութեանն ինչ կրնայիք ընել. ձեր թաղաւորին դահը վերահաստատեց, հիմայ ալ եթէ ուղէ կրնայ կործանել. դձեղ պաշտպանողն անոր ղօրքն է, մանաւանդ անոր համբաւը, եթէ ամբողջ Անդղիա իւր բոլոր քաղաքացիները մեր ծովեզերաց վրայ թափէ, չի կրնար նուաճել այս տէրութիւնն, եթէ անոր մէջ միաբանութիւնը տիրած ըլլայ: Գաղղիա միայն կրնայ Գաղղիան նուաճել:

ԹԱԼՊՕ. — Հաւատարիմ դաշնակից մը մեծարել դիտենք, բայց նենգաւորին դէմ դնելն զգօնութիւն է:

ԴՈՒՔՍԸ. — Նենգութեամբ երախտագիտութիւնը մերժողը ստախօսի մը լիրք ճակասն ունի:

ԻԶԱՊՕ. — Ի՞նչպէս, ազնիւ դուքս, կրնայիք իշխանավայել պատիւն ու ամօթը մէկդի դնելով բարեկամական ձեռք կարկառել հայրդ սպաննողին. այնչափ անհանձար էիր անխարդախ հաշտութեան հաւատալու գահաժառանգին հետ՝ զոր դուն իսկ մինչեւ կործանման եզերքն հալածեցիր. կ'ուղէիր զայն իւր անկման մօտ բռնել, եւ անմտութեամբ ձեռնարկութիւնդ քեզէն ջնջիլ. բարեկամներդ հոս են. Անդղիոյ հետ սերտ միաբան ըլլալէդ կախեալ է ազատութիւնդ:

ԴՈՒՔՍԸ. — Գահաժառանգին հետ խաղա-

դուժիւն ընելէ հեռու եմ, սակայն Անգղիաց-  
ւոց ամբարտաւանութեանն ու յանդգնու-  
թեանն ալ չ'եմ կրնար համբերել :

ԻԶԱՊՕ. — Ե'կ, հաշտեցուր դուքսը քաղց-  
րութեամբ. զօրապետի մը բարկութիւնը միշտ  
սաստիկ է եւ կրնայ չար հետեւանք ունենալ.  
Եկէք, եկէք, գրկեցէք զիրար, թողէք որ շու-  
տով գոցեմ այս վերքը քանի որ նոր է :

ԹԱԼՊՕ. — Դուքս, ինչ կը կարծես. ազ-  
նուական սիրտն իրաւանց առջեւ կամակար  
սլարտութիւն կը խոստովանի. թագուհին ի-  
մաստուն խօսք մ'ըրաւ, տո՛ւր ինձի ձեռքդ,  
անխորհուրդ լեզուիս ըրած վերքը թող բժշկուի :

ԴՈՒՔՍԸ. — Այո, տիկինն իմաստնաբար  
խօսեցաւ եւ իմ արդար բարկութիւնս հարկին  
կը հնազանդի :

ԻԶԱՊՕ. — Լաւ, եղբայրական համբոյրիւ  
մը կնքեցէք այս նոր ուխտը. թող այս վիճ-  
ման յիշատակն յօգս ցնդի : (Դուքսն ու Թալպօ  
գլխաւ կը համբուրեն) :

ԼԻՕՆԵԼ. — (Անոնց կը նայի և ինքնիքն կ'ըսէ)  
Յաջողութիւն կը մաղթեմ այս խաղաղութեան,  
թէ եւ դայն հաստատողը գոխային կատաղի մ'է :

ԻԶԱՊՕ. — Զօրապետք, ճակատ մը կորու-  
սինք. բախտը մեզի դէմ էր. բայց պէտք չ'է  
որ ասով ձեր ազնիւ եռանդը մարի. դահա-  
ժառանգն երկնից սլաշտպանութենէն յուսա-  
հատած՝ սատանայական հնարքի մը դիմած է,  
սակայն 'ի դուր հոգին դատաւարտութեան

մատնեց. բայց դժոխքն ալ կարող չ'է զնա ազատել: Թշնամի բանակին առաջնորդն աղ- ջիկ մ'է, ես ալ ձեր բանակին առաջնորդն ըլլամ. ձեր Ամադոնն եւ հարցուկն ըլլամ:

ԼԻՕՆԵԼ. — Տիկին, դարձիր Բարիզ: Մեր օրովն՝ ոչ թէ կանանց օգնութեամբը պիտի յաղթենք:

ԹԱԼՊՕ. — Գնա, դնա. բանակին մէջ դըտ- նուելէդ 'ի վեր ամեն բան ձախող կ'երթայ, կարծես թէ մեր դէնքերէն օրհնութիւնը վերցաւ:

ԴՈՒՔՍԸ. — Գնա, ներկայութիւնդ օգտա- կար չ'է. զօրքին ալ աղէկ չ'երեւար:

ԻԶԱՊՕ. — (Զայրացմամբ անոց նայելէ) Դո՛ւն ալ դուքս, այս ապերախտ լորտերուն հետ ինձի դէմ կը մաքառիս:

ԴՈՒՔՍԸ. — Գնա, ղինուորները կը վհա- տին, եթէ կարծեն թէ քու շահուդ համար կը կռուին:

ԻԶԱՊՕ. — Հազիւ ձեր մէջ խաղաղութիւն հաստատեցի, ինձի դէմ կը միաբանիք:

ԹԱԼՊՕ. — Գնա, Աստուծոյ համար ըլլայ դնա, տիկին: Քու երթալէդ ետքն զմեզ շփո- թող դեւն ալ պիտի հալածուի:

ԻԶԱՊՕ. — Ո՞չ ապաքէն ձեր հաւատարիմ նիզակակիցն եմ: Ձեր շահը միանգամայն իմս չ'է արդեօք:

ԹԱԼՊՕ. — Սակայն քուկդ մերը չ'է: Մենք օրինաւոր պատճառի մ' համար կը կռուինք:

ԴՈՒՔՍԸ. — Հօրս արիւնալից մահուան հա-

մար վրէժս պիտ' առնեմ: որդիական պարտա-  
ւորութիւնը նուիրական կ'ընէ: պատերազմս:

ԹԱԼՊՈ. — Աւելի շիտակն քսեմ: Գահա-  
ժառանգին դէմ ըրածդ ոչ մարդոյ առջեւ  
բարի է; ոչ Աստուծոյ առջեւ իրաւացի:

ԻԶԱՊՈ. — Անիծեալ ըլլայ թէ ինք եւ թէ  
ցեղը մինչեւ տասը ծնունդ: Մօրը կենացը  
դաւադիր եղաւ:

ԴՈՒՔՍԸ. — Հօրն եւ ամուսնոյն վրէժն  
առնելու համար էր:

ԻԶԱՊՈ. — Բարուցս դատաւոր ըլլալու յան-  
դըղնեցաւ:

ԼԻՕՆԷԼ. — Ասիկայ արդարեւ զաւկի մը  
չի վայլեր:

ԻԶԱՊՈ. — Զիս արսորեց:

ԹԱԼՊՈ. — Հասարակայ ձայնին հնազան-  
դելու համար:

ԻԶԱՊՈ. — Անիծեալ ըլլամ. եթէ անոր նե-  
րեմ. եւ դեռ իւր հայրենի թագաւորութեանը  
չը տիրած:

ԹԱԼՊՈ. — Ասով մանաւանդ քու սլատիւդ  
կ'սսլաննես:

ԻԶԱՊՈ. — Դուք, տկար արարածք, չ'էք  
դիտեր մօր մը վիրաւորեալ սիրտն ինչ բա-  
ներ կրնայ ընել: Ինձի բարիք ընողը կը սի-  
րեմ, զիս ատուլն ալ կ'ատեմ՝ մանաւանդ որ  
բուն դաւակս է: Քանի որ ես ծնայ, կ'ուզեմ  
կեանքը վերցնել, քանզի իւր սնած ծոցն ամ-  
բարիչտ յանդգնութեամբ կը վիրաւորէ: Դուք

որ որդւոյս դէմ պատերազմ կ'ընէք, ոչ իրաւունք եւ ոչ պատճառ ունիք զայն կողոպտելու: Պահաժառանգը ձեզի ինչ անիրաւութիւն դործեց: Ձեզի ունեցած պարտաւորութիւնը չը կատարեց: Ձձեզ դրդողը փառասիրութիւնն ու ընդհանուր նախանձն է. բայց ես կրնամ ատել զայն որ ծնած եմ:

**ԹԱԼՊՕ.** — Ուրեմն, կատաղութենէդ պիտի ճանչցուիս որ մայրն ես:

**ԻԶԱՊՕ.** — Փռքըհողի կեղծաւորներ, որչափ զձեզ կ'ատեմ, դուք որ զձեզ եւ զաշխարհ կը խաբէք: Դուք, Անգղիացիք, աւազակութիւնն է զձեզ Պաղլիա մողղն, ուր ոչ իրաւունք, ոչ հաւանական պատճառ ունիք ձիու մը սմբակի չափ հողի տիրելու: Եւ այս Բարի կոչուող դուքսն իւր հայրենիքն՝ իւր նախահարց ժառանգութիւնը տէրութեան թըշնամւոյն օտար վեհապետին կը ծախէ: Ճշմարտութիւն բառը ձեզի համար մի եւ նոյն է: Կ'ատեմ կեղծաւորութիւնը: Թող աշխարհին աչքը զիս այնպէս տեսնէ, ինչպէս որ եմ:

**ԴՈՒՔՍԸ.** — Ճշմարիտ է. հաստատամտութեամբդ փառքը շահեցար:

**ԻԶԱՊՕ.** — Ես ալ ուրիշի մը նման կիրք ունիմ, ուրիշներուն պէս արիւնիս ջերմ է. այս երկիրն եկայ թագուհւոյ մը կեանք վարելու, ոչ թէ՛ երեւոյթը միայն ունենալու: Միթէ անզգայ ըլլալու էի ուրախութեան, քանզի բախտը զուարթագին երիտասարդութիւնս խե-

լացնոր ամուսնոյ մ'հետ անցընելու դատա-  
սլարտեց : Կեանքէս աւելի աղատութիւնս կը  
սիրեմ, եւ ով որ զայն կը բռնաբարէ . . . :  
Քայց ինչո՞ւ ձեզի հետ վիճիմ իրաւանցս հա-  
մար, քանի որ ձեր երակներուն մէջ թանձր  
արիւն մը կը վաղէ : Դուք ոչ ուրախութիւն  
գիտէք ոչ բարկութիւն : Եւ այս դուքսն որ  
երկար ժամանակ իւր կեանքը բարւոյն եւ չա-  
րին մէջ վարանմամբ անցուց՝ ոչ սրտանց ա-  
տել գիտէ ոչ ալ սրտանց սիրել : Ահա, Մըլէօն  
կ'երթամ : (Լէօնէլը ցոյցնելով) Հետս տուէք այս  
ասպետն, անոր ընկերութենէն կ'ախորժիմ :  
Դուք ձեր ուղածն ըրէք : Ալ ոչ Պուրկունացոց,  
ոչ Անգղիացոց պէտք ունիմ : (Եւ հանկու-  
նդեան շարժեց ի հակադէմ եւ միջեւ իւր պարտադրո-  
ւան Լէօնէլ : — Վստահ եղի՛ր : մեր գերի բռ-  
նած գեղեցիկ դադղիացի աղաքը քեզի կը դըր-  
կենք 'ի Մըլէօն :

ԻԶՍՊՈ. — (Եւ դառնալով) Դուք միայն սը-  
րով կռուելու վարժ էք : Գաղղիացոցն խօսքն  
ալ աղնիւ ու փափուկ է : (Կը միջի) :

## ՏԵՍՍՐԱՆ Գ .

ՔԱԼՊՈ, ԴՈՒՔՍԸ, ԼԵՕՆԵԼ :

ՔԱԼՊՈ. — Զարմանալի կլին :

ԼԵՕՆԵԼ. — Զօրապետք, ինչ կը խորհիք :

Շարունակէնք փախուստը թէ յանդգնութեամբ  
կռուինք՝ այսօրուան նախատինքը փութով  
ջնջելու :

**ԴՈՒՔՍԸ.** — Տկար ենք, զօրքերը ցրուե-  
ցան. բանակին մէջ գեռ ահը կը տիրէ :

**ԹԱԼՊՕ.** — Կոյր երկիւղ մ'որ վայրկենի  
մը վաղանցուկ տպաւորութիւնն էր՝ զմեզ նը-  
կուն ըրաւ : Զարհուրեալ երեւակայութեան մ'  
ահագին երեւցող գիշերային տեսիլներ, եթէ  
մօտէն նկատուին, ոչինչ կ'ըլլան : Ուստի խոր-  
հուրդ կուտամ որ լուսնալուն պէս զօրքը գե-  
տէն անդին անցընելով թշնամոյն գիմացը ճա-  
կատ կազմենք :

**ԴՈՒՔՍԸ.** — Խորհինք :

**ԼԻՕՆԷԼ.** — Ներեցէք համարձակութեամբ .  
խորհելու բան չը կայ : Պէտք է շուտով . մեր  
սլարտութեան վատ անունը ջնջել, ապա թէ  
ոչ նախատինքը մեր վրայ յաւիտեան սլախ  
մնայ :

**ԹԱԼՊՕ.** — Որոշուած է, վաղը պիտի կռու-  
ուինք : Մեր զօրքերը ջղատող եւ թմրեցը-  
նող ցնորական երկիւղը փարատելու համար՝  
այն աղջկանման գիւլին հետ մենամարտինք :  
Եթէ սրոյս մօտ դայ, անշուշտ անոր մեղի ը-  
րած վնասը վերջինը պիտի ըլլայ . եթէ չը մօ-  
տենայ, յայտնի կ'ըլլայ որ մեղի հետ կռուելէն  
կը խորշի . մեր զօրքն ալ սլատիր ցնորքէն կ'ա-  
զատի :

**ԼԻՕՆԷԼ.** — Հապա աղէկ . բայց, զօրապետ,

այս դիւրին մեղամարտութիւնն ինձի յանձնէ  
եւ վստահ եղիր որ կաթիլ մ'արիւն պիտի չը  
թափի: Քանզի կարծեմ ցնորքն ողջ կրնամ  
բռնել եւ Պաթարին տարօրածուն անոր աչքին  
առջեւ շալկելով անդղիական բանակը բերեմ  
դորաց զուարճութեանն համար:

ԴՈՒՔՍԸ. — Այսչափ յանձնապատան մի  
ըլար:

ԹԱԼՊՕ. — Եթէ ձեռքս իցնայ, այնչափ  
քաղցրութեամբ վարուիլ չ'եմ ուղեր: Հիմայ  
երթանք մեր կորուսած ոյժը թեթեւ քնով մ'  
ստանալու եւ առաւօտուն կանուխ երթանք  
կռուելու: (Կը թփնին):



## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՅՈՎՀԱՆՆԱ. Իմացի հաշտութիւն, մայն սաղաարարով  
և լեւապանսով. յետք Գրգռ. ՏԻՒՆՈՒԱ, ԼԱՀԻՐ,  
ԱՍՊԵՏԲ և ԶԻՆՈՒՈՐԲ ապառաժապ զաւիճիքի մը  
վրայ կ'երեւան: յետոյ լեւի յառաջանալով'ի մասին ու  
մեռն ալ արեւարանը կ'իջնեն:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Իւր բաւարարեմէն կեցող ապեր-  
նեւուն, միւրեւ խոսքը զաւիճիքին վրայ յառաջ կը  
խաղայ) Պարիսպն անցանք, ահա բանակին մէջ  
եմք: Զեր լոկի չուն ծածկող անմոռնչ գիշե-  
րոյն քողը պատուեցէք եւ ձեր ահաւոր դա-  
լուստն իմացուցէք թշնամեայն ահեղ ձայնիւ:  
ԱՍՏՈՒԱԾ Եւ ՕՐԻՈՐԴԸ:

ԱՄԵՆՔԸ. — (Կ'աղաղակէն իրենց զենեքը խառնայն հնչեցնելով) ԱՍՏՈՒԱԾ եւ ՕՐԻՈՐԴԸ : (Փռայ և ընթիւն յայն) :

ՊԱՀԱԿԸ. — (Տեատարանին էտէն) Թշնամին , Թշնամին , Թշնամին :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Արդ՝ ջահ բերէք , վրաններն այրեցէք : Բոցերուն ջերմութիւնը Թշնամին աւելի պիտի շփոթէ . Թող սպառնալից մահը զանոնք ամեն կողմէ պաշարէ : (Զինուորականներն իւր զենքերն , Յովհաննա անոնց հետեւելէ կ'աղէ) :

ՏԻՒՆՈՒԱ. — (Զայն բռնելով) Յովհաննա , Դուք այժմ քու պարտաւորութիւնդ կատարեցիր : Զմեղ հոս բանակը բերիր , Թշնամին մեր ձեռքը տուիր : Ուրեմն հեռացիր այս կողմէն , Թող որ մենք որոշենք այս արիւնոռչտ պատերազմը :

ԼԱՀԻՐ. — Յաղթութեան ճամբան բանակին ցուցուր , փախուկ եւ մաքուր ձեռքովդ մեր առջեւէն դիօշը տար , մահաբեր սուրը մի գործածեր . պատերազմաց խաբեբայ չաստուածը մի փորձեր , քանզի նա կոյր եւ անդըթաբար ոչ ումեք կը խնայէ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ո՞վ կը համարձակի ինձի հրամայել որ կենամ , Ո՞վ կը համարձակի խըրատ տալ ինձ առաջնորդող հոգւոյն : Պէտք է որ նետին սլաքը թռչի ուր որ զայն արձակող ձեռքն իւր պաշտպանութեանն համար կ'ուղղէ կորովաբար : Վտանգն ուր որ է , հոն պարտի ըլլալ Յովհաննա . իմ մահուանս վճիռն ոչ այս

օրուան , ոչ ալ այս ճակատին համար տրուած է . թագաւորիս գլուխը թագով պսակուած պիտի տեսնեմ : Ոչ ոք կրնայ շունչս ինէ հանել , մինչեւ որ Աստուծոյ տուած պատուէրն 'ի գլուխ հանեմ : (ԿԸ ՁԷՆԷ) :

ԼԱՆԻՐ. — Երթանք , Տիւնուա , օրիորդին հետեւինք . մեր կուրծքովն իբր վահանաւ անոր պատսպարան ըլլանք : (ԿԸ ՁԷՆԷ) :

## ՏԵՍՍՐԱՆ Ե .

ԱՆԳՂԻԱՅԻ ԶԻՆՈՒՈՐԲ ԴԵՊԱՐՏԷՆՔԻ ՏԷԼԻՆԷՆ ԻՃԷ  
ԺԵԼԷՆ , ԵԵՊՅ ԹԱԼՊՕ ԻՃԷ ՀԱՆՔ :

ԶԻՆՈՒՈՐ ՄԸ . — Օրիորդը , բանակին մէջն է ,  
ՈՒՐԻՇ ՄԸ . — Անհնար է . երբէք . Ուստի  
եկած է հոս :  
ԴԱՐՁԵԱԼ ՈՒՐԻՇ ՄԸ . — Օգին մէջէն . դի-  
ւայ օգնութեամբ :

ՈՒՐԻՇ ԵՐԿՈՒ ԶԻՆՈՒՈՐԲ ԱԼ . — Փախչի՞ք ,  
փախչինք . մեր մահն անշուշտ է : (ԿԸ ՁԷՆԷ) :

ԹԱԼՊՕ . — (Կապ) Անսմտ , ստահակ զին-  
ուորներ , Հնադանդութեան կապերը լուծուած  
են , մոլեգին պատրանք մը քաջն ու վատը կը  
հալածէ խելացիոր , որպէս թէ դժոխքն իւր  
անիծեալ դիւաղունդ լէզէսները մեր վրայ  
արձրկած է . ձեռնհաս չ'եմ փոքր դունդ մ'ալ  
հանելու թշնամուոյն հեղեղին դէմ , որ յորդու-

Թեամբ դարիւ դարիւ մեր բանակին մէջ կը հոսէ : Ե՞ս միայն ուրեմն արթուն եմ, մինչդեռ բոլորովին եղողք ջերմնոտ զառանցելոց պէս կը մոլին : Պէտք է որ այս թուլամորթ Գաղղիացւոց առջեւէն փախչինք, որոնց արդէն քսան կռուի մէջ յաղթեցինք : Ո՞վ է այն անյաղթ աղջիկն, այն զարհուրելի դիցունին, որ վայրկենի մը մէջ պատերազմաց բախտը կը փոխէ եւ երկչոտ եղջերուաց խուճմ մ'ահագին առիւծներ կ'ընէ : Կրնայ դիւցազնուհւոյ մը դերը խաղցող կախարդ մը բուն դիւցազունները զարհուրեցընել : Ի՞նչ, կին մը պիտի յափշտակէ տարած յաղթութեանս պարծանքը :

ՋԻՆՈՒՈՐ ՄԸ. — (Փռնիկ ներս կը հանէ) Օրիորդը, փախիր, փախիր, զօրապետ :

ԹԱԼՊՕ. — (Զայն գետինն հրելով) Փախիր դու միայն դժոխքը : Այս թուրն 'ի մահ պիտի խոցէ, ով որ ինձի երկիւղի եւ վատ փախստեան խօսք կ'ընէ :  
(Կը մեկնէ) :

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Տեսարանին ներքին կողմը կը բացուի, Անգլիացոց բանակն ահագն Քոցերս մեջ կը տեսնուի. Ռեբէկ յայն կը լսուի : Փախարականք և զանոնք հալածողներ. ինչ  
ժ'եղբայր ՄՕՆԿՕՄԵՐԻ կոչուի :

ՄՕՆԿՕՄԵՐԻ. — (Մեկնել) Ո՞ւր փախչիմ :



մերձենայ, չ'եմ ուղեր սպասել որ նախ լիայ-  
րենին յարձակի: Պաղատանօք ոտքն իյնալով  
ինդրեմ որ կեանքս շնորհէ. կին է, թերեւս  
արտասուօք կարենամ ողորել:

(Մինչդեռ Յովնանային ելնալն իւր է, այն  
կառաւար ինչ օրէնայ):

## ՏԵՍԱՐԱՆ Է.

### ՅՈՎՀԱՆՆԱ, ՄՕՆԿՕՄԵՐԻ

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մահապարտ ես, քանզի  
անդղիացի մօր դաւակ ես:

ՄՕՆԿՕՄԵՐԻ. — (Յովնանային որոնելով)  
Կեցիր, ահեղ օրիորդ. մի սպաններ անդէն մը:  
Ես արդէն լիաճան եւ ոտեր մէկդի ձգելով առ-  
ջեւդ կը խոնարհիմ անսպաշտպան աղաչաւոր:  
Զիս արեւէ մի զրկեր, փրկանք պիտի ընդու-  
նիս: Հայրս հարուստ կալուածներու տէր է  
Վալլիսի գեղեցիկ գաւառին մէջ, ուր Սալէրն  
կանաչագեղ մարգերու մէջէն օձաձեւ անցնե-  
լով կը հոսէ արծաթափայլ: Յիսուս գիւղ  
անոր հպատակ է. իւր սիրելի որդին մեծա-  
դումար ոսկւով կ'ազատէ, եթէ իմանայ որ  
Գաղղիացւոց ձեռքը գերի եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ո՛վ մտակորոյս. Օրիորդի  
մ'անողոր ձեռացը մէջ ինկար, որմէ ոչ աղա-  
տութիւն ոչ փրկութիւն կը յուսացուի: Եթէ

դժբախտութեամբ կողորդիլոսին քարկուծեանը կամ անողորմ վաղեր մը ճիրաններուն մատնուած ըլլայիր, եթէ էպ առիւծին ձաղը գողցած ըլլայիր, գութ եւ վշտակցութիւն կրնայիր գտնել . բայց օրիորդիս դէմն ելլելը մահացու է : Քանզի տհազին անբռնարարելի դաշինքով մ'ինձ առաջնորդող հզօր եւ անյաղթ հողւոյն խոտաղած եմ մասնել 'ի սուր ամեն մահի, զոր օրհասական վճռով զօրաց Աստուածն ինձի կը զրկէ :

ՄՕՆԿՕՄԵՐԻ. — Խօսքդ սոսկալի է, բայց հայկեցուածքդ քաղցր . մօտէն տհազին չես երեւար . գեղեցիկ տեսքդ սիրտս իրեն կը յանկուցանէ : Ո՛հ, կանացի . գթած ցեղիդ սիրոյն համար՝ ըլլայ, կ'ազաչեմ, երիտասարդութեանս ողորմէ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մի երդուընցըներ զիս յանուն կանանց . մի կոչեր զիս կին : Աշխարհային կերպով չ'ամուսնաւոր անմարմին էակներուն նման ոչ մէկ ցեղի մը կը վերաբերիմ . այս զրահին տակ սիրտ մի վնասուեր :

ՄՕՆԿՕՄԵՐԻ. — Ուրեմն յանուն սրբազան օրինաց սիրոյ, զոր ամեն սիրտ կը յարգէ, կ'երդուընցընեմ : Հայրենեացս մէջ թողուցի սիրելի նշանած մը, քեզի պէս գեղեցիկ եւ ծաղիկ հասակին մէջ առոյգ : Արտասուօք իւր սիրելւոյն դարձը կ'սպասէ : Ո՛հ, եթէ կը յուսաս երբեք սիրել եւ սիրոյ մէջ երջանկութիւն գտնել, մի զատեր իրարմէ խստաբար կրկու

սիրտ, զորոնք սիրոյ սուրբ կապը կը միացընէ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Միայն երկրային օտար չափաւորածներ կը կոչես, զորոնք եւ ոչ սուրբ ոչ պատկառելի կը համարիմ : Սիրոյ կապ անուանածդ չ'եմ գիտեր, որուն անուամբը զիս կ'երգուընցընես . երբէք պիտի չը ճանչնամ անոր ունայն ծառայութիւնը : Կեանքդ պաշտպանէ, քանզի մահն դքեզ կը կանչէ :

**ՄՕՆԿՕՄԷՐԻ.** — Ո՛հ, ողորմէ հէք ծնողացըս, զորոնք հայրենի տանս մէջ թողուցի : Անշուշտ դուն ալ թողած ես ծնողքդ, որոնք քեզի համար կը հողան :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Թշուառական : ինձի կը յիշեցընես ձեր պատճառաւ բաղմամբիւ դադղիացի որդեկորոյս մայրեր, հայրազուրկ դաւկըներ, այրիացեալ նոր հարսեր : Պէտք է որ այժմ անգղիացի մայրերն ալ յուսահատութեան փորձը տեսնեն, եւ այնպէս արտասուք թափեն, ինչպէս որ դադղիացի ցաւաղին կանայք թափեցին :

**ՄՕՆԿՕՄԷՐԻ.** — Բարէ . որչափ ծանր է անողք եւ անկոծ՝ օտար երկրի մէջ մեռնիլ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Զձեզ ով կանչեց այս օտար երկիրը՝ ծաղկեալ դաշտաց բերքերը ջընջելու, զմեզ մեր հօտերէն զրկելու եւ խաղաղ քաղաքաց մէջ պատերազմին բոցերը տարածելու : Զեր սրտերուն մէջ ունայն ցնորքներ անուցանելով՝ կ'երազէիք Գաղղիոյ բնակիչքը խայտառակ գերութեան մը մէջ գահա-

վիժել եւ այս լայնածաւալ տէրութիւնը լաս-  
տի մը պէս ձեր խրոխտ նաւուն կապել : Յի-  
մարններ, Գաղղիոյ արքայական նշաններն Աս-  
տուծոյ աթոռին կապուած են : Թերեւս կըր-  
նաք սայլ համաստեղութենէն աստղ մը կոր-  
դել, քան թէ այս յաւիտեանս անքակ տէրու-  
թենէն զիւզ մը : Վրէժխնդրութեան օրն ե-  
կած է : Ոչ եւս այլ կարող պիտ' ըլլաք ողջ  
ձեր տեղն՝ երթալ սուրբ ծովն անցնելով, զոր  
Աստուած ձեր եւ մեր մէջն անջրպետ դրաւ  
եւ դուք անցնիլ յանդգնեցաք :

ՄՕՆԿՕՄԵՐԻ. — (Յովնանային յետէ Բողոք-  
լով) Բարձ, պիտի մեռնիմ ուրեմն : Ահա կ'ըզ-  
դամ մահուան սարսուռը :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մեռիր, բարեկամ. ինչո՞ւ  
այդպէս ահարեկ կը դողաս մահուան եւ ան-  
վրէպ ճակատադրին առջեւ : Տես զիս, օրիորդ  
եւ հովիւ 'ի ծնէ. հովուաց անմեղ եւ զուարթ  
ցուպը կրող սոս ձեռուքները սովորած չ'են  
սուր դորձածել : Քայց եւ այնպէս սիրելի քերցս  
դիրկն, հօրս դդուանքն եւ հայրենի դաշտո  
թողլով հոս եկայ : Զիս կը մղէ ոչ անձնական  
տենջանք մ'այլ Աստուծոյ ձայնն, ահագին ու  
զի մ'որ ձեզի դառն աղէտք պատճառեմ թէ  
եւ ակամայ. եւ ընդհանուր մահ ու կոտորած  
բերելէ ետքն ես ինքն մահուան զո՞ւ ըլլամ :  
Քանզի հայրենիքս դառնալու զուարթ օրը պի-  
տի չը տեսնեմ : Դեռ ձենէ չատերուն մահա-  
ցու պիտի ըլլամ, դեռ չատ կանայք այրի պի-

տի ընեմ. քայց 'ի վերջոյ ես ալ մեռնելով ճակատադիրս լրացընեմ: Գուհն ալ քոյդ լրացուր. շուտով սուրդ ան, կենաց քաղցր աւարին համար մրցինք 'ի միասին:

ՄՕՆԿՕՄԵՐԻ. — (Որո՞ք ելլելով) Եթէ դուհն ալ ինձի պէս մահկանացու ես եւ սուրն զքեզ կը վիրաւորէ, ես ալ կրնամ բաղկիս ապաւինելով զքեզ դժոխքը զրկել եւ Անդղիա մօտաւորաւ վաճառելն ազատել: Աստուծոյ բարերար ձեռացը մէջ կը դնեմ ճակատադիրս: Գուհն ալ, անխնայ, քու դժոխային գեւերդ քեզ օգնութեան կանչէ: Կեանքդ պաշտպանէ: (Սուրն եւ ձեռքն առնելով Յովնանային վրան կ'երեւայ. հետեւն պարերազմիւն երաշխաւեան եղանակ կը լսուի. Կարճաբեւ հոռե մ'երգը Մահեմեթի կ'եյնայ):

## ՏԵՍՍՐԱՆ Ը.

### ՅՈՎՀԱՆՆԱ ՌԻՄԻ

Ոտքովդ մահուն գացիր, երթաս բարեան: (Բովն կը հեռանայ եւ հոռեմը կը կենայ) Աստուածային Կոյս, ինձմով զօրութիւններ կը գործեաւ, այս տկար բաղուկը զօրութեամբդ կը վառես եւ սիրտս անողոր խստութեամբ կը զինես: Հողիս վշտակցութեան մէջ կը հալի եւ ձեռքս կը դողայ հակառակորդի մը ծաղկահասակ մարմինն ապստանելու, որպէս թէ տաճարի

մը սուրբ շէնքը կործանէի : արդէն սրոյն շող-  
շողուն սայրէն կը սարսիմ : քայց 'ի ստիպել  
հարկին խկոյն կը զօրանամ եւ սուրն անդամ  
իրբեւ խոհուն արարած՝ դողդոջուն ձեռքիս  
մէջ անվրէպ կը վործէ :

→→→○○○○←←←

## ՏԵՍԱՐՍՆ Թ .

ԶԻՆԿԱՆԻ ԱՍՊԵՏ Ժ ԴԷՖԿԷՎ, ՅՈՎՃԱՆՆԱ

ԱՍՊԵՏԸ. — Անիծեալ դու, ժամդ հասած  
է . բոլոր բանակին մէջ դքեղ վնասեցի, կոր-  
ծանիչ կախարդ : Դարձիր նորէն դժոխք, ուս-  
տի ելած ես :

ՅՈՎՃԱՆՆԱ. — Ո՞վ ես դու, դոր չար ու  
զիգ դիմացս կը հանէ : Փալուածքդ իշխանի  
քալուածք է, Անդղիացի ալ չ'ես երեւար,  
քանդի Պուրկունացի մը կերպարանքն ունիս,  
սրուն առջեւ սրոյս սայրը կը խոնարհի :

ԱՍՊԵՏԸ. — Անարդ դու, արժանի չ'ես իշ-  
խանի մ'աղնիւ ձեռքովը մեռնելու : Դահճին կա-  
ցինը մահապարտ դուխդ մարմնէդ բաժնելու  
էր, ոչ թէ Պուրկունաւի թագաւորադն դքսին  
ահաւոր սուրը :

ՅՈՎՃԱՆՆԱ. — Դուն ես ուրեմն այն աղ-  
նիւ դուքսը :

ԱՍՊԵՏԸ. — (ԴէՖԿէ հանելով) Ես եմ, աղի-  
րան, դողմ եւ յուսահատէ : Սատանայական

արուեստը չի կրնար այլ եւս դքեղ սլաշտպանել: Մինչեւ ցարդ վեհերոտներն յաղթեցիր, այս անգամ ախոյեանդ քաջասիրտ է:

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՏԻՒՆՈՒԱ, ԼԱՀԻՐ Լ ԽՈՒՆԵՐԸ.

ՏԻՒՆՈՒԱ. — Դարձիր, Դուքս, արանց հետ կռուէ, ոչ թէ կանանց:

ԼԱՀԻՐ. — Մեր դիւցազնուհւոյն նուիրական դուխը կը սլաշտպանենք, ուստի պէտք է որ սուրդ նախ այս սիրտը խոցէ:

ԴՈՒԲՍԸ. — Ոչ ձենէ կը վախնամ ոչ ալ այս վաւաչոտ կիրկէէն, որ զձեզ այսպէս ամօթահար ըրաւ: Շառագունէ, Պաթար. ամօթ քեզի, Լահիր, որ նախնի քաջութիւնը դիւթական արուեստին հաւասար նուառտապուցիր եւ դիւային անհամեստ աղջկան մը զինակիրն ետեղեր: Մօտեցէք, ամենուդ ալ առպարէզ կը կարդամ: Սատանայէն օգնութիւն հայցողն Աստուծոյ սլաշտպանութենէն կը յուսահատի:

(Մենամարտութեան իր պարաստութիւն, Յովհաննէս շաննի համոզել իւր ջանայ):

ՅՈՎՀԱՆՆԱ. — Կեցիք:

ԴՈՒԲՍԸ. — Կը դողամ հումանուոյդ համար: Աչքիդ առջեւ պիտի . . . :

(Տեւոնայէն վայ ի'երեւոյ):

ՅՈՎՀԱՆՆԱ. — Կեցի՛ք: Լահիր, զատէ՛ զանոնք. կաթիլ մը գաղղիական արիւն թափելու չ'է: Այս կսկը սրով պիտի չ'որոշուի, աստեղաց մէջ ուրիշ բան մը վճռուած է: Բաժնունեցէք, կ'ըսեմ, մեծարանօք մտիկ ըրէ՛ք զիս գրաւող խնձով խօսող ոգին:

ՏԻՒՆՈՒԱ. — Ինչո՞ւ բարձրացած բաղուկս կ'արդելուս եւ սրոյն արիւնահեղ որոշումը կ'ուղես խափանել: Սուրը մերկացած է, թող որ զարնեմ, Գաղղիան ալ այսպէս վրէժն առնելով հանդարտի:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Պարերազողաց մէջ Գեղը մոռնելով երկու միջոցէ մ'ետք զանոնք էլ բաժնէ: Տեառաալին Կառնալով) Մէկդի: (Լահիրէն) Հանդարտ կեցիր, Գրսին հետ խօսք ունիմ: (Ամենը խաղաղելէն ետք) Դժուքս, ինչ ընել կ'ուղես: Ո՞վ է թշնամիդ, զոր դուն արիւնախանձ գէմքով կը փնտռես: Տես, այս աղնիւ իշխանը քեզի պէս Գաղղիոյ զաւակ է. այս քաջը քու ղինակիցդ ու հայրենակիցդ է. ես իսկ հայրենեացդ դուստր եմ: Ամենքս, զորս դուն բնաջինջ ընել կը ջանաս, քուկդ ենք. մեր բաղուկները բաց են զքեզ գրկելու, մեր ծնկուղներն ալ պատրաստ զքեզ մեծարելու. մեր սուրը քեզի համար հատու չ'է: Մեծարոյ է մեզի գէմք մ'որ թագաւորին համահման է կերպարանօք, թէեւ թշնամւոյ ղիմակով ըլլայ:

ԴՈՒԳՍԸ. — Յուշկասպարիկ, կ'ուղես զո՞հ քեզի կորդել անոյշ եւ փաղաքուշ խօսքերով:

Խորամանկ, չ'ես կարող ղիս մոլորեցընել: Ա-  
կանջս քու օձային խօսքերէդ կ'ղբուշացընեմ.  
կուրծքիս զրահը քու աչացդ հրային սլաքներն  
• ետ կը մղէ: Ի դէն, Տիւնուա. սրով ոչ թէ  
խօսքով կուռնիք:

ՏԻՒՆՈՒԱ. — Նախ խօսք ապա սուր: Կ'եր-  
կընչիս խօսքէ: Այս ալ վատութիւն է եւ ի-  
րաւունք չ'ունենալու ապացոյց:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Զմեղ քու ոտքդ բերողն  
ստիպողական հարկը չ'է. քու առջեւդ իբր ա-  
ղաչաւոր չ'ենք երեւար: Բոլորտիքդ նայէ, Անդ-  
ղիացւոց բանակն յաճիւն դարձած է. դաշտը  
ձեր զօրաց դիակներովը ծածկուած է: Կը լը-  
սես Գաղղիացւոց փողերուն ձայնն. Աստուած  
վճռեց, յաղթութիւնը մերն է: Պատրաստ ենք  
դեղեցիկ դալինւոյն դալարագեղ ոստը քեզի  
մատուցանելու: Ո՛հ, եկուր, աղնիւ փախստա-  
կան, եկուր ուր իրաւունք եւ յաղթութիւն  
կայ: Ես իսկ աստուածառաքս, եղբայրական  
ձեռքս քեզի կ'երկնցընեմ. կ'ուզեմ զքեզ ա-  
ղատելով մաքուր կողմն անցընել: Երկինք  
Գաղղիոյ հետ հաշտ է. իւր հրեշտակները, զորս  
դու չ'ես տեսներ, թագաւորին համար կը  
կուռնին. ամենքն ալ իրենց ձեռքը շուշան ու-  
նին: Մեր դատն սպիտակ փայլուն է այս դը-  
րօշին պէս: Գաղղիացւոց դրօշին վրայ կուռնին  
ամբիծ պատկերը նկարուած է:

ԴՈՒՔՍԱ. — Ստախօսութիւնը պատիր եւ  
պղտորիչ է, բայց քուկդ տղայական է: Զար

ողւոյն քեզի թելադրած խօսքերը միանդամայն կեղծ անմեղութեան մ' հրապոյրն ունին։ Ալ մտիկ չ'եմ ընկեր։ Ի զէն. դիտեմ, ականջս բաղ- կէս տկար է։

ՅՈՎՀԱՆՆԱՒ. — Զիտ կախարդ կ'անուանես նա զիս կը նախատես իբր թէ դժոխացին հը- նարք կը բանեցընեմ։ Խաղաղութիւն հաստա- տելն ու ատելութիւնը վերցընելը դժոխքի գործ է։ Միթէ միարանութիւնն անունջ եւ անյատակ սանդարամեալն կ'եղլէ։ Կայ բան մ'այնպէս անմեղ, սուրբ եւ մարդկօրէն բա- րի՝ բաց ի հայրենեաց համար եղած սլատե- րաղմէն։ Բնութեան կարգն Երբ այնպէս խան- դարեցաւ որ փոխանակ երկնից՝ դժոխք ար- դարութեան դատը սլաշտպանէ։ Նթէ բարի է խրատս, դայն ինձ ո՞վ կրնայ թելադրած ըլ- լալ եթէ ոչ երկինք։ Ո՞վ կրնար երազել զիս ոչխարացո հօտէն բաժնելով թագաւորական գործերուն միջամուխ ընել։ Երբէք իշխանաց հետ չ'եմ բնակած եւ բերանս վարժ չ'է ատե- նախօսութեան։ Բայց հիմայ որ զքեզ յորդո- րել ինձի սլարաք է՝ բարձրագոյն իրաց խելա- մտութիւնն ինձի կը տրուի։ Իշխանաց եւ թա- դաւորութեանց բախտը տհաս մաքիս արեւի նման սլայծսու կ'երեւայ եւ խօսքերս իբրեւ շանթ կ'եղլեն բերնէս։

ԴՈՒԲՍԸ. — (Սաստիկ յռդէալ աշն Յովհան- նայն լքայ իբր Դարձեւ եւ զարմացմամբ զայն ինչհարե) Ի՞նչ կ'ըլլամ, ինչ կ'զգամ։ Արդեօք Աստուած

է որ սրտիս խորը կը փոխէ։ Ո՛հ, այս սրտաշարժ դէմքը խաբեբայ չ'է։ ո՛չ, ո՛չ։ Եթէ կախարդական է այս զօրութիւնն որ գիւղ կը կուրացընէ, անշուշտ երկնային հրամանաւ է։ Բայց սիրտս կը վկայէ թէ այս աղջկին Աստուծմէ ուղարկուած է։

ՅՈՎՀԱՆՆԱ. — Յուզեալ է, այո՛։ Ո՛չ 'ի դուր սպաղատեցայ. բարկութեան որոտալից ամպերն յարտասուս ցնդելով իւր ճակտին վրայէն կը հոսեն եւ խաղաղաւետ աչուքներէն զգացման ոսկեգոյն արեւը կը ծագէ։ Թողէ՞ք զէնքերը, թող սըտերը միանան. մեղմացաւ, կուլաց. այսուհետեւ մերն է։ (Սաբն և Դրշը լռելով Յովհաննա բաղկարար՝ Պաբկոնայի դռնէն կ'երթայ և սասարի եռանդով զայն կը գրկէ։ Լահիւ և Տիւնա ալ իրենց զենիւր լռելով՝ զայն գրկել կը գոչեն)։

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

ԱՐՔՈՒՆԻ ԲԱՆԱԿՆ Ի ՇԱԼՕՆ ՄԱՌՆ ԳԵՏԻՆ ՎՐԱՅ

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏԻՒՆՈՒԱ և ԼԱՀԻՐ

ՏԻՒՆՈՒԱ. — Սերտ բարեկամ եւ զինուորակից էինք, միեւնոյն նպատակաւ մեր բա-

դուռը բարձրացուցինք եւ միաբան մահու չափ  
ճգնեցանք ամեն նեղութեան դէմ: Չըլլայ թէ  
սիրահարութիւնը քակէ այն կապը, զոր ցարդ  
դիպուած մը չը կրցաւ խզել:

ԼԱՀԻՐ. — Իշխան, մտիկ ըրէ:

ՏԻԻՆՈՒԱ. — Գիտեմ, այն զարմանալործ  
աղջիկը կը սիրես: Գիտեմ նաեւ զաղափարդ:  
Միտքդ անյապաղ օրիորդը թագաւորէն քեզի  
ամուսին ինդրել է: այո, թագաւորը քու քա-  
ջութեանդ փոխարէն այս արժանաւոր վարձ-  
քը քեզի չի կրնար դրանալ: Բայց զիտցիր...  
զայն ուրիշի դիրկը չը տեսած...:

ԼԱՀԻՐ. — Մտիկ ըրէ՛ դիտ, իշխան:

ՏԻԻՆՈՒԱ. — Զիտ իրեն ձգողն անոր դե-  
ղեցիկ աչուըներուն յանկարծական եւ անցա-  
ւոր հրապոյրը չ'է: Աստուածային վճռով տէ-  
րութեան փրկիչ եւ յետոյ ինձի ամուսին ըլ-  
լալու այս սքանչելի աղջիկը դեռ չը տեսած՝  
կին մ'երբէք անյողգող սիրտս յուղած չ'էր:  
արդէն սուրբ երգմամբ ուխտած եմ զայն իր  
ամուսին՝ հայրենի տունս տանելու: Քանզի  
քաջ կ'ինը միայնքաջ մարդուն բարեկամը կըր-  
նայ ըլլալ, եւ եռանդնոտ սիրտը կը փափաքի  
հանգչիլ միայն իրեն նման գրկի մը վրայ՝ որ  
անոր զօրութեանը կրնայ տանիլ եւ տոկալ:

ԼԱՀԻՐ. — Իշխան, ինչպէս կրնամ յան-  
դգնիլ իմ տկար արժանիքս քու դիւցազնա-  
կան անուանդ փառացը հետ չափել: Երբ Տիւ-  
հուա կ'ոման աստարիզին մէջն է, պէտք է որ

ուրիշ մրցողք տեղի տան, Բայց եւ այնպէս խոնարհ հովուութի մը չի կրնար արժանի ըլլալ ամուսինդ կոչուելու: Երակներուդ մէջ հոսող թագաւորական արիւնն այս անհաւասար միաւորութիւնը կը մերժէ:

**ՏԻԻՆՈՒԱ.** — Օրիորդն ալ ինձի պէս աստուածազարմ է եւ սուրբ բնութեան մը ծնունդ: Այն որ սուրբ հրեշտակաց հարսնացեալ է, այն որուն գլուխն աշխարհային թագերէ պայծառ՝ աստուածային պսակով կը շողայ, այն որ ամեն երկրաւոր մեծութիւն եւ բարձրութիւն իւր ոտիցը պատուանդան ունի, — քանզի եթէ բոլոր արքունի դահերը մինչեւ աստղերը գիշուն իրարու վրայ, չ'են կրնար հասնիլ այն բարձրութեան, ուր նա իւր հրեշտակային վառաւորութեամբը կը կենայ—, այսպիսի անձ մը կ'ըսեմ, ինչպէս կրնայ ամուսնութեամբ իշխան մ'անուղատիւ ընել:

**ԼԱՀԻՐ.** — Թող թագաւորն որոշէ:

**ՏԻԻՆՈՒԱ.** — Ո՛չ, օրիորդն ինքն որոշելու է: Այն որ Գաղղիան ազատեց՝ իւր սիրտը մատուցանելու մասին ալ ազատ ըլլալու է:

**ԼԱՀԻՐ.** — Անձ թագաւորը կուգայ:

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

**ԿԱՐՈՂՈՍ, ԱԳՆԷՍ ՍՕՐԷԼ, ՏԻԵԱԹԷԼ, ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ՇԱԹԻԼԵՕՆ Լ ՄԵԼԷՆԷՐԸ.**

**ԿԱՐՈՂՈՍ.** — (Շաթիլեօն) Դուքսը կ'ուղայ,

արդեօք զիս իրեն թագաւոր ճանչելու եւ ինձի հնազանդելու համար է :

ՇԱԹԻԼԵՑՆ. — Այո՛, տէր արքայ . դուքսն , իմ հրամանատարո՛ւ կ'ուզէ հոս 'ի Շալօն՝ արքայանիստ քաղքիդ մէջ ոտքդ իյնալ : Ինձի որատուիրեց դալ վքեղ ողջունել իւր վնասակոտ եւ թագաւորս : Ինք ալ ետեւէս կուգայ , իսկոյն կը մօտենայ :

ՍՕՐԷԼ. — Կուգայ . ո՛վ գեղեցիկ արեւ , բարենշան օր որ մեզի ուրախութիւն , խաղաղութիւն եւ հաշտութիւն կը բերես :

ՇԱԹԻԼԵՑՆ. — Տէրս երկու հարիւր ասղեւտաց հետ գալով՝ ծնկուընեւրուդ առջեւ պիտի խոնարհի . բայց կը յուսայ թէ իւր խոնարհելէն առաջ կ'աճասլարես դայն իբրեւ արենակից՝ ուրախութեամբ դրկել :

ԿԱՐՈԼՈՍ. — Սիրտս անոր սրտին հետ միանալու վախաքով բորբոքած է :

ՇԱԹԻԼԵՑՆ. — Դուքսը կը խնդրէ որ այս առաջին տեսութեան ժամանակ՝ նախնի հաւկառակութեան վերաբերեալ խօսք մը չը պատահի :

ԿԱՐՈԼՈՍ. — Թող անցեալն յաւիտեան մոռացութեան գետին մէջ ընկղմի : Ապագային մէջ զուարթ օրեր տեսնենք :

ՇԱԹԻԼԵՑՆ. — Դքսին հետ կոռուողներն ալ թող այս հաշտութեան հաղորդ ըլլան :

ԿԱՐՈԼՈՍ. — Այսպէս տէրութիւնս կրնայ կրկնապատիկ ըլլալ :

**ՇԱԹԻԼԵԾՈՆ.** — Իդապօ թագուհին եթէ ընդունի՝ այն ալ կրնայ այս խաղաղութեան մասնակից ըլլալ :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Այն է ինձի դէմ կռուողն ոչ թէ ես անոր դէմ. Մեր կռիւը կը վերջանայ երբ այն վերջացընել ուղի է :

**ՇԱԹԻԼԵԾՈՆ.** — Խօսքիդ հաստատութեան համար թող տասներկու ասպետ երաշխաւոր ըլլան :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Խօսքս սուրբ է :

**ՇԱԹԻԼԵԾՈՆ.** — Եւ Արքեպիսկոպոսը թող քեզի եւ դքսին նշխար բաժնէ՝ իրր դրաւ եւ կնիք անկեղծ հաշտութեան :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Եթէ ուղիղ սրաիւ խոստմանս հաւատարիմ չ'ըլլամ, կրնամ յաւիտենական վրկութեան մէջ բաժին ունենալ, Դուքսն ասկէ աւելի ինչ հաստատուն գրաւ կը պահանջէ :

**ՇԱԹԻԼԵԾՈՆ.** — (Տիւշմէլն Նայելլ) Կը տեսնեմ հոս մէկն, որուն ներկայութիւնը կրնայ այս առաջին ողջոյնը թունաւորել :

(Տիւշմէլ Լուսնեմէ Կ'երթայ) :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Հեռացիր այժմ, Տիւշմէլ, մինչեւ որ Դուքսը կարենայ քեզի հաշտ ապահով նայիլ : (Անոր ետեւէն ինչոյ, յետոյ ճոթնաւով ինչ էրէկ) Ո՛ր հաւատարիմ ըտրեկամ. հանգըստութեանս համար շատ աշխատեցար :

(Տիւշմէլ ինչ Բէնի) :

**ՇԱԹԻԼԵԾՈՆ.** — Միւս յօդուածներն ալ այս դաշնագրին մէջ են :

**ԿԱՐՈՒՆՍ.** — (Արեւելահայոցին) Զանոնք կարգադրելու խնամք տան : Ամենուն ալ հաճուածիւն կուտամ : Բարեկամ ընդունելու համար բնաւ պատրաստութիւն մը զանց ընելու է՛ն : Գնա, Տիւնոնա, հարիւր ազնուական տասկետ հետք առնելով դուքսը դիմաւորէ : Թող զինուորք ծաղկի տերեւներով զարդարուին իրենց եղբարքն ընդունելու համար : Թող ամբողջ քաղաքը տօնախմբութեան պատրաստութիւն բոլոր զանգակներն իմացունեն որ Գաղղիա եւ Պուրկունատ վերստին կը միանան : (Մահլէսէի հը ներս կը հոն : Ժող յայն կը լսէ) Ականջ դիր, ինչ կընշանակէ այս փողի ձայնը :

**ՄԱՆԿԼԱԻԻԿ.** — Պուրկունատի դուքսը քաղաք կը մտնէ : (Կը Դիւնէ) :

**ՏԻՆՈՒԱ.** — Օ՛հ, դիմաւորելու երթանք : (Լահէիէ և Շաֆէիէն հետ կ'երթայ) :

**ԿԱՐՈՒՆՍ.** — (Սեբէիէն) Կուլան, Ազնէս . գըրեթէ ես ալ ուժաթափ եմ այս նոր փոփոխութեան տոկալու : Ո՛հ, քանիք մահուան դոհ եւ զան մինչեւ այս վայրկեանս որ մենք վերստին հաշտ աչօք զիրար կը տեսնենք : Բայց վերջապէս մերկին կասողութիւնը կը հանդարտի, խաւարային զիշերին պիտի յաջորդէ առաւօտն եւ ժամանակ կուգայ որ անադան պտուղներն ալ կը հասնին :

**ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍԸ.** — (Պարոհանէն Ժողին) Դուքսն հաղիւ ամբոխը կը ճեղքէ : Ժողովուրդը զայն յաղթանակով կը բերէ, եւ անոր

հանդերձներն , ոտիցը հետքն անդամ կը համ-  
բուրէ :

ԿԱՐՈՂՈՍ. — Այո՛, բարի ժողովուրդ է , ե-  
ռանդուն եւ սաստիկ իւր սիրոյն , ինչպէս  
նաեւ իւր բարկութեանը մէջ : Ի՞նչ շուտով  
մոռցան որ այս դուքսն էր իրենց հարքն ու  
սողաքը ջարդողը . մէկ վայրկեանն ամբողջ  
կեանք մը կը մոռցնէ : Սօրէ՛լ , ժրացի՛ր . թե-  
րեւս այդ քու սաստիկ ուրախութիւնդ անոր  
սրտին խոց մ'ըլլայ . հոս անոր նեղուելու կամ  
շիկնելու բան մը չ'ըլլայ :



## ՏԵՍՍՐԱՆ Դ.

ՊՈՒՐԿՈՒՆՏԻ ԴՈՒՔՍԸ , ՏԻԿՈՒԱ , ԼԱՀԻՐ ,  
ՇԱԹԻԼԵՅՈՒ Լ ԴԻՄԻՏՐԻՍ ԴԻՄԻՏՐԻՍ ԵՐԿՈՒ  
ԱՍՊԵՏԻ : Վայրկեան ճշգրիտ դրանք մը կը կե-  
նայ . լաւատուրն անոր կը ճգնուայ , իսկոյն դուքսն  
յառաջանայ Լ երբ թուր դնելու վրայ է՝ լաւատու-  
րն էր ճգնուող մը կ'առնէ :

ԿԱՐՈՂՈՍ. — Զմեղ զարմացուցիք . . . կը  
խորհէինք զձեզ գիտաւորել . . . կ'երեւի թէ  
ձեր ձիերն արագընթաց են :

ԴՈՒՔՍԸ. — Զիս պարտաւորութիւն մը կա-  
տարելու կը բերէին : (Սօրէ՛լը ճիշդն անոր ճակա-  
րն կը համբարէ) Սիրելիդ իմ , ներէ՛ . ասիկայ  
Արասի մէջ իշխանաց իրաւունքն է , եւ ոչ ոք

ի գեղեցիկ կանանց այս սովորութիւնը կը մերժէ :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Կ'ըսեն թէ ձեր ընակութիւնը սիրոյ աթոռն է, ուր ամեն գեղեցկութիւն իւր կայանն հաստատած է :

**ԴՈՒՔՍԸ.** — Տէր արքայ, մենք վաճառաշահ ժողովուրդ ենք: Երկրիս ամեն կլիմայից մէջ յառաջ եկող ծանրագին բան մեր Պրիւժի վաճառանոցին մէջ կը գտնուի ի տես եւ ի վայել. բայց կանանց գեղեցկութիւնն ուրիշ ամեն բարիքներէն աղնուադոյն է :

**ՍՕՐԷԼ.** — Կանանց հաւաքարմութիւնը պատուականագոյն եւս է. բայց ասիկայ այդ վաճառանոցին մէջ չի տեսնուիր :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Սիրելիս. ձեր վրայ վատ համբաւ մը տարածուած է թէ կանանց ամենագեղեցիկ առաքինութիւնը կ'արհամարէք :

**ԴՈՒՔՍԸ.** — Հերեւակոսութիւնն ինքնին խստութեամբ կը պատժուի: Տէր արքայ, երջանիկ էք այս մասին: Սիրտը ձեզի վաղադոյն սովորեցուց զայն որ խռովայոյդ կեանք մ'ինձի ահա անագան կ'իմացընէ: (Արեւելահայոց Նաշել յէւզ յէւզ էք քոյն) Արժանաւոր այր Ասատուծոյ, ձեր օրհնութիւնը կը հայցեմ. Միչա ուղիղ ճանապարհին վրայ կը գտնուիք. զձեզ գտնել ուղողը բարութեան մէջ շրջելու է:

**ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԸ.** — Եթէ Ասատուած կ'ուզէ, թող զիս իրեն կոչէ. սիրտս ուրախութեամբ լի է եւ քանի որ աչուքներս այս օրը

տեսան, զուարթութեամբ կրնամ մեռնիլ :

ԴՈՒՔՍԸ. — (Ս:բէլին) Կ'ըսուի թէ ձեր ագամանդեայ քարերը վատնելու էք ինձի դէմ զէնք գործել տալու համար : Ի՞նչ, այնչափ պատերազմասէր էք . կ'ուզէիք այսչափ սաստկութեամբ ինձի վրասել : Բայց հիմայ պատերազմն անցաւ, կորուստը կը գտնուի, Ձեր զարգերն ալ գտնուեցան . ինձի դէմ պատերազմի համար սահմանուած էին, ես ձեռքս զանոնք ձեղի կը մատուցանեմ իբրեւ խաղաղութեան նշան :

(Դոստն էր ուղեկիցներուն մէկէն ադամանդներուն աբիլը կ'առնէ և բանալով Ս:բէլին կը հարուցանէ : Ահնէ՝ Ս:բէլ շարժանք խաբարներն կը նայի) :

ԿԱՐՈՂՈՍ. — Ընդունէ՛ այդ ընծան . ինձի համար ասիկայ զեղեցիկ սիրոյ եւ հաշտութեան կրկնակի հաւատարիմ գրաւ է :

ԴՈՒՔՍԸ. — (Ս:բէլին հաշտութեան մէջ ադամանդեայ զարդ մը դնելով) Ինչո՞ւ համար Գաղղիոյ արքունի թագը չ'է : Եթէ իրաւամբ այն ըլլար միւսեւոյն յօժար սրտով պիտի պոսկէի այս գեղեցիկ գլուխը : (Ս:բէլին յետէն առնելի բռնելով) Եւ . . . եթէ երբէք բարեկամի մը պէտքն ըզգալու ըլլար, վստահ եղիք ինձի :

(Ս:բէլ ադամանդներով մեկտէ կ'երևայ, խաբարներն կը յոգնէ, հանդիսականաց առնին ալ երկու իշխանաց վրայ յողեալ կ'երևան) :

ԴՈՒՔՍԸ. — (Հանդիսականները նկարելէ ետք) Խաբարներն բազմացը մէջ կը ներսնան) Տէ՛ր արքայ :

(Նոյն վայրիկէնն պարկոտեպի երէտ ասպետ Տիանասայի, Լահիբի և Արեւելեան պարտէի Տարեւելի շէրաբի ինքնէն: Կարող և Գոտար ինչ Տ'ապէն լաւ ինչ կէնան իբրեւ Քաղիպ Տիւ) Ինչպէս կրցայ զձեզ ասել, ինչպէս կրցայ զձեզ մերժել:

ԿԱՐՈՂՈՍ. — Բաւական է, լսեցէք, ալ մի խօսիք:

ԴՈՒՔՍԸ. — Ինչպէս իշխուցի ասն Անդղլաւի թագով պսակել, ասն օտարին հաւատարմութեան երգում ընել եւ զձեզ թագաւորս դաշնալէտ կործանել:

ԿԱՐՈՂՈՍ. — Ամեն բան մոռցուած է եւ ներուած: Այս միակ վայրկեանն ամենայն ինչ կը ջնջէ: Ճակատադիր մ'էր, չուտա աստղ մը:

ԴՈՒՔՍԸ. — (Թագաւորին յետք քննելով) Ըրած անիրաւութիւնս պիտի ուղղեմ, հաւատացէք ինձի: Ձեր կրած նեղութիւններուն փոխարէն պիտի ըլլայ. թագաւորութիւնը վերստին պիտի առնէք՝ առանց զիւղ մը կորսնցընելու:

ԿԱՐՈՂՈՍ. — Միացանք, ալ լնաւ թշնամիէ չ'եմ վախնար:

ԴՈՒՔՍԸ. — Հաւատացէք, երբեք ուրախ սրտիւ ձեզի դէմ զէնք չը գործածեցի: Գիտէք... ինչո՞ւ զայն ինձի չը զրկեցիք: (Ագռաւ ցոլեցէն) Երբեք անոր արտասուացը պիտի չը կրնայի տանիլ. դժոխային ոչ մէկ զօրութիւն մը պիտի կրնայ զմեզ բաժնել հիմայ որ սիրտ սրտի կուտանք: Այժմ գտայ իմ ճշմարտութիւնը:

մարիտ բնակութիւնս, սխալմունքս ձեր սրբա-  
տինն վրայ վերջացաւ :

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — (Աննյ ԴՅ Դոնէլով)  
Ահա միացար, իշխանք: Գաղղիա իբրեւ վիւ-  
նիկ մ'իւր մոխրոյն մէջէն կ'ելլէ վերածննաւ-  
ապագան մեզի զուարթերեւ կ'երեւայ: Հայ-  
րենեաց խոր վէրքերը պիտի բժշկուին, կոր-  
ծանեալ գիւղերն ու քաղաքներն իրենց աւե-  
քակաց մէջէն պիտի կանգնին հոյակապ, մար-  
դերը պիտի զուարճանան դալարեօք . . . բայց  
ձեր կռուոյն զո՞ւ կողմ մնուալք երբէք պիտի  
չ'արթննան. ձեր պատերազմաց պատճառաւ  
թափուած արտասուքն են եւ պիտի մնան  
թափուած: Ապագայ սերունդը պիտի ծաղկի,  
թէսլէսու անցեալը տառապանաց նշաւակ եւ  
ղաւ. թողանց երջանկութիւնն հայրերը պիտի  
չը կրնայ յարուցանել: Ահա ասոնք են ձեր  
երկպսոսակութեան արդիւնքը: Թող ասիկայ  
ձեզի խրատ ըլլայ: Զեր սուրը պատեանէն չը  
հանած՝ վախցէք սրոյ Աստուծմէն: Զօրաւորը  
կրնայ պատերազմն արձրիկել, ինչպէս որսոր-  
դը բաղէն, բայց չի կրնար դայն իւր ձայնին  
հնազանդեցընել սրսորդին նման՝ որ հլու բու-  
ղէն իւր ձեռքին վրայ կը կոչէ. վայրագ է  
պատերազմին Աստուածը: Ամպոյ մէջէն աղա-  
տարարին ձեռքն այսօրուան պէս երկու ան-  
գամ չի դար ձեզի օգնելու:

ԴՈՒՔՍԸ. — Տէր արքայ, ձեր քոյկն հրեշտակ  
մի կը բնակի. մեր է, ինչո՞ւ հոս չ'եմ տեսներ:

**ԿԱՐՈՂՈՍ.** —Ո՞ւր է Յովնաննա: Ինչո՞ւ ներկայ չ'է այս հանգիստական գեղեցիկ վայրկենիս, զոր մեղի պարգեւեց:

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.** —Տէ՛ր, սուրբ աղջիկը չի սիրեր դատարկ արքունեաց հանգիստը. ուրովն առաջ աստուածային հրամանը դայն աշխարհային փառաց չի կոչեր, իւր ամօթխած երեսն հասարակաց աչքէն կը ծածկէ: Անշուշտ Աստուծոյ հետ կը խօսի, երբ Գաղղիոյ բարեոյն համար դադար չ'է. անոր ամեն քայլերուն Աստուծոյ օրհնութիւնը կը հետեւի:



## ՏԵՍԱՐՍՆ Դ.

**ՅՈՎՀԱՆՆԱ** և **ԽՈՒՅՍԷ**: Յովնաննա զրահադար, Բայց առանց աղաւարի. Բաղբո՞ւն մէջ ծաղկեայ պըսակ ծ'ռնի:

**ԿԱՐՈՂՈՍ.** —Յովնաննա, իրի քահանայ աղջիկ մը կուգաս ձեռօքդ հաստատուած միութիւնն օծելու:

**ԴՈՒՔՍԸ.** —Ո՛րչափ ահաւոր էր օրիորդը պատերազմին մէջ, և ինչպէս կը փայլի խաղաղութիւնն անոր գեղեցիկ գէմքին վրայ: Խօսքս պահեցի, Յովնաննա. դո՞ւ և, և քու հաճութեանդ արժանի եմ:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** —Մեծ վարձք ոտացար. այժմ օրհնառատ լուսով կը շողաս, մինչդեռ առաջ արիւնհաներկ և միթին լուսով երկնից վը-

բայ երևցող ահաւոր լուսնոյ կը նմանէիր : (Բարբեթ Զոյելը) կը տեսնեմ հոս ազնուական շատ ասպետներ , ամեն աչք զուարթութեամբ կը փայլի . տխրահայեաց մէկը միայն տեսայ , որ երկար ծածկելու ստիպուած է , մինչ ամենայն ոք ցնծութեան մէջ է :

ԴՈՒՔՍԸ. — Ո՛ր է այն ծանր յանցաւորն որ մեր շնորհքէն կ'երկմտի :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Աղէ , ըսէ . կրնո՞յ համարձակիլ մօտենալ . գալիսի դործդ կատարեալ ըրէ : Թերի է հաշտութիւնն երբ սրտին մէջ տակաւին խէթ կայ : Բարեկամական բաժակին յատակը մնացած կաթիլ մ'ատելութիւնն օրհնեալ ըմպելին կը թունաւորէ : Արիւնահեղ անիրաւութիւն մը չը կայ որ Պուրկուստի զուքան այս զուարթ օրուան մէջ չը ներէ :

ԴՈՒՔՍԸ. — Այո , կը հասկնամ միտքդ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ուրեմն կ'ուզես ներել , դուքս : Մտի՛ր , Տիւշաթէլ : (Դուքսն էր Բանայ . Տիւշաթէլ Ներս Ժոնէլով հետն էր Բանայ) Դուքսն իւր բոլոր թշնամեաց հետ հաշտուած է , քեզի հետ ալ կ'ուզէ հաշտ ըլլալ , Տիւշաթէլ : (Տիւշաթէլ դռնն մօտն հասնալն համար երեսն է քէր Զոյելով Բանէ ինչ Բանայ առջ կոտայ) :

ԴՈՒՔՍԸ. — Ինչ ի՞նչ կ'ուզես , Յովհաննա . գիտնս արդեօք ինչ կ'առաջարկես :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Բարերար տէր մ'իւր դուռներն ամեն հիւրի կը բանայ , ոչ դուք կը մերժէ . ինչպէս երկինք բոլոր աշխարհք հաւասար

կը պատռէ, այնպէս պէտք է որ զթութիւնը  
բարեկամօք եւ թշնամույ վրայ անխափր սա-  
լածուի: Արեւական իւր ճառագայթները միօ-  
րինակ կը զրկէ տիւրերաց անհուն միջոցին մէջ .  
երկինք մի եւ նոյն չափով կը շնորհէ իւր ցօղն  
ամեն թառամեալ բուսոյ: Ամեն երկնառաք  
շնորհք ընդհանուր է եւ աննախանձ: Խաւա-  
րը ծածուկ տեղեր կը դարանի:

**ԴՈՒՅՍԸ.** — Յովնաննա, ուղածիդ պէս կըլ-  
նաս հետս վարուիլ. սիրտս կակուղ մտմ է ձե-  
ռացդ մէջ: Համայր տանք իրարու, Տիւշաթէլ,  
ահա կը ներեմ քեզ: Հօրս ուրուականը, մի  
բարկանար, երբ դքեզ սարաննոյ ձեռքը կը  
թօթվում բարեկամաբար: Դուք, ով հրեշտակք  
մահու, զիս մի պատուհասէք իւրեւ դրժող վը-  
րէժխնդրութեան սոսկալի երդման: Տարտա-  
րոտն, այն ձեր յաւիտենական խաւարին մէջ,  
գթութիւն չը կայ. հոն ամենայն ինչ յաւիտե-  
նական է. ամենայն ինչ անչարժ . . . բայց հոս  
ընդ արեւակառք լողորովին տարբեր է: Մարդս  
հոս ամեն վայրկեան նոր զոյացման ընդունակ  
է. պարապանկրուն հզօր աղղեցութեանը ներ-  
քեւ ենք:

**ԿԱՐՈՒՈՍ.** — (Յօգնւելով) Աղնիւ օրիորդ,  
ինչ մեծ շնորհակալութիւն պարտական եմ  
քեզ: Ի՞նչպէս գեղեցիկ կատարեցիր խոստմուն-  
քըդ: Ի՞նչ շուտով բախտս փոխուեցաւ: Բարե-  
կամներս ինձի հետ հաշտ են, թշնամիներս  
դահալէժ կործանած, քաղաքներս ծառի լու-

ծէ ազատ։ Այս ամեն բան դու դործեցիր։  
խօսէ, ինչպէս կրնամ դքեղ վարձատրել։

ՅՈՎՀԱՆՆԱ. — Տէր, միշտ մարդասէր ե-  
ղիր երջանկութեան մէջ, ինչպէս որ էիր դժ-  
բախտութեանդ։ ատենը . . . եւ մի՛ մոռնար  
բարձրութեան դադաթին վրայ՝ նեղութեան  
մէջ բարեկամի պէտքը։ արդէն ասոր փորձառու  
ես։ Ժողովրդեանդ յեանոյն անգամ արդար եւ  
բարի երեւցիր, քանզի Աստուած քեզի ազա-  
տիչ՝ հովիւ աղջիկ մ'ընտրեց . . . ամբողջ Գաղ-  
ղիան դաւադանիդ ներքեւ պիտի ժողվես եւ  
իշխանապետաց նախահայր եւ ցեղապետ պիտ'。  
ըլլաս։ Յաջորդներդ քեզի նախորդ եղող դա-  
հակալներէն աւելի պայծառ պիտի փայլին։  
Սերունդդ պիտի ծաղկի, ցորչաւի որ ժողովրդ-  
դեան սրտին մէջ պահէ սէրը։ Հալարսութիւնը  
միայն կլնայ դայն կործանել, եւ այն խոնարհ  
խրճիթներն ուստի քու ազատիչդ եկաւ՝ ա-  
նոնք պիտի սպառնան սոսկալի կործանում մը  
քու յանցաւոր պայազառներուդ։

ԴՌԻՔՍԸ. — Աստուածազգեաց մարդարէ  
օրինորդ, եթէ աչուրներդ ապադան տեսնելու  
կարող են, ըսէ, իմ սերունդս ինչ պիտ' ըլլայ։  
Պիտի բարդաւածի արդեօք այժմու յաջողու-  
թեամբ։

ՅՈՎՀԱՆՆԱ. — Դժ. քս, Եթ ուր մինչեւ  
արքունի դահուն բարձրութեանն հասուցիր եւ  
դուող սիրտդ աւելի բարձրանալ կը փափագի,  
եւ կ'ուղէ մեծութեանդ յանդուգն շէնքը մին-

չեւ ամպերն ամբառնալ : Բայց վերէն ձեռք մ'իսկոյն անոր անուամբ պիտի արդելու : Բայց մի վախնար որ տունդ պիտի կործանի : Սեւրունդդ օրիորդի մը ձեռք պիտի զարդանայ եւ անոր ծոցէն դաւաղանակիր միսպետներ , ժողովրդեան հովիւներ պիտի ծաղկին : Երկու մեծ դահերու վրայ իշխելով աշխարհիս օրէնքսդ պիտ' ըլլան : Նոր երկրի մ'ալ պիտի տիրեն , զոր աստուածային ձեռքը դեռ չը նաւարկեալ ծովերու մէջ կը պահէ :

ԿԱՐՈՂՈՍ. — Ո՛հ , խօսէ , քանի որ հոգինդ զքեզ կը լուսաւորէ . մեր նորահաստատ բարեկամական միութիւնը պիտի միացընէ՞ նաեւ մեր յաջորդ թոռները :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Վայելեան ինքն ինքն երգել) Դուք , արքայք եւ իշխանք , վախցէք երկպառակութիւնէ : Մի արթնցընէք կռիւն իւր որջին մէջ ուր կը ննջէ . քանզի անդամ մ'որ արթննայ , դժուարաւ կը սանձահարի : Երկաթի սերունդ մը կարծրասիրտ թոռներ կը ծնի իրեն եւ հրդեհ հրդեհի վրայ կը յարուցանէ : Աւելի բան մի հարցընէք , վայելեցէք ներկան , թողէք ապագան իւր լռիկ ծածկութեանը մէջ :

ՍՕՐԵԼ. — Ո՛րք աղջիկ , սիրտս կը տեսնես . դիտես թէ արդեօք մեծութեան կը փափաղի . ինձ ալ միտիթարիչ պատասխան մը տուր :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Հոգին ինձ միայն աշխար-

հիս մեծ դէպքերը կ'իմացընէ . բախտդ ծոցիդ  
մէջ կը հանգչի :

ՏԻՒՆՈՒԱ . — Բայց քու ճակատագիրդ ինչ  
է , ո՞վ աստուածաշնորհ աղջիկ , սիրելի՜դ երկ-  
նից , երկրիս ամենագեղեցիկ երջանկութիւնն  
անշուշտ քեզի համար է , որովհետեւ սուրբ եւ  
երկիւղած ես :

ՅՈՎՀԱՆՆԱ . — Երջանկութիւնը վերն յա-  
ւիտենական Հօր գրկին մէջ կը բնակի :

ԿԱՐՈԼՈՍ . — Երջանկութեանդ համար խը-  
նամք տանիլն այսուհետեւ թաղաւորիդ կը վե-  
րաբերի : Անունդ Գաղղիոյ մէջ հռչակաւոր  
պիս' ընեմ , եւ մեր յաջորդ սերունդը քեզի  
երանի պիտի տայ . . . կ'ուզեմ հիմակուրնէ  
խոստմունքս կատարել , Օ'ն , ծննդդ դիր (Առ-  
բէ խաչելով Յովհաննայէն իւրոյնէ) Ե՛լ կանգնէ :  
Իբրեւ ազնուազարմ , ես , թագաւորդ , կը բարձ-  
րացընեմ դքեզ քու աննշան ծննդեանդ փոշ-  
ւոյն մէջէն . . . կ'աղնուացընեմ նաեւ արդէն  
դերեզմանին մէջ գտնուող նախահարքդ . . . :  
Պատուանշանդ շուշան մը թող ըլլայ եւ դու  
Գաղղիոյ ազնուակախաց հաւատար պիտ' ըլլաս  
ծննդեամբ : Վախուայի արքունի ցեղին արիւնը  
միայն քու կրնէ՞դ ազնուազոյն ըլլայ : Թող ա-  
ւադանուոյս ամենէն մեծն իրեն պատիւ համա-  
րի՝ գքեզ իրեն ամուսին ունենալ . եւ քեզի  
ազնիւ կողակէց մը գանձու հողը թող ինձի  
մնայ :

ՏԻՒՆՈՒԱ . — (Առաջ գալով) Սիրտս զայն

իւր ստորին վիճակին մէջ ընտրած էր. զլուս  
խը զարդարող նոր պատիւն անոր վարձքը չ'ա-  
ւելցըներ, ոչ ալ սէրս կը փոխէ : Հոս 'ի ներ-  
կայութեան թաղաւորիս եւ այս սրբակրօն եւ  
պիսկոպոսին՝ ձեռքս անոր կը մատուցանեմ,  
կբերեւ իշխանադարմ ամուսնոյս, եթէ զիս ըն-  
դունիլ արժանի կը համարի :

ԿԱՐՈԼՈՍ. — Հըն՛ օրիորդ, հրաշք հրաշքի  
վրայ կը դիդես : Հիմայ կը հասկնամ որ քեզի  
համար անկարելի բան չը կայ : Նուաճեցիր այս  
խորոխ սիրան որ ցարդ կը նախատէր սիրոյ  
դօրութիւնը :

ԼԱՀԻՐ. — (Աւաջ կոչայ) Քաջ գիտեմ որ  
Յովնանային ամենագեղեցիկ զարդն իւր հա-  
մնատ սիրան է : Ազնուականաց մեծարանացն  
արժանի է, բայց երբէք այնչափ բարձր փա-  
վազ չ'է ունեցած : Աշխարհային ցնորեցողիչ  
մեծութեան չ'անձկար. անոր ընդունելի է մա-  
նաւանդ վեհանձն եւ անձնանուէր սիրտ մ'  
եւ խաղաղ վիճակ մը. եւ ասոնք ինձի հետ  
միանալով կրնայ ունենալ :

ԿԱՐՈԼՈՍ. — Դժն ալ, Լահիր : Դիւցադնա-  
կան առաքինութեան եւ պատերազմական փա-  
ռաց երկու ազնիւ նախանձորքներ : — Թշնամի-  
ներս ինձի հետ հաշտեցընելէ եւ տէրութիւնս  
խաղաղեցընելէ ետքը՝ կ'ուզեմ իմ ամենատի-  
րելի բարեկամներս պառակտել : Մէկը միայն  
կրնամ ունենալ, թէպէտ ես երկուքն ալ այս  
մրցանակին արժանի կը տեսնեմ : Խօսի՛ ուրեմն :

այս խնդիրը սրտիդ որոշումէն կախուլն հենի :

ՍՕՐԷԼ. — (Կը զօրհանայ) Կը տեսնեմ որ աղ-  
նիւ օրիորդն ապշած է եւ իւր այտերը պար-  
կեշտ ամօթ խածութեամբ ներկուած են : Ժա-  
մանակ տուէք որ իւր հակամիտութեանն ան-  
սալէ առաջ՝ բարեկամուհւոյ մ'հետ խորհրդակ-  
ցի եւ իւր ամրապինդ սրտին կնիքն անոր բա-  
նայ : Ժամ է արդ որ իբրեւ քոյր այս արի օ-  
րիորդին մօտենամ եւ մտերմաբար հետը խօ-  
սիմ : Թողէք մեզի խորհիլ նախ այս կանացի  
գործին վրայ եւ մեր որոշման սպասեցէք :

ԿԱՐՈՒՈՍ. — (Ելեալ յետեւ) Թող այսպէս  
ըլլայ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ո՛չ այսպէս, տէր . այտե-  
րուս կարմիրն երկչոտ ամօթ խածութեան մը  
վարանումէն չ'էր : Այս աղնիւ տիկնոջ յայտ-  
նելու դադանիք մը չ'ունիմ, զոր արանց առ-  
ջեւ ըսելու ամչնամ : Այս աղնիւ առաջնա-  
ղնորութիւնն ինձի մեծ պատիւ կը համարիմ .  
բայց աշխարհային ունայն մեծութիւն կորզելու  
համար չ'էր որ իմ հովուական դաշտս թողու-  
ցի, ոչ ալ հարսանեական պսակով գլուխս սըն-  
նելու համար այս սղոճապատ սպառազինու-  
թիւնն հագայ : Ուրիշ գործի մը կոչուած եմ,  
զոր միայն մաքուր օրիորդ մը կրնայ 'ի գլուխ  
հանել : Ամենաբարձրելոյն Աստուծոյ ղին-  
ուորն եմ, եւ չ'եմ կրնար մարդու ամուսին  
ըլլալ :

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.** — Մարդուս սիրելի ընկեր ըլլալու համար ծնած է կինն . . . երբ նա բնութեան կ'անսայ, ըստ արժանւոյն երկնից կը ծառայէ : Ուստի զքեզ պատերազմին դաշտը կոչող Աստուծոյ հրամանը կատարելէ ետքը՝ զէնքերդ թողլով կրնաս քու կանացի դողատրը վիճակիդ դառնալ, որմէ ժամանակ մ'հեռացար . վիճակ մ'որ ղինուորական արիւննահեղ դործերու կոչուած չ'է :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Սրբանդան տէր, դեռ ստոյգ չ'եմ գիտեր թէ ինչ հրամայէ պիտի ինձ սուրբ հոգին . բայց երբ ժամանակը դայ, անշուշտ ինձի պիտի յայտնէ, ես ալ անոր ձայնին հնազանդելու պատրաստ եմ : Բայց այժմ կը պատուիրէ որ դործս աւարտեմ : Տիրոջս դուռնը դեռ պսակուած չ'է . անոր ճակատը դեռ սուրբ իւղով օծուած չ'է եւ թաղաւոր ախաղասը դեռ անոր չը տրուեցաւ :

**ԿԱՐՈԼՈՍ.** — Ռէմզի ճամբուն վրայ ենք :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Անգործ չը կենանք, քանի որ թշնամիք մեր բոլորտիքն են եւ ճամբադ գոցել կը ջանան : Բայց ես զքեզ անոնց մէջէն պիտի անցընեմ :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Բայց երբ ասոնք կատարուին երբ Ռէմզի մէջ յաղթական մտնենք, սուրբ աղջիկ, պիտի հաւանին խնդրանալ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Երանի թէ թշնամին յաղթելով այս մահառիթ պատերազմէն հեռանամ, յայնժամ կոչումս կը լրանայ . . . եւ հովիւ աղ-

ջիկ մ'արքունի ապարանաց մէջ բնաւ գործ  
չունենար :

ԿԱՐՈԼՈՍ. — (Յիւզիւնային յետք բռնելով)  
Այժմ հոգւոյն ձայնը կը խօսի քեզի, վառնորոյ  
սէրն համր է քու աստուածարեալ սրտիդ մէջ :  
Բայց հաւատա՞ ինձ որ միշտ համր պիտի չը  
նայ : Զէնքերը պիտ' իյնան եւ յաղթութիւնը  
խաղաղութիւն պիտի բերէ : յայնժամ ամեն ու  
զի պիտի զուարթանայ եւ ամեն սրտի մէջ հեշտ  
ղգացմունք պիտ' արթննան . . . քու սրտիդ  
մէջ ալ քաղցր անձուկ մ'արթննալով՝ աջնալի-  
սի արտասուք պիտի թափուս, որուն նմանը  
դեռ աչուրներէդ իջած չ'է . . . այն սիրար,  
դոր հիմայ երկինք գրաւած է՝ սիրով պիտի  
դառնայ երկրաւոր բարեկամի մը . . . մինչեւ  
ցարդ բիւրաւորներ ազատելով երջանիկ ը-  
րիր, ուրիշ մ'ալ երջանկացընելու կը դանդա-  
ղիս :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Թագաժառանգ տէր. ձանձ-  
րացա՞ր արդեօք աստուածային պաշտպանու-  
թիւնէն որ անոր ընտրած անօթը կ'ուզես կոր-  
ծանել եւ Աստուծոյ քեզի զրկած կոյս օրիոր-  
դը փոշւոյ եւ դոհնի մէջ ձգել : Դժբ, խրս-  
տասիրաք եւ թերահաւատք, երկնաւոր սլա-  
ծառութիւնն զձեզ կը չլացընէ : ձեր աչաց  
առջեւ հրաչքներ կը կատարուին եւ դուք  
զիս դեռ կին կը համարիք : Կինը կրնայ հա-  
մարձակիլ պատերազմական զրահապատ հան-  
դերձն հազնելով արանց ճակատուն մէջ մըտ-

հեղի վայ ինձ, եթէ ձեռք Աստուծոյ վրիժա-  
ռու սուրը դորձածելու ատենս սրախ մէջ  
ամուսնական սիրոյ զգացումը անուցանում,  
Լաւ պիտի ըլլար, եթէ ծնած չ'ըլլայի: Վեր-  
ջացուցէք այս խօսքերն, եթէ չ'էք ուղեր որ  
զիս դրաւող հողին զայրանայ: Արանց ցան-  
կասէր աչօք ինձի հայելն անդամ սոսկում եւ  
սրբապղծութիւն է ինձ համար:

ԿԱՐՈԼՈՍ. — Վերջացուցէք, վայրասպար  
մի զայրացընէք զիս:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Հրամայէ որ պատերազմա-  
կան փողն հնչեցընեն: Այս զինադադարն ին-  
ձի վիշտ եւ անձկութիւն է: Հարկ է որ այս  
դատարկ հանգիստը թողում եւ պատգամա-  
ւորութիւնս կատարեմ՝ զիս տաղնապաւ ստի-  
պող ճակատագրին հնազանդելով:

## ՏԵՍԱՐՍՆ Ե.

ԱՍՊԵՏ Ժ ԴԵՐՄԻ Է ԴԵՐՄԻ.

ԿԱՐՈԼՈՍ. — Ի՞նչ է:

ԱՍՊԵՏԸ. — Թշնամին Մառն դեռն անցաւ.  
պատերազմի կը պատրաստուի:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Եռանդով) Ի ղէն, 'ի ղէն.  
ահա հողին իւր կայերէն լուծուած է: Զէնք  
առէք, երթամ դունդերը կարդադրեմ: (Փո-  
րով Է ԴԵՐՄԻ):

ԿԱՐՈԼՈՍ. — Գնա ետեւէն, Լահիր . . . կ'ու-

զեն տակաւին Ռէմզի դրան առջեւ թադին համար կռուիլ :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Զանոնք մղողը ճշմարիտ քաջութիւնը չ'է : Օրհասական կատաղի յուսահատութեան վերջին փորձն է :


**ԿԱՐՈՂՈՍ.** — Դո՛ւքս . զձեզ չ'եմ ստիպեր . ժամ է արգ մեր կորուստը նորոգելու :

**ԴՈՒՔՍԸ.** — Կը յուսամ որ ինէ գոհ պիտ' ըլլաք :

**ԿԱՐՈՂՈՍ.** — Ես անձամբ ձեզի պիտի կարայեալեմ յաղթութեան ճամբուն վրայ , եւ Ռէմզի առջեւ թադիս համար պիտի պատերազմիմ : Ազնէս իմ , ասպետդ քեզ հրաժարական ողջոյնը կուտայ :

**ՍՕՐԷԼ.** — (Թագ--բը ցրկելէ) Ալ չ'եմ արտասուեր , չ'եմ դողար . երկնից բարութեանն ապաւինած եմ : Քանի քանի անգամ երկինք իւր շնորհաց դրաւականներէ մեզ տուաւ , անշուշտ հիմայ ալ չի զլանար : Հոգիս կը վկայէ որ ընդ հուպ Ռէմզի նուաճեալ պարսպաց մէջ թագաւորս յաղթութեամբ պսակեալ պիտի գրկեմ :

(Փողերու ադրու--նայն ինչ կ'սկսի , որ հետզհետէ պարբերական կարողի դրդեմն կը գոհունի : Տեսարանն աւջէն երաշխական խոսքը պետարանին էտե--ր գործող պարբերական նոսրաց հետ կ'երգէ) :



Տեսարանը՝ ծառերով շրջապատեալ ընդարձակ դաշտի մը կը փոխուի . երաժշտութիւնը կը շարունակէ . զինուորը փութով տեսարանին խորէն կ'անցնին :

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԹԱԼՊՕ՝ ՅԱՍԹՕԼՅԻՆ ԿԵՆՈՒՄ Լ ԴԵՆՈՒՄ ԴԵՆՈՒՄ ԴԵՆՈՒՄ  
ԴԵՆՈՒՄ ԼԻՍՆԵԼ ԿԵ ԿԱՆԵԼ :

ԹԱԼՊՕ. — Զիտ այս ծառերուն տակը դըրէք եւ բանսկը դարձէք . մեռնելու համար օգնութեան պէտք չ'ունիմ :

ՅԱՍԹՕԼՅ. — Ո՛վ դժբախտութեան եւ յուսահատութեան օր : (Լիճնէլ կը հարկնայ) Լիճնէլ, ինչ ձախորդ ժամանակ կուգաս : Տես, դորապէս տեսնուի մահ վիրաւորեալ պառկած է :

ԼԻՍՆԵԼ. — Աստուած մի՛ արասցէ : Ե՛ւ կանգնէ, ազնիւ լորտ . վհատելով լքանելու ժամանակ չ'է : Մահուան տեղի մի տար . թող բնութիւնը տեղի տայ քու կամացդ . հաստատութեանն, եւ կենդանի մնաս :

ԹԱԼՊՕ. — Ի դուր . ահա հասած է օրհասական ժամն որ Գաղղիոյ մէջ մեր կանգնած դահը պիտի կործանէ : Զայն հաստատ պահելու համար վայրապար մինչեւ վերջին բռնակցումն ջանք ըրի այս յուսահատ կռուին մէջ : Ահա կայծակնահար ինկած կ'ընկճիմ՝ երբէք չը կանգնելու յուսով : Ռէմի կորուսինք, փութապէք զն բարիդ աղատելու :

ԼԻՍՆԵԼ. — Թղթաբերն հիմայ լուր բերաւ

թէ՝ Բարիդ դահաժառանդին հետ հաշտուեցաւ :

ԹԱԼՊՕ. — (Վերէն կողմ դուրս ելլել) Արդ ,  
չարունակեցէք ձեր հոսումը , դուք , ով ար-  
եանս վտակներ . տաղտկացեալ եմ ալ արեւուն  
ճառագայթներէն :

ԼԻՕՆԷԼ. — Չ'եմ կրնար կենալ : Ֆասթօ'լֆ ,  
աւելի ապահով տեղ մը տար սպարասեալ .  
ալ չ'ենք կրնար հոս սպասել : Մերկններն ար-  
դէն ամեն կողմէ կը փախչին . Սրիորդն արա-  
գութեամբ յառաջանալու վրայ է :

ԹԱԼՊՕ. — Ո՛վ յիմարութիւն , դու կը յաղ-  
թես , ես ալ կը յաղթուիմ : Աստուածք անդամ  
'ի զուր կը կռուին անհանձարութեան հետ :  
Դուն , ով բարձր հանձար , լուսալիր դուստր  
գլխոյն Աստուծոյ , իմաստուն հիմնադիր տիե-  
ղերաց շինուածոյն , վարիչ աստեղաց , ուր կը  
մնայ զօրութիւնդ , երբ կատաղութեան ձիուն  
կապուած տկար ձայնով արեւեցելոց հետ դա-  
հալէժ կը գլորիս : Անիծեալ ըլլայ , ով որ ի-  
մաստութեամբ պատրաստուած խորհուրդ մը  
կը մերժէ : Աշխարհք յիմար թաղաւորի կ'ան-  
այ :

ԼԻՕՆԷԼ. — Լորտ , ապրելու համար քանի  
մը վայրկեան միայն ունիս . . . քիչ մ'ալ արա-  
րիչդ խորհէ :

ԹԱԼՊՕ. — Եթէ քաջութեամբ ուրիշ քաջ  
պատերազմողներէ յաղթուէինք , կրնայինք  
մխիթարուիլ ըսելով թէ այսէ բախտն , որ միշտ  
իւր դնտակը փոխելով կը դարձնէ . . . բայց

այսպիսի տմարդի կախարդութեան ընկճել։  
Մեր անխոնջ աշխատութեամբ անցուցած  
կեսնաքն արժանի չ'էր արդեօք յաջող ելքի մը։

ԼԻՕՆԵԼ. — (Զեւոք Բռնելով) Լորտ, երթաւ  
բարով։ Պատերազմէն ետքն եթէ տակաւին  
ապրելու ըլլամ, քեզի համար տրտասուք թա-  
փելու հարկս պիտի վճարեմ։ Բայց այժմ դիւ  
կը կոչէ ճակատագիրն՝ որ կռուոյ աստարիդին  
դուռը կայնած իբր դատաւոր՝ դեռ յաղթու-  
թեան վճիռը տուած չ'է։ Առ այժմ մնաս բա-  
րով, հանդերձեալ աշխարհին մէջ տեսնուինք։  
Մեր երկայն բարեկամութեան նայելով՝ կարճ  
է արդարեւ այս հրաժեշտը։ (Կը զեւէ)։

ԹԱԼՊՕ. — Ահա վերջին ժամն է, ահա կու  
տամ երկրիս եւ յաւիտենական արեգական դիւ  
ուրախութեան եւ տրտմութեան համար կաղ-  
մող փոշին... իւր պատերազմական փառքովն  
աշխարհածանօթ դօրաւոր թալպօն ասի մ'հող  
բլիտի դառնայ։ Այս է մարդուս վաճառքը...  
աշխարհիս վրայ տաղտկալից վտանգէ մ'ետքը  
ոա միայն կը շահնինք. մեր ոչինչ ըլլալը ճանչ-  
նալ եւ խոստովանիլ որ մեզի փառաւոր եւ  
նախանձելի երեւցող բաներն անդամ չ'նշին եւ  
դուղնաքեայ են։

## ՏԵՍԱՐԱՆ Լ.

ԿԱՐՈԼՈՍ, ԴՈՒՔՍԸ, ՏԻՒՆՈՒԱ, ՏԻՒՇԱԹԷԼ

Լ ԶԻՆՈՒՈՐԳ ԴԵՄԵՆԸ ԿԸ ՏԴԵԼԷ :

ԴՈՒՔՍԸ. — Ամրոցն սոճուեցաւ :

ՏԻՒՆՈՒԱ. — Օրը մերն է :

ԿԱՐՈԼՈՍ. — (Թալլոյն Նշմարելով) Նայեցէք, մի է որ հոն տհաճութեամբ արեգական լուսոյն ակամայ հրաժեշտ կուտայ. Արայի սպառազինութիւնը կը յայտնէ որ աննշան մէկը է. դայէք, խնամք տարէք, Լի է օդնու՝ թեան կարօտ է : (Թալլոյն առնելէ զբռնէ զնորէր Թալլոյն եղած ԴԵՄԸ ԿԸ ՏԴԵԼԷ) :

ՖԱՍԹՕԼՖ. — Ե՛տ կեցէք, մի մօտենաք : Մեծարեցէք նմեցեալն որուն կենդանութեան ասունն երբէք մօտենալ վաւաղած չ'էք :

ԴՈՒՔՍԸ. — Բարէ, Թալլոյն արեան մէջ թաթխուած է : (Անոր կը ճարեմայ. Թալլոյն առնէ ԴԵՄԸ ԿԸ ՏԴԵԼԷ) :

ՖԱՍԹՕԼՖ. — Մէկդի, դուքս. գուցէ կրդմնազանցի մը նայուածքը գիւցաղնոյն վերջին հայեցուածքը դառնացընէ :

ՏԻՒՆՈՒԱ. — Ո՛վ աննուաճելի սոսկալիւք Թալլոյն, փոքրիկ միջոց մը կրնայ դքեղ գտնել, մինչդեռ Գաղղիոյ ընդարձակ երկիրք չ'էր կրնար բաւականանալ քու տխրանեան ողույդ բաղձանացը : Տէր արքայ, ահա այժմ դքեղ կ'ողջունեմ իրբեւ թաղաւոր. քանի որ

այս դիակին մէջ հողի կը բնակէր, թաղը դը-  
խուդ վրայ կ'երերար:

ԿԱՐՈԼՈՍ. — (Ննջեցեալը լսելէ դիմելէ ետք)  
Մենք չը յաղթեցինք, այլ բարձր զօրութիւն  
մ'անոր յաղթեց: Այժմ Գաղղիոյ հողին վրայ  
տապաստ ինկած է, իբրեւ գիւցաղն, իւր  
վահանին վրայ զոր երբէք չ'ուզեց թողուլ:  
Արդ վերցուցէք, (Ձեռքէն դնելով ինքնիշխան  
կնիքը) Թող խաղաղութեամբ հանգչի անոր  
աճիւնը. պէտք է անոր հոյակապ արձան մը  
կանգնել: Թող ոսկրոտին հանգիստ վայելէ  
Գաղղիոյ մէջ, ուր իւր ընթացքն իբրեւ գիւ-  
ցաղն վերջացուց: Դեռ թշնամի մը չը կը-  
ցաւ անոր չափ իւր սուրն առաջ մղել.  
պէտք է որ անոր տապանադիրն իւր ինկած  
տեղն ըլլայ:

ՅԱՍԹՈԼԵ. — (Իւր սուրը ինքնիշխան դնելով)  
Տէր, կալանաւորդ եմ:

ԿԱՐՈԼՈՍ. — (Սուրն ետ դնելով) Ո՛հ, ոչ. դու  
սպաւերազմն ալ կը մեծարէ բարեպաշտ արա-  
րողութիւնները. անարգել ձեր հրամանատարը  
դերեզման տանելու էք: — Արդ, վախճան Տիւ-  
շաթէ. . . Ազնէս կը դողայ. . . դնա զայն  
անձկութենէ ազատել. . . խնայուր որ դեռ  
կ'ապրինք եւ թէ յաղթեցինք, եւ զայն յաղ-  
թանակաւ Ռէմզ տար: (Տիւշաթէ կ'երթայ):

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԼԱՀԻՐ Լ առջինները.

ՏԻՒՆՈՒԱ. — Լահիր, ո՛ւր է օրիորդը:

ԼԱՀԻՐ. — Ի՞նչ, ես քեզի պիտի հարցընէի. քու կողմէ կը կռուէր, երբ զայն թողուցի:

ՏԻՒՆՈՒԱ. — Երբ թագաւորին օգնու-  
թեան կը փութայի, կարծէի որ զայն կը սլաշտ-  
պանէիր:

ԴՈՒՔՍԸ. — Դեռ քիչ մ'առաջ անոր սպի-  
տակ դրօշը նշմարեցի թշնամւոյն խուռն բաղ-  
մութեանը մէջ:

ՏԻՒՆՈՒԱ. — Բարէ, ո՛ւր է. չարագուշակ  
դէսք: Օ՛ն, փութանք զայն աղատելու: Ըստ  
խա, մեծ յանգգնութիւն է այսպէս վտանգնե-  
րու դիմագրաւ ըլլալ. թշնամիներէն պաշար-  
ուած մինակ կռուելու ստիպուելով անտա-  
րակոյս բաղմութենէն պիտ' ընկճի:

ԿԱՐՈԼՈՍ. — Արդ, փութացէք օգնու-  
թեան:

ԼԱՀԻՐ. — Օ՛ն երթանք, պատրաստ եմ:

ԴՈՒՔՍԸ. — Ամենքս 'ի միասին: (Կը յիշէն):



## ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ ԱՄԱՅԻ ՄԷԿ ԿՈՂՄԸ

Ռէմիլի աշտարակներն հեռուէն արեւուն ճառագայթներէն լուսաւորուած կը տեսնուին:

### ՏԵՍԱՐԱՆ Թ.

Սեւագէտոյ շրահապար ԱՍՊԵՏ Տ' Երեւել Դէմախով: ՅՈՎՀԱՆՆԱ Անոր Երեւելն կը վազէ Դիւղէն Կիսաբանին առաջին, որ ապաքին կանգնէ Լ անոր կ'ապաքին:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Խորամանկ դու, այժմ կ'իմանամ նենգութիւնդ: Փախուստ կեղծելով խարէութեամբ զիս պատերազմին դաշտէն խոտորեցուցիր եւ բազմաթիւ ճիւղաւորացուոյ գլուխը մահուանէ ազատեցիր: Բայց մահն այժմ դքեղ կը պաշարէ:

ՍԵՒԱԶԳԵՍՏ ԱՍՊԵՏԸ. — Ինչո՞ւ զիս կը հալածես եւ այսպէս կատաղութեամբ: Դրդոնալ ետեւէս կու գաս: Քու ձեռքովդ մոռնելու սահմանուած չ'եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Բոլոր սրտով դքեղ կ'ատամ, ինչպէս որ կ'ատամ գիշերն, որուն գոյնն առած ես: Անյաղթելի բաղձանք մը զիս կը մղէ դքեղ արեւուն լոյսէն զրկելու: Ո՞վ ես դու, Վար առ դիմակդ: Եթէ սոսկալի Թալպօին պատերազմին մէջ իյնալը չը տեսնէի, պիտի կարծէի որ դուն իսկ Թալպօն ես:

ՍԵՒԱԶԳԵՍՏ ԱՍՊԵՏԸ. — Ի՜նչ, չը խօսիր ալ մարդարէական ձայնը քեզի հետ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մարդարէական ողին սըրտին յայտնի կ'ազդէ որ դժբախտութիւնը քոյս կայնած է :

ՍԵՒԱԶԳԵՍՏ ԱՍՊԵՏԸ. — Յովհաննա ա'ւրդ, մինչեւ Ռէմզի դրանց առջեւ յաղթութեան թեւերուն վրայ յառաջ խաղացիր : Բաւ է քեզ այսչափ փառք : Մէկդի թող բախտն, որ իբր գերի քեզի ծառայեց, դուցէ զայրանալով աւ պըտտամբի . քանդի նա հաւատարմութիւնը կ'արհամարհէ եւ ոչ ումնք մինչեւ վերջը կը ծառայէ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ինչո՞ւ դիւ ընթացքիս մէջ կ'արդելուս եւ դործս կիսկատար թողելու կ'ստիպես : Ո՛չ, դործս լրացընելով ուխտս պիտի կատարեմ :

ՍԵՒԱԶԳԵՍՏ ԱՍՊԵՏԸ. — Ո՛վ զօրաւոր դու, ոչ ոք կրնայ քեզի դէմ դնել . ամեն ճակատի մէջ յաղթող ես : Բայց մի մաներ սյլեւս պատերազմի մէջ . խրատս մտիկ ըրէ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Սուրը ձեռքէս պիտի չը թողում, մինչեւ որ հպարտն Անդղիպ նուաճի :

ՍԵՒԱԶԳԵՍՏ ԱՍՊԵՏԸ. — Տես, ահա կիւրեւայ Ռէմզ իւր աշտարակներովը, քու ընթացքիդ նպատակն ու վախճանը . . . կը տեսնես կաթողիկէին բարձր դմբեթին վայլիւն, հոն պիտի մտնես շքեղ յաղթանակաւ, թագաւորդ պիտի պսակես եւ ուխտդ պիտի կատար-

րես : Բայց մի երթար, ևտ դարձիր : Խրատոս  
մտիկ ըրէ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ո՞վ ես դու, երկկողու խա-  
քեքսոյ էակ, որ կ'սւղեա զիս դարհուրեցընել  
եւ չիթթել : Նպատակդ ինչ է . նենգութեամբ  
ինձի սխալ դուշտիութիւնն ընել : (Սեւազգեա-  
սապետը Վեկել կ'աղէ, Յովնան ալ Բողոսը) Ոչ,  
խօսքիս պատասխանէ, առկա թէ ոչ ձեռքովս  
կը մեռնիս : (Սրով զարնել կ'աղէ) :

ՍԵՒԱԶԳԵՍ ԱՍՊԵՏԸ. — (Զեւոյ Յովնանա-  
յին կը դառնայ) Եւ ես աշխարհ կը կենայ) Սպաննէ՛ դայն  
որ մահկանացու է : (Տեսարանը քիչերո՞ւն ալս կը  
ճլննայ . կը խալտաւիտ և կ'որոտայ) Ասպետն անկե-  
տէն) :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Նախ աղաք կը կենայ : Բայց  
նախնայ աշխարհէն) Մահկանացու չ'էր . դժո-  
խային սուտ պատկեր մ'էր, առ աշօք ոգի մ'  
որ դժոխոց հրեղէն անդնդէն ելլելով ուղեց  
զիս վատաստել : Բայց զիս ով կրնայ զար-  
հուրեցընել, քանի որ Աստուծոյս սուրը ձեռքս  
է : Յաղթութեամբ պիտի կատարեմ ընթացքս .  
թէ եւ դժոխք ինձի դէմ ճակատի, զիս չի կրու-  
նար վնասեցընել կամ յողզողդ ել : (Կ'աղէ Վեկել) :

## ՏԵՍՍՐՈՆ Ժ .

ԼԻՕՆԵԼ, ՅՈՎՀԱՆՆԱ .

ԼԻՕՆԵԼ. — Թշուառական, մենամարտու-

Թեան պատրաստուէ . . . կամ դու. կ'իյնաս,  
կամ ես: Հայրենակիցներուս ընտիրները մե-  
ռուցիր. ազնիւ Թալաօն բազկադս մէջ աւան-  
դեց իւր վեհ հոգին: Դիւցաղնոյն վրէժը պի-  
տի առնուամ կամ անոր ճակատադրին մասնակ-  
ցիմ: Եւ Երպէս զի գիտնաս որ, թէ մեռնիմ  
եւ թէ յաղթեմ քեզի պարծանք պիտի ըլլամ. . .  
ահա կ'ըսեմ անուշ . ես եմ Լիօնէլ, մեր բա-  
նակին իշխանաց վերջինն, որուն բազուկը դեռ  
աննուաճ է: (Յովնանային լրայ իւր յարցմէ. Կար-  
ճապէս Կոռէ Տ'Էրտը Յովնանա անոր սրոյն զարե-  
լով յեռտէն իւր յիշէ) Ապերախտս բախտ: (Դարձեալ  
անոր հետ իւր Կոռէ):

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Լիօնէլին ետեւէն սաղաւարտին  
Բարձրանալը իւր Բանէ և սաղաւարտին ուժգին խելով  
Գեորգիէն իւր նիւթ. Լիօնէլին դէմքը իւր Բացոտի. Յովնա-  
նա իսկոյն աջ կողմէն սորը իւր տաշէ) Ա՛ռ, ահա  
վնասուածդ. սուրբ Կոյսն զքեզ իմ ձեռքովս կը  
զոհէ: (Նոյն վայրկեան Լիօնէլին ետեւը իւր նայի. նո-  
րա տեսնէ Յովնանան իւր դրոշմի որ անշարժ իւր կենաց  
եւ ապա կ'առայ իւր յեռտէ վար իւր Խոյն):

ԼԻՕՆԵԼ. — Ի՞նչ կը դողաս եւ ի՞նչու կ'ար-  
դելուս մահուան հարուածը: Ա՛ռ կեանքս,  
ինչպէս որ փառքս սուր. քու ձեռքդ եմ,  
չեմ ուղեր որ ինձի խնայես: (Յովնանա յեռտէ  
կ'առնալէ անոր որ Գեորգի) Պէտք է որ փախչիմ  
եւ կեանքս քեզի պարտական ըլլամ: Ո՛չ, մեռ-  
նիլ աւելի կ'ընտրեմ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Ետեւը դարձնելով) Ձեմ ու-

դեր գիտնալ որ կհանքդ ինէ կախում ունէր:  
 ԼԻՕՆԵԼ. — Կ'ատեմ զքեզ, եւ քու չնոր-  
 հըդ . . . չ'եմ ուղեր որ խնայես . . . սպաննէ  
 թշնամիդ որ քննէ կը գարչի եւ զքեզ սպան-  
 նել կ'ուղէ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ուրեմն սպաննէ դիւ եւ  
 փախիր:

ԼԻՕՆԵԼ. — Այս ինչ է:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Երեւել թափէ) Եղբւ:

ԼԻՕՆԵԼ. — (Անոր կը ծագնայ) Կ'ըսեն թէ պա-  
 տերազմին մէջ քենէ յաղթուած Անդղիացիներ-  
 րը կ'սպաննու . . . ինչո՞ւ միայն ինձի կը խնա-  
 յես:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Արագութեամբ առբը Լիօնե-  
 լէն. դէմ կը տեսնուի. Բայց երբ անոր երեսը կը նայէ,  
 շարժ առբը կը ընդունի) Ո՛վ սուրբ Կոյս:

ԼԻՕՆԵԼ. — Ինչո՞ւ Կոյսը կը կոչես. զքեզ  
 չի ճանչնար. մաս չ'ունիս երկնից մէջ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Ստափիլ յաղմռ ձգել) Ո՛հ,  
 ինչ ըրի, ուխտս աւերեցի: (Յառադատութեամբ  
 յեռանալէն կը կոչէ):

ԼԻՕՆԵԼ. — (Վշտակցութեամբ անոր նայելով  
 կը խորհնայ) Դժբախտ աղջիկ, կը կսկծամ: Զիս  
 'ի գութ շարժեցիր. ինձի միայն վեհանձնու-  
 թիւն ցուցըցիր. կ'զգամ որ ատելութիւնս կը  
 փարատի. ցաւսկի է ինձ քու վիճակդ: Ո՛վ  
 ես, ուստի կուգաս:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մէկդի, փախիր:

ԼԻՕՆԵԼ. — Երիտասարդութիւնդ եւ զեւ

դեցիլութիւնդ զիս կը չարժեն : Սրտառուչ  
դէմքդ զիս կը զորովէ : Կ'ուզեմ մահաւանդ  
դքեղ պաշտպանել . . . ըսէ ինձ , ինչպէս կըր-  
նամ : Եկ , հրաժարէ զիւսց միաբանութենէն . .  
մէկդի հետէ այդ զէնքերը :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Անարժան եմ դանոնք իմ  
շրաւ կրելու :

ԼԻՕՆԵԼ. — Շուտով մէկդի հետէ, եւ ինձի  
հետ եկուր :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Երկ-դէմ) Հետդ դամ :

ԼԻՕՆԵԼ. — Այո , այնպէս կ'ազատիս : Հե-  
տըս եկուր , դքեղ պիտի ազատեմ . բայց մի  
յապաղեր : Քեզի համար սաստիկ ցաւ մը կ'ըզ-  
դամ եւ աննկարագրելի փափագ մ'դքեղ ա-  
զատելու . . . : (Յովհաննայէն քիչ-իչ հեռէ) :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ահա Տիւնուա կը մօտենայ :  
Անոնք են : Զիս կը փնտռեն : Ո՛հ , եթէ զքեզ  
հոս գտնեն . . . :

ԼԻՕՆԵԼ. — Զքեղ պիտի պաշտպանեմ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Կը մեռնիմ , եթէ անոնց  
ձեռքն իյնամ :

ԼԻՕՆԵԼ. — Կը սիրեմ զիս ուրեմն :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ո՛վ երկնային սուրբեր :


ԼԻՕՆԵԼ. — Պիտի տեսնեմ զքեզ դարձեալ ,  
պիտի լսեմ խօսքերդ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Երբէք , երբէք :

ԼԻՕՆԵԼ. — Թող այս սուրը դրաւ ըլլայ  
որ զքեզ դարձեալ պիտի տեսնեմ : (Յովհաննա-  
յէն հեռէ) :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Ո՛վ խելացնոր, կը համար-  
ձաղիս :

**ԼԻՕՆԵԼ.** — Հիմայ դօրութեան տեղի կու-  
տամ. բայց պիտի տեսնեմ զքեզ դարձեալ :  
(Կը գլխի) :



## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

**ՏԻՒՆՈՒԱ, ԼԱՀԻՐ Է ՅՈՎՀԱՆՆԱ**

**ԼԱՀԻՐ.** — Դեռ կ'աղբի, այն է :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Յովհաննա, մի վախնար, բա-  
րեկամներդ քովդ են :

**ԼԱՀԻՐ.** — Լիօնէլն է այն փախչողը :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Թող փախչի : Յովհաննա, ար-  
դար դասն յաղթող է. Ռէմզ իւր գոները բա-  
ցաւ. բոլոր ժողովուրդը զուարթութեամբ թա-  
գաւորին գիմացը կը խայտայ . . . :

**ԼԱՀԻՐ.** — Ի՞նչ է եղեր օրիորդը. տես կը  
դեղնի եւ կը նուաղի : (Յովհաննա ինչ որչա՛ն է ին-  
քովհայ) :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Վիրաւորուած է . . . զրահն  
հանենք . . . բաղկէն զարնուած է, բայց ան-  
վտանգ է վերըր :

**ԼԱՀԻՐ.** — Արիւնը կը հոսէ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Թող կեանքս ալ անոր հեա  
հոսէ : (Լահիբի գլխացի Ռէմզի հետ) :



# ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

ՓԱՌԱՒՈՐ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ ՍՐԱՀ ՄԸ

Ահնները ծաղկեայ փունջերով պատած են. տեսարանին  
ետեւը սրնգի և փողոյ ձայն կը լսուի:

---

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

### ՅՈՎՀԱՆՆԱ.

ՅՈՎՀԱՆՆԱ. — Զէնքերը դադրած են, պատերազմին աղմուկը լռած է, արիւնահեղ կռիւներուն կը յաջորդեն երգ եւ պար. փողոցներու մէջ կը հնչեն երաժշտութեան ձայներ. եկեղեցիք եւ սեղանք զարդարուած են չքեղ եւ հոյակապ. յաղթական կամարները կանաչագեղ ոստովք պսակեալ կ'երևան. ծաղկեայ փունջեր սիւնները կը զարդարեն, Ռէմդի մեծամեծ տուններն ու պալատներն՝ ամեն դիէ այս աշխարհախումբ հանդիսիս գունդագունդ դիմող բազմութեանը զրեթէ բաւական չ'են:

Ուրախութեան զգացումը կը բորբոքէ բոլոր սրտերը. բոլոր փողովուրդն համամիտ է եւ համախորհուրդ. այն որ քիչ մ'յառաջ արիւնախանձ ատելութեամբ սրտերն իրարմէ կը բաժնէր՝ հիմայ հասարակաց սրտալիր ուրախութեանը նիւթ է: Ինքզինք փրանկեան

դարմին համարիւն դաւանող ամեն անհատ ազգին փառքն իրեն համարելով՝ պարծանօք կը ճոխանայ. Գաղղիոյ նախնի թագին շուքը նորոգուեցաւ աւասիկ, եւ բոլոր երկիրն հպատակութեան հարկը կը մատուցանէ Գաղղիոյ դահուն օրինաւոր ժառանգին:

Այլ, բարէ. ես որ այս ամեն չքեղութիւնը կատարեցի, ամենեւին չ'եմ շարժիր այս հասարակաց ցնծումէն. փոխուած կը տեսնեմ սիրտս, մանաւանդ թէ խոտորած եւ մոլորած. այո, կ'զգամ որ սիրտս այս մեծաշուք հանդիսէն կը խորշի եւ կը դարչի. ես հոգւով անդղիական բանակին մէջ կը թափառիմ, մաքիս հայեցուածը շուրջ յածելով թշնամի անձ մը կը վնասուէ կաթոգին: Թշուառ Յովհաննա. սրտիս դժնդակ ցաւը ծածկելու համար՝ ելլեմ, դուրս ելլեմ այս զուարթ խումբէն: Ո՛հ, դարձեալ կ'ըսեմ, թշուառ Յովհաննա, դու տռփանք կը կրես սրտիդ մէջ. երկտասարդի մը սիրոյ բոցը քու սրտիդ մէջ կը վառի. ո՛հ, սոսկալի խորհուրդ. երկնանուէր սիրտ մ'երկրաքարշ սէր կը սնուցանէ: Ես Գաղղիոյ ազատարարս, ես բարձրեալ Աստուծոյ ղինուորս, տարփածուի մը նման հայրենեացս թշնամոյն սիրոյ տենչանօքը վառուած կ'զգամ սիրտս. ինչպէս համարձակիմ ուրեմն այն ողջախոհ արեւին նայելու. ո՛հ, ո՛հ. ահա կը մաշիմ, կը հալիմ ամօթէս:

(Տեառանքն երեւի նոսաբարանը մեղի և սրբա-

... էղանալ ճշ չ'սկսի) : Վայ ինձ, եղբուկ իմ . ինչ հրապուրիչ երգեր ականջիս կը հնչեն : Ինձ այնպէս կը թուի թէ շարունակ անոր ձայնը կը լսեմ, ուր որ երթամ անոր դէմքը կը նկար- ուի աչքիս առջեւ :

Եթէ սպառազէնք զիս պատէին, եթէ զի- նուց շառաչիւնն հնչէր բոլորովըս եւ կատաղի ճակատուց մէջ մտնելու ստիպուէի, անվհեր պիտի մնայի . բայց այս ձայներն, այս երգերը սիրտս իսպառ կը կաշկանդեն . հոգւոյս բոլոր ջիղերը կը թուլցընեն . կը մեղկիմ եւ ցաւա- գին ողուով արտասուք կը թափեմ :

Արդեօք սպառնելու էի զնա . բայց ինչ- պէս կրնայի ընել : Սպաննել զնա . ոհ, աւելի դուրին էր ինձ այս մաքդախողխող դանակն իմ կուրծքս մխել : Եւ միթէ յանցաւոր եմ, վասն զի խնայեցի : Եթէ մեղք է գթութիւն ընել : — Գթութիւն : Ուրիշ առիթներու մէջ ալ լսեցի գթոյ ձայնին . բնաւ մէկն անխնայ չը մասնեցի անադորոյն սրոյ : Ինչո՞ւ չը խնայեցի այն անդղիացի երիտասարդ . աղնուականին որ այնչափ աղաչեց, սրաղասեցաւ որ ողորմիմ իւր մասաղ հատակին, չնորհեմ զինք իւր սիրելինե- բուն : Ո՞վ խաբեբայ սիրտս, դու կը ստես յաւիտենական լուսոյն . գընդ թեւադրողը սի- րոյ եւ գորովոյ քաղցր ձայնը չ'է :

Աւագ, ինչո՞ւ անոր աչուքներուն նայե- ցայ, ինչո՞ւ համար այն աղինու կերպարանքը գիտեցի : Այո, այն մէկ հայեցուածն եղաւ իմ

կորստեանս պատճառ։ Եղևիկ թշուառիս և Աստուած կոյր գործիք կ'ուզէ, պէտք էր որ ես զոյց աչուքներով իմ գործս կատարէի։ Այն հայեցութեամբ զաստիճիւնդայ։ Աստուծոյ պաշտօնականութիւնն ալ զիս թողուց։ Դժոխային ուղիք խնայն զիս գրաւեցին։ (Սբէի Կապր Եղևիկ Բէ Կ'Եի. Յովնան աշխարհեան Բէ Կ'Եի)։

Ո՛վ անմեղ ցուպս հովուական, երանի թէ սրոյ հետ գրեւ չը փոխէի. ո՛վ նուիրական կազմի, երանի թէ երբէք լսած չ'ըլլայի սեւ ընկերութիւնը. ո՛վ բարձր Թագուհիդ երկնից, երանի թէ երեւցած չ'ըլլայիր ինձի. առ սաղաւարտդ, առ, արժանի չ'եմ զայն կըրելու։

Ո՛հ, երկինքը բաց տեսայ, Երանուք ինձի երեւցան, բայց եւ այնպէս յոյսս երկրիս վրայ է, ոչ թէ յերկինս։ Ինչո՞ւ զիս այս ահաւոր գործին կոչեցիր, կրնայի՞ այս սիրտը կարծրացընել, զոր երկինք զգայուն ստեղծեց։

Եթէ գորութիւնդ յայտնել կ'ուզես, ընտրե՛ քեզ այն անմեղներն որոնք յաւիտենական ընտելութեան մէջ են. զրկե՛ ամբիժ եւ անմահ ուղիներն որոնց չի տիրել տարիանայ զգայուն մը. մի՛ ընտրել զստոր օրիորդ մը, փափկասիրտ հովիւ աղջիկ մը։

Ինձի ինչ կը վերաբերի պատերազմաց բախտն եւ թագաւորաց երկպառակութիւնը. լերան հանդարտ գաղաթին վրայ անմեղութեամբ կ'սրածէի ոչխարներս, բայց դու զիս

հոս կը մղես հոյակապ արքունեաց մէջ, ուր մոլութեան վտանգը կայ: Բարէ, պէտք է'նր որ այս կոչումն ընտրէի:

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

### ԱԳՆԷՍ ՍՕՐԷԼ, ՅՈՎՀԱՆՆԱ.

ՍՕՐԷԼ. — (Յոգմով ներս կը մտնէ և Յովհաննան գտնելով ինչոյն անոր կը մօտենայ և կը համբուրէ. յետոյ ուշաքերելով շոյն կը խոստ և առջեւը ծռնը կը դնէ) Ո՛չ այնպէս, այլ հոս առջեւդ ծռնը դնելու եմ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Ձայն կանգնել կ'ուզէ) Ե՛լ կանգնէ, ինչ եղար, մոռցար ո՞վ ըլլալդ:

ՍՕՐԷԼ. — Թող, դիտարկողանիդ առջեւ խոնարհեցնողն ուրախութեանս սաստկութիւնն է. պէտք է որ Աստուծոյ առջեւ թափեմ հեղեղեալ սիրտս եւ քեզմով երկըրպազեմ աներեւոյթին: Տէրս Ռէմը տանող եւ սլակող հրեշտակը դուն ես. ինչ որ տեսնել երբէք երազած է'եմ, կատարուեցաւ. թագադրութեան հանդէսը պատրաստուելու վրայ է, թագաւորն արքունի հանդերձներով զարդարուած, պաշտօնակալք եւ պետութեան աւագանին ժողովուրդան պատուոյ նշանները տանելու. ժողովուրդը խուռն բաղմութեամբ կաթողիկէն կը դիմէ. զանազան հնչման հետ կը միանայ քաղցրաձայն երգերու եղանակը:

Ո՛հ, չ'եսմ կրնար տանիլ այսչափ երջանկու-  
կութեանն : (Յովնանն զայն զայն հարկ զայն ին  
ցընէ . Սերէլ զայրկեան զը լուսնն հեռալէ ետը մօտէն  
Օրէորդին ինչն) Բայց եւ այնպէս միշտ սաստիկ  
եւ խիստ ետ . երջանկութիւնն կուտաս, բայց  
երբէք անոր չ'ես մասնակցիր . սիրտդ ցուրտ  
է, չ'ես զգար մեր ուրախութիւնը . երկնից  
փառաւորութիւնը տեսար, աշխարհային եր-  
ջանկութիւնը մաքուր սիրտդ չ'ես կրնար շար-  
ժել : (Յովնանն . հօգնէ Ահնէսին յետը ինչ  
բայց շարժ ինչն) Ո՛հ, կրնամ զքեզ կին  
կոչել եւ զգացում չ'ունենալ . հանէ սպառա-  
զինութիւնդ, պատերազմը վերջացաւ . կանա-  
ցի փափուկ դործերուդ զբաղէ այսուհետեւ :  
Քեզի համար սաստիկ եռանդնոտ սիրտս զար-  
հուրանօք քննէ կը փախչի, քանի որ զքեզ  
այն խիստ Պալլասին նման կը տեսնեմ :

ՅՈՎՀԱՆՆԱ . — Ի՞նչ կը պահանջես ինէ :

ՍՕՐԵԼ . — Թող այդ զէնքերը, դրանդ հա-  
նէ : Երկաթապատ կուրծքդ սիրոյ մուտքը  
կ'արդեւու : Ո՛հ, ճանչցիր որ կին ես, յայն-  
ժամ պիտի զգաս սիրոյ ազդեցութիւնը :

ՅՈՎՀԱՆՆԱ . — Թողում ուրեմն սպառա-  
զինութիւնս : Ա՞յժմ, ո՞չ . կուրծքովս դիմադրաւ  
պիտի . երթամ պատերազմի . . . լաւ եւս էր ե-  
թէ եօթնպատիկ զրահ մը դիւ ձեր հանդէս-  
ներէն եւ ինէ իսկ հեռու պահէր :

ՍՕՐԵԼ . — Տիւնուա կաման զքեզ կը սիրէ :  
Անոր ազնիւ սիրտը զոր մինչեւ ցարդ փառքն

ու գիւցաղնական քաջութիւնը միայն գրաստած էին՝ քեզի համար անմեղ զգացմամբ կը բորբոքի։ Ո՛հ, գիւցաղնէ մը սիրուիլ գեղեցիկ է, բայց գիւցաղն մը սիրել աւելի գեղեցիկ է։ (Յովհաննէս Երեւելի զբարձրէ զշէշէշ յէտալ) Կ'ատենա զայն. ո՛հ, ո՛հ. կրնաս միայն չը սիրել, բայց ինչպէս կրնաս զայն ատել։ Ատելու է միայն ով որ մեր սիրելին մենէ կը յափշտակէ. բայց քեզի համար սիրելի մէկը չը կայ։ Սիրտդ հանդարտէ . . . եթէ զգայիր . . . :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Ողբսդիս, արտասուէ՛ բա՛խտիս վրայ։

**ՍՕՐԵԼ.** — Երջանկութեանդ համար ինչ կը պակսի։ Խոստմունքդ կատարեցիր, Գաղղիա ազատ է, թագաւորը մինչև թագադրութեան քաղաքը բերիր յաղթանակաւ եւ փառօք. երջանիկ ժողովուրդն զքեզ կը մեծարէ եւ քեզմով կը պարծի։ Քեզի համար ամեն բերնէ յորդառատ դովեսաներ կը տեղան. այս տօնախումբութեան չաստուածոհին ես. թագաւորն անդամ իւր թագովն այնչափ փառաւոր չ'է, որչափ դու։

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Կրնայի արդեօք պահուըտիլ երկրիս խոր ծոցին մէջ։

**ՍՕՐԵԼ.** — Ի՞նչ կ'ըլլատ։ Այս ի՞նչ տարօրինակ զգացում է։ Ո՞վ պիտի համարձակի դուարթ աչքով հանդիսատես ըլլալ, եթէ դու աչուըներդ խոնարհեցնես։ Թող որ ես չիկնիմ. ես որ քովդ չատ փոքր եմ եւ չ'եմ

կարող քու գիւցաղնական զօրութեանդ, քու բարձրութեանդ հաւասարիլ: Իմացունեմ ըստ իմ տկարութիւնս: Տկար սիրտս գրաւողն ոչ հայրենեաց փառքն, ոչ նորահաստատ քահուն շքեղութիւնն, ոչ ժողովրդեան ուրախութիւնն եւ ոչ յաղթութեան երգերն են. այլ միակ զգացում մը կայ որ զայն բոլորովին կը նուաճէ: Այն է իմ սիրելիս որ ամենէն կը մեծարուի, որուն զիմացը ժողովուրդը կը խաչտայ եւ զայն կ'օրհնէ. որուն համար այս ծաղիկները կը սփռուին:

**ՅՈՎՀԱՆՆԱՍ.** — Ո՛հ, երջանիկ ես. վայելէ երջանկութիւնդ: Ընդհանուրին սիրածը կը սիրես: Ազատ ես սիրտդ բանալով բարձրաձայն ըսելու ինչ որ կ'զգաս՝ առանց խորշելու արանց հայեցումաժէն: Գաղղիոյ այս տօնը քու սիրոյդ տօնն է. քաղքին պարսպաց մէջ վիստացող անհամար բաղմութիւնը քու զգացմանդ կը մասնակցի եւ զայն կը սրբացընէ. քեզի համար կը խայտան, քեզի համար փունջեր կը հիւսեն. հասարակաց ուրախութեան առարկան դուն ես. կը սիրես զայն որ ամենուն արեւն, եւ տեսածդ՝ քու սիրոյդ ցոլացումն է:

**ՍՕՐԷԼ.** — (Զայն իւր բաղնիքը մէջ առնելով) Ո՛հ, զիս կը զուարթացնես: Մխարս կը հառկընաս. այո, կարծիքս սխալ էր: Նը տեսնեմ որ հմուտ ես սիրոյ եւ զգացումս ճշգիւ կը յայտնես. սիրտս այլ եւս չի վախճար եւ չի

սոսկար, վստահութեամբ քեզի կը մօտենայ...

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — (Սասիկ կերպով Աբնէմէն բաժնէլ) Թող զիս, հեռացիր ինէ. իմ ժանտախտային մերձաւորութեամբս չը պղծուիս: Գնա, երջանկացիր. թող որ ես ալ իմ դժբախտութիւնս, նախատինքս եւ զարհուրանքս խոր գիշերուան մէջ թաղեմ...

**ՍՕՐԷԼ.** — Կը զարհուրեցնես զիս. չ'եմ հասկնար զքեզ, եւ երբէք հասկցած չ'եմ. միշտ մթին եւ խոր երեւցած ես ինձի: Ո՞վ կրնայ այժմ խորհիլ թէ քու սուրբ սիրտդ եւ մաքուր հոգւոյդ փափկութիւնը խռովող բան մը կայ:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Դուն ես սուրբ, դուն ես մաքուր: Եթէ սրտիս խորը ճանչնալու ըլլայիր, զարհուրանօք պիտի վանէիր թշնամի եւ մատնիչ աղջիկ մը:



## ՏԵՍԱՐՈՆ Դ.

**ՏԻՒՆՈՒԱ, ՏԻՒՇԱԹԷԼ Է ԼԱՀԻՐ՝ ՅՈՎՀԱՆՆԱՅԻՆ  
ԴԵՆԷԼ:**

**ՏԻՒՆՈՒԱ.** — Զքեզ կը վնասենք, Յովհաննա: Ամեն բան պատրաստ է. թաղաւորն ըզմեզ զրկեց. կ'ուզէ որ սուրբ դրօշդ իւր առջեւէն տանիս: Իշխանաց հետ պիտի կենաս եւ թաղաւորին մօտէն պիտի երթաս. քանզի նա

չի ժխտեր քու ծառայութիւնդ եւ պէտք է որ  
բոլոր աշխարհք վկայէ թէ՝ թագաւորն այսօր-  
ուան սլատիւը քեզի միայն պարտական է :

ԼԱՀԻՐ. — Ահա դրօշն , առ , աղնիւ օրի-  
որդ : Իշխանք քեզի կ'սպասեն եւ ժողովուր-  
դըն անհամբերութեամբ քու դալատեանդ վը  
մնայ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ե՛ս , թագաւորին քովէն  
քալեմ : Դրօշը տանիմ :

ՏԻՒՆՈՒԱ. — Հապա որո՞ւ կը վայլէ : ու-  
րիշ որ ձեռք այն նուիրական դրօշը տանելու  
արժանի է : Կռիւներու մէջ զայն դու բար-  
ձիր , հիմայ ալ իբրեւ զարդ՝ այս ուրախու-  
թեան չուոյն մէջ կրէ : (Լահիւր դրօշն Յովհաննա-  
յիս որալ կ'ուղէ , բայց նա զարհուրանօք ետ կը գտնուի) :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մէկդի , մէկդի :

ԼԱՀԻՐ. — Ի՞նչ կ'ըլլաս : Դրօշէդ կը սոս-  
կան . նայէ անդամ մը . (Դրօշը պարզելով) Այն  
է որ զքեզ յաղթող ըրաւ : Այն դրօշը կ'ըսեմ ,  
ուր եկնից Թադուհին երկրագունդի մը վրայ  
կայնած նկարել տուիր , ինչպէս որ ինք տե-  
սիլքով քեզի հրամայած էր :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Զարհուրանօք դրօշը նկարե-  
լով) Այո , այն է . ճիշդ այսպէս երեւցաւ ինձ :  
Տեսէ՞ք , ինչպէս խոժոռ գիւմօք ինձի կը նայի .  
սպառնալից աչուրներէն կարծես թէ կրակ կը  
ցայտէ :

ՍՕՐԷԼ. — Ո՛հ , այլայլած է : Զգաստացիր ,  
հանդարտէ . առաջօք տեսիլ կը տեսնես : Այս

պատկերը կուսին նմանութիւնն է . ինք երկ-  
նային զուարթնոց հետ է :

**ՅՈՎՀԱՆՆԱՒ.** — Ո՛վ սոսկալիդ , արարածդ  
պատժելով կու գաս : Պատժէ՛ վիս եւ խորտա-  
կէ . առ կայծակդ եւ իմ մեղաւոր գլխուս վը-  
րայ թափէ : Քանդի ուխտադրուծ եմ . սրբա-  
պիղծ եւ հայհոյիչ քու սուրբ անուանդ :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Եղով , ինչ կը նշանակէ ա-  
սիկայ : Այս ինչ աղետալի խօսք :

**ԼԱՀԻՐ.** — (Զարմայմայք Տէ-շաբէլն) Գիտես  
այս տարօրինակ փոփոխութեան պատճառը :

**ՏԻՒՇԱԹԵԼ.** — Ահա կը տեսնեմ . շատոնց  
'ի վեր կ'երկնչէի :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ի՞նչ պէս , ինչ կ'ըսես :

**ՏԻՒՇԱԹԵԼ.** — Չ'եմ համարձակիր միտքս  
յայտնել . Աստուած տար որ այս վայրկեանը  
շուտով անցնէր եւ թագաւորը սլտակուէր :

**ԼԱՀԻՐ.** — Ի՞նչ , այս դրօշն որով թշնա-  
մին սարսափեցուցիր , զքեզ կը դողացընէ :  
Թող Բրիտանացիք այս նշանէն դողան , Գաղ-  
ղիոյ թշնամիներուն միայն սոսկալի է նա , այլ  
հաւատարիմ Գաղղիացւոց համար հաշտարար է :

**ՅՈՎՀԱՆՆԱՒ.** — Այո , իրաւունք ունիս :  
Բարեկամաց հաշտ է եւ թշնամիները կը զար-  
հուրեցընէ : (Թագադրութեան հանդիսին շոյն որ-  
նայնը իւր լոռի) :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ա՛ռ ուրեմն դրօշը . առ  
դայն : Հանդէսը կ'սկսի , պէտք է՛ ժամանակ  
կորսնցընել : (Դրօշը Յովհաննային կու տան . նա ալ

աստիկ ընդդիմութեամբ զայն առնելով իւր յիշի . աւրիշէն ալ անոր ետեւէն է երթան :

Տեսարանը իր փոխուի և կտրժողիկէին առջեւ մեծ հրապարակ մը կ'երեւայ :

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

Տեսարանին ներքին կողմն հանդիսականաց բազմութեամբ իւր լինայ , որոնց յիշին ՊԵՐԹՐԱՆ , ԳԼՕՏ ՄԱՐԻ և ՍՏԵՓԱՆ ԴՈՐԱ ԵԼԼԵԼՈՎ առաջ կուգան . հետեւէն իւր լոտի խափարութեան շնորհիւ հանդիսականութեամբ անցնելը :

ՊԵՐԹՐԱՆ . — Մտիկ ընկնք երաժշտութիւնն . անոնք են . իր մօտենան , Ուստի իրրոնանք ազէի դիտել . հողակոյտին վրայ ելլենք թէ բազմութեան մէջ մտնենք : չուոյն լաւ հանդիսատես ըլլալու համար :

ՍՏԵՓԱՆ . — Անցնելու տեղ չը կայ , փողոցները բազմութեամբ լի են . ձի եւ կառք չ'են իրնար անցնիլ : Կայնինք այս տուններուն տուջեւը . հոն իրնանք լաւ տեսնել չուն , երբ մեր առջեւէն անցնի :

ԳԼՕՏ ՄԱՐԻ . — Գրեթէ Գաղղիոյ կէսն հոն դումարուած է . այնչափ մեծ է եռանդն որ զմեզ անգամ հեռաւոր Լօրէնին սահմաններէն հոս բերաւ :

ՊԵՐԹՐԱՆ . — Ո՛վ իրնար իւր բնակարանին

մէջ դատարկ կենալ, մինչդեռ հայրենեաց մէջ  
այսպիսի մեծամեծ դէպքեր կը պատահին :  
Բաւական քրտինք եւ արիւն թափուեցաւ մին-  
չեւ որ թաղն օրինաւոր թաղաւորին հասաւ :  
Մեր օրինաւոր բուն տէրը զոր այժմ կը պա-  
կենք, պէտք չ'է որ նուազ հանդիսատեսներ  
ունենայ քան զայն, զոր Բարիղցիք Սէն—Տը-  
նիի մէջ պսակեցին : Հարազատ Գաղղիացի չ'է  
այն որ այս հանդիսէն ետ կը մնայ եւ չի դո-  
չեր : Կեցցէ արքայն :

## ՏԵՍԱՐԱՆ Ե .

ՄԱՐԿԱՐԻԴ Լ ԼՈՒԻՋԱ ԿԵՆՏԵՆԸ ԿԸ ԴՊԵՆԸ .

ԼՈՒԻՋԱ. — Մեր քոյրը պիտի տեսնենք,  
Մարկարիդ . սիրտս կը դողայ :

ՄԱՐԿԱՐԻԴ. — Պիտի տեսնենք զայն իւր  
բոլոր շքեղութեանն ու բարձրութեանը մէջ  
եւ պիտի ըսենք . Ահա Յովհաննա, մեր քոյրը :

ԼՈՒԻՋԱ. — Մինչեւ որ աչքովս զայն չը  
տեսնեմ, չ'եմ կրնար հաւատալ որ այն դիւ-  
ցազնուհին, զոր Օրլէանի Օրիորդը կը կոչեն,  
մեր կորուսած Յովհաննան է . (Ձեռք երեւելով  
կը ԴՊԵՆԸ) :

ՄԱՐԿԱՐԻԴ. — Կ'երկըայիս տակաւին . աչ-  
քովդ պիտի տեսնես :

ՊԵՐԹՐԱՆ. — Ուշադրութիւն ըրէք, ահա  
կու գան :

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

Նախ ՍՐՆԳԱՀԱՐՔ Լ ՓՈՂԱՐՔ Կ'ԵՐԵԱՆՆ . յեդոյ  
 ապրահալալէսոյ ՏՂԱՅՔ ուսեր բռնած . առնց' Ե-  
 րեւէն Երկո՝ ԲԱՐՈՁ . յեդոյ ՆԻԶԱԿԱԽՈՐԱՅ Բռնդ  
 Ժ'Ե՝ ԴԱՏԱԽՈՐՔ Իրենց հանդերձներով . յեդոյ Եր-  
 կո՝ ՄԱՐԱԶԱԽՏՔ Գաւազանկէր, ՊՈՒՐԿՈՒՆՏԻ  
 ԴՈՒԲԱԸ արով, ՏԻՒՆՈՒԱ արտանի Գաւազանով,  
 ուրիշ ՄԵԾԱՄԵԾՔ լափն՝ արտանի Գնդալն և Գա-  
 րաւորական Գաւազանը բռնած, և ուրիշները նուեր-  
 ներով . առնց Երեւէն Իրենց ազգական շարքարան-  
 քով ԱՍՊԵՏՔ, ԴՊԻՐՔ Բարձրաներով, յեդոյ Եր-  
 կո՝ ԵՊԻՍԿՈՊՈՍՔ օջան Իւղոյն արաւակով, ՌԵՄ-  
 ՁԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԸ Խալով . աւոր Երեւէն դրոշով  
 ՅՈՎՀԱՆՆԱ, որ Գլխակար և Վարդապետ Կ'Երեւոյ . զայն  
 Կեանելով Կոյրերը՝ շարժացման և ուրախութեան նշաններ  
 ինչ ցոյցնէն : Անոր Երեւէն ԹԱԳԱԽՈՐՆ աւարդանայ  
 Ժը Կալ, շոր շոր ՊԱՐՈՆԱՅՔ ինչ բռնան . Երեւէն  
 արտանի ՍՊԱՍԱԽՈՐՔ . ափնէն Երդը ՋՕՐՔԱԸ : Երբ  
 շաւն Եկեղեցին ինչ Ժոնէ, Երաժշտութեանը ինչ լալ :

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ԼՈՒԻԶԱ, ՄԱՐԿԱՐԻԴ, ԳԼՕՏ ՄԱՐԻ, ՍՏԵՓԱՆ Լ  
 ՊԵՐԹՐԱՆ .

ՄԱՐԿԱՐԻԴ. — Տեսա՞ր քոյրս :

ԳԼՕՏ ՄԱՐԻ. — Այո, թագաւորին առջեւ  
 Էին ոսկեպատ դրահով դրօշը ինչ կրէր :

**ՄԱՐԿԱՐԻԴ.** — Այն էր մեր քոյրն Յովհաննա :

**ԼՈՒԻՉԱ.** — Զմեզ չը ճանչցաւ . չ'էր կարծեր թէ իւր քոյրերը ներկայ էին : Գեաղինը կը նայէր եւ դրօշին ներքեւ նուաղեալ եւ դողդոջուն կը քալէր . ուրախ չ'եմ զայն տեսնելու :

**ՄԱՐԿԱՐԻԴ.** — Մեր քոյրը պատուոյ եւ շքեղութեան մէջ տեսայ : Ո՞վ կրնար երազի մէջ անդամ խորհիլ եւ դուշակել թէ մեր լեռներուն վրայ ոչխար արածող աղջիկն այսպէս փառաւոր պիտի տեսնէինք :

**ԼՈՒԻՉԱ.** — Ճիշդ էր հօրս երազը թէ՛ Ռէմզի մէջ մեր քրոջ առջեւ պիտի խոնարհէինք : Ահա եկեղեցին զոր մեր հայրը տեսաւ յաւուրջս . ահա ամենքը կատարուեցան : Բայց մեր հայրը տխուր տեսիլքներ ալ տեսաւ . ո՛հ , տրտմութեան մէջ եմ Յովհաննան այսչափ մեծ տեսնելու :

**ՊԵՐԹՐԱՆ.** — Ինչո՞ւ հոս դատարկ կը կենանք : Եկեղեցին մտնենք սուրբ օծումը տեսնելու :

**ՄԱՐԿԱՐԻԴ.** — Այո՛ , երթանք . թերեւս հոն մեր քրոջն հետ տեսնուինք :

**ԼՈՒԻՉԱ.** — Արդէն տեսանք . դառնանք մեր գիւղը :

**ՄԱՐԿԱՐԻԴ.** — Ի՞նչ , առանց զայն ողջունելու եւ հետը խօսելու :

**ԼՈՒԻՉԱ.** — Յովհաննա մերը չ'է այլ եւս . անոր ընակութիւնը թաղաւորաց եւ իշխա-

նաց հետ է . մենք մի կնք որ անապարծու-  
թեամբ անոր փառքին մօտենալ կ'ուզենք :  
Մեր հետն եղած ատենն ալ մեզի օտար էր :

ՄԱՐԿԱՐԻԴ. — Զմեղ իրեն ամօթ կը հա-  
մարի եւ կ'արհամարէ :

ՊԵՐԹՐԱՆ. — Թագաւորն անդամ զմեզ ի-  
րեն ամօթ չի համարիր . հասարակ մարդիկ ան-  
գամ սիրով կ'ողջունէր : Յովհաննա որչափ  
բարձր ըլլայ , թագաւորէն աւելի մեծ չ'է :  
(Նկէզէցոյն Ռէլէն Բեբէ և Գոլայ Երէն իւրեան) :

ԳԼՕՏ ՄԱՐԻ. — Օ՛ն , եկեղեցին մտնենք :  
(Տեսարանին խորը կ'երևան և բազմաթիւ Ռէլ իւ-  
րեանք) :

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԹԻՊՕ Կոչայ սեպուղի . ԲԵՄՕՆ Երէն Գալի  
իւ ջանայ զայն նահանջել :

ԲԵՄՕՆ. — Կեցիր , Թիպօ . բազմութեան  
մէջ մի մտնէր : Կը տեսնես որ ամենքն ալ սաս-  
տիկ ուրախութեան մէջ են . չի վայել որ  
դու միայն տխուր երեւաս : Ե՛կ , փութով հե-  
ռանանք այս քաղքէն :

ԹԻՊՕ. — Գժքախտ աղջիկս տեսար , Լաւ  
գիտեցիր :

ԲԵՄՕՆ. — Ո՛հ , կ'աղաչեմ , դարձիր :

ԹԻՊՕ. — Միտ դրիր . ինչպէս դեղեւելով  
կ'երթար . ինչպէս դեղնած եւ խռոված էր

դէմքը: Դժբախտ աղջիկն իւր վիճակին տեղ-  
եակ է. ղաւակս աղատելու դիպող ժամանակ  
է. չ'եմ ուղեր այս պատահութիւնը կորսնցընել:  
(Երբեւէն չ'ուշէ):

ՐԷՄՕՆ. — Կեցիր, ինչ կ'ընես:

ԹԻՊՕ. — Կ'ուզեմ յանկարծ վրան հասնե-  
լով իւր ունայն փառաւորութենէն կորզել զնա.  
այո՛, բռնի պիտի դարձընեմ զնա առ Աստ-  
ուած, որմէ հեռացաւ:

ՐԷՄՕՆ. — Լաւ խորհէ. դուցէ աւելի  
խստացընելով 'ի կորուստ մատնես:

ԹԻՊՕ. — Թող մեռնի. բաւական է որ հո-  
գին աղատի: (Յովհաննա առանց դռնէ ելեցէջէն  
դուռն իւր դէմէ. խոստովանելու անոր իւր հոգեկան  
և զայն յիշարեւել հանդերձները իւր համբոսելու. որտեղանէն խո-  
րը բազմաթիւնն առեւելէս իւր հոգեկան  
այն է: Եկեղեցիէն դուրս կ'ելլէ դունատ:  
Անձկութիւնն զնա սրբարանէն կը վանէ: Աստ-  
ուածային արդարութիւնն յայտնի կը տեսնուի  
անոր վրայ:

ՐԷՄՕՆ. — Մնաս բարով. աչ չ'եմ կրնար  
հետդ գալ: Յուսով եկայ, տխրութեամբ կ'եր-  
թամ: Դուստրդ տեսայ. բայց դիտեմ որ դար-  
ձեալ պիտի կորսնցընեմ զնա: (Րէմոս և Թիպո  
խորտա հախառնի ուղղութեամբ իւր հոգեկանն):

## ՅԵՍԱՐԱՆ Թ.

ՅՈՎՀԱՆՆԱ, ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. յէրոյ +յրէրը ԼՈՒ-  
ԻԶԱ Լ ՄԱՐԿԱՐԻԴ.

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Բաղն-Բէնը ճէղէլով առաջ  
կոչոյ) Ձը կրցայ կենալ . . . ողիները զիս կը  
հալածէին, երգիոնին եղանակն որոտման ձայ-  
նի պէս ականջիս կը հնչէր. դմբեթը վրաս կը  
փլչէր. բաց երկնից տակ ազատ օդ շնչել կ'ու-  
ղեմ: Դրօշս սրբարանին մէջ թողուցի, այլ  
եւս երբեք զայն պիտի չը կրեմ: Ինձի կը  
թուի թէ սիրելի քոյրերս Մարկարիդ եւ Լու-  
իզա, իբրեւ յանուրջս, աչուըններուս առջեւէն  
անցան: Ո՛հ, խաբեբայ երեւոյթ մ'էր: Անկա-  
րելի է որ հոս ըլլան, քանզի Տօմ—Բըմիի եւ  
Ռէմզիի մէջ տեղն եղած սահմանն ընդարձակ  
է: Հեռու են անոնք, ինչպէս որ տղայութեան  
օրերս եւ անոնք երջանկութիւնս:

ՄԱՐԿԱՐԻԴ. — (Առաջ գալով) Ահա, Յովհանն-  
նան է:

ԼՈՒԻԻԶԱ. — (Յովհաննային հարեալով) Ո՛վքոյրս:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ուրեմն երազ չ'էր: Դժբ-  
էք. կը զրկեմ զքեզ, սիրելի Լուիզաս, զքեզ  
սիրելի Մարկարիդս: Հոս այս ինձի օտար ա-  
րանց բաղմութեանը մէջ զձեզ կը համբուրեմ:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Դեռ զմեզ կը ճանչնայ, դեռ  
մեր բարի քոյրն է:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Կը զարմանամ, ձեր սէրն

դձեզ հոս ինձի կը բերէ հայրենի տունէն հե-  
ռու: Ո՞ր պահած չ'էք քրոջ մ'որ ձենէ ցրտա-  
լար եւ առանց հրաժեշտի բաժնուեցաւ:

ԼՈՒԻԶԱ. — Աստուածային դաղտնի հրա-  
մանն էր քեզի առաջնորդողը:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Աշխարհաքարոզ համբաւդ,  
անունդ զոր ամեն լեզու կ'արտասանէ՝ զմեզ  
արթնցուց մեր խաղաղ հիւզին մէջ եւ այս  
փառաւոր հանդէսն առաջնորդեց: Փառաւո-  
րութիւնդ տեսնել եկանք, մինակ չ'ենք:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Աբաբ) Հայրս ձեզի հետ  
է: Ո՞ւր է, ինչո՞ւ չ'երեւար:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Ո՛չ, մեզի հետ չ'է:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ի՜նչ, հետ չ'եկաւ. Զ'ո՞ւ  
դեր իւր դաւակը տեսնել: Անոր հայրական օրհ-  
նութիւնը չը բերիք ինձի:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Մեր հոս ըլլալը չի գիտեր:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Զի՞ գիտեր: Ինչո՞ւ. մոլորե-  
ցաք: Ինչո՞ւ կը լռէք եւ դեռի՞նք կը նայիք:  
Ըսէք, ո՞ւր է հայրս:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Քու մեկնելէդ 'ի վեր . . .

ԼՈՒԻԶԱ. — (Մարկարիդին) Մարկարիդ:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Հայրս սաստիկ տխրութեան  
մէջ է:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Տխրութեան մէջ:

ԼՈՒԻԶԱ. — Մխիթարուէ: Գիտես անոր  
կասկածոս սիրտը: Պիտի ուրախանայ, երբ ի-  
րեն ըսենք թէ երջանիկ ես:

ՄԱՐԿԱՐԻԴ. — Արդարեւ երջանիկ ես եւ

սկէսը է որ ըլլաս . քանի որ այսչափ մեծութեան եւ փառաց մէջ ես :

**ՅՈՎՀԱՆՆԱՍ.** — Այո՛ . երջանիկ եմ , քանզի զձեզ կը տեսնեմ , ձեր սիրուն ձայնը կը լսեմ եւ հայրենի բնակութիւնս կը յիշեմ : Երբ մեր լերանց վրայ ոչխարներու կ'արածէի , Դրախտին մէջ եղածի սկէս երջանիկ էի . . . : ո՛հ , սիրտի չը կրնամ տեսնել այլեւս այն երջանիկ օրը : (Երեւ Լո՛ւիզյէ Կո՛րժէն Վրայ կը ծածկէ : Պլօր Մարի , Սոփիան և Պերմիան կ'երևան և հօգեհալ չը համարձակելով հեռան կը կենան) :

**ՄԱՐԿԱՐԻՆ.** — Եկէ՛ք , Ստեփան , Գլօտ Մարի , Պէրթրան : Յովհաննա հպարտ չ'է , քաղցր է եւ սիրալիր . գիւղին մէջ բնակած ատենն այնպէս չ'էր : (Կը հօգեհան և Յովհաննայէն յետը բռնել Կո՛լէն : Յովհաննա պղնձեալ անոց կը նայէ և սաստիկ զարմացած զի կ'ենայ) :

**ՅՈՎՀԱՆՆԱՍ.** — Ո՛ւր էի : Ըսէ՛ք ինձի , արդեօք երանդ էր այս ամենն , եւ արթնցայ : Ճշմարիտ է որ Տօմ—Բըմիէն մեկնեցայ : Այն կախարդական ծառին տակ կը քնանայի . արթնցայ եւ զուր բոլորտիքս կը կենամք , դուք , իմ ծանօթ եւ մտերիմ բարեկամներս : Երազիս մէջ միայն թագաւորներ , պատերազմներ եւ զինուորական գործողութիւններ կը տեսնէի . ուրեմն այն ամենն ստուեր էր , որ առջեւէս անցաւ : Այն ծառին տակ սաստիկ երազներ կը տեսնուէին : Ի՞նչպէս Ռէմի եկաք . Էս ինչպէս հոս եկայ . կամ թէ արդեօք Տօմ—

Բըմբի ենք, Իմացուցէք որ սիրտս հանդարտի :  
 ԼՈՒԻՑԱ. — Ռէմիլի մէջ ենք, Պատմածդ  
 երազ չ'է, այլ իրօք ամենքն ալ կատարեցիր :  
 Ուշաքերէ, բոլորտիքդ նայէ. տես հազած ոս-  
 կիէ փառաւոր սպառազինութիւնդ : (Յովնան  
 յետէ Կարծիքն իւրանի. Բայ իսկոյն ուշաքերէն  
 շարհարհաւ իւր հայ) :

ՊԵՐԹՐԱՆ. — Այդ սաղաւարտն իմ ձեռ-  
 քէս առիր :

ԳԼՕՏ ՄԱՐԻ. — Զարմանք չ'է որ երազ  
 կը կարծես, քանզի դորձքերդ այնպէս սքան-  
 չելի են որ երազել անգամ անհնար է :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Արտ) Եկէք, փախչինք :  
 Զեղի հետ կու գամ. կ'ուզեմ մեր զիւղը դառ-  
 նալ եւ հօրս գիրկը նետուիլ :

ԼՈՒԻՑԱ. — Ո՛հ, եկու. մեզի հետ եկու :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Այս ժողովուրդը զիս ար-  
 փանաւորութենէս աւելի կը բարձրացընէ : Տղա-  
 յութիւնս գիտէք եւ զիս սկար ու փոքր տե-  
 սած էք. զիս կը սիրէք, բայց զիս չ'էք սպառնար :

ՄԱՐԿԱՐԻԴ. — Ի՞նչ, կ'ուզես այս ամեն  
 փառքը թողուի :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Մէկդի կը նետեմ այս ա-  
 տելի զարդն որ ձեր սիրտն իմ սրտէս կը բաժ-  
 նէ. կ'ուզեմ վերստին հովուութեանս դառ-  
 նալ : Իբրեւ խոնարհ աղախին ձեզ պիտի ծա-  
 ռայեմ եւ խիստ ասպախարութեամբ պիտի  
 քաւեմ յանցանքս, վասնզի սնապարծութեամբ  
 ձենէ վեր բարձրացայ : (Թագի յայն իւր) :

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԿԱՐՈՂՈՍ Բաժնորդներն շարքերով եկեղեցիէն դուրս կ'ելլէ. ԱԳՆԷՍ ՍՕՐԷԼ, ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ԴՈՒԲՍԸ, ՏԻԻՆՈՒԱ, ԼԱՀԻՐ, ԱՍՊԵՏՔ, ՊԱԼԱՏԱԿԱՆՔ և ԺՈՂՈՎՈՒՐԴ.

ԺՈՂՈՎՈՒՐԴ. — (Կրկէն և կրկէն կ'աղաղակէ Բաժնորդներն առաջ ապեւը) Կեցցէ արքայ, Կարօղոս եօթներորդ, (Թոճիկ յայնը կը լսէ. Բաժնորդներն կ'ընէ և տարողները հաւաքանք Բարձրացնելով Լաւանքներն կը պարտէրեն):

ԿԱՐՈՂՈՍ. — Ազնիւ ժողովուրդ, շնորհակալ եմ ձեր ցուցըցած սիրոյն: Այս թագը զոր Աստուած գլխուս վրայ դրաւ՝ սրով շահնալ եւ նուաճեալ, ազնիւ հպատակացս արեամբն ալ ոռոգեալ է. բայց ձիթենեոյն ոստերը խաղաղութեամբ դայն կանաչագեղ սլիտի դարդարեն: Շնորհակալ եմ բոլոր անոնց որք ինձի համար պատերազմեցան, եւ կը ներեմ անոնց որք ինձի դէմ կռուեցան. քանզի Աստուած հաճեցաւ ինձ շնորհք ընել եւ իմ արքունի առաջին վճիռս թող շնորհքն ըլլայ:

ԺՈՂՈՎՈՒՐԴ. — Կեցցէ արքայ, Կարօղոս բարի:

ԿԱՐՈՂՈՍ. — Գաղղիոյ թագաւորներն իրենց թագը դերագոյն վեհապետէն, Աստուծոմէ, կ'ընդունին. բայց ես աւելի յայտնի կերպով անոր ձեռքէն ընդունեցայ: (Յովնանայէն

դառնալով) Ահա աստուածառաքն՝ որ ձեր օրինաւոր թագաւորը նորէն ձեզի տուաւ եւ օտար բռնութեան լուծը խորտակեց: Իւր համբաւովն հաւասար պիտի ըլլայ սրբոյն Դիոնիսիոսի որ այս երկրին պաշտպանն է, եւ անոր 'ի պատիւ սեղաններ պիտի կանգնուին:

ԺՈՂՈՎՈՒՐԴ. — Կեցցէ Օրիորդն, ազատարարն մեր: (ԹՃԷԻ 3-րդ):

ԿԱՐՈԼՈՍ. — (Յովնանային) Եթէ դուն ալ մեզի պէտ մարդկային ցեղէն ես, ըսէ, որ երջանկութիւնը կրնայ զքեզ զուարթացընել. բայց, եթէ հայրենիքդ երկինքն է, եթէ երկնաւոր բնութեանդ ճառագայթներն այդ կուսական մարմնոյդ մէջ ծածկած ես, վերցնուր այդ ծածկոցն եւ երեւցիր մեզի քու լուսաւոր փառքիդ մէջ, ինչպէս որ երկնից մէջ կ'երեւաս, որպէս զի դեմնատարած երկրպագութիւն ընենք քեզի: (Ամենք ալ ինչպէս. ԹՃԷԻ 3-րդ զարմանալով):

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Մէկէն 'ի Դէյ Բուլլը) Բարէ, հայրս կը տեսնեմ:

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԹԻՊՕ Բողոքական Դիւն արաջ Գալի Յովնանային դէմոյն ինչպէս:

ՇԱՏ ՄԸ ՁԱՅՆԵՐ. — Հայրն է:

ԹԻՊՕ. — Այո, այս թշուառին սրտառուէ

եւ ցաւագին հայրը, զոր աստուածային արդարութիւնն հոս զրկեց իւր դուստրն ամբաստանելու :

ԴՈՒՔՍԸ. — Ի՞նչ կը նշանակէ ասիկայ :

ՏԻՒՇԱԹԷԼ. — Ամեն բան հիմայ կը յայտնուի :

ԹԻՊՕ. — (Թագաւորին) Ի՞նչ կը կարծես որ աստուածային զօրութեամբ ազատեցար, խաբուած իշխան : Կուրացեալ Գաղղիացիք, զձեզ ազատողը աստանայական արուեստն է : (Աշէն-էն շրգաւորա՛ն, երբ երբ կ'երթան) :

ՏԻՒՇՈՒԱ. — Կը մոլի այս մարդը :

ԹԻՊՕ. — Ո՛չ ես, այլ դու կը մոլիս. այս թագաւորն, այս իմաստուն եպիսկոպոսը կը մոլին, որոնք կը կարծեն թէ երկնից Տէրը չար աղջկան մը միջոցաւ զինք կը յայտնէ : Տեսէք, պիտի համարձակի հօրը ներկայութեանը պաշտպանել գիւթական արուեստին ժպիրհ ստութիւնն, որով ժողովուրդն ու թագաւորը խաբեց : Պատասխանէ, յանուն սուրբ Նրորդութեան. երկնային սրբոց եւ արդարոց ցեղէն ես : (Ընդհանաւ ըստ-իւն. ամենքն ալ Յովհաննայէն կը նային՝ որ աշարժ կը կենայ) :

ՍՕՐԷԼ. — Աստուած իմ, պապանձեցաւ :

ԹԻՊՕ. — Անշուշտ պիտի զարհուրի այն սոսկալի անունէն, որմէ դժոխոց անդունդներն իսկ կը սոսկան : Տակաւին զայն սուրբ եւ աստուածառած կը համարիք : Գիւթութիւնը սորվեցաւ այն անիծեալ տեղը, կախարդական

ծառին տակ՝ ուր 'ի վաղուց հետէ չար ողի-  
ները կը գումարուին իրենց խորհուրդները կա-  
տարելու: Հոն վաճառեց իւր անմահ հողին  
մարդոց թշնամոյն՝ աշխարհային վաղանցուկ  
փառքն ստանալու համար: Բացէք բազուկն  
որ դժոխքին կնքած նշանը տեսնէք:

ԴՈՒՔՍԸ. —Ո՛հ, սոսկալի է. բայց հաւատ  
ընծայելու է հօբը, քանի որ իւր աղջկանը դէմ  
կը վկայէ:

ՏԻՒՆՈՒԱ. —Ո՛չ, հաւատալու է՛ն մոլեգ-  
նեալ մարդու մ', որ իւր ղաւակը, միանգա-  
մայն զինք կը խայտառակէ:

ՍՕՐԷԼ. —(Յովնանային) Ո՛հ, խօսէ. լուծէ  
այս ահաւոր լուրթիւնը: Կը հաւատանք քեզի.  
խօսքիդ վստահ ենք: Բերնէդ միակ խօսք մը  
բաւական է մեզի. բայց խօսէ, մերժէ այս ա-  
մօթալի ամբաստանութիւնն, անմեղութիւնդ  
յայտնէ, պիտի հաւատանք: (Յովնանա աշխարհ  
էն կենայ. Սօրէլ զարհուրանալով կը հեռանայ):

ԼԱՀԻՐ. —Զարհուրած է: Ահն ու զար-  
մանքը բերանը կը դոցեն: Այսպիսի ահագին  
ամբաստանութեան մ'առջեւ անմեղութիւնն  
անգամ կը դողայ: (Յովնանային կը մօտենայ) Հան-  
դարաւ, Յովնանա, զգաստայի՛ր: Անմեղու-  
թիւնը բերան մ'ունի, այն է համարձակ հա-  
յեցուածքն որ զրպարտութիւնը շանթահար  
կը կործանէ: Յուցուր աղնիւ բարկութիւնդ,  
աչուրներդ բարձրացուր, ամէցուր, յաղթա-  
հարէ՛ զանոնք որ անարժան երկբայութեամբ

քու սուրբ առաքինութիւնդ կը զրպարտեն :  
(Յովնանա աշխարհ կը կենայ . Լահիբ զարհուրեալ կը  
հեռանայ . ընդհանուր յոգնած կ'աւելնայ) :

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ժողովուրդք , ինչո՞ւ կը զարհուրիք . իշխանք , ինչո՞ւ կը դողաք : Անմեղ է . . . երաշխաւոր եմ ես իսկ իմ իշխանական պատուովս : Հոս ասպարէզ կը կանչեմ ով որ կը համարձակի զայն յանցաւոր կոչել : (Աստի որդիքն յայն կը լսէ . ափսոսալով աւազակա՞ծ կը կենան) :

**ԹԻՊՕ.** — Պատասխանէ , Աստուծոյ համար ըլլայ՝ որ իւր որոտումը կ'արձակէ : Բայ՝ որ անմեղ ես : Հաստատէ՛ որ սիրտդ սատանային չի վերաբերիր եւ սուտս յանդիմանէ : (Երկար անգամ կ'որոտայ աւելի աստիկ կերպով ժողովուրդն ափն կոչել կը գործէ) :

**ԴՈՒՔՍԸ.** — Աստուծոյ օգնութիւնն հասնի . ինչ սոսկալի նշան :

**ՏԻՒՇԱԹԵԼ.** — (Թագաւորին) Օհ , տէր արքայ , փախիր այս տեղէն :

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.** — (Յովնանային) Յանուն Աստուծոյ կը հարցընեմ . անմեղութեանդ թէ մեղապարտութեանդ զգացումէն է որ կը լռես : Եթէ որոտման ձայնը քեզի համար է , բռնէ այս խաչն եւ իմացուր որ անմեղ ես : (Յովնանա աշխարհ կը կենայ . վերստին որոտման յայն կը լսէ . Թագաւորը , Սերէլ , Արեւելահայոսը , Դոստը , Լահիբ եւ Տիւշաթել կը գործէ) :

## ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

### ՏԻՒՆՈՒԱ, ՅՈՎՀԱՆՆԱ

**ՏԻՒՆՈՒԱ.** — Ամուսինս ես . . . առաջին անգամ զքեզ տեսնելուս այնպէս հաւատացի, հիմայ ալ այնպէս կը հաւատամ: Աւելի քեզի վստահ եմ քան թէ այս ամեն նշաններուն, այս որոտման անգամ որ կը գոռայ: Ազնիւ բարկութեամբ կը լռես, քու սուրբ անմեղութեանդ վստահելով, այսպիսի անարդ զրպարտութիւն մը հերքելու: Արդ, արհամարհէ՛ղայն, բայց վստահէ ինձի: Անմեղութեանդ վրայ երբէք երկբայած չ'եմ: Քննէ խօսք չ'եմ ուղեր, այլ ձեռքդ տուր միայն իբրեւ գրաւական, որ իմանամ թէ վստահ ես աներկիւղ իմ բազկիս եւ քու արդարութեանդ: (Յովհաննային յետէ Բռնել կ'ողնէ, Բայց եւ Վերջապահ կ'երգէ երեսը իւր Գրքին: Տե՛նո՛ւս սաստիկ զարմացման հետ կ'իյնայ):

## ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

### ՏԻՒՆՈՒԱ, ՏԻՒՇԱԹԷԼ, ՅՈՎՀԱՆՆԱ, յէրոյ ՐԷՄՕՆ

**ՏԻՒՇԱԹԷԼ.** — (Դռնալով) Յովհաննայ տ'Արդ, թագաւորը թոյլ կուտայ որ քաղքէն համարձակ դուրս ելլես: Քաղքին ղոճները քեզի համար բաց են: Մի երկնչիր յարձակումէ: Թա-

դաւորին թիկունքն զքեզ կը սլաշտպանէ :  
 Կոմս Տիւնուա, հետս եկուր . . . սլատուոյդ չի  
 վայլեր որ տակաւին հոս կենաս : Ի՛նչ ցաւալի  
 վախճան : (Կը Վինի . Տեանոս ապշու-  
 լով աճաճ Տ'ալ Յովնանային զբայ կը նայի և Տե-  
 լեքն ետեւէն կ'երևայ : Յովնանա զայրիւան ճը  
 Վինի . զէրջապէս Ռեմն կ'երեւայ որ  
 Տ'ալ Տեանոսն կենալով արարո-  
 լեմէն կը նայի . յետոյ առաջ  
 լով յետեւն կը բռնէ) :

ՐԵՄՈՆ. — Զը կորսնցընենք այս սլատն  
 վայրկեանը : Փողոցները սլարապ  
 են : Տուր  
 ձեռքդ , միատեղ երթանք : (Յովնանա  
 աշուշտ Ռեմնին կը նայի և յետոյ  
 աշուշտ զէրջապէս Տ'ալ Տեանոսն  
 կ'երևայ : Տեանոսն կ'երևայ ի  
 Վինի) :

# ԱՐԱՐՈՒՍԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՅՐԻ ԱՆՏԱՌ ՄԸ

Հեռուն ածխագործներու խոհիթներ կը տեսնուին .  
օդը խաւարին է . կայծակ և փայլատակունք,  
երբեմն նաեւ հրացանի ձայներ կը լսուին :



## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱԾԽԱՎԱՃԱՌՆ Լ ԿԻՆԸ

ԱԾԽԱՎԱՃԱՌԸ. — Ո՛հ, այս ինչ ահաւոր  
եւ աշխարհաւեր մրրիկ . երկինք իւր հրային  
վտակներն հեղուլ կ'սպառնայ, եւ սլայծառ  
օրն այնպէս մթնցաւ որ աստղերը կը տես-  
նուին : Փոթորիկը կը գոռայ ահաղին, որպէս  
թէ դժոխք երկրիս վրայ յարձեղած է : Աշ-  
խարհք կը սասանի եւ այն հնօրեայ կաղնիներն  
ահագին շառաչմամբ իրենց դագաթները կը  
խոնարհեցընեն : Եւ այն սոսկալի սլատերազմը  
զոր երկինք երկրիս դէմ կը մղէ, որ դադան-  
ներն անդամ սարսափեցընելով իրենց որջերը  
մանելու կ'ստիպէ, ձեռնհաս չ'է մարդոց մէջ  
խաղաղութիւն հաստատելու . . . : Հոգմոց եւ  
մրրկի գոռալուսն հետ հրաղինաց թնդիւնը կը  
լսուի . երկու բանականներն իրարու այնչափ մօտ  
են որ զանոնք անտառը միայն կը բաժնէ, եւ  
ամեն վայրկեան արիւննուէտ ճակատամարտի,  
մը կ'սպասուի :

ԿԻՆԸ. — Աստուած օգնէ մեզի . բայց թըշ-  
նամիք արդէն զարնուած եւ հալածուած էին ,  
լինչպէս կ'ըլլայ որ վերստին զմեզ նեղելու կը  
յանդգնին :

ԱԾԽԱՎԱՃԱՌԸ. — Վասն զի թագաւորէն  
երկիւղ չ'ունին : Ռէմզի մէջ Օրիորդին կախար-  
դութիւնն յայտնուելէ 'ի վեր , չար ուրին այլ  
եւս մեզի չ'օգնէր եւ ամենայն ինչ անյաջող  
կ'երթայ :

ԿԻՆԸ. — Տես , մէկը կը մօտենայ :

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՐԷՄՕՆ, ՅՈՎՃԱՆՆԱ. Լ ԽՈՋԻՆԵՐԸ.

ՐԷՄՕՆ. — Ահա կը տեսնեմ հոս խրճիթ մը ,  
եկու , կատաղի մրրկին դէմ հոն ապաստա-  
նինք . կարող չ'ես այլ եւս գիմանալ . երեք  
օրէ 'ի վեր մոլորեալ կը շրջիս՝ աշխարհի աչ-  
քէն խորշելով , եւ կերակուրդ վայրենի բոյսերն  
էին : (Մբբէլը ինքնաբերաբար Լ Երբ հոգին ինքնաբերաբար)  
Գլխած գեղացիներն . մանեմք :

ԱԾԽԱՎԱՃԱՌԸ. — Կ'երեւի թէ հանդըս-  
տեան կարօտ էք : Մտէք . ինչ որ մեր դը-  
ճուճ բնակութիւնը կը պարունակէ՝ ձերն է :

ԿԻՆԸ. — Այս ինչ է . ինչ կը նշանակէ՝ ե-  
րիտասարդ օրիորդ մը զրահապատ : Բայց . . .  
դժուար մամանակի մը մէջ կ'ապրինք . կա-  
նայք ալ զիրենք զրահով կը ծածկեն : Թագու-

հին անգամ, տիկինն Իշապօ, կ'ըսեն թէ թընամի բանակին մէջ զրահապատ ժուռ կու գայ. եւ օրիորդ մ', հովիւ աղջիկ մը, մեր տիրոջը, թագաւորին համար պատերազմեցաւ:

ԱԾԻԱՎԱՃԱՌԸ. —Ի՞նչ կը խօսիս: Գնա, խրճիթէն բաժակ մ'ըմպելի բեր օրիորդին որ կազդուրի: (Կէն խրճիթէն կ'երթայ):

ՐԷՄՕՆ. —(Յովնանայի) Կը տեսնես, ամեն մարդ կատաղի չ'է. դողտր ու մարդասէր սրտեր այս վայրի մենակեաց տեղերն ալ կը բնակին: Զգաստացիր. մորիկն անցաւ, եւ արեւը մեղմ ու հանդարտ ճառագայթներով մարը կը մտնէ:

ԱԾԻԱՎԱՃԱՌԸ. —Կարծեմ թագաւորին բանակը կ'երթաք, քանզի զյնեալ կը ճանապարհորդէք... զգո՛յշ կեցիք, Անգղիացւոց բանակը մօտ է մեզի եւ անոնց գունդերն անտառին մէջ կը յածին:

ՐԷՄՕՆ. —Եղբւկ, ինչպէս պիտի կրնանք դուրս ելլել:

ԱԾԻԱՎԱՃԱՌԸ. —Սպասեցէք, մինչեւ որ տղաս քաղքէն դառնայ. Թող զձեզ ծածուկ ճամբաներէն տանի որ ապահով ձեր տեղն հասնիք: Մենք ամեն ծակ եւ ծուկ գիտենք:

ՐԷՄՕՆ. —(Յովնանայի) Հանէ սաղաւարտդ եւ զէնքերդ, գուցէ մատնուիս, եւ ատոնք չ'են կրնար զքեզ պաշտպանել: (Յովնանայի ինչ չ'արէ):

ԱԾԻԱՎԱՃԱՌԸ. —Օրիորդը խիստ տխուր կ'երեւայ, Լոնցէք, ոտքի ձայն կը լսեմ:

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

Ածիւմաճարին ԿԻՆԸ յերաբ Բաժանիւմ իւր իրճիւրէն  
ի'ելլէ . ածիւմաճարին ՏՂԱՆ .

ԿԻՆԸ. — Մեր մանչն է, որուն կ'սպասէ-  
ինք : (Յովհաննային) Ըմպէ՛, աղնիւ օրիորդ , Աս-  
տուած օրհնէ՛ զքեզ :

ԱԾԻԱՎԱՃԱՌԸ. — (Տղան) Դժուր ես , Յա-  
նէթ . ինչ բերիր :

ՏՂԱՆ. — (Յովհաննային երեսն 'ի վեր իւր նայի ,  
ճիւղերն նա Բաժանիւմ իւր Բերնին իւր դռնէ . որուն շայն  
ճանչուլն անոր իւր Տօրենայ և Բաժանիւր յերաբն իւր  
հորդէ) Մայր , մայր , ինչ կ'ընես : Ինչո՞ւ ներս  
առիր : Այս աղջիկն Օրլէանի կախարդն է :

ԱԾԻԱՎԱՃԱՌԸ և ԿԻՆԸ. — Տէր Աստուած :  
(Իրենց երեսը Խաչմէքէն իւր գոմէն) :

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

### ՐԷՄՕՆ, ՅՈՎՀԱՆՆԱ

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Զգասարոյնէմէ և Ռոմ յայնով)  
Ա՛յ տեսնես , անէծքն ետեւէս կուգայ . ամե-  
նայն ինչ ինչ կը փախչի , դուն ալ զքեզ հո-  
գայ եւ թող զիս :

ՐԷՄՕՆ. — Ինչ , զքեզ թողնում , միմի . եւ  
միլ քեզի ընկերանայ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Առանց ընկերի չ'եմ: Ինձի համար եղած որոտումը լսեցիր: Բախտս ինձ կ'առաջնորդէ: Մի հոգար, սահմանուած վախճանին պիտի հասնիմ՝ առանց անոր հետամուտ ըլլալու:

**ՐԷՄՕՆ.** — Ո՞ւր երթալ կ'ուզես, Տէս մէկ կողմանէ Անդղիացիք, որոնք երգուած են քենէ արեամբ չափ վրէժ խնդրելու... միւս կողմանէ մերիններն, որոնք զքեզ մերժեցին եւ աքսորեցին...:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Ինչ որ ինձի պիտի պատահի, կատարուելու է անհրաժեշտ:

**ՐԷՄՕՆ.** — Քեզի ո՞վ կերակուր պիտի տայ. զքեզ ո՞վ պիտի պաշտպանէ դադաններէն եւ անոնցմէ դադանագոյն մարդոցմէ. քեզի ո՞վ պիտի հոգ տանի երբ հիւանդ եւ թշուառ ըլլաս:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Ամեն տունկ, ամեն արմատ կը ճանչնամ. ոչխարներէս սորվեցայ առողջարարը թունաւորէն որոշել... աստեղաց ընթացքին եւ ամպոց երթեւեկութեանը տեղեակ եմ, եւ ծածուկ աղբերաց խոխովունը կը լսեմ: Մարդս քիչ բանի կարօտ է եւ բնութիւնը կենաց պիտոյքն առաստութեամբ կը մատակարարէ:

**ՐԷՄՕՆ.** — (Ձեռքէ բռնելով) Չ'ես ուզեր քեզի դալ, Աստուծոյ հետ հաշտուիլ եւ զըզմամբ սուրբ Եկեղեցոյն գիրկը դառնալ:

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Դուն ալ, զիս ծանր մեղաց պարտաւոր կը համարիս:

ԲԵՄՕՆ. — Կրնամ ուրիշ կերպ մտածել,  
քու լռիկ խոստովանութիւնդ . . .

ՅՈՎՀԱՆՆԱ. — Դուն որ թշուառութեանս  
մէջ զիս չը թողուցիր, ինձի միայն հաւատա-  
քիմ կեցար, ինձի յարեցար՝ երբ բոլոր աշ-  
խարհք զիս կը հալածէր, դժն ալ զիս յան-  
ցաւոր եւ աստուածութեանց կը համարիս: (Ի՛նչ  
չէ լէ) Ո՛հ, արդարեւ խիստ է:

ԲԵՄՕՆ. — (Ապշած) Կախարդ չ'նս ուրեմն:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Ե՛ս, կախարդ եմ:

ԲԵՄՕՆ. — Եւ բոլոր այս նշաններն Աս-  
տուծոյ եւ Սրբոց զօրութեամբը կատարեցիր:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Հապա ուրիշ ի՛նչ միջոցով:

ԲԵՄՕՆ. — Եւ այն սոսկալի ամբաստանու-  
թեան դէմ լռեցիր. հիմայ կը խօսիս եւ թա-  
գաւորին առջեւ, ուր խօսիլ հարկ էր, պա-  
սկանձեցար:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Տիրոջս, Աստուծոյ ինձի  
սահմանած ճակատադրին հնազանդելու համար  
էր այն լռութիւնը:

ԲԵՄՕՆ. — Հօրդ չը կրցար պատասխանել:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Որովհետեւ հօրմէս էր, Աս-  
տուծմէ էր որ անշուշտ հայրաքար կը փորձէ:

ԲԵՄՕՆ. — Երկինք իսկ քու յանցաւոր ըլ-  
լալուդ վկայեց:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Երկինք կը խօսէր, վասն  
այնորիկ լռեցի:

ԲԵՄՕՆ. — Ի՞նչ, խօսքով մը կրնայիր ըղ-  
քեղ արդարացնել եւ թողուցիր որ աշխարհք

քու վրադ այն ձախող կարծիքն ունենայ :

ՅՈՎՀԱՆՆԱՍ. — Ձախող կարծիք չ'էր , այլ :  
Աստուծոյ հրամանը :

ԲԵՄՕՆ. Անմեղութեամբ այս ամեն նա-  
խատանաց դիմացար եւ շրթունքներէդ տըր-  
տունջ չը յայտնեցիր : Կը զարմանամ , կը սոս-  
կամ . վրադ կ'արգահատիմ , սիրտս կը փղձկի :  
Ո՛հ , հաճութեամբ խօսքիդ կը հաւատամ , ու-  
րովհետեւ դժուար էր ինձ դքեդ յանցաւոր  
համարիք : Բայց , կրնամ երազել թէ մարդկա-  
յին սիրտ մ'աշխարհի տահազին վշտի մը լուռ-  
թեամբ դիմացաւ :

ՅՈՎՀԱՆՆԱՍ. — Արժանի էի աստուածա-  
ռաք ըլլալու , եթէ տիրոջ հրամանը չը մեծա-  
րէի կուրաբար : Կարծածիդ չափ թշուառ չ'եմ .  
չքաւորութիւն կ'զգամ , բայց ասիկայ դժբախ-  
տութիւն չ'է իմ վիճակիս համար . տարագիր  
եմ եւ փախստական . բայց միայնութեան մէջ  
զիս ճանչնալ սորվեցայ : Երբ պատուոյ չքե-  
ղութեամբ շրջապատած էի , սիրտս խռովու-  
թեան մէջ էր . երբ աշխարհի ամենէն աւելի  
նախանձելի կ'երեւայի , ամենէն թշուառն էի .  
բայց այժմ բժշկուած եմ եւ այս որոտումն որ  
զողոզեա բնութեան վախճան տալ կ'ողառնար ,  
լարեկամս էր , թէ զաշխարհ եւ թէ զիս մաք-  
րեց : Սիրտս խաղաղ է . ինչ որ կ'ուզէ թող  
բլլայ , ալ բնաւ տկարութիւն չ'եմ զգար :

ԲԵՄՕՆ. — Ո՛հ , եկո՛ւ , փութանք , երթանք  
անմեղութիւնդ բոլոր աշխարհի յայտնել :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Շփոթութիւնը զրկողը զայն  
 փարատելու կարող է: Երբ ճակատագրին պը-  
 տուղն հասած է՝ կ'իյնայ. օր մը պիտի դայ  
 որ զիս պիտի մաքրէ, եւ այժմ զիս հալածողք  
 եւ դատապարտողք իրենց անիրաւութիւնը  
 պիտի . ճանչնան եւ թշուառութեանս վրայ  
 արտասուք պիտի թափեն :

ԲԵՄՕՆ. — Լռութեամբ հանդիսատես ըլ-  
 լամ, մինչեւ որ դիպուածը . . .

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Բէմէնէ յեւթն Թիւրք Բռնէ-  
 լով) Իրաց բնական վիճակը կը տեսնես. հա-  
 յեցուածքդ երկրաւոր ծածկոյթով մը պատած  
 է. բայց ես աչքովս տեսայ Անմահականը . ա-  
 ռանց Աստուծոյ մարդուս գլխէն մազ մը չ'իյ-  
 նար: Կը տեսնեն արեւուն մարը մտնելը . ինչ-  
 պէս որ հա վաղն իւր բոլոր պայծառութեամ-  
 բը պիտի դառնայ, անշուշտ այնպէս ալ ճըշ-  
 մարտութեան օրը պիտի դայ :

## ՏԵՍԱՐԱՆ Ե :

ԻԶԱՊՈ լաֆուֆն ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԷԷր ԿԷսարանին  
 Էրը Էլ ԿԷսարան :

ԻԶԱՊՈ. — (ՏԷսարանին Էրէ-էն) Ահա, անդ-  
 ղիական բանակը տանող ճամբան այս է :

ԲԵՄՕՆ. — Եղբւկ, թշնամիք կը մօտենան :  
 (Զինուորներն առաջ կոչան Ե Յովհաննան ԿԷսարանը  
 Էր Էր կ'երթան զբարձրանս):

ԻԶԱՊՕ. — Ի՞նչ է այդ, ինչո՞ւ կը կենաք :

ԶԻՆՈՒՈՐԲ. — Ո՛ր Աստուած, օգնէ մեզի :

ԻԶԱՊՕ. — Ողբի կը տեսնէք, ինչո՞ւ կը դար-  
հուրիք. զինուոր էք թէ կնամարդի. ինչ,  
(Զինուորները թէ՛ շէնքերէն առաջ կուգայ և Յովնանան  
դէմէն լինելու էր ինչ խառն) : Ի՞նչ կը տեսնում. (Յեպոյ  
ուշաքերէն Յովնանային կը մերջնայ) Անճնատուր  
եղիր. ինձի գերի ինկար :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Այո՛, գերիդ եմ. (Բէճն յա-  
ռահադուքէն կը գործէ) :

ԻԶԱՊՕ. — (Զինուորներուն) Շղթայով կապե-  
ցէք զդա. Զինուոր, լարանման կը ճարնան. Յով-  
նանա բազում կ'երկեցնէ որ կապեն) Զինուորք,  
այս է զձեզ ոչխարի սկէս հալածող զօրաւոր  
և անաղին սպառնալովին, որ այժմ զինք  
սղաչտպանելու կարող չ'է. Հրաշագործ է, երբ  
ըրաժին հաւատ կ'ընծայուի. և կնոջ կերպա-  
րանք կ'առնու, երբ առն մարդոյ հանդիպի :  
(Յովնանային) Բանակդ ինչո՞ւ թողուցիր. Ո՞ր  
է Տիւնուա կոման, ասպետդ ու սղաչտպանդ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Աքսորուեցայ :

ԻԶԱՊՕ. — (Զարնայմէն գոգն հեռանալով)  
Ի՞նչ, ինչպէս, արքայուհեան, թագաժառան-  
դէն :


ՅՈՎՀԱՆՆԱ. — Մի հարցըներ. Քու ձեռքդ  
եմ. բախտս կամքէդ կախնալ է :

ԻԶԱՊՕ. — Զայն կործանմանէ ազատեցիր,  
Թէմզի մէջ սլաակեցիր թագով և Գաղղիոյ  
թագաւոր օծեցիր. և նա զքեզ արքայուհի :

Գիտեմ, այս է դաւակիւս ընաւորութիւնը : Բանակը տարէք եւ ձեր ընկերացը ցուցըցէք այդ ահաւոր ոգին, որմէ այնչափ կը դողային : Զայն կախարդ համարիլ : Ոչ, անոր բոլոր կախարդութիւնը ձեր ցնորքն ու վատասրտութիւնն է : Ոչ թէ կախարդ այլ անմիտ է . իւր թագաւորին համար զինքը զոհեց եւ փոխարէն վարձատրութեամբ արքայօրէն : Լիօնէլին տարէք . . . Գաղղիացւոց բախտն անոր կը զրկեմ չղթայակաւ : Իսկոյն ես ալ պիտի գամ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Լիօնէլին : Ո՛հ, սպաննէ զիս հոս շուտով անոր չը զրկած :

ԻԶԱՊՕ. — (Զինուորներու) Հրամանա կատարեցէք : Մէկտեղ գացէք : (Կը Գնէ) :



## ՏԵՍԱՐՍՆ Զ.

ՅՈՎՀԱՆՆԱ, ԶԻՆՈՒՈՐԲ

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Զինուորներու) Անդղիացիք, մի թողուք զիս ողջ . առէք ձեր վրէժն, հանեցէք ձեր սուրն ու սիրտս մխեցէք . դիտեալ տարէք ձեր զօրապետին : Խորհեցէք, ես եմ ձեր քաջազուններն սպաննողն, ես եմ որ ընաւ ձեր վրայ դուր չ'ունեցայ, անդղիական արիւնն հեղեղի պէս թափեցի եւ զրկեցի ձեր դիւցազն քաջերն հայրենիք դառնալու բախտէն : Վրէժ առէք՝ արիւնս թափելով :

Ձեր զերին եմ այժմ. թերեւս միտ այսպէս տկար պիտի չը տեսնէք զիս:

ՁԻՆՈՒՌԱՅ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ. — Կատարեցէք թագուհւոյն հրամանը:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Բարէ, այս թշուառութիւնն ալ ինձի պահուած էր: Հզօր կոյս, ձեռքդ ծանր է: Գթութենէդ զիս բոլորովին մերժեցիր: Բնաւ աստուածային նշանն չ'երեւար, բնաւ հրեշտակ մը չ'եմ տեսներ. հրաշից ժամանակն անցաւ. երկնից դռները դոցուած են: (Զինուորաց հետ կ'երթայ):

## ԳԱՂՂԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

### ՏԵՍԱՐՍՆ Է.

ՏԻՒՆՈՒԱ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ՏԻՒՇԱԹԷԼ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — Փարատէ՛ այդ նսեմ տխրութիւնն, իշխան. եկ մեր հետը: Թագաւորիդ դարձիր. մի թողուր այժմ հասարակաց, չահը, քանզի վերստին տաղնապեղանք եւ քու գիւցաղնական ըաղկիդ կարօտ ենք:

ՏԻՒՆՈՒԱ. — Ինչո՞ւ համար տաղնապեղանք: Ինչո՞ւ թշնամին միւս անգամ կը կանդնի: Ամենայն ինչ կատարուած էր. Գաղղիա յաղթող եւ պատերազմն իւր վախճանին մօտեցած էր. մեր աղաախչ օրիորդն հալածեցիք, ուրեմն ջանացէք որ դձեղ աղատէք:

Չ'եմ ուզեր այլ եւս տեսնել բանակին, ուր նա ներկայ չ'է:

ՏԻՒՇԱԹԵԼ. — Լաւ մտածէ, իշխան: Մի թողուր զմեզ այսպիսի պատասխանուով:

ՏԻՒՆՈՒԱ. — Լո՛ւէ, Տիւշաթէլ: Ատելի ետ դու ինձ. խօսքդ լսել չ'եմ ուզեր. նախ դուն անոր վրայ երկմտեցար:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — Ո՞վ անոր վրայ չը դայթակղեցաւ. ո՞վ կրնար անյողդողդ մնալ այն դժբախտ օրը, քանի որ ամենայն ինչ անոր դէմ կը վկայէր: Զարհուրեցանք, շիտեցանք. այն հարուածը մեր սրտերը սարսափեցուց: Ո՞վ կրնար այն սոսկալի վայրկենին մէջ խորհիլ եւ քննել: Ահա այժմ զգօնութեան կը դառնանք. հիմայ կը տեսնենք թէ ինչպէս մեր մէջ վարուեցաւ, եւ անոր վրայ արատ դնելու պատճառ չ'ենք գտներ: Այո, սխալեցանք. յիրաւի կը կասկածինք թէ մեր ըրածն անիրաւութիւն էր: Թաղաւորը կը զղջայ, Դուքսն ինքզինք կը մեղադրէ, Լահիր անմխիթար է եւ տխրութիւնը կը պատէ ամենուն սիրտը:

ՏԻՒՆՈՒԱ. — Յովհաննա խաբերայ էր: Եթէ ճշմարտութիւնը մարմին առնելով երեւար, անշուշտ անոր կերպարանքը պիտի առնուր: Եթէ անմեղութիւնն, հաւատարմութիւնն ու սրտի մաքրութիւնն ուրեք երկրիս վրայ կը բնակին, անշուշտ անոր շրթանքը վրայ, անոր լճիտ աչացը մէջ հաստատած են իրենց կայանը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — Երկինք որ եւ իյէ հրաշքով պիտի յայտնէ մեր մահկանացու աշուհներուն չք թափանցող գաղտնիքը. բայց եւ այնպէս, ինչպէս կրնանք զայս պարզել եւ լուծել: Կամ դժոխոց կախարդական սրովն ըզմեղ պաշտպանեցինք, կամ Սուրբ մ'աքսորեցինք. այս երկու դէպքին մէջ ալ յանցաւոր ենք, եւ երկուքն ալ երկնից բարկութիւնն ու պատիժն այս թշուառ երկրին վրայ կը հրաւիրեն:

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՄԱՆԿԼԱԻԿ ԺԼ ԽՈՒՆԵՐԸ. ԵԿԿ, ՐԷՄԾՆ.

ՄԱՆԿԼԱԻԿԸ. — (Տէնաւայէ) Երիտասարդ հովիւ մ' դքեղ տեսնել կ'ուզէ, իշխան. անպատճառ կը խնդրէ քեզի հետ առանձին խօսիլ: Կ'ըսէ թէ Օրիորդին կողմէն եկած է:

ՏԻՒՆՈՒԱ. — Շուտով թող ներս գայ. Օրիորդին կողմանէ է. (Մանկաւոր Րէհեմէնը կը բերէ. Տէնաւայէ քոյր կը հարեայ) Ո՞ւր է, ո՞ւր է Օրիորդը:

ՐԷՄԾՆ. — Կ'ողջունեմ դքեղ, աղնիւ իշխան. երջանիկ եմ քովդ գտնելուս այս երկիւղած եպիսկոպոսն, այս սրբակրօն տէրն, հարստահարելոց պաշտպանը, տառապելոց հայրը:

ՏԻՒՆՈՒԱ. — Ո՞ւր է Օրիորդն, ըսէ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — Ըսէ՛, որդեակ :

ՐԷՄՕՆ. — Տէ՛ր, Օրիորդը բնաւ կախար-  
դութիւնն չ'ունի : Յանուն Աստուծոյ եւ ամե-  
նայն Սրբոց կը վկայեմ : Ժողովուրդը սխալման  
մէջ է : Անմեղն աքսորեցիք, աստուածառաքն  
հալածեցիք :

ՏԻՒՆՈՒԱ. — Ըսէ՛, ուր է :

ՐԷՄՕՆ. — Մինչեւ Արաբիան անտառներն  
անոր հետ էի : Հոն յայտնեց ինձ իւր սրտին  
խորը : Չարաչար տանջանօք մեռնիմ, հոգիս  
յաւիտենական կորուստը մատնուի, եթէ ան-  
մեղ չ'է Յովհաննա, սրբազան տէր :

ՏԻՒՆՈՒԱ. — Արեւն անդամ անկէ՛ աւելի  
մաքուր չ'է : Ո՞ւր է, խօսէ՛ :

ՐԷՄՕՆ. — Եթէ Աստուած ձեր սրտերը փո-  
խեց . . . Օհ, փութացէ՛ք զնա աղատել : Անդ-  
ղիացւոց ձեռքը դերի է :

ՏԻՒՆՈՒԱ. — Գերի՛ է, ինչ :

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. — Դժբախտ աղջիկ :

ՐԷՄՕՆ. — Արաբիի մէջ, ուր ասպատանե-  
լու տեղ կը փնտռէինք, թագուհիէն բռնուե-  
ցաւ եւ Անդղիացւոց ձեռքն ինկաւ : Ո՛հ, ա-  
ղատեցէ՛ք զնա սոսկալի մահուանէ, ինչպէս որ  
նա զձեզ աղատեց :

ՏԻՒՆՈՒԱ. — Ի զէ՛ն, օն . թմրուկները զար-  
կէք, փողերն հնչեցուցէք : Թող բոլոր ժողո-  
վուրդը կուռի սլաքափսփուի . ամբողջ Գաղ-  
ղիա զէնք սռնէ : Մեր սլաքիւր վտանգի մէջ  
է . թագն ու ծիրանին յափշտակուեցան : Թա-

փննք բոլոր մեր արիւնը, մեր կեանքը շննք:  
Դեռ երեկոյ չ'եղած պէտք է որ Օրիորդն ա-  
զատի: (Կը զննէ):



ԱՇՏԱՐԱԿ ՄԸ, ՎԵՐԷՆ ԼՈՒՍԱՄՈՒՏՈՎ

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՅՈՎՀԱՆՆԱ, ԼԻՕՆԵԼ, ԵՒՊ ՅԱՍԹՈԼՅ Լ

ԻԶԱՊՈ.

ՅԱՍԹՈԼՅ. — (Շարադա Էրո Ռոնելլ) Ամբ-  
խը սանձել անհնար է: Օրիորդին մօհը կը խըն-  
դրեն կատաղաբար: Վայրապար կը հակառա-  
կիք: Սպաննեցէք եւ գլուխն աշտարակին պա-  
տուհանէն վար նետեցէք: Անոր արիւնը միայն  
կրնայ ամբոխն հանդարտեցընել:

ԻԶԱՊՈ. — (Կ- Գ- ) Սանդուղներ կառու-  
ցած են եւ յարձակման կը պատրաստուին:  
Հանդարտեցուցէք ժողովուրդը: Կ'ուղէք սպա-  
սել որ կոյր կատաղութեամբ բոլոր աշտարակը  
պաշարեն, զմեզ ալ բնաջինջ ընեն: Կարող  
չ'էք զնա պաշտպանել, տուէք ուրեմն:

ԼԻՕՆԵԼ. — Թող յարձակին, թող կատաղա-  
բար դռան: Այս բերդն ամուր է, եւ պատ-  
րաստ եմ անոր աւերակացը տակ թաղուիլ՝ քան  
թէ անոնց հաճոյքը կատարել: — Պատասխան  
տուր, Յովհաննա. ինձի յանձնուէ, համօրէն  
աշխարհի դէմ զքեզ պիտի պաշտպանեմ:

**ԻԶԱՊՕ.** — Զքեղ մարդ կը համարիս :

**ԼԻՕՆԵԼ.** — Հայրենակիցքդ զքեզ հալածեցին : անարժան հայրենեացդ համար քու ունեցած ամեն պարտաւորութենէդ ազատ ես : Քեզ փնտռող վատերն զքեզ մերժեցին եւ քու պատուոյդ համար կռուիլ չը համարձակեցան : Բայց ես զքեզ կը պաշտպանեմ իմ եւ քու ժողովրդեանդ դէմ : Երբեմն կարծել տուիր ինձ թէ կեանքս սիրելի է քեզի , երբ քու թշնամիդ էի . այժմ ինչ ուրիշ բարեկամ չ'ունիս :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Ինձի եւ ժողովրդեանս ոխերիմ թշնամի ես : Իմ կը քու մէջտեղդ ինչ հաղորդութիւն կրնայ ըլլալ : Չ'եմ կրնար զքեզ սիրել . բայց , եթէ սրտով ինձի հակամէտ ես , մեր երկու հայրենեաց բարեբարն եղիր : Գունդերդ հայրենեացս հողէն դուրս հանէ . ձեր նուաճած քաղաքաց բանալիներն կտ տուր . մենէ կորզած աւարդ կտ դարձուր . դերիներն արձակէ . սուրբ հաշտութեան մ' համար պատանդներ զրկէ . ես ալ քեզի խաղաղութիւն կ'առաջարկեմ յանուն թագաւորիս :

**ԻԶԱՊՕ.** — Կ'ուզես մեզի օրէնսդիր ըլլալ այդ շղթաներուդ մէջ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Շուտով խաղաղութիւն ըրէ , քանզի պաքտական ես : Գաղղիա երբէք Անդղիոյ լուծին տակ չի կրնար մնալ : Երբէք սլիտի չի պատահի : Թերեւս ձեր ղօրաց համար ընդարձակ դերեղման մ' ըլլայ : Ձեր մէջէն քաջազոյններն ինկան . ասլահով կերպով ես

դառնալ խորհնցէք . արդէն փառք ու դօրու-  
թիւն կորուսած էք :

ԻԶԱՊՈ. — Կլմամք մոլեղնեալ աղջկան մ' յանդգնութեանն հանդուրժել :



# ՏԵՍԱՐԱՆ Ժ.

**ՀԱՐԻԻՐԱՊԵՏ ՄԸ ՀԱՅԿԻՆԷՐԱ ԿԵ ՏԳՆԷ:**

ՀԱՐՒԻՐԱՊԵՏԸ. — Փութան, զօրապետ, դունդը կռուի պատրաստելու: Գաղղլիացիք դրօշները բարձրացուցած կը յառաջանան. ամբողջ դաշտն անոնց ղէնքերովը կը փայլի:

ՅՈՒՀԱՆՆԱՆ. — (Եւանդէաճէ) Գաղղիացիք  
կը յառաջանան: Օ'ն, խորհատ Անգղիացիք, պա-  
տերազմի ելէք: Ժամ է արդ գիւցաղնաբար  
կռուելու:

ՖԱՍԹՕԼՖ. — Անոնիտ, չափաւորէ ուրա-  
խութիւնդ : Պատի չը տեսնես այսօրուան վերջը :

ՅՈՎՀԱՆՆԱ. — Պիտի մեռնիմ, բայց հայ-  
րենիքս պիտի յաղթէ. քաջերն այլ եւս բազ-  
կիս կարօտ չ'են :

ԼԻՕՆԵԼ. — Կը ծաղրեմ այն կնասները :  
Այս դիւցազն աղջիկը դեռ անոնց չ'օգնած  
քսան պատերազմի մէջ հալածեցինք զանոնք :  
Ռուր Գաղղիացւոց մէջէն մէկը միայն չեմ  
կրնար արհամարհել , այն ալ աքսորեցին : — Եր-  
թանք , Ֆասթօլֆ , յիշեցընենք անոնց երկրորդ  
անգամ Գրէգիի եւ Ռուսթիյէի օրերը : Գոն աչ ,

Թադուհի, հոս կեցիր. Օրիորդին վրայ հակէ,  
մինչեւ որ պատերազմն որոշուի: Պահպանու-

թեան համար յիսուն ասպետ կը թողում քեզ:  
ՅԱՍԹՕԼՅ. — Ի՞նչ, այս կատաղին հոս ձը-

դելով թշնամույն դէմն երթանք:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Կը զարհուրիմ շղթայակապ  
աղջիկէ մը:

ԼԻՕՆԵԼ. — Յովհաննա, խօսք տուր ինձ որ  
պիտի չը փախչիս:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Միակ բաղձանքս աղա-

տութիւնս է: . . .

ԻԶԱՊՕ. — Երեքկին շղթայով կապեցէք  
դդա: Արեւուս վրայ կ'երգնում որ կարող պիտի

չ'ըլլայ փախչիլ: (Զինուոր + Յովհաննային հարմին  
— Բաշտինէրը ծանր շղթայով կը կապեն):

ԼԻՕՆԵԼ. — (Յովհաննային) Այսպէս կ'ուզեմ:  
Չմեղ կը բռնադատես: Բայց քու ձեռքի է:

Մերժէ Գաղղիա, կրէ Անդղիոյ դրօշը. յայն-

ժամ կ'աղատիս եւ այժմ քու արիւնդ խնդրող-

ները քեզի ծառայ պիտի ըլլան:

ՅԱՍԹՕԼՅ. — (Շտապ) Օ՛հ, երթանք, դո-

րապետ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Երկայն մի խօսիր. Գաղ-

ղիացիք յառաջանալու վրայ են: Անձդ պաշտ-

պանէ: (Փողոյ յայն կը լսէ. Լէօնէլ կը խօսի):

ՅԱՍԹՕԼՅ. — Թադուհի, դիմեա ինչ պիտի

ընես: Եթէ ճակատագիրը մեզի դէմ ելլէ, ե-

թէ մեր զինուորաց փախուստը տեսնես. . . :

ԻԶԱՊՕ. — (Դաշինք + աշխարհ) Անհող եղիր:

մեր կործանումը տեսնելու պիտի չը հասնի:

**ՅԱՍԹՕԼՅ.** — (Յնշանային) Ապագայիդ տեղեակ ես: Առ այժմ ժողովրդեանդ յաջողութեանն համար աղօթէ: (Կը խօսի):

## ՏԵՍՍՐՈՆ ԺԱ.

**ԻԶԱՊՕ, ՅՈՎՀԱՆՆԱ, ԶԻՆՈՒՈՐԲ**

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Այո, այսպէս կ'ուզեմ: Ո՞վ կրնայ զիս արգելուլ... ահա կը լսեմ մեր զօրաց յառաջ դալուն ոտնաձայնը, ինչպէս զուարթ կը հնչէ սրտիս եւ յաղթութիւն կ'աւետէ: Կործանումն Անդղիացւոց, Գաղղիացւոց յաղթութիւնն: Ո՞ն, քաջք իմ, ծն յառաջ: Օրիորդը մօտ է ձեզի, բայց կարող չ'է առաջուան պէս ձեր դրօշակիրն ըլլալ... ծանր շղթաներով կաշկանդուած է. բայց հոգին ձեր յաղթութեան երգոց թեւերուն վրայ ազատաբար կը թռչի այս շղթաներուն մէջէն:

**ԻԶԱՊՕ.** — (Զինուորի ղեկ) Ելիր պատերազմի ասպարիդին վրայ նայող դիտանոցն, եւ իմացուր մեզի կռուոյն ելքը: (Զինուորը ձեր է'ելէ):

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Քաջալերուէ, քաջալերուէ ժողովուրդս: Վերջին պատերազմն է: Յաղթութիւն մ'ալ եւ թշնամին պիտի նուաճի:

**ԻԶԱՊՕ.** — (Զինուորին) Ի՞նչ կը տեսնես:

**ԶԻՆՈՒՈՐԸ.** — Յարձակումն արդէն սկսած է: Վազերամորթ բարբարիկ ձիաւոր կատաղի

մը մեր յառաջապահ գունդին վրայ կը յարձընէ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Տիւնուա կոմսն է : Արիա-  
ցիւր, քաջ գասպետ, Յաղթութիւնը քուկդ է :

**ԶԻՆՈՒՈՐԸ.** — Պուրկունտէ Դուքսը կա-  
մուրջին վրայ կը յարձընի :

**ԻԶԱՊՕ.** — Ո՛հ : տասը տէգ խոցէ, այն մար-  
նիչին սիրտը :

**ԶԻՆՈՒՈՐԸ.** — Լորտ Ֆասթօլֆ առնարար  
անոր դէմ կը դնէ : Զիէն վար իջան, մեր ե-  
անոնց զօրքէն ախոյեան ախոյեանի հետ կը  
մենամարտի :

**ԻԶԱՊՕ.** — Թագաժառանգը չ'եւ տեպներ :  
Զ'եւ ճանչնար արքայական նշանները :

**ԶԻՆՈՒՈՐԸ.** — Փռչոյն պատճառաւ յատկ  
չ'եւ տեպներ :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Եթէ իմ աշուըներս ունե-  
նար, կաթ եթէ ես վերն ըլլայի, փոքրիկ ա-  
ռարկաներն անգամ տեսութենէս չ'էին վրի-  
պեր : Վայրի թռչունները թռչելու ատեն կըր-  
նամ հափել : Բաղէն օդին մէջ որչափ բարձր  
ըլլայ կը ճանչնամ :

**ԶԻՆՈՒՈՐԸ.** — Վտակին քօլ սոսկայի խառ-  
նուրդ մը կայ. կ'երեւայ թէ մեծամեծք եւ  
քաջագոյնք հոն կը կռուին :

**ԻԶԱՊՕ.** — Կը ծածանի տակաւին մեր դրօշը :

**ԶԻՆՈՒՈՐԸ.** — Դեռ օդին մէջ կը ծածանի :

**ՅՈՎՀԱՆՆԱ.** — Եթէ պատի մը ճեղքուած-  
քէն ալ նայիմ, կրնամ նայուածքովս լմիայն  
պատերազմին հրամայել :

ՋԻՆՈՒՈՐԸ. — Եղիւկ, ինչ կը տեսնեմ: Մեր  
դօրապետը թշնամիներէն պաշարուեցաւ:

ԻԶԱՊՕ. — (Դաշնակ Յովնանային. ինչ զարէի)  
Մեռիր, թշուառական:

ՋԻՆՈՒՈՐԸ. — (Արտ) Ազատեցաւ: Գաջա-  
սիրտ Ֆասթօլֆ թշնամին ետ մղեց եւ անոնց  
թանձր դունդերը ճեղքեց:

ԻԶԱՊՕ. — (Դաշնակ եւ Կալէլ) Հրեշտակդ  
խօսեցաւ:

ՋԻՆՈՒՈՐԸ. — Յաղթութիւն, յաղթու-  
թիւն, կը փախչին:

ԻԶԱՊՕ. — Որո՞նք կը փախչին:

ՋԻՆՈՒՈՐԸ. — Գաղղիացիք եւ Պուրկունա-  
ցիք. դաշտը փախստականներով ծածկուած է:

ՅՈՎՀԱՆՆԱ. — Աստուած իմ, Աստուած  
իմ. Զիս այսպէս լքեալ կը թողուս:

ՋԻՆՈՒՈՐԸ. — Սասաիկ վիրաւորեալ մը  
կը տանին: Բաղմութիւնն անոր օգնութեան  
կ'աճապարէ. իշխանի մը կերպարանք ունի:

ԻԶԱՊՕ. — Մերկններէն է թէ Գաղղիա-  
ցի է:

ՋԻՆՈՒՈՐԸ. — Սաղաւարտն հանեցին. Տիւ-  
նուա կոմսն է:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Զային Գալարտ մ'անհեռ-  
ւի) Եղիւկ, այսպէս շղթայակապ արդիլ ուե-  
լով էի:

ՋԻՆՈՒՈՐԸ. — Ի՞նչ է այն, ինչ կը տես-  
նեմ: Ո՞վ է այն ոսկեթել կապոյտ հանդեր-  
ձով ասպետը:

ՅՈՎՀԱՆՆԱ. —(Եռանդեմբ) Վեհապետս է, թաղաւորս :

ԶԻՆՈՒՈՐԸ. —Ձին կը խրտչի . . . դայթակ-  
ղելով կ'իյնայ . . . մեծ դժուարութեամբ կանգ-  
նելու կը ջանայ . . . (Յովհաննա այս խոսքերը կրէ-  
հարէ կ'ընէ) Մերիններն անոր մօտեցան . . . ա-  
նոր վրայ կը դիմեն, հասան, սլաշարեցին :

ՅՈՎՀԱՆՆԱ. —Ո՛հ, չ'ուզեր այլ եւս եր-  
կինք իւր հրեշտակները մեզի օգնութեան  
ղրկել :

ԻԶԱՊՕ. —(Հեգնելով) Ժամ է արդ, այժմ,  
ազատիչ, փութա օգնութեան :

ՅՈՎՀԱՆՆԱ. —(Ծնունդ վրայ գալով «աստիկ  
Եռանդեմբ յայնով կ'աղբէ») Աստուած իմ, լսէ ինձ  
այս յետին նեղութեանս մէջ : Ձերմ սլաղա-  
տանօք հոգիս առ քեզ կ'ուղղեմ յերկի-  
նըս : Կարող ես սարդի ոստայնի մը թելերը  
նաւու սլարանի թանձրութեանը պէս ընել,  
ինչպէս որ դիւրին է քու Ամենակարողու-  
թեանդ՝ պղնձէ կապեր ոստայնի նուրբ թելե-  
րու փոխել . . . միայն կամեցիր, եւ այս շըղ-  
թաները պիտի իյնան եւ աշտարակիս որմերը  
պիտի բացուին . . . այն կոյր եւ բանտարկեալ  
Սամսոնին օգնութեան հասար, որ իւր խը-  
րոխտ թշնամեաց դառն կատակներուն կը համ-  
բերէր : Գեղի ասլաւինելով բանտին սիւները  
սաստկութեամբ դրկեց, եւ շէնքը խախտելով  
կործանեցաւ :

ԶԻՆՈՒՈՐԸ. —Յաղթութիւնն, յաղթութիւնն,

ԻԶԱՊՈ. — Ի՞նչ կայ:

ՋԻՆՈՒՈՐԸ. — Թաղաւորը բռնեցեցաւ:

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Որտ ելլելով) Տէր Աստ-  
 ւած: (Երկու յետո՛վ շղթաները սասորհո-  
 վեամի քրտնաբերելով, իրարմէն զը-  
 րայ յարձակելով՝ անոր սուրբ ինքնին  
 և փոխելով ին-  
 ժեկին. ամենքն ալ անշարժ կեցած՝  
 զարմացածի եղանակ  
 ինչպէս):

## ՏԵՍՍՐԱՆ ԺԲ.

ԱնՎիշնէրն առանց Յովհաննայի:

ԻԶԱՊՕ. — (Եբելայն լուսնին է գրել) Ի՞նչ եղանք, Երանդէր արդեօք: Ո՞ւր յախաւ: Ի՞նչ պէս կոտորեց այս ծանր շղթաները: Եթէ իմ աչքովս տեսած չ'ըլլայի, պիտի չը կրնայի հաւատալ թէ եւ ամբողջ աշխարհը վկայելու ըլլար:

ՋԻՆՈՒՌԸ. — (Աշտարակէն գլխաւոր) Ինչպէս, արդեօք թեւ ունի. մորկալից հողմ մ'արդեօք պնա տարաւ :

ԻԶԱՊՈ. — Ըսէ՛, հոն է:

ԶԻՆՈՒՈՐԸ. — Արդէն բանակին մէջ կըռուելու վրայ է. . . այնպէս արագընթաց կը յառաջանայ որ հազիւ կրնամ տեսնել . . . մերթ հոս է . . . մերթ հոն . . . չստ տեղեր միանգամայն կը տեսնեմ զնա . . . Ամբոխը կը ճեղքէ. . . ամենայն ինչ անոր տեղի կու սայ. Գաղղիացիք կեցան, վերստին իրենց գունդերը կը

կաղմեն : Եղիկ, ինչ կը տեսնեմ : Եւրինները  
ղէնքերը կը թողուն, մեր դրօշները կողոպ-  
տուեցան :

ԻԶԱՊՈ. — Ի՛նչ յաղթութիւնը մեր ձեռքէն  
կը կորդէ :

ԶԻՆՈՒՈՐԸ. — Թաղաւորին կենցած տեղն  
հասաւ . . . անոր կը մօտենայ . . . ճակատէն  
դնա ու ժգնութեամբ դուրս կը հանէ : Լորտ  
Ֆասթօլֆ ինկաւ . . . դերի բռնուեցաւ :

ԻԶԱՊՈ. — Այլ չ'եմ ուզեր մտիկ ընել : Վար  
իջիր :

ԶԻՆՈՒՈՐԸ. — Փախիր, թաղուհի : Պիտի  
բռնուիս : Զինուորները դէպ' այս աշտարակը  
կուգան : (Վար կ'իջնէ) :

ԻԶԱՊՈ. — (Սարն հանելով) Կռուեցէք, վա-  
տեր :

## ՏԵՍՍՐՈՆ ԺԴ.

ԼԱՀԻՐ ԶԻՆՈՒՈՐԱՅ ԳԵՐ ԿՈՒՅԱՅ. ԵՆԵՐ ՏՊԵԼԱՎ  
Ժամանակը Խաչո-հոյն ղըրը ղէնէրը ին Բողուն :

ԼԱՀԻՐ. — (Մեծարանք էր հարեալ) Թաղուհի,  
դօրութեան տեղի տուէք . . . ձեր ասպետներն  
անձնատուր եղան : Դիմադարձութիւն ընել  
անօդուտ է : Հաճեցէք ծառայութիւնս ընդու-  
նիլ : Հրամայեցէք, ուր կ'ուզէք որ ղճեղ տա-  
նիմ :

ԻԶԱՊՈ. — Հոգ չ'է, ուր որ ըլլայ կ'երթամ,

միայն թաղաժառանգին չը հանդիպիմ։  
 (Սուրբ Լահիբին պաշտօնը հետ իջնելն զին-  
 ուորտ անոնց երեւելն կ'երևան)։

ՏԵՍԱՐԱՆԸ ՊԱՏԵՐԱԶԹԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՄԸ  
 ԿԸ ՓՈԽՈՒԻ

### ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ՋԻՆՈՒՈՐՔ պարզած դրօշով տեսարանին խորը իջ-  
 նան. անոնց առջեւն ԿԱՐՈՂՈՍ Լ ՊՈՒՐԿՈՒՆՏԻ  
 ԴՈՒՔՍԸ իրենց բազկացը մեջ ՅՈՎՀԱՆՆԱՆԸ բը-  
 նած՝ համայն ճը տեսարանին առջեւ կո-գան։ Օրին-  
 դը ճահադոս ինքզնով լիբաւորած է և կենդանա-  
 լեան նշան ճը չի ցո-ցնէր. յետոյ ԱԳՆԵՍ ՍՕՐԵԼ  
 խո-նով իջ հասնի։

ՍՕՐԵԼ. — (Թափառորեն բազկացը մեջ նետուե-  
 լով) Աղաւտեցար . . . ողջ ես . . . վերստին ըզ  
 քեզ կը տեսնեմ։

ԿԱՐՈՂՈՍ. — Այո, աղաւտեցայ . . . բայց  
 մեծագնի։ (Յովհաննան իջ ցո-ցնէ)։

ՍՕՐԵԼ. — Յովհաննան է. Աստուած իմ.  
 կը մեռնի։

ԴՈՒՔՍԸ. — Մեռան։ Իբրեւ հրեշտակ մե-  
 նէ բաժնուեցաւ։ Տես, ինչպէս պառկած է  
 անցաւ եւ հանդարտ՝ իբրեւ քնացող մանուկ  
 մը։ Երկնային խաղաղութեամբ կը փայլին աչ-  
 տերը. սիրտը չի թնդար, բայց եւ այնպէս իւր

ջերմ ձեռուքները կենդանութեան նշան կը  
յայտնեն :

ԿԱՐՈՂՈՍ. — Մեռաւ . . . Երբէք պիտի  
չ'արթննայ, իւր աչուքներն երբէք երկրային  
լոյսը չը պիտի տեսնեն, իւր լուսաւոր հոգին  
վերն յաւիտենականութեան մէջ կը շրջի եւ  
չի տեսներ մեր ցաւն ու զղջումը :

ՍՕՐԷԼ. — Աչուքները՝ բացաւ. կենդանի է :

ԴՌՈՒՔՍԸ. — (Աղչաք) Գերեզմանէն ետ կը  
դառնայ, Մահուան տեղի չը տուաւ : Կ'ուշա-  
ւերի, կանգնիլ կը ջանայ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Կանգնելով Բոլորի՛ք չե՛նայի)  
Ո՛ր եմ :

ԴՌՈՒՔՍԸ. — Ժողովրդեանդ մէջ, Յովհան-  
նա, քու կիներն ուղ զոյլ :

ԿԱՐՈՂՈՍ. — Բարեկամացդ եւ թագաւո-  
րիդ բաղկացը մէջ :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Պշտեալ ահոր նայելէ ետք)  
Ո՛չ, կախարդ չ'եմ : Այո՛, չ'եմ :

ԿԱՐՈՂՈՍ. — Հրեշտակի պէս սուրբ ես .  
բայց դիչերային խաւարը մեր աչուքները կը  
ծածկէր :

ՅՈՎՀԱՆՆԱ. — (Զաւարի ծիծաղովի՛ն Բոլոր-  
ի՛ք չե՛նայելով) Այո՛, արդարեւ ժողովրդեանս  
մէջ եմ. այլ եւս ոչ կը նախաստուիմ, ոչ ալ  
կը չ'ածուիմ : Զիս անիծող չը կայ. ամենայն  
ոք քաղցրութեամբ լինձի կը հայի : Ամենայն ինչ  
վերստին ոչ կը ճանչնամ : Ահա թագաւորս,  
ահա Գ լղիոյ դրօշները : Բայց իմ դրօշս չ'եմ

տեսներ . . . ուր է : Չեմ համարձակիր առանց  
դրօշի կենալ , այն Տիրոջն կողմանէ ինձ յանձ-  
նուեցաւ . պէտք է որ անտր աթոռին առջեւը  
դնեմ : Կրնամ զայն անոր ցուցնել , քանզի հա-  
ւատարմութեամբ կրեցի :

ԿԱՐՈՂՈՍ . — (Ձենահարաց) Դրօշն անոր տուէք :  
(Դրօշն Յովնանային հոգան որ լայն բռնելով ետ  
առնէ աշտոյնը ինչպէս : — Երկէն երեսը զարդարեալ  
էրեւալ) :

ՅՈՎՀԱՆՆԱ . — Կը տեսնէք օգին մէջ ծի-  
ածանը : Երկնից ոսկեղէն դռները բացուեցան :  
Երանելիաց դասուն մէջ փառաւորացիս կ'ե-  
րեւայ Կոյսն , որ յաւիտենական մահուկը գիրկն  
առած՝ ժպտելով ձեռքն ինձի կը կարկառէ :  
Ինչ կ'ըլլամ . թեթեւ ամպեր զիս կը բառ-  
նան . . . այս ծանր զրահը փետրոյ նման թե-  
թեւացաւ : Վեր . . . վեր . . . երկիրն ետ ետ  
կ'երթայ . . . վիշտը կարճ է , եւ ուրախու-  
թիւնն յաւիտենական :

(Դրօշն յետէն յետէն Յովնանային հոգան անոր  
ձեռք . ինչպէս : — Ամենքն ալ ինչ լուսնեան  
մէջ ինչպէս : — Կարողա՞նք հաշտեցնել եւ բոլոր  
Դրօշները միմեկին անոր ձեռք ինչպէս : — Երկէն  
բոլորովին անոնցմէ ինչպէս) :

ԱՅՆԵՐԸ ԲԱՅԱՎԱԾԱՅԻՆ

# ԱԼԶԻՐ

ԿԱՐ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա Ց Ի Ք



ՈՂԵՆՐԳՈՒԹԻՒՆ

Վ Ո Լ Թ Ե Ր Ի

ՔԵՐԹՈՂԻ ԳԱՂՂԻԱՑԻՈՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Տ. ՏՈՄԻՆԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՓԻԻՐԻՃԵԱՆ

Կ.-ՊՕԼԻՍ, ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ

— 1862 —

ԿԳ-ԿԿ  
43



**ԱՌԹԱՅՈՒՆ**

**ԻՆՍՏԻԹՈՒՆ ԶԱՐԻՔԻ**

**ՓԱՐԵԼԻ ԵՆՈՒՅԳ**

**ՅԱՆԿԵԼԾ ՄԻՐՈՅԵ**

**ԱԶԳԱՍԻՐ ԸՂԶԻՅԴ**

**Ի**

**ՂՍԱԿ**

**ԱՊԱՐԵՒ ԴԱՐՈՒՅ**

**ՅԱԻԲԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ**

**ԿՈՒԻՔԻԱԿ ԶԹՅԻ**

**ԶԴՈՑԶՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՍ**

**ԴՈՅԻՆԴ**

**ՄՏԵՐԾՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՆՁՈՐԴ**

**Տ. ՏՈՄԱՆԵԱՆ**



## ՅԱՌԱՋԱԲԵՆ

### Թ Ա Ր Գ Մ Ա Ն 2 Ի Ն

Հասաւ ժամանակ մը յորում քաղաքականութիւնը Հայ ազգիս մէջն ալ վերջապէս սկսաւ ծաւալիլ: Իմացաւ այդ ազգը որ խռովութիւն պետք էր, պատերազմ ու ապստամբութիւն պետք էր տգիտութեան դէմ եւ քաղաքականութեան զենքերովը վառեալ՝ վերջապէս յաղթական ողջունուիլը յուսալով՝ կարշառե դէռ այդ մտաց խառարին ասպարեզը: Իւր արշաւանացը մէջ ստացաւ Հայրենեաց գաղափարը, մանաւանդ թէ ճանցցաւ իւր կիսամեռ Հայրենեաց յարգը. խառնեց յիշատակաց մոխիրները, արբնցուց նախահարց արձագանգը, ճայն տուաւ թմրեալ սրտից եւ քայլ սու քայլ ինչուան իմաստութեան մատենին եջերն թղթատել յանդգնեցաւ. գտաւ իւր անցելոյն մէջ նախահարց պատ-

մութիւնը, դպրութիւնքը, ճաշակն ու սովորութիւնը եւ իւր հնացեալ փառքը: Տաղանդն առաւ իրեն առաջնորդ, գեղեցիկ դպրութիւնքն ըրաւ սընունդ սրտի, զմայլումն հոգւոյ. վերջապէս այս դարուս մէջ ազգասիրական ոգւոյն մնացորդ կայծերն արծարծելով հրասեր կարդաց յօժար եւ լըրջամիտ երիտասարդաց Միջագիւղի Դպրոցին մէկ սրահին Թատրոնի անուն տալ եւ Բերայի Թատրոն Արեւելեան անուամբ կանգնած վարժարանին սիւն եւ նեցուկ ըլլալ, վասն զի արդարեւ Վարժարան մըն է այդ սրահը ուր Ազգն կը գումարուի, ուր միտքն կը զարգանան եւ սրտերն կազնուանան:

Յառանջ, յառանջ, Հայ աշխարհիս պարծանք, շարունակենք սիրել գիտութիւնը, մշակել գեղեցիկ դպրութիւնքը. սակայն եւ այնպէս զգուշանալ մախանաց ժանիքէն, ջտալ տեղի զրպարտութեան լեզուին, արգասաւորել էյքն աշխատանաց եւ ազգասեր սրտից մէջ խնդրել քրտանց իրաւունքը, վասն զի զարգացեալ միտք եւ ազնուացեալ սրտեր ոչ երբեք իդերեւս յուսացին, ազգախնամ եւ կենցաղօգուտ գործոց յառաջացմանը մէջ գտան իրենց արդեանց վարձն եւ պսակ. ինչպէս նաեւ բարգմանութեան Հեղինակն՝ հասարակաց բարիքն նըպաստակ ունենալով՝ մոռցաւ առժամանակեալ վարձըն եւ յետագայ դարերու բողոք իւր վաստակոց փոխարենը. գրեթէ իւր ամեն գրութեանը մէջ կը

տեսնուի մարդկութեան սերը եւ մարդկութիւնը եր-  
ջանկացնելու փափարը: Եւ ես ինքնին նոյն ոգով  
վառեալ, տկար զրջիս ապաւինած, աշխատեցայ  
պահել ողբերգութեան ոգին եւ բնագրին անուշոճը.  
աշխատեցայ յոտանաւորէ յարմակ փոխեալ ազատ  
բարգմանութեանս պարզ եւ դիւրիմաց լեզուին բարմ-  
րութիւնը գրութեան վսեմութեանը հասցնել: Յան-  
դուզն ձեռնարկութիւն, եւ սակայն ազգայնոցս նե-  
րողամտութեանը յուսացի հանդիպել այսպիսի ող-  
բերգութիւն մը ընտրելով ուր առաքինութիւնն է  
իւր առաջնորդ, սերն իւր ոգին, հաւատքն իւր նը-  
պատակ, ուր տարակրօն ազգ մը բարոյական ազ-  
դեցութեամբ զրգոռած հանջցաւ վերջապէս անե-  
րեւոյք հութեան զօրութիւնը:



## ԱՆՁԻՆՔ



|                                  |                         |
|----------------------------------|-------------------------|
| ԿՈՒՍՄԱՆ.                         | Կուսակալ Բերուի.        |
| ԱԼՎԱՐԷ.                          | Հայր Կուսմանի.          |
| ԶԱՄՈՐ.                           | Իշխան Բողոզի մեկ մասին. |
| ՄՈՆԴԷԶ.                          | Իշխան ուրիշ մասի մը.    |
| ԱԼԶԻՐ.                           | Դուստր Մոնդեզի.         |
| ՇԷՖԱՆ.                           | Մտերիմ Ալզիրի.          |
| ՍԷՏԱՐ.                           | Մտերիմ Ալզիրի.          |
| ՄԻԴՐԱՆ.                          | Սպայ.                   |
| ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԸ. Խօսող.             |                         |
| ՍՊԱՆԻԱՅԻՔ, ԱՄԵՐԻԿԱՑԻՔ, ԶՕՐԱԿԱՆՔ. |                         |

Տեսարանն է 'ի Լիմա  
Յապարանս Կուսմանի:

# Ա. Լ. Զ. Ի. Ր.

## ՀԱՆԴԻՄ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻՒ Ա.

ԱԼՎԱՐԷ ԿՈՒՍՄԱՆ

ԱԼՎԱՐԷ

Այլ երջապէս Մատրիտի վերին ատեննը զքեզ ինձի յաջորդ ընտրեց , որդեակ իմ Կուսման , թող քեզի հետ իշխէ Աստուած այս նոր աշխարհիս վրայ , վասն զի իւր հարստութեանը հետ ունի նաեւ թըշուառութիւնք եւ ոճիրներ : Քեզի կը յանձնեմ , որդեակ իմ , իշխանութեանս բարձր աստիճանը յորմէ հըրսութեւ կստիպէ զիս իմ ծերութիւնս : Ժողովրդեանըս բարւոյն համար մաշեցաւ կեանքս , բայց չկըրցայ յառաքինութիւն վիտխել իմ մովի դիւցազանցս անսանձ քաջութիւնը . յաղթութիւնը դրաւեց սըրտերնին , անդթութիւնը խաւարեցուց իրենց վառքը . երկար ատեն լացի եւ այդ տխուր յաղթանակներուս վրայ , եւ ահա մօտեցան կենացս վերջին օրերը , այսուհետեւ երեզմանն է իմ յետին ապաւէնտ , եւ դո՛հ սրտով կիջնամ հոն եթէ արդար օրինօք կառավարես տէրութիւնդ ու թադաւորացդ քաղաքը :

## ԿՈՒՍՄԱՆ

Հայր , քեզի հետ տիրեցի այս նոր աշխարհիս , քեզի հետ վարժեցայ յաղթել , յառաջ քան օրէնքներ տալու քու օրինացդ կը կարօտիմ ես :

## ԱԼՎԱՐԷ

Ոչ այդպէս , որդեակ իմ , ինքնիշխան է միապետութիւնը . աշխատանքէ մաշած , ցուրտ տարիներու ծանրութեանը տակ ճնշուած , յոգնած եմ իշխանութեանէ . խորհրդարանիդ մէջ միայն բաւական ըլլայ քեզի իմ ձայնս : Ալ տկարութեանս մնացորդ տարիները իմ Աստուծոյս կը նուիրեմ ես զոր այնչափ աւտեն մոռցայ : Բայց իբրեւ Հայր եւ իբրեւ բարեկամ չնորհք մը կը խնդրեմ քեզմէ . այս օրուան բռնուած Ամերիկացի գերիները ինծի յանձնէ . այս օրս բարեգուշակ օր մը ըլլայ . մոռցիր այսօր արդարութիւնը ու ներողութիւնը յիշէ միայն :

## ԿՈՒՍՄԱՆ

Եւ ինչպէս մերժեմ քու աղաչանքդ , բայց մոռած է Հայր , ինչ կը խնդրես ինծմէ . կուզես ներել ամերիկացւոյն որպէս զի իւր արշաւանքն տարածէ ինչուան իմ նորածին ու խարխուլ տէրութեանս մէջ . հաւատն ինծի , Հայր իմ , երբ այդ գոռոզ ժողովուրդը վարժի սուր շարժել , արիւն տեսնալ , նոյն իսկ իւր տիրոջը արիւնը բաւական պիտի չըլլայ իւր ծարուր յաղեցնելու համար . անլախ ու համարձակ պիտի յանդգնի արշաւել երկիրս , քայքայել դահս , փշրել ձեռքիս գաւազանը ու զերութեանը լուծը

ձգել ժողովրդեանս վիզը ։ Հիմակուքնէ ահ ու սարսափ թող պատէ դիրենք , վրէժխնդրութեան կայծակներ թռչին մեր ձեռքէն եւ վարժին դողալ մեր անունը լսելով . դեռ վայրենի դադան մըն է այդ բիրտ ամերիկացին որ սարսափելով կը խածնէ գերութեան սանձը . վերջապէս այդ սարսափը ներողութամբ կը նուաղի , խստութիւնն է միայն հաւաքանդութիւնը անդրդիւ պահողը ։

### ԱԼՎԱՐԷ

Ա՛հ , որդեակ իմ , կատեմ ես այդ բռնաւորական խստութիւնը . կրնաս դուն սիրել անիրաւութիւնը , դուն , քրիստոնեայ , դուն , ընտրեալ յանուն Աստուծոյ եւ խաղաղութեան ասիկ վերջը նոր քրիստոնէից վրայ իշխելու համար . դեռ չկշտացան աշուրներդ կոտորած տեսնելէն որ ամայեցուց այս երկիրս ։ Եւրոպիոյ ու քրիստոնէի անունը ատել տալու համար ուրեմն թողուցի արեւելքն եւ յայս կռապաշտ աշխարհս եկայ . ահ , Աստուած դմեղխրկեց հոս իւր անունը հռչակելու , իւր օրէնքները սիրել տալու համար , եւ մենք՝ անհաշտ ապականիչք , ծաւալի արեանս եւ ոսկւոյ , անկախ յօրինաց , փոխանակ որսալու այդ ժողովուրդը՝ սատակումն ու մահ կսպառնանք իրեն ։ Մենք՝ իւր դաշտերը ու բլուրները արեամբ ներկեցինք . մենք՝ այնչափ քաղաքներ յաւեր ու ' ի կործան դարձուցինք . եւ դեռ վրէժխնդիր կայծակ մը չի ջաղխեր մեր գլուխը . յիրաւի մեր անունը սարսափ մը կաղդէ հարստահարելոյ բայց եւ զգուռմն միանգամայն ։ Մենք՝ նոր աշխար-

հիս հարուածը՝ քան զամերիկացիս աւելի բարբա-  
րոս ենք, որ թէպէտեւ գաղան եւ վայրենի՝ սա-  
կայն ունի քաջութիւն եւ առաքինութիւն : Աւաղ,  
թէ որ քեզի պէս արեան ծարաւը ունենային, թէ  
որ յառաքինութենէ ամենեւին զուրկ ըլլային, դու,  
Հայր պիտի չունենայիր հիմայ : Մոռցար արդեօք  
որ այդ կարծեցեալ գաղանները իմ կենացս խնայե-  
ցին . մոռցար արդեօք որ իմ քաջերս կորսնցնելով,  
բարբարոսաց կատաղութենէն սլաշարուած, մինակ  
ու անօգնական մահուանս կսպասէի, երբ իմ անու-  
նըս որդեակ իմ, իմ անունս միայն զինաթափ ըրաւ  
զիրենք . եւ անոնց մէջէն երիտասարդ սպատանի մը,  
աչուրնները արցունքով լեցուած առաջեկաւ եւ փո-  
խանակ զիս սպաննելու, ծնկուրններուս սլլուելով  
« Ալվարէ, ըսաւ, դուն ես, Ալվարէ, ապրէ դուն,  
քու առաքինութիւնդ հարկաւոր է մեզի, ապրէ,  
եւ հայր եղիր թշուառ ազգիս . թող բռնաւոր ժողո-  
վուրդդ որ զմեզ կը հալածեն ու մեր ազատութիւ-  
նը շղթաներու զարկին, մեզմէ սորվին անօրինաց  
ներելը . դնա, իմ ժողովուրդս զոր բարբարոս կոչե-  
ցին, թերեւս իրենցմէ աւելի մեծահոգի ու վեհան-  
ձըն է » կը հառաչէս, որդեակ, սիրտդ ակամայ կը  
խռովի, խզճիւք խայթերը կարթննան, ո՛հ, թէ որ  
անգթութիւնը այդչափ սիրելի է քեզի, ինչպէս կը  
յանդգնիս այս արիւննաներկ երկրիս թագաւորազն  
աղջիկը զոր բաղդը քու ձեռքդ մասնեց՝ հարսնա-  
ցընել քեզի . իւր հայրենակցաց արեամբը հարսանեա-  
ցըդ կապերը կուղես հաստատել :

## ԿՈՒՍՄԱՆ

Բաւական է , Հայր , դու հրամայեցիր , կոտորեցի անոնց դերութեան լուծը . բայց օրէնքն կը սլահանջեն որ քրիստոնեայ ըլլան . կռապաշտութիւնը թող լոյլ կրնան կենաց արժանի ըլլալ : Բռնադատենք , Հայր՝ հրամայենք , որսանք ղիրենք մեր կրօնիցը . կուղևո՞մ որ իմ օրինացս հնադանդող մահկանացուք , դողան իմ եւ Աստուծոյ զօրութենէն :

## ԱԼՎԱՐԷ

Մտիկ ըրէ , որդեակ իմ , ես քեզմէ աւելի կը փափաքեմ որ ճշմարտութիւնը տիրէ այս երկրիս վրայ . ես ալ աշխատեցայ Նրինից հետ հաշտեցընել այդ ժողովուրդը բայց ոչ ոք բռնադատեցի , ոչ ոք :

## ԿՈՒՍՄԱՆ

Ամեն կարծր սրտերն կը կակուղցընուս դուն , Հայր , ներողամիտ առաքինութիւնը քու բերնովդ կը խօսի , եւ որովհետեւ Նրկինք այդպիսի համոզիչ ձերք մը չտրհեր են քեզի , քեզմէ ուրեմն կսպասեմ իմ կենացս երջանկութիւնը , Հրաշագեղ Ալղիրն բռնի ինծի հարսնացընելով չեմ կրնար երջանիկ ըլլալ ես . այս կը սիրեմ ղինքը , բայց չեմ կրնար խոնարհիլ իւր դեղեցկութեանը դիմաց . մէկ նայուածքով սողալ իւր ոտուըններուն տակ , շողումն իւր դոռողութիւնը , եւ իբրեւ դերի ղիս իւր դեղեցկութեանը յանձնել , Բայց դուն , վերջին անգամ ալ խօսէ Ալղիրի հօրը Մոնդէղին հետ . թող համողէ իւր աղջիկը , խնդրէ իրմէ . . . սակայն ինչ անարդութիւն . աղջկան մը համար աղաչել :

## ԱԼՎԱՐԷ

Արդէն խօսեցայ ես Մոնդէզլին հետ, եւ որսացի զինքը իւր գերեալ ընտանեաց թշուառութիւնը խնամելով. թողուց Մոնդէզլ իւր սուտ աստուածները ճանչցաւ ճշմարիտ Աստուածը, եւ ինքը անձամբ իւր կուրացեալ աղջկան միտքը լուսաւորեց. Ալզիր բացաւ աչուրները, իմացաւ իւր աստուածոց ունայնութիւնը, ճշմարտութեան ճառագայթներ իջան այն փախուկ սրտին մէջ որ քու սրտիդ հետ պիտի միանայ այսօր : Բայց ահա հոս կուգայ Մոնդէզլ, դնաւ որդեակ, սպառէ տաճարին մէջ ուր քիչ ատենէն պիտի տեսնաս զինքը ու իր աղջիկը :

## ՏԵՍԻԼ Բ.

## ԱԼՎԱՐԷ, ՄՈՆԴԵԶ

## ԱԼՎԱՐԷ

Մօտեցիր, սիրելիդ իմ Մոնդէզլ, լսեմ քու բերնէդ իմաստութեանդ սլտուղը. հայրական իշխանութիւնդ յուսամ որ փոխեց աղջկանդ միաքը :

## ՄՈՆԴԵԶ

Թշուառացելոց Հայր, ներէ թէ որ իմ աղջիկս. որուն ընտանիքը բնաջինջ ըրաւ Կուսման, դեռ եւս սարսափ մը կզգայ իւր անունէն եւ դողդոջուն քայլերով կը մօտենայ իւր տիրոջը : Առաջարկեալ հարսանիքը զայրացուց աղջկանս սիրտը, բայց քու ձայնէդ անհետացան ամեն կասկածք եւ կարծիք, կենացդ վար-

քը սորվեցուց մեզի յարդել եւ մեծարել քու օրէնք-  
ներդ . քեզմով ճանչցանք երկինքը , քեզմով նոր  
յոյս մը վայելեցաւ սրտերնուս մէջ , քեզմով նոր ա-  
րեւ մը ծագեց մեր խաւար հողիներուն վրայ : Բայց  
քու քաղաքակցացդ տատուածը տարբեր է քու  
Աստուծմէդ , վասն զի արիւն կը չնչէ նա , եւ ես կա-  
տեմ այդ տատուածը : Իսկ քու Աստուածդ , ով պատ-  
կառելիդ Արլարէ , հեղէ եւ խոնարհ , որով եւ ինծի ու  
իմ ժողովրդեանս սիրելի . ահաւասիկ ինչպէս զրա-  
ւեցիր զիս ու իմ աղջիկս , ալ քու ընտանիքդ ե-  
ղանք , դու ալ Հայր եղեր մեզի , այսպէս կուտամ  
իմ աղջիկս որդւոյդ , իւր սիրոյն կը յանձնեմ զինքը ,  
եւ իրեն օժիտ Բողոք եւ Բերու . պնտ , քու տաճա-  
րիդ մէջ , պատրաստէ հարսանեացդ հանդէսը . ա-  
պահով եմ որ իմ աղջիկս ամուսին եւ տէր պիտի  
ճանչնայ քու որդիդ :

### ԱԼՎԱՐԷ

Ա՛հ , որովհետեւ ձեռուքներս կրցան հիւսել այդ  
սիրոյ կապերը , այսուհետեւ դո՛հ եւ ուրախ սրտիւ  
կը մեռնիմ , սիրելիդ իմ Մանգէզ : Մնաս բարով . ո՛վ  
Աստուած , տարածէ բարերար ձեռուքներդ երկու ա-  
մուսնաց գլխուն վրայ :



### ՏԵՍԻԼ Գ.

### ՄՈՆԴԷԶ

Թշուառ կենացս վերջին տարիները մի՛ դառնա-

ցընէք ո՛վ երկինք . զուրկ յամեն մխիթարութենէ աղջիկ մը միայն մնաց ինծի , դուք առաջնորդ եղէք իւր սրտին :



## ՏԵՍԻՆ Դ . ՄՈՆԴԵԶ , ԱԼԶԻՐ

### ՄՈՆԴԵԶ

Դուստր իմ , հասաւ ժամանակը . մի՛ մերժեր երջանկութիւնդ , եւ կամ երանելի թագուհի երջանիկ ըրէ՛ զաշխարհս . պաշտպանէ՛ յաղթուողները , հրամայէ՛ յաղթողներուն , մարէ՛ անոնց ձեռքին մէջ ապականիչ կայծակները , թշուառութեան ծոցէն նշ թագաւորաց կարգն բարձրացիր . դուն քեզմէ հրաժարէ՛ , դուստր իմ , ու նոր սիրտ մը ան . սրբէ՛ այդ արցունքներդ , Ալզիր . տես քու Հայրդ է . . . :

### ԱԼԶԻՐ

Բոլոր արիւնս քուկդ է , Հայր , բայց թէ՛ որ կը Խիրեա զիս , թէ՛ որ հայրական դուժը դեռ կը խօսի սրտիդ մէջ , տես իմ յուսահատ լիճակս , կարդա՛ սըրտիս տաղնապը ու մի՛ բռնադատեր զիս :

### ՄՈՆԴԵԶ

Չէ՛ , չեմ ուզեր այդ ամօթալի ցաւդ տեսնալ . խոստացար ինծի , պէտք է կատարես խոստմունքդ :

### ԱԼԶԻՐ

Ա՛հ , այդ խոստմունքը բռնի էր , Հայր . . . Բայց ո՛վ երկինք , ի՞նչ օր , հարսանեաց խոստմունքը կա-

տարեւոյն . այս օրս՝ սոսկալի օր մըն է . Հայր , այս օրս՝ ամբարտաւան կուսմանը բնաջինջ ըրաւ իմ ընտանիքս , հիմն 'ի յատակ կործանեց իմ Հայրենիքս եւ կողեւս օր . . . թէ , դիտեցիր Հայր , այս առաւօտ տարտախելի երեւոյթներ նկարուած էին արեւուն լուսածաճանչ սկաւառակին մէջ :

### ՄՈՆԻԵՋ

Մեղմով երջանիկ կամ թշուառ կըլլան օրերը , դուստր իմ , թող այդ ունայն կարծիքներդ զոր անտեղի հաւատոց պաշտօնայք տպաւորեցին մտքիդ մէջ :

### ԱԼԶԻՐ

Նոյն օրը , թէ , աւաղ , տէրութեանդ վրէժխնդիրը , Չամոր՝ իմ յոյսս , Չամոր , իմ սիրելիս , զոր դուն քեզի փեսայ ընտրեցիր , մեռաւ պատերազմին մէջ :

### ՄՈՆԻԵՋ

Ես ալ քեզի պէս իւր մոխիրը ջերմ արցունքներովս թրջեցի . բայց իւր դերեղմանին խորերէն Չամոր քեզմէ հաւատարմութիւն չի պահանջեր . սիրտ առ դուստր իմ , մարէ անյոյս սիրոյդ մնացորդ կայծերը . Աստուած իմ բերնովս կը հրամայէ քեզի կուսմանի ամուսինը ըլլալ , մտիկ ըրէ՛ իւր ձայնին :

### ԱԼԶԻՐ

Ո՛հ , Հայր իմ , ինչու կստիպես զիս . դիտեմ ինչ է Հայր եւ ինչ անոր զօրութիւնը . երբ արիւնս թափել հրամայես՝ պատրաստ եմ ինքզինքս զոհ նուիրել հայրական սիրոյ խորանին : Ինչուան հիմայ քու երջանկութիւնդ իմ երջանկութիւնս չէր . միթէ քե-

դի համար չթողուցի չուրացայ իմ աստուածներս :  
 Սեմ ջաւիր աստուածոյս փառաց կորստեանը վրայ ,  
 բայց դուն , Հայր իմ , դուն որ սրտիս դառն տառա-  
 պանաց ատենը նոր Աստուծմէս խաղաղութիւն կը  
 խոստանայիր ինծի , որ իւր օրէնքն սուրբ եւ տիւ-  
 փիլ՝ անմխիթար սրտից վէրքերը կը պատէ կըսէիր,  
 ուրեմն զիս , տկար աղջիկս , կը խաբէիր , Հայր . ան,  
 մեր որ երթամ , նոր Աստուծոյս տաճարին մէջ նստել ,  
 ամուսն մը , յիշատակ մը , կը փշրէ կտոր կտոր կընէ  
 այս սիրտս , այս սիրտս ուր Զատնոր իմ սիրոյս մէկ  
 հատիկ Աստուածը կենդանի է դեռ . այո՛ , Զատնոր , հոս  
 պիտի չի մեռնիս դուն . դքեղ մեռցընելու համար  
 նախ պէտք է իմ սիրտս հաղար սրով վիրաւորել . . .  
 մեղադրէ Հայր , թէ որ կրնաս այս անրիծ զգաց-  
 մունքս , մահուան եւ ժամանակի յաղթող այն ան-  
 շէջ կրակը , այս անմահ սէրս զոր դուն հրամայեցիր ,  
 դուն ինծի տուիր այդ փեսայն , սէր եւ ամուսին  
 այս կոյս սրտիս եւ մարմնոյս . . . եւ սակայն բռնաու-  
 րի մը գիրկը կը նստես քու աղջիկդ . . . Հայրենի-  
 քըս կը պահանջեն , պէտք է հնազանդիլ . բայց դո-  
 դա՛ Հայր , դուն՝ որ անծանօթ աստուծոյ մը վրէժ-  
 խնդրութիւնը կը քարոզես , դուն՝ որ կը հրամայես  
 ինծի երթալ իւր խորանին դիմաց այդ ամուսնոյն  
 խոստանալ սիրտ մը որ ուրիշի մը համար կայրի ու  
 կը մրկի :

#### ՄՈՆԴԵԶ

Ա՛հ , դուստր իմ , ինչ կը խօսիս . խնայէ իմ ծե-  
 րութեանս . յանուն ընտրեան , յանուն սիրոյս , յա-

նուն մեր թշուառութեանը զոր դուն միայն կրնաս մեղմացնել, յանուն հայրական սրտիս զոր անբոյժ վէրքերով խոցեցիր, մի դառնացնիւր կենացս վերջին օրերը . վայելէ իմ աշխատանայս սլուտողը, բայց մի թունաւորեր այդ երջանկութիւնը զոր քրտամբս սլատրաստեցի քեզի . չեմ լսեր հայրենեացդ հեծութեան ձայները, միայն 'ի քեզ կը յուսայ . կուղեմ մատնել զինքը . . . բայց ահա կուսման . ինքզինքիդ եկուր, դուստր իմ . . .

## ԱԼԶԻՐ

Բայց, ո՞վ Աստուած, ինչպէս կեղծեմ:

## ՏԵՍԻՆ Ե.

## ԿՈՒՍՄԱՆ, ԱԼԶԻՐ

2

## ԿՈՒՍՄԱՆ

Համբերութեանս չափը լեցուցաւ . այդչափանս յոյժ դանդաղութիւն իմ փափաքներս կատարելու . իմ թաղիս թշնամեացը ծանր յանդգնութիւնը սլատուհասելու համար լուցուցի օրէնքն, խնայեցի անոնց կենացը, ձեր ներումն խնդրելուն համար . բայց այդ թեթեւ շնորհքովս քու սիրտդ չարժեկ ուղեղը՝ նախատինք կը համարեմ ես իմ արքունի գաւաղանիս . եթէ ուղեւնամ իշխանութիւնս դործածել, ո՞վ է ինձ արդեւք . բայց ես կուղեմ զքեզ 'ի սիրոյդ ընդունել . եւ սակայն չէի յուսար այդչափ ծանր գնել իմ երջանկութիւնս :

## ԱԼԶԻՐ

Ո՛ւր էր թէ վրէժխնդիր կայծակ մը չիջնար այսօր մեր գլխոյն վրայ . կը տեսնանք թէ ինչ սարսափ կը պատէ զիս . տո՛ւս այդ սարսափը լազուրներու մէջ ու ճակտիս վրայ նկարուած . կեղծե՛լ , անհնարին է ինծի . նենգաւոր սրտից արուեստը ինծի համար չէ :

## ԿՈՒՍՄԱՆ

Կը ճանչնամ քու համարձակախօսութիւնդ , Ալ-զիր . գիտեմ որ դեռ կը յիշես Ջամորը եւ կը գրգռուես իւր յիշատակը . Ջամոր , իմսիրոյս յամառ խոչընդոտն՝ պատերազմաց մէջ յաղթուած՝ գերեզմանին յանդուհներէն դեռ ինծի դէմ կը զինուի . կենդանի՝ յաղթեցի իրեն . մեռած՝ պէտք է որ դողամ իրմէ . դադրեցուր նախատինքդ , Ալզիր . քու անձիդ պատիւն ու վրասքը , իմ անունս ու սիրտս անարգեցիր միանգամայն . եւ սակայն այս սիրտս կը նախանձի թափած արցունքներուդ վրայ որ Ջամորի համար են :

## ԱԼԶԻՐ

Մի այդչափ զայրանար ու նախանձիր . չիրմի մէջ փակուած նախանձորդ մը՝ չկրնար այդչափ տենչ եւ զայրոյթ ազդել հզօր աշխարհակալի մը սրտին . այո՛ , սիրեցի ես Ջամորը , վասն զի իմ թշուառ հայրենեաց միակ յոյսն է Ջամոր , եւ իմ հայրս զիս իրեն խոստացաւ . Ջամոր սիրեց զիս , ո՞վ հեշտութեանս . յուսոյ պէս գեղեցիկ էր մեր սէրը , անհուն ու յարատեւ՝ անսահման ապագայի մը չափ , անբիծ՝

անմեղութեան պէս . . . բայց , ով դառնութեանս ,  
 իւր մահը աչուըններուս արցունքը ցամքեցուց . . .  
 բայց դուն , մի մեղադրեր իմ ցաւս . տես իմ հաւա-  
 տարմութիւնս . ճանչցիր իմ սիրտս , եւ մոռնալով  
 այդ հպարտ գոռողութիւնդ , արժանացիր , թէ որ  
 կրնաս , այս հաւատարիմ սրտիս :

### ՏԵՍԻԼ Զ.

#### ԿՈՒՍՄԱՆ

Ձարմանալի գոռողութիւն . բայց միթէ աղջկան  
 սը յաղթելը աւելի դժուարին է քան թէ բոլոր Ա-  
 մերիկոյ . բնութիւնը՝ վիճքը այնչափ գեղեցիկ ըս-  
 տեղծելով՝ վայրենի սիրտ մը տուեր է իրեն . Հոս ,  
 բաց յայդ աղջկէն , ամենքը կը հնազանդին ինծի .  
 սակայն Կուսման կրնայ այդ ապստամբ ճակատն ալ  
 խոնարհեցնել . Երթանք պատրաստենք հարսանեա-  
 ցըս հանդէսը . թող չըսէ աշխարհք թէ Կուսման չի  
 կրցաւ աղջկան մը յաղթել :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՍԻ

# ՀԱՆԴԵՍ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻՒ Ա.

ԶԱՄՈՐ, ԱԾԵՐԻԿԱՅԻՔ

ԶԱՄՈՐ

Թշուառ բաղդիս քաջ ընկերներ , ինչուան նրբ անվրէժ մնանք , ինչուան նրբ մահուան սպասենք . մեռնինք առանց Ալղիրն ազատելու . ապրինք առանց Հայրենիքն փրկելու . դեռ չենք փութար կուսմանի առելի կենաց թելերը հնձել . անսլատիժ պիտի մնայ ուրեմն այդ ժպիրհ յաղթանակը : Ո՛վ իմ նախահարցս անդօր եւ ունայն աստուածներ , թշնամի աստուածոց մատնեցիք զմեզ . վեց հարիւր Սպանիացի , իմ երկիրս ու դահս ձեր տաճարները , զձեզ նաեւ ոչնչացուցին . ալ չկայ ձեզի զոհ , խորան , տաճար , եւ ոչ ինծի , տէրութիւն , թագ ու սիրելի . ամեն բան կորուսի ես : Ա՛հ , անապատից տաք աւաղներուն մէջ , մութ անտառներուն խորերը ծածկեցի ես ամօթս , ցաւերս ու սրտմտութեանս կայծակները . երեք տարի արեւը իմ արտասուացս ու թշուառութեանս օրերը լուսաւորեց . ու երբ հիմայ զձեզ ինծի բարեկամ դսնսլուի , վրէժինդրութիւնս ու սէրս յագեցնելու համար , զօրաւոր խմբի մը դըլուխ անցած՝ միայն քանի մը քաջերով քաղքիս պարսպացը կը մօտենամ՝ իբրեւ գերի կը բռնեն ըզ

մեզ ու շղթաներու զարկած մութ բանտերու մէջ կը նետեն : Զեմ գիտեր ինչ գիտմամբ քակեցին հիմայ մեր շղթաները . ինչ պիտի ըլլայ մեր վիճակը . ան , ուր ենք , բարեկամք , ով կրնայ ըսել ինծի . ով է տեղւոյս իշխանը . ուր է Ալլիր . արդեօք գերբ է Մոնդէզ եթէ մեռած . ո՛հ , թշուառ Զամորին սիրելի եւ տխուր բարեկամք , չէք կրնար մտադր տարակուսանքը փարատել :

#### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԸ

Քեզի պէս զմեզ ալ երկաթի զարնելով բանտարկեցին հոս , Տէր . երկրիս ու պալատիս մէջ տարական , ժողովրդեան անծանօթ չկրցանք բան մը խմանալ . բայց , թշուառ Զամոր , եթէ բռնաւորք քու մահդ վճուեր են , բարեկամներդ սպառաստ են քեզի հետ մեռնելու :

#### ԶԱՄՈՐ

Յաղթութեան դալիսներով պսակուելէն ետքը , մահը՝ անշուշտ փառաւոր ու երջանիկ մահ է . բայց անարդանաց ու փառութեան մէջ մեռնել , Հայրենիքը շղթաներու մէջ ձգելով մեռնել , առանց իւր վրէժն առնելու՝ բռնաւոր դաւաճանաց ձեռքէն մեռնել , սիրելի հայրենակիցքս իմ ետեւէս գերեզման քաշկըռտել , իմ հողւոյս հատորը բռնաւորաց ձեռքը թողուլ , Ալլիրն անոնց կատաղութեանը յանձնել , ո՛հ , այդ մահը սարսափելի մահ է . . . : Ալլիր , ո՛հ կոյսդ անձկակարօտ , ինչ եղար , մեռար արդեօք թէ կենդանի ես . եւ դուք , ուր էք , աստուածք հզօրք , ինչո՞ւ իմ դրկէս կողոպտեցիք :

այդ աղջիկը . այդպէս ուրեմն ձեր գլխովեանը ,  
 ձեր մէկ անուշ ակնարկովեանը արժանի չէր այդ  
 անբիծ կոյսը . . . :

### ՏԵՍԻՒԼ Բ .

ԱԼՎԱՐԷ , ԶԱՄՈՐ , ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

#### ԱԼՎԱՐԷ

Աղատ էք , ասլւեցէք :

#### ԶԱՄՈՐ

Երկինք , ինչ կը լսեմ , անխմանալի զարմանք .  
 Աստուած մի ես դու , եթէ ծեր մահկանացու մը .  
 դուն սպանիացի կերեւաս , եւ ինչպէս կրնաս նե-  
 րել . թագաւոր ես եւ կամդուն ես տեղւոյս իշխա-  
 նը :

#### ԱԼՎԱՐԷ

Ոչ . բայց կրնամ անմեղութիւնը պաշտպանել :

#### ԶԱՄՈՐ

Ո՛վ վսեմ ծերունիդ , ինչ բանի կարող ես :

#### ԱԼՎԱՐԷ

Թշուառ մահկանացուայ օգնելու :

#### ԶԱՄՈՐ

Է՛հ , ո՛վ աղնիւ սրտիդ կալդէ այդ գութը :

#### ԱԼՎԱՐԷ

Իմ Աստուածս , կրօնքս ու երախտագիտութիւ-  
 նըս :

## ԶԱՄՈՐ

Քու Աստուածդ, կրօնքդ, ինչ, այն անդուլ ըրու-  
նաւորները՝ արեան ծարաւի հրեշներ՝ որ բնաջինջ  
ըրին իմ աղէս, կործանեցին հայրենիքս, միթէ քու  
Աստուածդ չեն պաշտեր :

## ԱԼՎԱՐԷ

Մի եւ նոյն Աստուածը կը պաշտեն, բայց կա-  
նարգեն զինքը . անիրաւութիւն եւ ոճիրը ի-  
րենց օրէնք առեր են . բայց ես չմոռցայ առ քու  
աղղդ ունեցած երախտագիտութեանս պարտքը :  
Կը յիշեմ այն օտակալի պատերազմը ուր Սարմիացի  
սուրը ցրուեց ու լաբեց քու աղղդ . այն կոտա-  
քածոց ու շիթութեան մէջ՝ ձեզմէ մէկը իմ ան-  
ձիս տէր ըլլալով խնայեց իմ ալեւոր հասակիս . սիր-  
տըս՝ այն վայրկեանէն 'ի վեր' կը հեծէ ձեր թշուա-  
ռութեանը վրայ . անկից 'ի վեր քու աղղդ ինծի  
հայրենակից եղբայր ընտրեցի . ո՛հ, ինչպէս Խրջա-  
նիկ սլիտի ըլլայի թէ որ կարենայի դանալ այն ան-  
ժանօթ գիւցազունը :

## ԶԱՄՈՐ

(Մեկուօր) Այդ դէմքը, այդ հասակն ու առաքի-  
նութիւնը, անշուշտ ինքն է, նոյն ինքն Արլարէ,  
(Արլարէին) Կրնամ մեր մէջէն ճանչնալ քու կենացդ  
աղատարարը :

## ԱԼՎԱՐԷ

Ի՜նչ կը խօսիս . մօտեցիր, Երկինք, ո՞վ նախա-  
խնամ Աստուած, դուն ես իմ աղատիչս . ան, տկար  
աշուրներս չկրցան ճանչնալ զքեզ . (կը գրկէ) որդեակ

իմ, բարերար իմ, խօսէ, ինչ կը խնդրես . ոչ, ալ չեմ թողուր զքեզ, մի բաժնուիր ինծմէ, հայր ըլլաւ քեզի. Երկինք երկայն տարիներ շնորհեցին ինծի, որպէս զի կարենամ իմ երախտապիտութեանս պարտքըն հատուցանել :

### ՋԱՄՈՐ

Հայր իմ, եթէ քու անդուլթ աղղղ այդ առաքինութեանդ մէկ կայծը միայն ունենար, ո՛հ, հաւատաւ ինծի, այնչափ անսպարտ արեանց հեղեղներ չէին ներկեր մեր հայրենի դաշտերը . եւ որչափ բարերար, մաքուր ու վսեմ է քու հոգիդ այնչափ ալ անոնց անդթութիւնը զբնշւթիւնը կը սարսափեցընէ, եւ ես՝ մահն առելի կընտրեմ քան թէ անոնց հետ ապրիլ : Բայց այս միայն կը խնդրեմ քեզմէ . ըսէ ինծի, ո՞վ ծերունիդ, միթէ կենդանի է Մոնգէզ . միթէ Ալզիր . . . ո՛հ, կը տեսնաս այս արցունքներըս զոր իւր անուշ յիշատակը թափել կուտայ :

### ԱԼՎԱՐԷ

Որդեակ իմ, մի ծածկեր ինծմէ քու արցունքներդ . զխոցիր որ Մոնգէզ բարեկամդ լի կենօք եւ արդեալը հոս իմ քովս երջանիկ կեանք մը կը վարէ :

### ՋԱՄՈՐ

Պիտի տեսնամ զինքը :

### ԱԼՎԱՐԷ

Այո :

### ՋԱՄՈՐ

Ո՛վ ուրախութիւն :

## ԱԼՎԱՐԷ

Կռւում որ իր բերնէն լսեա իւր երանելի վիճակը : Սիրոյ երջանիկ կապեր՝ իմ ժողովուրդս քու հայրենակցացդ պիտի միացընեն : Երթամ իմացընեմ քու գալուստդ Մոնդէզի եւ իմ որդւոյս : Կը հուանամ հիմայ քեզմէ , բայց զմեզ միացընող կապերը աւելի ամուր հաստատելու համար :



## ՏԵՍԻՆ Գ.

## ՁԱՄՈՐ , ԱՄԵՐԻԿԱՅԻՔ



## ՁԱՄՈՐ

Վերջապէս երկնից բարութեան ճառագայթները կը ծագին վրաս . այս , բարբարոս երկրի մէջ մէկ արդար մարդ մը միայն գտայ ես . Աստուած մըն է այդ մարդը որ անօրինաց քար սրտերը կակուղացընելու համար իջաւ երկնքէն : Որդի մը ունի Ալվարէ , ո՛հ , այդ որդին իմ եղբայրս պիտի ըլլայ թէ որ արժանի է այդպիսի հօր մը . ո՛վ երջանիկ աւուր . ո՛վ իմ դառնացեալ սրտիս յոյս անուշակ , Ալվէր , պիտի տեսնամ զքեզ , երեք տարուէնէ ետքը պիտի զրկեմ զքեզ դարձեալ . . . բայց , լինջ կը խօսիմ . դեռ հաւատարիմ ես Ձամօրի . թշուառ սիրտ մը չկրնար անկասկած ըլլալ . . . բայց ո՛վ է այդ ծերուանին որ հոս կը մօտենայ :



## ՏԵՍԻԼ Դ.

## ԶԱՄՈՐ , ԾՈՆԴԷԶ , ԱՄԵՐԻԿԱՑԻՔ

## ԶԱՄՈՐ

Մոնդէզլ, դո՛ւն եւ , Մոնդէզլ, դու իմ գիրկս ես .  
 տո՛ւս՝ քու Զամորդ որ մահուընէ աղատեցաւ , որ  
 գերեզմանէն 'ի լոյս ծնաւ զքեզ սլաշտպանելու հա-  
 մար . տո՛ւս քու բարեկամդ , քու մտերիւմդ ու փե-  
 աայդ . հոս է Ալզիր . խօսէ , խօսք մը միայն , կեանք  
 կամ մահ :

## ԾՈՆԴԷԶ

Մահուանդ ձայնը լսելով , ջերմ արցունքներով  
 թրջեցինք գերեզմանիդ ցուրտ քարը . բայց երա-  
 նի , խաբուեր ենք , դու կենդանի ես , շնորհն քեզ  
 Երկինք երկայն տարիներ , եւ մեզի՝ վերջ այսչափ  
 թշուառութեանց : Զամոր , ա՛հ , ի՞նչ մտքով եկար  
 դուն հոս :

## ԶԱՄՈՐ

Իմ , քու , աղջկանդ ու աստուածոցս վրէժն առ-  
 նելու համար :

## ԾՈՆԴԷԶ

Ի՞նչ կը խօսիս :

## ԶԱՄՈՐ

Շանթի է քեզի մարտին այն ահաւոր օրը ուր  
 ահահաշտ Սպանիացի մը կործանեց իմ քաղքիս սլա-  
 րիսպները . կուսման էր իւր անուընդ . բաղդը իւր  
 անուընդ եւ ոճիրները միայն սորվեցուց ինձի . այդ  
 անուընդ՝ պատերազմի նշանն էր . իւր անուումովը քու

աղջիկդ կորդեցին դրկէս, ընտանիքդ դերի վարեցին, կործանեցին տաճարները, քանդեցին խորանները ուր աստուածք զիս քու փեսայդ պիտի կոչէին, զիս ալ իւր դիմացը քաշկռանցին. դիտես ինչ զարհուրելի տանջանաց դատապարտեց զիս անօրէնը, ու մեռած կարծելով կիսամեռ թողուցին զիս հոն. բայց բաղդը չուղեց իմ մահս. ժամանակը չկրցաւ ջնջել սրտիս ատելութիւնը, ու երեք տարուէնէ ետքը՝ իմ քաջերս ժողուելով եկայ իմ հայրենեացս վրէժն առնել կամ իւր փլատակաց տակը թաղուիլ :

#### ՄՈՆԴԵԶ

Թշուառ սլատանի, գիտես թէ ինչպիսի վտանգի մէջ կը ձգես կեանքդ. մահը խնայեց քու ծաղիկ հասակիդ ու դռն մահդ կը խնդրես հոս. ինչ կրնան ընել քու բարեկամներդ այդ դիւրարելի ղէնքերով դռուդ հակայից, աշխարհիս յաղթականներուն զօրութեանը դէմ. անոնց ձեռքէն թռած կայծակը մոխիր կը դարձնէ զձեզ ու ձեր քաղաքները. ան, Զամոր խոնարհեցաւ աշխարհք, դռն ալ խոնարհէ :

#### ԶԱՄՈՐ

Ի՞նչ, Ես, խոնարհիլ, սողալ մինչդեռ կենդանի եմ. ան, Մոնդէզ, հաւատման խնժի, այդ կայծակները կարհամարհեմ ես. անոնց յաղթելու համար բաւական է անվերեր սիրտ մը. վատութիւնը ատելի է խնժի. իրաւ, չունինք ղէնք, սուր մը միայն, բայց երկինք փոխանակ զինուոց առաքինութիւն տը-

ւին մեղի . վերջապէս Ալզիրի համար կը պատերազմիմ , իրմով պիտի յաղթեմ :

#### ՄՈՆԴԷԶ

Դադրեցողը բարկութիւնդ , Զամոր . Երկինք հա-  
կառակ են քու կամացդ . ժամանակս փոխուած է :

#### ԶԱՄՈՐ

Ի՞նչ ըսել կուզես . ժամանակս կրնայ փոխուիլ  
թէ որ քու սիրտդ փոխուած չէ , թէ որ իւր խոստ-  
մանը հաւատարիմ է աղջկիդ , թէ որ զիս կը յի-  
շէ . . . աչուքներդ կը դարձնեն , կուլան , կը հառա-  
չեն . . . :

#### ՄՈՆԴԷԶ

Թշուառ Զամոր :

#### ԶԱՄՈՐ

Միթէ քու որդիդ չեմ ես . ա՛հ , բռնաւորք ա-  
պականեր են քու վսեմ հոգիդ . դերեզմանիդ եղեր-  
քը անիրաւութիւն եւ ոճիր սորվեցուցին քեզի :

#### ՄՈՆԴԷԶ

Յանցաւոր չեմ ես , եւ ոչ այդ աշխարհակալնե-  
րը՝ բռնաւորք . Աստուած իրենց առաջնորդեց հոս .  
իրենցմէ սորվեցանք նոր առաքինութիւններ , ան-  
մահ դադարիք ու երջանիկ ըլլալու ճամբան :

#### ԶԱՄՈՐ

Ի՞նչ կը խօսիս . սարսափելի խոստովանութիւն .  
Ալզիր բռնաւորաց դերի եղեր է եւ դուն կը դուլնս  
ղանոնք :

#### ՄՈՆԴԷԶ

Գերի չէ Ալզիր :

## ԶԱՄՈՐ

Ա՛հ, Մոնդէզ, ու՛ր Հայր իմ, ներէ՛ ուրեմն իմ  
թշուառութեանս, ներէ՛ իմ բարկութեանս. մտա-  
ծէ՛ որ իմա է այդ աղջիկը. այո՛, դուն ինձի խոս-  
տացար անմահ աստուածոց զխմացը. երկինք ընդու-  
նեցան այդ խոստմունքդ :

## ՄՈՆԴԵԶ

Մի՛ քու աստուածներդ վկայ կոչեր. չեմ ճանչ-  
նար իս այդ ցնորից ծնունդքը. իմ սրաշտած Աս-  
տուծոյս զօրութեանը զխմաց ոչինչ են քու աստ-  
ուածներդ :

## ԶԱՄՈՐ

Ի՞նչ, կրօ՞նքդ, մեր հախահարց օրէնքները . . . :

## ՄՈՆԴԵԶ

Ճանչցայ անոնց ունայնութիւնը. վարատեցաւ մտացս  
ւշուշը. ո՛ր էր թէ իմ Աստուածս լուսաւորէր հո-  
գիդ, ճանչնայիր մեր առաքինութիւնը :

## ԶԱՄՈՐ

Ի՞նչ առաքինութիւն, Աստուծոյ անծանօթ ան-  
դութ, բռնաւորաց գերի, մոռցար քու աստուածներդ.  
ան՛, դուն ուրացար զանոնք խոստմունքդ ուրանալու  
հա՛մար. բայց խօսէ՛, ուրացաւ Ալլիի :

## ՄՈՆԴԵԶ

Թող զիս. հանդարտ է խղճմունքս. կօրհնեմ  
բաղդս, բայց զքեզ կողքսմ :

## ԶԱՄՈՐ

Նթէ՛ ուրացար կրօնքդ, լսո՛յ, ողբս քու վրադ.  
բայց գոնէ՛ գթան սրտիս տանջանալը որ սիրոյ եւ

վրէժխնդրութեան կրակներով բորբոքեալ կը մաշի ։  
 ռէր է կուսման իմ յիշերիմ թշնամիս . ռէր է Ալ-  
 ղիր . եկսւ Մոնդէզ , տար զիս աղջկանդ քով մի-  
 անգամ տեսնամ զինքը ու մեռնիմ . Մոնդէզ , կը հա-  
 խանձիս զինքը տեսնալու երջանկութեանս վրայ .  
 բայց դողմ Զամորի յուսահատութենէն ։

### ՏԵՍԻԼ Ե .

ԶԱՄՈՐ , ՄՈՆԴԵԶ , ԱՄԵՐԻԿԱՅԻՖ , ԶՕՐԱԿԱՆ ՄԸ

#### ԶՕՐԱԿԱՆ

(Առ Մոնդէզ) փութի՛ , Տէր , ժողովուրդը տաճարին  
 մէջ գումարուած քեզի կսպասէ հանդիսին կատար-  
 մանը համար ։

#### ՄՈՆԴԵԶ

Հասկա երթանք ։

#### ԶԱՄՈՐ

Չէ , հիւ անգութ . պիտի չհեռանառ ինծմէ . ինչ  
 հանդէս ։

#### ՄՈՆԴԵԶ

Մնաս բարով . հաւատն ինծի Զա.որ , փախիր  
 այս պալատէս ։

#### ԶԱՄՈՐ

Քեզի հետ պիտի գամ ռէր որ երթաս ։

#### ՄՈՆԴԵԶ

Ներէ իմ հայրական խնամոյս . զօրականք , մի  
 թողուք զինքը քրիստոնէից տաճարը , այս է կուս-  
 մանլին հրաժանը ։ (Զօրականք կարգիլէն Զամորը) ։

## ՏԵՍԻՆ Զ

## ԶԱՄՈՐ , ԱՄԵՐԻԿԱՑԻՔ , ԶՕՐԱԿԱՆՔ

## ԶԱՄՈՐ

Կուսման . ինչ կը լսեմ . մատնութիւն . ուլ կատաղութեանս . ուլ եղեռն , վատ անարդանք . Կուսման իւր տէրն է . ալ չմնաց ուրեմն առաքինութիւն երկրիս վրայ . Ալլիւր , Ալլիւրն ալ յանցաւոր , ինքն ալ ծծեց անօրինաց ատելի թոյնը . . . Կուսման հոս է , ան , ինչ ընեմ :

## ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԸ

Տէր , իմ խորհուրդս կրնայ մեղի օգտակար ըլլալ . զմեզ աղատող առաքինի ծերունին հիմայ իւր որդւոյն հետ հոս պիտի գայ . խնդրէ իրմէ որ զմեզ քաղքէս դուրս հանէ . երթանք , միանանք մեր քաջերուն ու չարեացապարտ զլխոց վրայ դարձնենք լաքող բոցը ու մեր վրէժինդրութեան սուրերը . հարուած մը միայն Կուսմանի կուրծքին վրայ , թող տեսնայ՝ իւր օրհասական տապնապին մէջ՝ սպանիացի դիականց բաղմութիւնը ու փչէ հողին , բայց միայն , Տէր , Ալվարէի եւ իւր որդւոյն խնայենք :

## ԶԱՄՈՐ

Թշուառ ընկերք , ուր էր թէ Կուսմանի արիւնը կարենայինք զոհել 'ի վրէժ հայրենեաց . ուլ անողորքելիւղ վրէժինդրութիւն , զինէ մեր ձեռքերը . մեռցի , մեռցի , Կուսման . . . բայց աւանդ , պատուհասել կուղենք եւ դերի ենք . . . բաղդին սարսափե-

լի ձեռքը կը ծանրանայ ճակտիս վրայ . Ալվարէ հե-  
ռացաւ . Մոնդէզ կը մատնէ դմեղ . (Չայն երգոց)  
Թերեւս իմ սիրելիս անօրինաց ձեռքն ինկած է . . .  
բայց ինչ ցնծութեան ձայնն էր կը դաշնեն իմ ական-  
ջըս . . . լուսատիւն ջահեր կը վառին . . . կը լսէք ու-  
բախտութեան երգոց խորհրդաւոր աղաղակները . . .  
ինչ ուրախութիւն ինչ ոճեր . . . հէ , բարեկամք,  
սարսալիկի գուշակութիւն մը . . . չըլլայ թէ . . . Ալ-  
զիր . . . հասլա երթանք , փրկութիւն եւ կամ մահ :

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻ



# ՀԱՆԴԷՍ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻՒԼ Ե .

ԱԼԶԻՐ

Ո՛վ իմ քաղցր սիրելւոյս երկնաբնակ ոգիդ , վերջապէս ուրացայ դքեդ , լմնցաւ . Կուսումնն է իմ մոսխնս . ալ իրենն եմ , ի՞նչ դառնութիւն . ուխտեցինք , երգունցանք , եւ մեր երգմունքը գրուեցան երկնից անջնջելի մատենին մէջ : Ո՛վ դու , ուրուականդ արիւնաթաթախ , սիրելիդ իմ Ջամոր , եթէ կրնան իմ հառաչանքներս , արտասուքս ու խղճիս խայթերը թափանցել դերեզմանիդ ցուրտ քարը , թէ որ կապրի դեռ այդ հաւատարիմ ու փափուկ սիրտդ , այդ սնուչ հոգիդ որ ինչուսն վերջի շունչը սիրեց զիս , ներէ իմ բռնի հարսանեացս . պէտք է ի Հօրս կամայք հնազանդիլ , ինքզինքս թշուառ հպատակացս երջանութեանը զոհել , սրբել վաղած արցունքները , կենդանացնել զաշխարհս . . . բայց դուն չնս յաշխարհի . Ջամոր սիրելիդ իմ , հանդիստ թող այս դառնացեալ հոգիս որ կը նուազի ցաւոյս բռնութենէն , սպառեցան արտասուքս , դքեդ ողբալով մարեցաւ աչացս լոյսը . ո՛հ հիմայ այդ քու յիշատակդ , Ջամոր , պատկեր մըն է սրտիս սիրաբնակ ծալքերուն մէջ պահուած , կաթիլ մը ցամքած արցունք նուազեալ աչուքներուս մէջ :

## ՏԵՍԻԼ Բ .

## ԱԼԶԻՐ , ՇԷՖԱՆ

## ԱԼԶԻՐ

Շէֆան , ազատ են գերիները . ինչու չէք փութար հոս իմ դիմաց բերել զանոնք . վերջապէս չեմ կրնար տեսնալ իմ հայրենակիցքս ու լալ անոնց հետ :

## ՇԷՖԱՆ

Ա՛հ , Տիկին , զգուշանանք Կուսմանի կատաղութենէ . մեր կամ գերիներուն կեանքը վտանգի մէջ է . ամեն տեղ զինուց ձայներ կը լսուին . Կուսման պատերազմի դրօշն բացած՝ աշխարհիս կործանումն կսպառնայ . խեղճ գերիներ , մի՛ ու սարսափ պատեր է դիրենք :

## ԱԼԶԻՐ

Խաբեցիք զիս ուրեմն , ով Երկինք , հաղիւ թէ Կուսման թողուց իմ ձեռքս , հաղիւ հեռացաւ խորանէն ու մահ եւ սատակում կսպառնայ իմիներուս դէմ . ո՛հ , կենացս թշուառութեանը երդուընցայ ես ուրեմըն :

## ՏԵՍԻԼ Գ .

## ԱԼԶԻՐ , ՇԷՖԱՆ , ՍԷՏԱՐ

## ՍԷՏԱՐ

Դերիներէն մէկը , Տիկին , քու դիմացդ ներկայանալ կը խնդրէ :

## ԱԼՁԻՐ

Թող գայ . իր եւ իւր բարեկամացը վրայ կը գործովի սիրտս , սիրելի են ինձի . բայց ինչու մէկը միայն կուզէ զիս տեսնալ :

## ՍԷՏԱՐ

Գաղտնիք մը ունի կըսէ , զոր միայն քեզի կուզէ յայտնել . եւ կըսեն թէ քու ամուսնոյդ Կուսմանի Հօրը կեանքը աղատողն է . իւր ճակտին վրայ ցաւք եւ տառապանք խոր հետքեր դրօշմեր են . երբ քու անունդ լսէ , աչուքները արցունքով կը լեցուն . դքեզ թշուառ կը կոչէ , անշուշտ չգիտէր քու վառքդ :

## ԱԼՁԻՐ

Ի՞նչ վառք . ո՞հ , թերեւս իմարիւնս է այդ թշուառ դերին . թերեւս կը ճանչնայ Զամորը . ո՞վ դառն յիշատակ . սիրտս պիտի խոցէ դարձեալ . պիտի բանայ հոգեոյս վէրքերը . բայց հոգ չէ . թող գայ (Կերթայ Սէտար) գաղտնի զգացում մը կը պաշարէ զիս . աւանդ , դեռ այս պալատիս մէջ վայրկեան մը չանցուցի առանց արցունք թափելու :



## ՏԵՍԻԼ Դ.

ԱԼՁԻՐ , ԶԱՄՈՐ , ՇԷՖԱՆ

## ԶԱՄՈՐ

Ալզիր , դժն հս Ալզիր :

## ԱԼՁԻՐ

Երկինք , այդ դէմքը , այդ ձայնը ... Զամոր ...  
կը մեռնիմ . (Շէֆանի դերկը կիսնայ) :

## ԶԱՄՈՐ

(Ոտուճներուն իննալով) Ճանչցիր քու սիրելիդ :

## ԱԼՁԻՐ

(Տկար ձայնով) Զամուր իմ ոտուճներուն ... կը խաբու-  
ւիմ արդեօք :

## ԶԱՄՈՐ

Չէ , չեմ խաբուիր . քեզի համար կապրիմ ես .  
ահա քու ոտուճներուդ ինկած կը յիշեցնեմ քեզի  
երգումդ ու խոստմունքներդ : Ո՛վ իմ անձիս հա-  
տոր , ջերմ սիրոյս միակ Աստուած , մոռցար արդ-  
եօք զմեզ միացնող սուրբ սիրոյն կապերը :

## ԱԼՁԻՐ

Ո՛վ թունալից եւ անուշ վայրկեան , ցաւոց եւ  
ցնծութեան սիրելի եւ աղէտալի վայրկեան , ո՞վ իմ  
սրտիս սէր ցանկալի , Զամոր , ո՞ր ատեն կը տեսնամ  
դքեզ . ամեն մէկ նայուածքդ մէյմէկ հարուած  
կաղդեն սրտիս :

## ԶԱՄՈՐ

(Ելալով) կը հառաչեմ զիս տեսնալով :

## ԱԼՁԻՐ

Շատ ուշ տեսայ զքեզ :

## ԶԱՄՈՐ

Գիտեմ որ մահուանս աղետաբեր ձայնը լեցուց  
աշխարհքս . թշուառութեան մէջ , հեռու քեզմէ , դա-

ռնն օրեր անցուցիւ ես . բարբարոսք յափշտակեցին զքեզ իմ զրկէս , կործանեցին դահս , ոչնչացուցին իմ հայրենի աստուածներս . դիտես որ Կուսման , այդ վայրադ գաղանը , սոսկալի տանջանքներով զիս մեռցնել հնարեցաւ . դիտես որ քու տարփածուդ , քու փեսայդ , սիրելիդ իմ Ալվիր , դահճաց ձեռքը մատնուեցաւ . կը սոսկաս , դուն ալ կղզեաց իմ սրբո՛ւմտութեանս բոցերը . անհաշտ վրէժխնդրութիւն մը սրտիս ծալքերուն մէջ կը մնանի դեռ . եւ անստորակոյս Աստուած մը , սիրոյ Աստուած մը փրկեց զիս մահուընէ : Խօսէ , Ալվիր , հոս է Կուսման , ըզքեզ այդ գաղանին ժանկոնքներէն յափշտակելու համար եկաց ես . դու կը սիրես զիս . ուրեմն , սարսափելի վրէժխնդրութիւն մը . . . :

ԱԼՋԻՐ

Այո՛ , ան վրէժդ , պատուհասէ ոճիրը . զանի :

ՋԱՄՈՐ

Ո՛վ Դիք . խոստմունքդ , երդմունքդ . . . :

ԱԼՋԻՐ

Զանի , անարժան իմ կենաց ու սիրոյդ :

ՋԱՄՈՐ

Ա՛հ , Մոնդէզ , այ անդութ . սիրտս չկրցաւ հաւատալ :

ԱԼՋԻՐ

Մանօթ է քեզի արդէն իմ ոճիրներս . . . հիմայ , վայրկեան մը առաջ . . . սհ , դիտես , Ջամոր , որով համար թողուցի զքեզ :

ՋԱՄՈՐ

Չէ , բայց խօսէ :

ԱԼՋԻՐ

Չեմ կրնար :

ՋԱՄՈՐ

Ալղի՛ր :

ԱԼՋԻՐ

Կուսման . . . :

ՋԱՄՈՐ

Ի՞նչ . . . :

ԱԼՋԻՐ

Մեր սիրոյն սոսկալի հարուածը . . . :

ՋԱՄՈՐ

Ետքը :

ԱԼՋԻՐ

Իմ ամուսինս է :

ՋԱՄՈՐ

Դժոխք :

ԱԼՋԻՐ

Հայրս , Ալվարէ , խաբեցին զլիա . ինչուան քրիստոնէից տաճարը քաշկռտեցին զլիա . հոն , մեղապարտ սիրելւոյդ շրթունքէն թռան , անօրէն երգում մը թռաւ . . . ամեն բան ուրաղայ ես , աստուածներս , հայրենիքս , սիրելիս , ո՛հ , յանուն երկիցս (ոտքը իյնաւ) ան իմ կեանքս ահա իմ սիրտս , զանկ :

ՋԱՄՈՐ

Ալղի՛ր , ճշմարիտ է , Կուսման քու ամուսինդ :

ԱԼՋԻՐ

Ո՛հ , հաշտական իշխանութիւնը բռնի ստիպեց զլիա .

մահուանդ ձայնը, անյուր աղետիցս տառապանքը, սրտիս աղիչ ու յուզմունքը, իրենք տալու անդերեղմանիդ յուր տ քարին վրայ թափած արցունքներս, ըզքեզ կորսնց ներուս ցաւոյն բռնութիւնը, յուսահատ եւ անմխիթար, քրիստոնէից ձեռքը գերի լնկած, վերջապէս իրենց Աստուածը պաշտել տուին լնծի, եւ ատեցի ես քու աստուածներդ որ չիրցան վրկիւղ, դքեղ. բայց սէրը դատապարտեց զիս, չեմ ուզեր արդարանալ. կենդանի ես դուն, բաւական է. չիրցայ ես պահել խոստմունքս, ես միայն մեղաւոր եմ, յանուն սիրոյդ, կը լնդրեմ Զամոր, առ, վերցնէ ինծմէ այս ատելի կեանքս որ ալ քեզի համար չէ:

#### ԶԱՄՈՐ

Ո՛չ, մեղաւոր չեմ դուն, ելիր ոտք. բայց առ իս ունեցած սիրոյդ բոցը դեռ եւս կը վառի սրտիդ մէջ:

#### ԱԼԶԻՐ

Երբ Մոնդէզ, Ալվարէ, թերեւս վրէժխնդիր Աստուած մը, քրիստոնեայք, իմ տկարութիւնս, ամենքը միացած, զիս տաճարը տարին, ասպահով քու մահուանդ վրայ, սրտիս մէջ, դքեղ, քու յիշատակդ պաշտելով ձեռքս կուսմանին տուի. Ժողովուրդք եւ բռնաւորք, երկինք եւ երկիր, կուսման հասել իմացաւ որ դքեղ կը սիրեմ ես. եւ այս սարսափելի վայրկեանս ուր կը տեսնամ դքեղ, վերջին անգամ մ'ալ ըսեմ թէ դքեղ սիրեցի ես:

#### ԶԱՄՈՐ

Վերջին անգամ կը տեսնայ դքեղ Զամոր. հա-

զիւ թէ Դտայ Ղըքղ ու կորսնցնեմ դարձեալ . ա՜ն ,  
թէ որ մեր սէրը դեռ կը խօսի սրտիդ . . .

ԱԼԶԻՐ

Լիւռ . կուսման , Այլարէ , ո՛վ երկինք .

ՏԵՍԻԼ Ե .

ԱԼԶԻՐ , ԶԱՄՈՐ , ԱԼՎԱՐԷ , ԿՈՒՍՄԱՆ , ՇԷՖԱՆ

ԱԼՎԱՐԷ

(Որդւոյն) Տէս , իմ կենացս աղատարարը , որդեակ .  
նվ դու , ոգիդ վեհաղուհն , դուհն որուհն սլարտրկան  
եմ իմ օրերս , եկնւր գրկեմ Ղըքղ . եկնւր , վայելէ  
իմ հայրական սէրս կուսման որդւոյս հետ :

ԶԱՄՈՐ

Ի՜նչ կը լսեմ . անիկայ , կուսման . անիկայ , քու  
որդիդ , այդ գաղանը .

ԱԼԶԻՐ

Ո՛վ Աստուած , դժն մեր վրայ .

ԱԼՎԱՐԷ

Ի՜նչ զարմանք .

ԶԱՄՈՐ

Ա՜հ , այդ անօրէնը այդսիսի առաքինի հօր մը  
որդի .

ԿՈՒՍՄԱՆ

Ստահակ գերի . ուսկից կուգայ քեզի այդ ժպիտ  
յանդգնութիւնը . կը ճանչնաս զիս թէ ո՛վ եմ ես :

## ԶԱՄՈՐ

Հայրենեացս սոսկումը . բայց դուն ալ կը ճանչնաս  
Զամորը :

## ԿՈՒՍՄԱՆ

Դուն :

## ԱԼՎԱՐԷ

Զամոր :

## ԶԱՄՈՐ

Այո՛ . ես , որուն կեանքը անյուր ու ամօթալի տանջանքով ուղեցիր վերցնել . ես , որուն նայուածքը միայն կրնայ դողացնել զքեզ . բաւական էր տէրութեանս կորուստը , բաւական էր դանկաւ կործանումը , ան , մէկ հատիկ հարստութիւնս ալ կողոպտեցիր դուն . ան (սուրը կուտայ) թափէ արիւնս , վերջ տուր ելեռանցդ , ասլա թէ ոչ այս ձեռքս որ հօրդ կեանքը շնորհեց կրնայ իւր որդւոյն դարչելի արիւնը թափել :

## ԱԼՎԱՐԷ

Ո՛վ նախատանացս . կրնաս պատասխանել . . .

## ԿՈՒՍՄԱՆ

Պատասխանել այդ յանդուգն ամպստանքին , այդչափ նուաղատնայ կրք անհրաժեշտ պատիժը կրասպասէ իրեն . իմ արդար դատմանս կայծալն այդչափ էր ուշանար մեղապարտին դուրսը ջաղխելու եթէ զքեզ չմեծարէի , հայր : Կրնաս երեւակայել , Աղլիր , թէ որչափ անարգեցիր զիս . սէտք էիր մոռնալ այդ ապստամբ դերին որուն համար դեռ արցունք կը թափես :

## ԱԼԶԻՐ

(Առ Կուսման) Անդուլթ. (առ Ալլարէ) եւ դու Տէր, իմ բարերարս եւ հայր, (առ Ջամոր) դուն, իմսէրս եւ յոյսս, դուք երեքնիդ ալ, տեսէք իմ աղետիցս դառնութիւնը ու սոսկացէք. ահաւասիկ իմ սիրելիս զոր հայրս ինծի ափուսին ընտրեց գերութեան շղթաները ընդունելէս ու հայրենեացս կործանումը տեսնելէս առաջ. իւր մահուամբը միայն վիշրեցաւ նախահարցս արքունի գաւաղանը եւ ալ ամեն բան փոխուեցաւ մեզի համար. Հայրս ու ես, թշուառ եւ անօգնական, հայրենեացս անձանօթ Աստուած մը ճանչցանք. եւ ահա վկայ կոչեմ այդ քրիստոնէից Աստուածը որ իմ գգնադէ հարսանեացս երդումն ընդունեցաւ, այդ Աստուածը որ զխաղրկեց իմ սիրելեոյս զրկէն. իւր օրէնքներն անձանօթ են ինծի, բայց ես սրտիս մէջ խօսող առաքլնութեան ձայնն կը հաւատամ. Ջամոր, սիրելի ես դուն ինծի, դքեղ սիրելի իմ սրտիս անուշ սպարօքն էր, բայց յետ իմ երգմանցս չեմ կրնար քուկդ ըլլալ. եւ ոչ քուկդ Կուսման, յետ այնչափ եղեռանցդ, այսուհետեւ մոռցիր զիս. արդ ձեր երկուքէն ո՛վ այսօր դահլիճ պիտի ըլլայ ինծի, ո՞վ պիտի խոցէ այս սիրտս որ չկրցաւ իւր սիրելեոյն սէրը վայելել. թշուառ եւ մեղապարտ, երգմնաղանց առ Ջամոր, անհատատրիմ առ Կուսման, ո՛վ երջանիկ մահուամբ մը վերջ պիտի տայ իմ ոճիրներուս. քու ձեռու ընկող, Կուսման, վարժած են արիւն թափելու. թափէ իմ արիւնս ալ. սիրոյ եւ հարսանեաց իրաւանցը վրէժխնդիր եղիր.

պատուհասէ յանցաւորս եւ մի անգամ արդար եղիր  
կենացդ մէջ :

#### ԿՈՒՍՄԱՆ

Շատ է արդ . կը մոռնամ իմ առ քեզ ունեցած  
սէրս եւ ինծմէ դտած պատիւներդ , ու մահուանդ  
կը փախարիս . քաջ է , իմ նախանձորդիս մահն ըլ-  
լայ քեզի սխտիօ . զօրականք . . . :

#### ԱԼԶԻՐ

Անգո՛ւթ :

#### ԱԼՎԱՐԷ

Ի՞նչ կընես , որդեակ . յիշէ իւր բարիքները . ինչ-  
պիսի դառն տառապանաց մէջ կը թողուք զիս , ով  
Երկինք . մէկուն՝ եւ կեանք տուի , միւսն՝ ինծի իմ  
կեանքս չորոհեց . ա՛ն , սիրեցեալ որդիք , խնայեցէք  
իմ ալեւոր հասակիս :

#### ՏԵՍԻՒ Զ .

ԱԼՎԱՐԷ , ԿՈՒՍՄԱՆ , ԶԱՄՈՐ , ԱԼԶԻՐ , ՄԻԴԲԱՆ

#### ՄԻԴԲԱՆ

Փութա , Տէր , թշնամիք ծածկեր են դաշտին  
երեսը ու մօտ են քաղքիս դռները խորտակելու :

#### ԿՈՒՍՄԱՆ

Հապա երթա՞ք . Կուսմանի նայուածքը միայն  
բաւական է զիրենք մոխիր դարձընելու . թէ որ  
յաղթել չեն դիտեր , թող ծառայել սորվին :

## ԶԱՄՈՐ

Մենք , ծառայել :

## ԿՈՒՍՄԱՆ

Զօրականք , չլիժաներու զարկէք այդ վատ ստորու-  
կը , տարէք զինքը . . . :

## ԱԼԶԻՐ

Ո՞ւր կը տանիք :

## ԿՈՒՍՄԱՆ

Բանտ :

## ԶԱՄՈՐ

Խորեւանյ յոյս . . . եւ սա'լայն ձեռուընեքս աշատ  
պէտք էին ըլլալ , սն առեներ կիմանայիր թէ ինչպէս  
արժան է խօսիլ քեզի պէս դոռող վիրադի մը չեա :  
Սրիւնս պիտի ծծես , դիտում . ստիպին լսէ դուն Զա-  
մորը որ միտնելէն առաջ զքեզ բռնաւոր կը կոչէ ,  
անօրէն բռնաւոր :

## ԿՈՒՍՄԱՆ

Նախ ես սրտի տամ պատասխան (սուրը կը հանէ ,  
Ալվարէ կարդիւն)

## ԱԼԶԻՐ

(Զամորին վիզը պլոււկելով) Եկուր մեռնինք , մէկ մէ-  
կու դիրկը մեռնինք :

## ԿՈՒՍՄԱՆ

Հեռացուցէք անօրէնը :

## ԶԱՄՈՐ

(Երթալով) Արդարադատ են երկլինք :

## ԱԼԶԻՐ

Զամոր , յետին ողջոյն մը :

## ԶԱՄՈՐ

Ողջոյն մահու , (կերթայ զօրականներով) :

## ԱԼՎԱՐԷ

Յիշէ՛ , որդեակ , որ քու հօրդ կեանքը պարդե-  
ւեց :

## ԿՈՒՍՄԱՆ

Զինուց շառաչմունքը կը մօտենան . ողջամբ  
մնա , յաղթելու ժամանակ է :



## ՏԵՍԻՆ Է.

## ԱԼՎԱՐԷ , ԱԼԶԻՐ

## ԱԼԶԻՐ

Ահա քու ոտուրներուդ կիյնայ , հոյ Տէր , յուսա-  
հատ աղջիկ մը . ողորձէ՛ իմ սիրելւոյս , ղթան ինծի ,  
եւ եթէ վեհանձն ես , ինչուան վերջը անխօփօխ  
մնացիր . իմ Զամօրս պիտի մեռնի , հայր , ես եմ  
իւր մահուանը պատճառ , դու միայն եղկելոյն հզօր  
ասպաւէն մը կրնաս ըլլալ . ես եմ մեղապարտ , ես  
քու որդիդ անարդեցի . . . բայց ինչ ընեմ , սիրտս  
արդէն Զամօրի ընծայած էի , իմն էր Զամօր , իմ ոէ-  
րըս է Զամօր , առաքինի է Զամօր , դուն ալ կեան-  
քըդ իրեն պարտախան ես , դարձուր Զամօրս իմ սիրոյս ,  
իմ ամենալի շուան սիրոյս :

## ԱԼՎԱՐԷ

Ո՛հ , ելիր ռաք , Այդիր . դուք իմ որդիքս էք ,

հօր աչքով կը նայիմ ես ձեր վրայ . սիրտս կը դուրս  
բուլի , բայց չեմ կրնար վրկել զքեզ եթէ խոստ-  
մունք ու երդումդ չսպանս , Ալղիր . դիտեմ , անա-  
գորոյն , անողորմ է կուսման , բայց իմ որդիս է ,  
բայց քու ամուսինդ է ու կը սիրէ զքեզ :

ԱԼԶԻՐ

Ա՛հ , ինչո՞ւ Զամորին հայրը չեա դուն :

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻ



# ՀԱՆԴԻՍ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻՒ Ա.  
ԱԼՎԱՐԷ , ԿՈՒՍՄԱՆ

ԱԼՎԱՐԷ

Յաղթեցիր , որդեակ , բայց մի՛ յաղթութեանցդ սլսակն արիւնոտեր . փառաց երջանիկ թեւերուն վըրայ բարձրացած մի՛ մոռնար դթութիւնը . Ահա կերթամ ես կիսամեռ դիականոց վէրքերն պատել , ու իրենց ցաւերն սփռիլ , դուն ալ յիշէ՛ որդեակ , որ քու հայրդ է քեզի աղաչողը . բարեգութ եւ քրիստոնեայ , ներէ՛ Զամորին . ահ , սլտի չկարենամ ընաւորութեանդ խոտութիւնը կակուղցընել . դիտցիր որ անուշութեամբ միայն կրնաս յաղթել սրտից :

ԿՈՒՍՄԱՆ

Բայց դուն խոն կը վիրաւորես . առ իմ կեանքս բայց աղատ թող գլիս իմ վրէժխնդրութեանս մէջ . եւ ինչպէս ներեմ Զամորի , Ալվիր կը սիրէ զինքը :

ԱԼՎԱՐԷ

Աւելի ցաւալի է իւր վիճակը :

ԿՈՒՍՄԱՆ

Ցաւալի , անիկայ , Հայր , ես ալ կուզեմ այդպիսի ցաւալի վիճակ մը ունենալ :

ԱԼՎԱՐԷ

Միթէ՛ կը կասկածիս Ալվիրի առաքինութենէն . նախանձն . . . :

## ԿՈՒՍՄԱՆ

Այո՛, հախանձն . եւ չես կրնար մեղադրել այդ իրաւացի զգացումս . իմ օրինաւոր ամուսինս է Ալզիր , եւ սակայն Ալզիր Զամորը կը սիրէ , եւ դուն , Հայր . դուն անտարբեր ես իմ ցաւոյս ու անարդա-  
հայտ :

## ԱԼՎԱՐԷ

Մի՛ այդչափ այլայլիր , որդեակ , հաւատան ին-  
ծի , առաքինի է Ալզիր , քաղցրութեամբ կրնանք  
զինքը որսալ :

## ԿՈՒՍՄԱՆ

Քաղցրութիւն , ես , իւր գեղեցկութիւնը շողո-  
մեմ , իշխանութեանս աթոռէն ինչուան իւր ոտուը-  
ներուն խոնարհիմ , գգուեմ զինքը , ու պատուոյս ամօ-  
թըն աւելցնեմ . բայց դուն փոխանակ որդիդ պաշտ-  
պանելու կը մեղադրես զինքը . իմ անձիս պատին  
ու փառքը անարգելի ես արդէն թաղաղարմ աղ-  
ջըկանց տեղ գերի մը ինծի ամուսին ընտրելով որ  
կատէ զիս . բայց տե՛ս իմ թշուառ վիճակս , իւր ա-  
տելութեանը հետ կաճի իմ սէրս :

## ԱԼՎԱՐԷ

Մի՛ ցաւիր այդ օրինաւոր սիրոյդ վրայ , բայց չափ  
դիր կրիցդ . թերեւս ճանչնայ Ալզիր իւր պարտքե-  
րը . իսկ թէ որ որոշած ես Զամորի կորուստը , խոս-  
տացիր դոնէ չվճուել իւր մահը զիս տեսնալէդ առաջ :

## ԿՈՒՍՄԱՆ

Ե՛հ , ինչպէս որդի մը կարենայ մերժել իւր հօ-

ըն խնդիրքը , քու սիրոյդ համար կուզեմ առ վայր մի լռեցընել բարկութիւնս բայց ուրիշ բան մի սլահանջեր ինծմէ :

ԱԼՎԱՐԵ

Ո՛չ , միայն քիչ մը ատեն . (կերթայ) :

ԿՈՒՍՄԱՆ

Ի՞նչ , լռեցընել բարկութիւնս , սիրել , զղջմ , նախանձիլ Զամորի երջանկութեանը վրայ եւ չկարենալ պատուհասել այդ սարուկը . . . բայց զո՞վ կը տեսնամ . Աղիւր :



ՏԵՍԻԼ Բ .

ԿՈՒՍՄԱՆ , ԱԼԶԻՐ . ՇԵՖԱՆ

ԱԼԶԻՐ

Այո , ես եմ , քու ամուսինդ է որ չկրցաւ սիրել զքեզ բայց մեծարեց քու անուշոյ . իմսէրս միայն մատնեց Զամորը , եւ թէ որ ինքը կորսուի իմ անկեղծութիւնս է պատճառ , բայց դուն ալ աւելին մոիկ ըրէ . քու ամուսինդ կը յանդգնի իւր սիրելւոյն ներումը քեզմէ իւր նախանձորդէն խնդրել . Կուսման թէպէտեւ դռուղ , դաժան եւ սոսկալի , բայց մեծահոգի միանգամայն , վասն զի աշխարհակալ յաղթական մը յանդանայ ներելովն ալ կրնայ պարծիլ . դիտեմ որ թեթեւ բան չէ այս խնդիրքս բայց վառքը մեծ է , ու քեզի միայն արժանի . այսպիսի վսեմ առաքինութեամբ , թերեւս 'ի սէր փոխես իմ

պատելու-թիւնս . ո՛հ , թէ որ թախուր սրտի մը մէջ  
պռաքինութիւնը կրնայ . . . :

#### ԿՈՒՍՄԱՆ

Թէ որ առաքինութիւնք այդպիսի՝ զօրաւոր ազ-  
դեցութիւն կունենան քու հոգւոյդ վրայ , անոնց  
օրինացը հետեւելու համար լաւ ճանչցիր զանոնք :  
Գիտցիր որ առաքինութիւնը իւր պարտուցը հպա-  
տակիլն է , մոռնալ անօրէն սիրոյ մը յիշատակը ,  
եւ ոչ երբէք իմ ատելի նախանձորդիս անունը տալ ,  
եւ լուռ ու անտրտունջ լսել թշնամւոյս դատասպար-  
տութեան վճիռը . գիտցիր որ քու ամուսինդ քեզի  
ներելով , բաւական վեհանձն ու մեծահոգի է եւ քու  
չկարծածէդ աւելի զգայուն սիրտ մը կը կրէ :

#### ՏԵՍԻԼ Գ.

##### ԱԼԶԻՐ , ՇԷՖԱՆ .

#### ՇԷՖԱՆ

Տես թէ որչափ կը սիրէ Ղըբեղ :

#### ԱԼԶԻՐ

Թէ որ կը սիրէ զիս , նախանձն է զլինքն չարժողը .  
պիտի մեռնի Զամոր , ես իւր ներումը խնդրելով  
աւելի ամուր հաստատելի իւր մահուան վճիռը .  
ան ինչ ընեմ , պիտի չկարենամ փրկել զլինքը . բայց  
դուն պահապան զլինուորին հաւատարմութիւնը փոր-  
ձեցիր :

## ՇԷՖԱՆ

Ոսկին շլացուց իւր աչուքները ու փնեցինք իւր հաւատարմութիւնը :

## ԱԼԶԻՐ

Ուրեմն ժամանակ մի կորսնցքներ , դնա զուրցէ որ . . . :

## ՇԷՖԱՆ

Բայց դեռ յոյսերնիւ չկորսնցնենք . Ալվարէ թեւրեւս համողէ իւր որդին :

## ԱԼԶԻՐ

Ես չեմ յուսար . ահ , կը դողամ , Շէֆան . թէ որ աղատի Զամոր , ինծմէ հեռու պիտի չուզենայ ապրիլ , թէ որ դիջանի իմ աղաչանացս ու փախչի՝ ես չեմ կրնար իրմէ բաժնուիլ . այ անգութ կուսման . . . բայց ինչու կուշանայ այդ ղինուորը :

## ՇԷՖԱՆ

Հիմայ հոս պիտի դայ Զամորին հետ . քու հըմանդ առնելուն պէս մէկէն բանտը վազեց . դիչերն իւր սեւ թեւերովը կը ծածկէ մեր խորհուրդը . բըռնաւորք կոտորածէն յողնած եւ արեամբ արբեցած խոր քնոյ թանձրութեան մէջ կը ննջեն :

## ԱԼԶԻՐ

Գոնէ զմեզ Զամորին քովը տանէր այդ սլահապանը , եւ կամ շուտով բանար բանտին դռները . ոհ , ելիր , Զամոր , եկուր , քու սիրուհիդ է զքեզ կանչողը , եկուր գիրկս :

## ՇԷՖԱՆ

Բայց թէ որ յանկարծ դիչերուան մթութեան

մէջ վրայ հասնին , իմացուի խաբէութիւնը՝ ան ատենը պատիւդ ու ամօթն . . . :

### ԱԼԶԻՐ

Ի՞նչ ամօթ . իմ սիրելիս մատնելն է ամօթ . ան , թէ որ ինքը կորսուի իրեն հետ կը կորսուին նաեւ պատիւս ու սէրս . պատիւն յամօթոյ զանազաններն սորվեցայ Շէֆան . պատիւն իմ սրտիս մէջն է , ինքը կը հրամայէ ինծի ազատել իմ դիւցազունս զոր երկինք երեսէ թողուցեր են . ո՛հ , ի՞նչպէս անուշ է սիրելունքն փրկութեանը պատճառ ըլլալ :

### ՇԵՖԱՆ

Ահաւասիկ Զամոր :



### ՏԵՍԻԼ Դ.

ԱԼԶԻՐ , ՇԵՖԱՆ , ԶԱՄՈՐ , ԶԻՆՈՒՈՐ ՄԸ

### ԱԼԶԻՐ

Ա՛հ , Զամոր , ալ ամեն յոյս կորաւ . յաղթեցին ընդաւորք , պատրաստ է տանջանքդ . թէ որ չիախ՝ պիտի մեռնիս Զամոր . դնա՛ , ժամանակ մի՛ կորսընցներ . ան այդ զինուորը քեզի առաջնորդ . հեռացիր այս սնիծեալ դաւառէն , խաբենք այսպէս դաւաճանաց յոյսը . ո՛հ , կը տեսնաս իմ յուսահատութիւնս . հիմայ դուն միայն կրնաս դքեզ փրկել . մի՛ , իմ ամուսնոյս ցասմանը դո՛հ եւ աշխարհիս արտասուացը պատճառ մի՛ ըլլար . փախիր , Զամոր , փախիր , գիշերուան մթութիւնը կօգնէ քու փա-

խըստեանդ • գթան ինծի ու թող զիս •

### ԶԱՄՈՐ

Դուն , բարբարոսաց գերի , դուն , քրիստոնէի մը ամուսին , դուն , որ այդչափ սիրեցիր զիս , փախչիլ եւ ապրիլ կը հրամայես ինծի • լաւ է , բայց կրնաս ինծի հետ դալ • ալ տէրութիւնն չկայ ինծի • անուք ու անօգնական , լի թշուառութեամբ , քու սիրոյդ նուէր անապատ մը ու սիրտ մը ունիմ • աւտեն մը արքունի պսակ մը կրնայի կապել գլխոյդ •

### ԱԼԶԻՐ

Ա՛հ , առանց քեզի ինչ էր այդ պսակը • բաց 'ի քեզմէ զո՞վ սիրեցի ես • եւ ինչ է քու քովդ այդ ջնչին տիեզերքը • ո՛հ , ինչուան անասլատիդ խորերը քու ետեւէդ պիտի թռչի հողիս • միշտակ թող զիս հոս , մաշիլ ցաւոցս մէջ , թառամիլ իմ վիշտերովս , զքեզ ուրանալուս խղճիս խայթերովը տագնասալիլ , ուրիշի մը իշխանութեան տակն ըլլալ ու զքեզ սիրել • գնահ , քեզի հետ տար իմ երջանկութիւնս ու կեանքս • ինծի թող իմ պարտուցս արհաւիրքը • փառքս ու սիրելիս սէտք է ազատել միանդամայն , երկուքն ալ սրբազան են ինծի , երկուքն ալ անաբաւ կուգեմ պահել •

### ԶԱՄՈՐ

Քու փառքդ , եւ մին է այն ինծի անծանօթ փառքը • ա՛հ , միթէ գերութիւնը սյդչափ նուաաստացմեց զքեզ • ինչ , այդ բռնի երդումդ , քրիստոնէից տաճարը զոր պէտք է ատես դուն , այդ նոր Աստուածդ , մեր նախահարց աստուածոց սոսկալի

հարուածը , վերջապէս պիտի բաժնեն Վքեզ Զամորէն :

ԱԼԶԻՐ

Երդուընցայ ես , հող չէ որ աստուծոյ :

ԶԱՄՈՐ

Ոճիր մըն է այդ երդումդ . դուն իմ կորուստս երդուընցեր ես . մնաս բարով . կորսուին քու երդումդ ու քու աստուածդ նաեւ ուսկից կը դարչիմ ես :

ԱԼԶԻՐ

Կեցիր , ո՛հ , ի՞նչ դառն բաժանում . կեցիր սիրելիդ իմ Զամոր :

ԶԱՄՈՐ

Կուսմանն է քու ամուսինդ :

ԱԼԶԻՐ

Ա՛յ , անողորմ , մեռցողը զիս բայց մի նախատեր այդպէս :

ԶԱՄՈՐ

Յիշէ՛ ուրեմն մեր նախկին սիրոյն բոցը :

ԱԼԶԻՐ

Վի՛շ Վտանդդ միայն կը յիշեմ ես :

ԶԱՄՈՐ

Ոչ այդպէս , ո՛վ անդուլթ . իմ սէրս կարհամարհեա դուն :

ԱԼԶԻՐ

Ո՛հ , չէ Զամոր , անհուն սիրով կը սիրեմ Վքեզ .

բայց թող, ես միայն մեռնիմ, փախիր դու . . .  
 ո՛հ, ինչ դարհուրելի յուսահատութիւն մը կը վառի  
 աչուքներուդ մէջ . . . Զամոր . . . :

ՋԱՄՈՐ

Անօգուտ է :

ԱԼԶԻՐ

Ո՛ւր կերթաս :

ՋԱՄՈՐ

Ազատութիւնս դործածել :

ԱԼԶԻՐ

Զամոր, խնայէ ինծի . թէ որ դուն մեռնիս, կը  
 մեռնիմ ես ալ :

ՋԱՄՈՐ

Մեռան արդէն Զամոր եւ իւր սէրը . թող զիս .  
 ալ բաւական եղան իմ ցաւերս, խռովեցան միտքս,  
 յուզեցան աղիքներս . սեւ յուսահատութիւն մը կը  
 սլաշարէ զիս ու կեանքս անտանելի կերեւայ ինծի .  
 անցեալն ու ապագան, ճշմարտութիւն եւ ցնորք  
 ոչինչ են ինծի համար . ո՛հ, դարչեցայ ես յաստուա-  
 ծոցս, դարչեցայ հայրենիքէս, դարչեցայ ինքզին-  
 քէս, ինքզինքէս ալ կուղեմ փախչիլ ու չեմ կրնար  
 Սիրտս ծոցիս մէջ չգտաւ տեղի . հեղձումն, անդուլ  
 բաբախում, չնչոյ տեղ խորին ու երկայն հառա-  
 չանքներ, զո՛հ սիրոյ, անյագ վրէժխնդրութիւն,  
 ծարաւ արեան, ո՛հ, ինչ կեանք . . . եւ ո՛ւր սահե-  
 ցան իմ խաղաղ օրերս . ինչու մթնցան երկինք, ին-  
 չու սեւ ամպեր կը գիզուին գլխոյս վրայ . . . երակ-

ներուս մէջ բողատապ կրակ մը կը վաղէ . . . ան,  
ինչ ընեմ, ուր երթամ, քեզի դամ, Կուսման . զի-  
շերը լմնալու վրայ է , սուղ է վայրկեանս, զօրա-  
կան , երթանք :



## ՏԵՍԻՒ Ե.

### ԱԼԶԻՐ , ՇԷՖԱՆ

#### ԱԼԶԻՐ

Ա՛հ , օգնէ ինծի , կը նուաղիմ Շէֆան . գնաց ,  
հեռացաւ , ինչ պիտի ընէ , ո՞վ սարսափելի վայր-  
կեան , Կուսման , տես թէ ի՛նչպիսի գիւցադնէ մը  
բաժնուիմ քեզի համար . . . Շէֆան , վաղէ՛ գնա Զա-  
մորին Լաեւէն , տես թէ ապահով է իւր վախտու-  
տը . այդ զինուորը պիտի չմատնէ՞ զմեզ : (Կերթայ  
Շէֆան) Սեւ , սարսափելի գուշակութիւն մը կը ծան-  
րանայ հոգւոյս վրայ . այս օրս , արիւնալից օր մը  
պիտի ըլլայ : Ո՛վ Աստուածդ քրիստոնէից , յաւիտե-  
նից եւ ահաւոր Աստուած՝ եթէ ոճիր մըն է իմ սէ-  
րըս այս թշուառ գլխոյս վրայ թափէ վրէժխնդրու-  
թեանդ կրակները , թող ապրի , ապրի Զամոր եւ  
անվտանգ հասնի ինչուան իւր անապատը : Միթէ  
դու տիեզերաց մէկ մասին աստուածն են , մէկ մա-  
սին հայրը եւ միւսոյն բռնաւորը . այդ արարածոց  
ամենքն ալ քու ձեռացդ գործքը չեն միթէ . (աղա-  
ղակ դրսէն Զամորի անունը կը լսուի) . . . Բայց ինչ սոս-  
կալի աղաղակ մը իմ ականջս կը զարնէ . սիրելոյս

անունը կը լսեմ . . . Երկինք , այդ զինուորը մասնեց  
 զմեզ . . . աղաղակին երթալով կաւենայ . . . ան ,  
 մեռաւ ջամոր :



ՏԵՍԻՒ Զ .

ԱԼԶԻՐ , ՇԷՖԱՆ

ԱԼԶԻՐ

Դռնն ես Շէֆան . ինչ կայ , ինչ տեսար . ո՛հ  
 այդ կերպարանքդ Հարադուշակ է :

ՇԷՖԱՆ

Ո՛հ , Աղլիր . . . :

ԱԼԶԻՐ

Խօսէ , մեռաւ ջամոր :

ՇԷՖԱՆ

Ալ մի յուսար , անդառնալի է իւր կորուստը .  
 առաջնորդ զօրականին սաղաւարտն եւ սուրը առ  
 ուաւ ու զինուեցաւ . զօրականն իսկոյն աներեւոյթ  
 եղաւ , ջամոր դէպ 'ի պալատն սկսաւ վազել . լուռ  
 ու մոլթ էր ամեն բան , միայն ջամորին ոտից ձայ-  
 նը կը լսուէր որ անլեհեր կուսմանի սենեակը մը-  
 տաւ , փուճ տեղը ուղեցի արդիւիւզ վինքը . յանկարծ  
 սոսկալի ձայներ լսուեցան , մեռցի ջամոր , այդ ա-  
 ղաղակը զսոմնքը արթնցուց , սպայք եւ զօրականք  
 ներս թափեցան եւ ես հոս վազեցի . քեզի խնայը-  
 ներու :

## ԱԼԶԻՐ

Ա՛հ , Շէֆան , օգնութեան հասնիրնք :

## ՇԵՖԱՆ

Ի՞նչ կընես , ո՛ր կերթաս :

## ԱԼԶԻՐ

Մեռնիլ :



## ՏԵՍԻԼ Է.

ՄԻԴՐԱՆ , ԱԼԶԻՐ , ՇԵՖԱՆ , ԶՕՐԱԿԱՆՔ

## ՄԻԴՐԱՆ

Զօրականք բռնեցէք զինքը :

## ԱԼԶԻՐ

Ի՞նչ կըխօսիս . ո՛ր է Զամոր :

## ՄԻԴՐԱՆ

Զեմ գիտեր . երթանք Ալղիր , այս է Կուսմանի հրամանը :

## ԱԼԶԻՐ

Ո՛վ բաղդ , ո՛վ սարսափելի յլրէժանդութիւն . մեռաւ Զամոր , եւ ես դեռ կենդանի եմ . ես էի չարեացապարտ եւ դուն Զամոր իմ մեղանայս սլատուհասը կրեցիր . . . բայց հոս որո՞ւ ձգեցիր քու սիրելիդ . . . Ալղիր բռնաւորաց ձեռքը մատնուած , Ալղիր իւր սիրելւոյն գրկէն զրկուած , ո՛հ , լոյս իմ Զամոր , քեզի կուգամ , քու ծոցդ ահա կը թռչիմես :

# ՀԱՆԴԵՍ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ԱԼԶԻՐ , ՊԱՀԱՊԱՆՓ

ԱԼԶԻՐ

Վերջասլէս բանաւորք կը պատրաստեն իմ տանը  
ջանքս ալ . խեղճ պահապանք , դուք ալ տխրեր էք .  
բայց ինչու կուլաք , ուրախացէք , հասաւ թշուա-  
ռութեանս վերջի վայրկեանը , իննսն շղթաներս ,  
բացուի բանտս եւ իմ սիրոյս ու անմեղութեանս թե-  
ւերուն վրայ բարձրացած յաւիտենական աղատու-  
թիւն թռչի հողիս : Երբ գոռող թշնամոյ մը ձեռ-  
քը մատնուեցայ , երբ կորուսի իմ սիրելիս , ան ա-  
տենը պէտք էր լալ . . . Բայց չեմ գիտեր կենաց եւ  
թէ մահուանս կը մերձենամ . երբ սիրելոյս անու-  
նը տամ՝ կը սարսափին պահապաններս . . . :

ՏԵՍԻԼ Բ.

ԱԼԶԻՐ , ՄՈՆԴԵԶ , ՊԱՀԱՊԱՆՓ

ԱԼԶԻՐ

Հայր իմ . . .

ՄՈՆԴԵԶ

Ի՞նչ ըո՛րր , դուստր իմ . ահաւասիկ քու սիրոյդ  
ղարհուրելի հետեւանքը . աւաղ . ես եւ Ալլաբէ Զա-

մորին համար թողութիւն կը խնդրէինք . երբ յանկարծ զինուոր մը յուսահատ եւ ահռելի կերպաբանքով ներս յարձկեցաւ . նոյն ինքն Չամորն էր . ձեռքը սուր մը բռնած վազեց , թռաւ ու դարկաւ Կուսմանը . ամուսնոյդ արիւնը իւր հօրը վրայ ժայթքեց . իսկոյն Չամոր դադրելով իւր բարկութենէն , Ալվարէին ոտուըններուն ինկաւ եւ իւր որդւոյն արեամբը ներկուած սուրը անոր տալով « Յաղեցաւ վրէժխնդրութիւնս , որդւոյդ արեանը մէջ լուացի իմ նախատինքս , դուն ալ կատարէ քու պարտքդ , առ բնութեան վրէժն » ըսելով խոնարհեցուց զլուսը եւ մահուան կսպասէր . Ալվարէ հառաչելով արիւնաթաթախ որդւոյն դիրկը ինկաւ . մահուան հեծութիւնք , ողբն ու հառաչանաց աղաղակը արթնցուցին պալատականները , վազեցին , մտան բռնեցին Չամորը ու սկսան Կուսմանի վէրքը պատել . Ժողովուրդը բարձրաձայն քու մահդ կուղէ ղքեղ եղեռան կցորդ կարծելով :

#### ԱԼԶԻՐ

Կրնաս . . . :

#### ՄՈՆԴԵԶ

Չէ , ես քու վրադ չեմ կասկածիր . չկրնար այդ սիրտդ եղեռան դրդուել ղքեղ . եւ սակայն պիտի մեռնի ամուսինդ սիրելոյդ տուած հարուածէն . Չամոր ալ պիտի ընդունի իւր յանդգնութեան պատու հասը . ղքեղ ալ պիտի դատապարտեն , պիտի մեռնին Ալվիր , ահ , ինչ ընէ հօր մը սիրտը , երթամ գոնէ վերջին ճիղս թափեմ , քեզի ներումն ու ինծի մահ խնդրեմ :

## ԱԼՁԻՐ

Իմ ներմուտն , իմ բռնաւորներէս , աղաչել անոնց ,  
 դուն , Հայր իմ , ոչ . ապրէ դուն , այս միայն կը  
 խնդրեմ քեզմէ . կը ցաւիմ Կուսմանի վրայ , մանա-  
 ւանդ այգիսի մահուան արժանի ըլլալուն կը ցա-  
 ւիմ . Չամոր իւր վրէժն առաւ , յանդգնութիւն չէ  
 այդ , ես սէր կը կոչեմ եւ չեմ կրնար մեղադրել  
 զինքը . . . Բայց պիտի մեռնի Չամոր , իսկ ես . . .  
 Հայր , մի արգիլեր իմ մահս :

## ՄՈՆԴԷԶ

Երկինք , ձեր զթութիւնը կը մաղթեմ :

## ՏԵՍԻՒ Գ.

## ԱԼՁԻՐ

Ո՛վ Աստուած , ոչնչացուր զիս , ինչ , իմ նոր  
 Աստուածս այսպէս անոք ու անօգնակամ կը թողու  
 զիս . ահ , ինչու չեմ կրնար իմ ձեռքիս հարուածը  
 ինծի դէմ դարձնել . ուրացայ ես իմ աստուածներս  
 որ կը ներելին այն կամաւոր մահը , մահը իմ վերջին  
 ասպաւէնս . Միթէ ամենքը պիտի չհամնին կենաց  
 ասպարիզին այն վերջի ծայրը , ոճիր մըն է այդ  
 վայրկեանը փութացնելը . սէտք է ուրեմն թշուա-  
 ոութեան բաժակին ինչուան վերջի կաթիլը քամել ,  
 եւ սակայն ինչու թող տրուած է այդ բարբարոս  
 ժողովրդեան այնչափ անսպարաւ արիւն թափելն եւ

ող ինծի միայն իմ արիւնս . . . ան , Զամոր , պիտի մեռնիս ահռելի տանջանաց մէջ , բայց . . . մի յուսար մինակ մեռնիլ :



## ՏԵՍԻԼ Դ.

ԱԼԶԻՐ , ԶԱՄՈՐ (Շղթայակապ), ՊԱՀԱՊԱՆՐ

### ԶԱՄՈՐ

Հոս ուրեմն մեռնինք երկուքնիս ալ : Ալշիր օրէնքն կը դատապարտէ զքեզ . դեռ կենդանի է Կուսման , չկրցաւ այս դողդոջուն ձեռքս մահացու հարուած մը կշռել . Զամորի թշուառութեանը վերջ տալու համար կապրի Կուսման , կապրի քու արիւննդ ալ թափելու համար : Մահուան ստուերովը ծանրացած աչուքները . պիտի տեսնան մեր դիակունքը ու վերջին անգամ մըն ալ բռնաւորաց բերկրանօքն հեշտացած , մեր արեան հոտէն արբենալով , պիտի փչէ իւր հոգին . Ալվարէի յանձնուած է մեր մահուան վճիռը . անքս եւս եւս քու կորստեանդ պատճառ ինծի համար կը մեռնիս դուն :

### ԱԼԶԻՐ

Բայց քիւ քովդ պիտի մեռնիմ , հոգ չէ որո՞ւ համար . օրհնէ իմ բաղդս , օրհնէ այն հարուածը որ իմ հարսանեացս կապերը պիտի խզէ . յիշէ որ սոյդ վայրկեանը միայն առանց խղճի խայթերու կրնամ սիրել զքեզ , մահը միայն կրնայ զմեզ միացընել . ան , Զամոր , մեզի համար կանգնուած մահուան կառոյ-

ցը խորան մըն է ուր երկրորդ անգամ սիրտս քեզի նուէր պիտի ընծայեմ . հոն պիտի քաւեմ անհաւատարմութեանս ակամայ ոճիրը . բայց ինչու չիուլթար Ալվարէ :

ԶԱՄՈՐ

Ահա ինքը , աչուքները արցունքով լեցուած . . . .

ԱԼԶԻՐ

Ա՛հ , երեք թշուառք :



ՏԵՍԻԼ Ե .

ԶԱՄՈՐ , ԱԼԶԻՐ , ԱԼՎԱՐԷ

ԶԱՄՈՐ

Երկինք կուզեն որ դուն իմ մահս վճռես . մի խռովիր , խօսէ Ալվարէ , տես թէ ինչպէս անվեհեր իմ մահուանս կսպասեմ ես . քու որդւոյդ դաւաճանը ու Ալվարէի աղատարարը դահճաց ձեռքը յանձնէ շուտով . բայց Ալվիր ինչ ըրաւ ձեզի , ինչու անմեղն 'ի կենաց կուզես զրկել . միթէ բռնաւորք իրենց ատելութեան բոցը քու սրտիդ մէջն ալ չհնցին . բայց կրնայ անիրաւ վրէժանդութիւն մը բռնակիլ այդ սրտիդ մէջ որ լի է դորովանօք , արդարոյ անունէն հրաժարել ուրեմն կուզես դուն եւ անպարտ արեան մէջ թաթխել այդ մաքուր ձեռուքներդ :

ԱԼԶԻՐ

Ա՛ռ քու վրէժդ , առ որդւոյդ վրէժն , բայց մի կասկածիր իմ անմեղութեանս վրայ . ամուսին կուտ-

մանի , այդ անունը միայն կիմացընէ քեզի որ եթէ գիտնայի վտանգն փոխանակ մասնելու զինքը կըրնայի պաշտպանել . մեծարեցի ես քու որդիդ , այս դառնացեալ սիրտս ատեց զինքը , բայց պահեց իւր երգումը . թող քու ժողովուրդդ զիս սպանութեան կցորդ համարելով դատապարտէ զիս , բաւական է որ դուն ճանչնաս իմ անմեղութիւնս . արդ եթէ մեռնի Զամոր պէտք է ես ալ մեռնիմ , այս միայն կը խնդրեմ ու քու վրադ կը յաւիմ :

#### ԱԼՎԱՐԷ

Ի՞նչ տեսարան , ո՞վ Աստուած , սիրոյ եւ ատելութեան . որդւոյս դաւաճանը իմ կենացս աշատարարն է . Զամոր , այո , քեզի պարտկան եմ իմ օրերըս , սակայն սուղ դնեցի ես այդ շնորհք . հայր եմ բայց մարդ եմ , չեմ կրնար որդւոյս արիւնը անկարելիի աչքով տեսնալ . բայց այդ արեան ձայնին հետ որ վրէժ կը պահանջէ քու բարերարութեանցըդ ձայնն ալ կը լսեմ ես : Եւ դուն Ալզիր որ իմ աղջկիս եղար եւ նոյն անուամբ դեռ եւս կը կոչեմ գլքեզ , տեսէք անորդի մնացած հօր մը թափած արցունքները եւ մի՛ յուսաք որ ձեր կորստեամբը ուղենայ սրբել այդ արցունքները . չէ՛ . չեմ կրնար այս ցաւերուս վրայ նոր ցաւեր աւելցնել , բարերար , դուստր եւ որդի կորսնցնելով միանգամայն : Օրէնքըն կը դատապարտէ զձեզ , վրէժխնդրութեան սրովը կը զինէ վշտացեալ հօր մը ձեռքը . եւ ես չմերժեցի այդ ահաւոր պաշտօնս ու եկայ երկուքնիդ ալ ազատել :

## ԶԱՄՈՐ

Ալլիբը կրնամ աղատել , մհ , խօսէ , ինչպէս :

## ԱԼԱՐԷ

Մէկ Աստուած մը պաշտելով . բառ մը , Զամոր , քու եւ Ալլիբի բաղդը կրնայ փոխել . մեր օրէնքն կը ներկն հաւատացելոյ . ապաւինէ ուրեմն , եկու ծածկուէ անոր թուերուն տակ , որպէս զի երկնից պաշտպանութեան հովանին տարածուի ձեր գլխուն վրայ . այդ վսեմ օրինակովդ կը դադրեցնես ժողովրդեանս բարկութիւնը . արիւնդ սրբաւան ու իւրենց եղբորը արիւնը կըլլայ եւ ձեր գլխուն վրայ կախուած վրէժանդութեան սուրերը կ'իյնան ու կը փշրին . ոհ , Զամոր , դոնէ այդ աղջկան ծաղիկ հասակին խնայէ , այո , 'ի տիրոյդ ու բարութենէդ կը յուսամ ես . տես միանգամ ինչպիսի դառն աղէտից մէջ կը թողուս զմեզ քու մահուամբդ . ոհ . Զամոր , թող որ երկրորդ անգամ քեզի խմկեանքս պարտեկան ըլլամ . . . անդութ , Հայր մը , իւր որդւոյն կորստեանը վրէժն հանելու համար կաղաչէ քեզի որ ապրիս . քրիստոնեայ եղի՛ր , ու լռեցուր որդւոյս արիւնը :

## ԶԱՄՈՐ

Ալլիբ , այդ աստիճան դգուենք կեանքը ու իմ ամօթովս զնենք զայն . թողում ես իմ աստուածնորդս Կուսմանի աստուծոյն համար . (առ. Ալլարէ) եւ դուն քու զաւկէդ աւելի կուղես իմ բռնաւորս ըլլալ . կուզես որ Ալլիբ մեռնի կամ ես մատնիչ աղբիւմ . մհ , քու կենացդ տէր եղած ատենս եթէ ըս-

տիպէի զքեզ ուրանալ կրօնքդ կամ մեռնիլ , խօսէ ,  
կուրանայիր հայրենեացդ աստուածը :

### ԱԼՎԱՐԷ

Կաղաչէի իմ Աստուծոյս որ լուսաւորէր այդչափ  
բարեօք ճոխացեալ հոգիդ որ թէպէտեւ կոյր եւ  
խաւար՝ սակայն քրիստոնէի մը արժանի :

### ԶԱՄՈՐ

Երկինք , ինչ դառն տագնապ . որն ընտրեմ ,  
մահ եթէ կեանք , Ալիւր զքեզ կորսնցնեմ եթէ իմ  
աստուածներս . խօսէ . դուն սիրեցիր զիս , դուն դա-  
տաւորս եղիր . զիս ու իմ աստուածներս քեզի կը  
յանձնեմ , բայց չեմ կարծեր որ Զամորի նախատինքն  
ուղենաս :

### ԱԼԶԻՐ

Մտիկ ըրէ . դիտես որ այս սիրտս քեզի ընծա-  
յեր էի ես , ու հայրս ուրիշի մը տուաւ եւ այնպէս  
հարկադրուեցայ անոր Աստուածն ճանչնալ . բայց  
քրիստոնէից օրէնքէն հոգիս հիացած ճշմարտութեան  
ապաւինեցաւ եւ այս շրթունքներս իրաւամբ ուրա-  
ցան հայրենեացս աստուածները . բայց բոլոր սրտով  
սլաշտած աստուածն ուրանալը՝ վատ ու աններելի  
ոճիր մըն է եւ միանգամայն անարդանք նոր ընդու-  
նած Աստուծոյն . չէ , ատելի է վատութիւնը այդ  
վսեմ հոգեպետ . մեռնի՛նք , Զամոր , բայց մահուամ-  
բքդ ալ ինծի արժանի եղիր , եւ թէ որ լուսոյ ճա-  
ռագայթ մը չծագեր սրտիդ մէջ . առաքինութիւնդ  
կը խօսի , մտիկ ըրէ իւր ձայնին :

## ԶԱՄՈՐ

Ծանօթ է ինձի քու սիրտդ . մեռնինք ուրեմն . . . :

## ԱԼՎԱՐԷ

Անգո՛ւթ որդիք , երկուքնիդ ալ կորստեան կը  
փախաքիք , երկուքնիդ ալ բիւր վէրքեր կաւելցը-  
նէք սրտիս . ժամանակը կարճ է , աղաղակն երթա-  
լով կը բարձրանայ . . . :

## ՏԵՍԻԼ Զ.

ԱԼՎԱՐԷ, ԶԱՄՈՐ, ԱԼԶԻՐ, ՄԻԴՐԱՆ

## ՄԻԴՐԱՆ

Տես այդ ողբալի տեսարանը Տէր , վիրաւորեալ  
որդիդ իւր վերջի շունչը քու դրկացդ մէջ կուզէ  
տալ . ժողովրդեան խուռն բաղմու՛թիւնը հոս կը դի-  
մէ մեղապարտից արիւնը թափելու :

## ՏԵՍԻԼ Է.

ԱԼՎԱՐԷ, ԶԱՄՈՐ, ԱԼԶԻՐ, ՄԻԴՐԱՆ, ԿՈՒՍՄԱՆ  
(ՎԵՐԱԼՈՐ) ՍՊԱՆԻԱՅԻՔ, ԱՄԵՐԻԿԱՅԻՔ, ԶՕՐԱԿԱՆՔ,  
ԺՈՂՈՎՈՐԴ

## ԱԼՎԱՐԷ

Ա՛հ , որդեակ իմ , մահուան ցուրտ ձեռքը դը-  
պեր է ճակտիդ . դքեզ այսպէս կիսամեռ տեսնա-  
լու համար ապրեցայ ես . ա՛հ , սիրուն որդեակ :

## ԶԱՄՈՐ

Ազատեցէք Ալլիբը , թող ես մեռնիմ :

## ԱԼԶԻՐ

ՉԷ, Չամոր, մեռնինք, երեքնիս ալ միատեղ  
մեռնինք:

## ՋԱՄՈՐ

(Առ Կուտման) Ինչուան մահուանդ օրհասական վեր-  
ջի վայրկեանն ալ միշտ արթո՞ւն է կատաղութիւնդ .  
եկուր, քանի որ կենդանի ես, տես իմ արեանս  
թափուիլը, Չամոր քեզի սորվեցընէ թէ, ինչպէս  
պէտք մեռնիլ:

## ԿՈՒՍՄԱՆ

(Առ Չամոր) Երկինք ուշացուցին իմ մահս, որ-  
պէս զի վերջին անգամ մըն ալ տեսնամ զքեզ .  
(Առ Հայրն) Վախստական հողիս կենաց ամեն կա-  
պերէն ազատած՝ քու դիմացդ կը կենայ, Հայր,  
բայց քեզի նմանելու համար. ահա կը մեռնիմ ես .  
խաբէութիւնն անհետացաւ, ճանչցայ տկարութիւնս  
բայց կենացս վերջի վայրկեանը. իմ հպարտու-  
թեանս ծանրութեամբը ճնշեցի աշխարհքս, երկինք  
երկրիս վրէժն կը հանեն. եւ սակայն իմ կեանքս  
բաւական չէ փոխարէն այնչափ թախած արեանս .  
երջանկութիւն եւ իշխանական բարձրութիւնք կուր-  
ցուցին զիս, իսկ մահը կը փարատէ աչքիս վրայ  
տարածուած մշուշը, եւ կը համբուրեմ այն ձեռ-  
քը որով Աստուած պատուհասեց զիս: Գեռ այս  
պալատիս տէրն եմ ես, դեռ մինակ կը հրամայեմ  
հոս, ես միայն կրնամ ներել եւ կը ներեմ Չամորին .  
ապրէ դուն, բարձրամիտ թշնամի, ազատ ես, բայց  
յիշէ քրիստոնէի մը պարտքը եւ մահը: Մոռե՛ղ, եւ  
դուք Ամերիկացիք, դուք որ իմ փառասիրութեա-

նրա դոհ կղաք , դուք ալ յիշեցէք որ իմ զղջումս ու գթութիւնս քաւեցին իմ ոճիրներս . թող իմանան այս նոր աշխարհքս ու իւր թաղաւորները թէ քըրխատոնեայք իրենց օրէնք տալու համար ծնած են , Քուեւ իմ Աստուծոյս տարբերութիւնը ճանչցիր , Չամոր , քու աստուածներդ վրէժխնդրութիւն եւ մահ հրամայեցին , իսկ իմ Աստուածս ներել քեզի :

## ԱԼՎԱՐԷ

Ոհ վառաքինիդ իմ որդեակ :

## ԱԼԶԻՐ

Ահեղ զարմանք , բնէ վոտիսխութիւն , ներման :

## ԶԱՄՈՐ

Չեմ գիտեր . . . սիրտս . . . զիս ալ զղջման կուղեւս ստիպել :

## ԿՈՒՍՄԱՆ

Ալ աւելին կուղեւմ ես , կուղեւմ որ զիս սիրեւ դուն . իմ անգթութեամբս ու հարսանիւքս շատ թշուառ ապրեցաւ Ալլիւր . այս դողդոջուն ձեռքովքս ես անձամբ զինքը քեզի կուտամ , մի արհաւարհեր իմ ընծայս , դուն արժանաւոր փեսայ , ինքը հարս քեզի արժանի . դարձէք կանգնեցէք ձեր կործանեալ հայրենիքը , հաստատեցէք զահլերնիդ բարեբաստիկ եւ երջանիկ ապրեցէք , բայց մի աւտէք զիս , եւ եթէ կարելի է , անջինջ պահեցէք իմ յիշատակս : Իսկ դուն , Հայր կղիր այդ երջանիկ ամուսնաց . երկնից օրհնութիւնը մաղթէ իրենց զլիսուն , ասկէ վերջը Չամոր քու որդիդ է :

## ԶԱՄՈՐ

Ո՛ւր *Լնք*, Ալղիր • ինչ, հարադատ եւ ճշմարիտ քրիստոնեայք այդչափ առաքինութիւն ունին : Ա՛հ այդ օրէնքն որ այդպիսի վսեմ դիտաւորութիւն մը կազդէ սրտի, այս, կը հաւատամ, քրիստոնէից Աստուծոյն օրէնքն է այդ • սիրեցի ես բարեկամութիւնը, մեծարեցի առաքինութիւնը, բայց այդ հոգւոյ վսեմութիւնը վեր է իմ կարողութենէս • ան, ամօթն ճակտիս վրայ կը ծանրանայ . . . խղճիս խայթերը . . . : Ա՛հ, կուսման, հիմայ կը սիրեմ Ղքեղ, ու քու ոտուընկերուդ իյնալով . . . :

## ԱԼՋԻՐ

(Ոտքը իյնալով) Ա՛հ, կուսման, դիտցիր որ Ալղիր այս վայրկեանս քեզի համար մեռնիլ կը վափաքի • Զամոր եւ կուսման կը կեղեքեն հողիս, ցաւ, զղջումն, ո՛հ, ես միայն մեղապարտ եմ ու անարժան թողութեան :


## ԿՈՒՍՄԱՆ

Ներեցի, Ալղիր • արցունքներդ քաւեցին . . . ո՛հ Հայր . . . վերջին անգամ մօտեցիր ինծի . . . երջանիկ ասրէ . . . սիրէ Ալղիրը . . . Զամոր . . . քրիստոնեայ . . . եղիր . . . կը մեռնիմ . . . մնաք . . . :

## ԱԼՎԱՐԷ

Ա՛հ, որդեակ իմ, որդեակ իմ . . . բայց ո՛չ, չեմ լար • մեր թշուառութեան մէջ Աստուծոյ արդարաւթեան ձեռքը կը տեսնամ ես որ զարնելու ատենն ալ կը բռնէ կարելիք սրտերը :

# ՎՐԻՊԱԿԲ



Էջ. Տող.

Վրիպակ.

Ուղիղ.

Ամենները էով կարդա .

|    |    |                  |                     |
|----|----|------------------|---------------------|
| 1  | 14 | Երեզման          | գերեզման            |
| 6  | 16 | բնաջինջ          | բնաջինջ             |
| 7  | 11 | Եղեր             | Եղիլ                |
| 12 | 21 | է                | էր                  |
| 23 | 14 | Աստուծոյ անծանօթ | անծանօթ Աստուծոյ եւ |
|    |    | անդուծ           | անդուծ              |
| 26 | 7  | ոճեր             | ոճիր                |
| 28 | 13 | Թշուառութեանը    | Թշուառութիւնը       |
| 30 | 4  | ԶԱՄՈՒՐ           | ԶԱՄՈՐ               |
| 30 | 18 | աղետաբեր         | աղետաբեր            |
| 33 | 1  | աղետիցս          | աղետիցս             |
| 35 | 15 | ամստաբին         | ամստաբին            |
| 53 | 13 | ըսիլ             | ըրիլ                |





[12.]

ՀԱՆ ՀԻՄՆԱՐԱՐԻ ԳԻՒՆ ԳՐԱԴ.



FL0080857

ЦЕНА

649.00 L

42-43